Արման Հակոբյան

ԱՐԴԻ ԵԲՐԱՅԵՐԵՆ

MODERN HEBREW

by
Arman Akopian

ՀՏԴ 809.245(07)
ԳՄԴ 81.2եբր g7
Հ 177

Հաստատված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից որպես դասագիրք բուհերի արևելագիտության ֆակուլտետների համար

Հակոբյան Ա.
Հ 177 ԱՐԴԻ ԵԲՐԱՅԵՐԵՆ:– Եր.: «Զանգակ–97», 2003.– 522 էջ:

«Արդի եբրայերեն» դասագիրքն Իսրայելի պետական լեզվին նվիրված առաջին հայալեզու ծեռնարկն է: Այն բաղկացած է ներածական յոթ և հիմնական ութսուն ուսումնական դասերից, որոնք մատուցում են լեզվի հիմնական քերականությունն ու առավել գործածելի բառապաշարը, պարունակում են մեծ թվով տեքստեր և լեզվական հմտությունները զարգացնող ու ամրագրող վարժություններ: Դասագիրքը պարունակում է նաև զանազան ոճի ու բարդության տեքստերից կազմված ընդարձակ ընթերցարան, քերականական աղյուսակներ, եբրայերեն–հայերեն և հայ–եբրայերեն բառարաններ, ինչպես նաև եբրայերեն լեզվի պատմության համառոտ ակնարկ: Նախաբանում զետեղված են մեթոդաբանական բնույթի պարզաբանումներ ու խորհուրդներ:

Դասագիրքը հասցեագրված է բուհերի արևելագիտական ֆակուլտետների ուսանողներին և սեմագիտությամբ զբաղվող լեզվաբաններին, սակայն կարող է օգտագործվել նաև եբրայերենն ինքնուրույն ուսումնասիրելու համար:

Հ 4602020000 / 0003(01)–2003 2003

ԳՄԴ 81.2եբր g7

190460
3500111439

ISBN 99930–2–712–x

© Հակոբյան Ա.
© «Զանգակ–97»

Դասագրքի 23-րդ էջում զետեղված է հուլանդացի նկարչուհի Բրենդա Կալդենբախի «Օրհնագրություն աղջկա համար» ծաղրանկարը (հեղինակի թույլտվությամբ):
Կազմի չնավորման մեջ օգտագործված է Իսրայելի փիեզներից արված լուսանկարը:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՄԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՐԾԻ ԵՐԱՆՅԱՐԵՆ

ԵՐԵՎԱՆ 2003

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ ԻԲՐԵՎ ՆԱԽԱԲԱՆ 10

ԵԲՐԱՅԵՐԵՆ ԼԵԶՎԻ ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ 15

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Դաս Ա 32
Ընդհանուր տեղեկություններ եբրայական գրի մասին

Դաս Բ 34
Չայնավորներ և ձայնանիշեր – Բաղաձայններ (א ב ג ד ה) – Շեշտադրում – Քերականական ներածություն

Դաս Գ 37
Չայնավորներ և ձայնանիշեր – Բաղաձայններ (ו ז ח ט)

Դաս Դ 40
Բաղաձայններ (י כ ל מ) – Չայնանիշեր – Շեշտադրում – Քերականական ներածություն

Դաս Ե 44
Բաղաձայններ (נ ס ע פ) – Չայնանիշեր – Շեշտադրում – Քերականական ներածություն

Դաս Զ 48
Բաղաձայններ (צ ק ר ש ת) – Չայնավորներ և ձայնանիշեր – Շեշտադրում – Քերականական ներածություն

Դաս է 53
Ամփոփում և լրացուցիչ ծանոթություններ

ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍ

Դաս 1 58
Գոյական անվան սեռը – Ածական անվան սեռը – Ցուցական դերանուններ – Անձնական դերանուններ – ו շաղկապը – Այլ ծանոթություններ (את և גם բառերը) – Տեքստ

Դաս 2ա 62
Գոյականների և ածականների հոգնակի թիվը – Հոգնակի թվի հատուկ ձևեր – Հոգնակի թվի անձնական դերանունները – Հոգնակի թվի ցուցական դերանունները

Դաս 2բ 65
Դերանվանական վերջածանցներ – ו կցական շաղկապի հնչյունափոխությունները – ב կցական նախդիրը – Տեքստ

Դաս 3 69
Որոշյալ առում և որոշիչ հոդ – Ցուցական դերանուններ – Այլ ծանոթություններ (איש և אשה բառերի հոգնակի թիվը; לכ բառը) – Տեքստ 74

Դաս 4
Դերանվանական վերջածանցներ (հոգնակի թիվ) – של ստացական նախդիրը – ב նախդիրի գործածությունը որոշիչ հոդի հետ – Տեքստ

Դաս 5 78
ל նախդիրը – «Տրական հոլովի» դերանուններ – Ստացական դերանուններ – מן նախդիրը – Ածականների համեմատական աստիճանը – «Մեկ» թվականը – Տեքստ

Դաս 6ա 83
Եբրայերենի բայական համակարգը: Բայական արմատներն ու նրանց տեսակները – Բայական «կառույցներ» – לפע կառույցը – Անորոշ դերբայ

Դաս 6բ 86
לפע կառույցի բայերի ներկա ժամանակը – II կոկորդային արմատականով բայերի ներկա ժամանակը – II «թույլ» արմատականով բայերի ներկա ժամանակը – Ուղղության արտահայտման ձևերը – ב և ל նախդիրների հնչյունափոխությունը – Մակբայներ – Թվականներ – Շարահյուսական ծանոթություններ – Տեքստ – Երկխոսություն՝ שיחה ברחוב

Դաս 7 92
א״ל խմբի բայերը לפע կառույցում – ב״ל խմբի բայերը לפע կառույցում – צריך ածականը – Այլ ծանոթություններ (ו շաղկապի ձայնանիշափոխություն; պատկանելության արտահայտում ל մասնիկի միջոցով) – Տեքստ՝ שרה ודניאל – Երկխոսություն՝ סטודנט ומורה

Դաս 8 96
Բայական ծանոթություններ (בא, שאל, ידע, ראה բայերը) – Քանակական թվականներ – Շարահյուսական ծանոթություններ – ש հարաբերական շաղկապը – Տեքստ՝ דניאל ושרה ברחוב – Երկխոսություն՝ שיחה בטלפון

Դաս 9 100
Բայական ծանոթություններ (שתה, יצא, כאב բայերը) – Դասական թվականներ – כאשר ստորադասական շաղկապը – Հորդորման արտահայտում – Տեքստ՝ היום הראשון של שרה במשרד החדש – Երկխոսություն՝ איש חולה

Դաս 10 104
לעפ կառույցը – Բայակերտ գոյականներ – Արական սեռի քանակական թվականներ – Կցական նախդիրների հնչյունափոխությունը – Տեքստ՝ בבית־קפה

Դաս 11 108
Երկու սեռերի թվականների ամբողջական ցանկ – «Երկու» թվականը – Տարիքի նշումը – ב և ל նախդիրների հնչյունափոխությունը – Տեքստ՝ המשפחה של אהרון בן־אליעזר

Դաս 12 111
Կապակցված վիճակ – Դերանվանական վերջածանցներն իգական սեռի գոյականների հետ – Տեքստ՝ דירה בתל־אביב ובית בעיר קטנה

Դաս 13 116
Քառատառ բայեր – יכול պակասավոր բայը – רשאי մակբայը – Այլ ծանոթություններ (միայն հոգնակի թիվ ունեցող գոյականներ; חתם բայը; «համար» բառի արտահայտումը ל կցական նախդիրի միջոցով) – Երկխոսություն՝ דירה למכירה

Դաս 14 120
ליפע կառույցը – «Հայցական հոլովի» դերանուններ – Երկակի թիվ – «Այն» ցուցական դերանունը – Այլ ծանոթություններ (անդեմ կապակցություններ צריך բառով) – Տեքստ՝ ארוחת־צהרים במסעדה – Երկխոսություն՝ הם לא אוהבים אותי

Դաս 15 125
Նպատակը – Պատկերների հարակատար դերբայը – Այլ ծանոթություններ (ենթակայական դերբայով կազմված անդեմ ձևեր) – Երկխոսություն՝ Ես չեմ կարող հավատալ – Տեքստ՝ Ներողություն

Դաս 16 129
Տեքստ՝ Ռաբին սիրում է Երուսաղեմը և Թել Ավիվը

Դաս 17 131
Անցյալ ժամանակ (Պատկեր) – Ի և Ու բայերն անցյալ ժամանակում – Ի և Ու բայերը Պատկերի կառույցի ներկա ժամանակում – Այլ ծանոթություններ (Էր բայը; որոշիչ հոդը ժամանակամիջոց նշող բառերի հետ; «անցած» բառը; ամիսների անվանումները) – Տեքստ՝ Ահարոնը տանն ու աշխատանքում

Դաս 18 137
Ը բայերը Պատկերի կառույցի ներկա ժամանակում – Կոկորդային արմատականներով բայերի խոնարհման առանձնահատկություններն անցյալ ժամանակում – Տեքստ՝ Նշանի նամակը – Տեքստ՝ Երեք հարցազրույց

Դաս 19 140
Բայական ծանոթություններ (Ունի բայը) – Քանակական թվականների ամբողջական ցանկ (11–19) – Այլ ծանոթություններ («գալիք, հաջորդ» բառը) – Տեքստ՝ Ահարոն, պրոֆեսոր Կարն և քույրը Ռութ

Դաս 20 143
Պատկերի բայերն անցյալ ժամանակում – Այլ ծանոթություններ (Չի – Չկա; «ես ինքս, դու ինքդ...») – Տեքստ՝ Մայրը և երեխաները

Դաս 21 147
Ը բայերն անցյալ ժամանակում – Գույն նշող ածականները – Թվականներ – Այլ ծանոթություններ (Հայ բառի կրճատ ձևը; մակբայների կազմում ב կցական նախդիրի միջոցով) – Երկխոսություն՝ Հանդիպում ընկերների հետ – Տեքստ՝ Ընկերները

Դաս 22 151
Ավ Պատկերի բայերն անցյալ ժամանակում – Սմիխութ – Մասնագիտություն նշող բառերը – Թվականներ – Այլ ծանոթություններ (ב մասնիկը Ավ բայի հետ) – Տեքստ՝ Շաբաթ Շալոմ

Դաս 23 155
Երկխոսություն՝ Հարևանները նոր տանը

Դաս 24 158
Ավել Պատկերը – Ի և Ու բայերը Ավել Պատկերում – Ավել Պատկերի բայերն անցյալ ժամանակում – Շաբաթվա օրերը – Տեքստ՝ Ինչպե՞ս եք հասնում աշխատանքի – Երկխոսություն՝ Ես ուշանում եմ...

Դաս 25 163
Դերանվանական վերջածանցներով նախդիրներ – Տեքստ՝ Ես ուզում եմ ապրել Իսրայելում – Երկխոսություն՝ Ինչ եղանակ է այսօր

Դաս 26 166
Ը բայերը Ավ Պատկերում – Այլ ծանոթություններ (Լ մասնիկը Ունի բայի հետ) – Տեքստ՝ Ամերիկացի զբոսաշրջիկներ

Դաս 27 169
Ավել Պատկերը (շարունակություն) – Տեքստ՝ Դուդուն և Ռութը 172

Դաս 28
Գոյականների թիվը 10–ից բարձր թվականների հետ – Տեքստ՝ דוד מרדכי מקבל מכתב

Դաս 29 175
Հարյուրական թվականները – Տեքստ՝ בנמל התעופה

Դաս 30 177
פ״ג բայերը לעיל הפעל կառույցում – Սմիխութային կայուն կապակցությունների հոգնակի թիվը – כ կցական նախդիրը – Այլ ծանոթություններ (מה հարցական դերանունը ה կապակցությունից առաջ) – Երկխոսություն՝ האופטימיסט והפסימיסט

Դաս 31 180
פ״ג բայերը לעיל הפעל կառույցում (շարունակություն) – לעיל הפעל կառույցի բայերն անցյալ ժամանակում – Շարահյուսական ծանոթություններ (անուղղակի հարցը բարդ ստորադասական նախադասություններում) – Այլ ծանոթություններ («הֶתֶס, הֶתֶד...») – Տեքստ՝ שני מכתבים

Դաս 32 184
״פ բայերը לעיל נפעל կառույցում – Բայական այլ ծանոթություններ (את բայը) – Ածականների գերադրական աստիճանը – Հապավումներ – Հազարական թվականները – Դասական թվականների ամբողջական ցանկ – Այլ ծանոթոթյուններ (קרא բայի իմաստները) – Տեքստ՝ דוד ובת־שבע

Դաս 33 188
Ապառնի ժամանակ – לעיל פעל կառույցն ապառնի ժամանակում – Քառատառ բայերն անցյալ և ապառնի ժամանակներում – אם ,בת ,בן բառերը դերանվանական վերջածանցների հետ – Տեքստ՝ דניאל ושרה מקבלים הזמנה

Դաս 34 192
התפעל կառույցի բայերն ապառնի ժամանակում – לעיל פעל կառույցի բայերն ապառնի ժամանակում – אח և אב բառերը դերանվանական վերջածանցների հետ – מן նախդիրը դերանվանական վերջածանցների հետ – Տեքստ՝ איזו שמלה? – Տեքստ՝ סיפור כמעט מצחיק

Դաս 35 196
לעיל הפעל կառույցի բայերն ապառնի ժամանակում (շարունակություն) – ע״ו և ע״י կառույցի բայերն անցյալ ժամանակում – Հոգնակի թվի գոյականների հետ օգտագործվող դերանվանական վերջածանցները – אל և על կցական նախդիրները դերանվանական վերջածանցների հետ – כל բառը դերանվանական վերջածանցների հետ – Տեքստ՝ יום הולדתו של יהודה

Դաս 36 201
ע״ו և ע״י բայերն ապառնի ժամանակում – פ״י բայերը לעיל הפעל կառույցում – Այլ ծանոթություններ – Տեքստ՝ ...אני אוהב אותך

Դաս 37 204
״פ բայերն ապառնի ժամանակում – Հրամայական եղանակ – Այլ ծանոթություններ (בבקשה + անորոշ դերբայ; עמד բայը; לבד մակբայը դերանվանական վերջածանցների հետ) – Տեքստ՝ מזל טוב!

Դաս 38 208
לעיל התפעל կառույցի հրամայական եղանակը – Բայական այլ ծանոթություններ (ישׁן բայը; חקל բայի ապառնի ժամանակը) – Տեքստ՝ קוקוריקו־ריקו!

Դաս 39 211
לעיל הפעל կառույցի բայերն ապառնի ժամանակում – פ״א բայերը לעיל פעל կառույցի ապառնի ժամանակում – ל״ה բայերը לעיל פעל կառույցի ապառնի ժամանակում – נתן բայն ապառնի ժամանակում – Քառատառ բայերը לעיל התפעל կառույցում – Տեքստ՝ ...זה נכון – Երկխոսություն՝ מה יש בחנויות?

Դաս 40 216
Բայական ծանոթություններ (לוכי բայն անցյալ և ապառնի ժամանակներում; היה բայը) – Այլ ծանոթություններ (אי մասնիկով ժխտում) – Տեքստ՝ השנה הוא לא שכח – Երկխոսություն՝ הוא צריך הרבה דברים

Դաս 41 219
לעבד կառույցի բայերն ապառնի ժամանակում – Այլ ծանոթություններ (գերադրական աստիճանի կազմումը הכי բառով; «միջև» բառը) – Տեքստ՝ דרך לעיתון – אל תשים את כל הביצים בסל אחד

Դաս 42 222
Տեքստ՝ דרך לעיתון – אל תאמר!

Դաս 43 224
Շարունակական գործողության արտահայտում – Բայական այլ ծանոթություններ (הודה բայը) – Տեքստ՝ דרך לעיתון – האוצר

Դաս 44 226
ע״פ բայերն ապառնի ժամանակում – Այլ ծանոթություններ («Նույն» բառը) – Տեքստ՝ דרך לעיתון – החכמה האמתית

Դաս 45 228
אין մասնիկի գործածությունը – Այլ ծանոթություններ (הוא և היא դերանուններն այլ դերանունների հետ) – Տեքստ՝ דרך לעיתון – ארבאה סיפורים קצרים

Դաս 46 231
ה״ע/פ״ע բայերն ապառնի ժամանակում – לעבד կառույցի ל״ה բայերն ապառնի ժամանակում – Այլ ծանոթություններ (ו շաղկապի ձայնանիշափոխությունը) – Տեքստ՝ דרך לעיתון – על הורים וילדים

Դաս 47 234
Տեքստ՝ דרך לעיתון – איפה לגור?

Դաս 48 236
צ״פ բայերն לעבד կառույցում – Ածականով սմիխութային կապակցություններ – Այլ ծանոթություններ (שום բառը) – Տեքստ՝ דרך לעיתון – עזרת בית סטודנט

Դաս 49 238
Տեքստ՝ דרך לעיתון – מאה שערים

Դաս 50 240
ל״א բայերը לעבד կառույցում – Տեքստ՝ דרך לעיתון – ים־המלח

Դաս 51 242
«Երբեք» բառը – Տեքստ՝ דרך לעיתון – בגדים ומזג־האוויר

Դաս 52 244
נ״פ բայերը לעבד կառույցում – Տեքստ՝ דרך לעיתון – נשים ... נשים...

Դաս 53 247
Դերբայական դարձվածներ – Բայական ծանոթություններ (לפני բայն ապառնի ժամանակում) – Այլ ծանոթություններ (רשא բառը; כל բառը իր մասնիկով կապակցություններում) – Տեքստ՝ דרך לעיתון – מצדה

Դաս 54 250
ע״ע բայերը לעיל կառույցում – לעבד կառույց (շարունակություն) – Տեքստ՝ דרך לעיתון – הבדווים בישראל

253

Դաս 55
10–ից բարձր դասական թվականներ – Այլ ծանոթություններ (לי בלי նախդիրը դերանվանական վերջածանցների հետ) – Տեքստ՝ ירושלים - עיר דוד המלך – יתיעל דרך

Դաս 56 256
Տեքստ՝ ארץ נסעו בארם כך – יתיעל דרך

Դաս 57 258
ה״ל բայերը նպատ կառույցում – Տեքստ՝ יוסבתה – יתיעל דרך

Դաս 58 261
בין նախդիրը դերանվանական վերջածանցների հետ – Շարահյուսական ծանոթություններ (־ש և אשר հարաբերական շաղկապները բարդ ստորադասական նախադասություններում) – Տեքստ՝ הספרות היפה בחיי אדם – יתיעל דרך

Դաս 59 264
Տեքստ՝ רק בעברית! – יתיעל דרך

Դաս 60 266
פ״ג բայերը նպատ կառույցում – Տեքստ՝ שלושת אלפים שנה של הספרות העברית – יתיעל דרך

Դաս 61 268
Թվականների նիսմախայինն ձևերի գործածությունը – Տեքստ՝ מגילות ים־המלח – יתיעל דרך

Դաս 62 271
Անորոշ դերբայն այլ կցական նախդիրների հետ – Տեքստ՝ שבתי צבי – יתיעל דרך

Դաս 63 273
Ստորադասական եղանակ – Տեքստ՝ בבנק – יתיעל דרך

Դաս 64 276
ח״ל բայերը նիւս կառույցում – Տեքստ՝ בהכנסה – יתיעל דרך

Դաս 65 278
Կոտորակներ – Տեքստ՝ משורר, פילוסוף ומתמטיקאי – יתיעל דרך

Դաս 66 281
Տեքստ՝ שיידיש חזרה – יתיעל דרך

Դաս 67 283
ר״פ բայերը նպատ կառույցում – ־ין վերջավորությունը – Տեքստ՝ איך להציע נישואין? – יתיעל דרך

Դաս 68 286
Դերանվանական վերջածանցների գործածությունը բայերի հետ – Տեքստ՝ רצקל רשפא – יתיעל דרך

Դաս 69 289
Տեքստ՝ יפו נמל – יתיעל דרך

Դաս 70 291
ה״ל բայերը նիւս կառույցում – ח״ל և ל״ע բայերը նպատ կառույցում – Այլ ծանոթություններ (כך բառը նախդիրների հետ) – Տեքստ՝ שיחת חברות – יתיעל דרך

Դաս 71 294
ו״ע և ע״י բայերը նիւս կառույցում – Տեքստ՝ הכנסת הישראלית – יתיעל דרך

Դաս 72 296
Տեքստ՝ דרך לעיתון – הנשיא, הממשלה והשלטון המקומי בישראל

Դաս 73 298
Տեքստ՝ דרך לעיתון – שיכון לזוגות צעירים

Դաս 74 300
Տեքստ՝ דרך לעיתון – מכונת כבסיסה המשוכללת ביותר

Դաս 75 302
דרך לעיתון – רשית האלפבית՝ Տեքստ – ע״א և ר״ע բայերը ըստ կառույցում

Դաս 76 305
Պայմանական նախադասություններ – Տեքստ՝ דרך לעיתון – לו ואילו

Դաս 77 308
Պայմանական նախադասություններ (շարունակություն) – אנו צריכים אולם –
דרך לעיתון

Դաս 78 311
Տեքստ՝ דרך לעיתון – תיאודור (בנימין זאב) הרצל

Դաս 79 313
Տեքստ՝ דרך לעיתון – דויד בן־גוריון

Դաս 80 315
Տեքստ՝ דרך לעיתון – כך נולדה מדינת ישראל

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ 318
Ըստ հոգու կառույցը 324
Ըստ բուն կառույցը 364
Ժամանակադարձ ו–ը 381

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ 392

ԵԲՐԱՅԵՐԵՆ–ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ 408

ՀԱՅ–ԵԲՐԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ 490

Երկու խոսք իբրեւ նախաբան

Ձեր ձեռքին եբրայերեն լեզվի առաջին հայալեզու դասագիրքն է, որը հինգ տարվա աշխատանքի և ավելի քան տասը տարվա դասախոսական փորձի արդյունք է: Եբրայերեն լեզուն իր կայուն տեղն է զբաղեցրել Երևանի պետական համալսարանում դասավանդվող լեզուների շարքում, և նման մի դասագիրք ունենալու անհրաժեշտությունը ինչպես դասախոսի, այնպես էլ ուսանողի համար հասունացած է թվում:

Եբրայերենի համար գրված են տասնյակ դասագրքեր և տեղին է, կարծես թե, հարցնել՝ ինչո՞ւ չօգտվել դրանցից որևէ մեկով, ինչո՞ւ դասագրքերի այս երկար շարքին ավելացնել ևս մեկը, այն էլ՝ հայատառ: Հայերենին տեղ ամրագրել աշխարհի այն լեզուների պատվավոր ցանկում, որոնցով արևելագիտական ձեռնարկներ են գրվում, ինքնին կարելի էր բավարար համարել, սակայն սույն դասագիրքը գրելու հիմնական դրդապատճառն, այնուամենայնիվ, ավելի գործնական բնույթի էր: Բանն այն է, որ եբրայերենի առկա դասագրքերի ճնշող մեծամասնությունը հասցեագրված է Իսրայել ներգաղթողներին և, հետևաբար, նպատակ է հետապնդում հնարավորին կարճ ժամկետում մատուցել նրանց ամենատարրականն ու անհրաժեշտը, առանց, ինչպես հենց ի սկզբանե հայտարարվում է, ընկղմելու քերականական հորձանուտի մեջ: Հասկանալի է, որ նման մակերեսային դասագրքերը հնարավոր չէ կիրառել համալսարանում, որը կոչված է պատրաստելու լեզվի անհամեմատ ավելի խոր գիտելիքներ ունեցող պրոֆեսիոնալ լեզվաբանների: Ինչ վերաբերում է սակավաթիվ այն դասագրքերին, որոնք համապատասխանում են «համալսարանական» բնորոշմանը, ապա դրանք, հիմնված լինելով մեզ համար դեռևս խորթ կրթական մեթոդաբանության և լեզվամտածողության վրա կամ ունենալով այլ լուրջ թերություններ, քիչ պիտանի կլինեին հայ ուսանողի համար:

Դասագիրքը գրելիս, հեղինակն աչքի առաջ ունեցել է ռուսական և խորհրդային դասագրքագրության ու բառարանագործության լավագույն ավանդույթները, միևնույն ժամանակ խուսափելով ռուսալեզու դասական ձեռնարկների այնպիսի թերություններից, ինչպիսիք են, օրինակ, քերականական նյութի ծավալուն, գիտական տերմիններով գերհագեցած խրթին շարադրանքը կամ տեքստերի արհեստականությունն ու ծանրամարսությունը: Քերականական նյութը սույն դասագրքում մատուցվում է կարճ, մատչելի լեզվով, միջնակարգ դպրոցի ծրագրից ծանոթ քերականական տերմինների գործածությամբ գրված պարբերություններով, որոնք ուսանողի ու դասախոսի հարմարության համար համարակալված են: Ձգտելով ըստ հնարավորին պարզեցնել դասագրքի ընդհանուր ոճն ու շարադրանքը, հեղինակը, սակայն, երբեք չի մոռացել, որ այն, ի վերջո, հասցեագրված է համալսարանական արևելագետ ուսանողին, որի աճող մասնագիտական ինքնասիրությունը չարժե վիրավորել անտեղի ու չարդարացված պարզունակեցմամբ:

Դասագրքի պարզության վրա այսքան ծանրանալուց հետո, հեղինակն իր պարտքն է համարում շեշտել, որ այն ինքնուսույց չէ և ենթադրում է դասախոսի ակտիվ ներգրավվածություն: Դասախոսին է վերապահված քերականական որոշ նրբություննե-

րի բացատրությունը, ինչպես, օրինակ, բայի հետ այս կամ այն նախդիրների օգտագործումը և այլն:

Այդուհանդերձ, հեղինակը օգնության ձեռք է մեկնել նրանց, ովքեր կօգտվեն դասագրքից եբրայերենն ինքնուրույն ուսումնասիրելու համար և ընդգրկել է առաջին դասերում հայերեն տառադարձությունը, ինչն այլ պարագաներում պետք է դիտվեր որպես մեթոդաբանորեն չարդարացված քայլ:

Դասագրքի ուսումնական մասը բաղկացած է ութսուն դասից, որոնք պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խմբի դասերը (1-ից 40-ը) պարունակում են քերականական նյութի զգալի մասը, իսկ տեքստերը շարադրված են այնպես, որ նրանցում հնարավորին չափ շատ երևա տվյալ և նախորդող դասերի քերականական և լեզվական նյութը, ինչը երբեմն կարող է որոշ արհեստականություն ստեղծել: Օգտագործելով երաժշտական տերմինաբանությունը՝ կարելի է ասել, որ այս տեքստերը յուրատեսակ գամմաներ ու էտյուդներ են, որոնք օգնում են ուսանողին մշակել անհրաժեշտ լեզվական հմտություններ:

Քանի որ քերականական երևույթները յուրացվում են ոչ այնքան նրանց բացատրությունից, որքան օրինակներից, հեղինակը փորձել է հնարավորին չափ շատացնել դրանց թիվը՝ ընդգրկելով օրինակների մեջ տվյալ դասի նոր բառերն ու բառակապակցությունները: Սա հատկապես կարևոր է՝ նկատի ունենալով, որ նոր բառն ավելի հեշտ է ընկալվում, հիշվում ու յուրացվում բառակապակցության կամ կարճ նախադասության մեջ, քան առանձին վերցրած՝ ցուցակի տեսքով:

Երկրորդ մասի դասերում քերականական նյութը նկատելիորեն նվազում է, և առաջ է գալիս տեքստային մասը, որը դառնում է ավելի բնական, բարդ ու ոճապես բազմազան: Այս դասերի կարևոր մասն է «Ճանապարհ դեպի թերթ» բաժինը, որն աստիճանաբար պատրաստում է ուսանողին մամուլի ոճին ու բառապաշարին: Լսարանի պատրաստվածության ու պատրաստակամության դեպքում, դասախոսը կարող է ընդլայնել այս բաժինը լրացուցիչ նյութերով:

Չլինելով եբրայերենի լեզվի բնակիր, հեղինակը, բացառությամբ առաջին մի քանի դասերի, խուսափել է դասագրքի մեջ իր կողմից հեղինակած տեքստերի ընդգրկումից և օգտվել է եբրայերենի մի քանի լավագույն դասագրքերի* լեզվական նյութից, որը, ինչպես արդեն ակնարկվեց, ենթարկված է զգալի փոփոխությունների՝ ելնելով քերականության և բառապաշարի մատուցման տրամաբանությունից:

Հեղինակը չի ձգտել հավասարաչափ բաշխել քերականական նյութն ու նոր բառապաշարը դասերի միջև, ինչպես նաև պարտադիր չի համարել, որ յուրաքանչյուր դաս պարունակի նոր քերականություն: Մեկ տասնյակից ավել դասեր պարունակում են միայն տեքստային մաս ու վարժություններ, ինչը թույլ է տալիս ուսանողին կրկնել և յուրացնել նախորդ դասերի քերականական նյութը:

Թե՛ առաջին և թե՛ երկրորդ մասերի տեքստերում (երբեմն նաև ընթերցարանում) ուսանողը հանդիպելու է տողատակերի, որոնք հղում են համապատասխան քերականական նյութը պարունակող պարբերությանը: Սա արված է այն նպատակով, որ ուսանողը պարբերաբար թարմացնի հիշողության մեջ անցած նյութը և նոր օրինակների օգնությամբ ավելի լավ յուրացնի և ամրագրի այն: Հեղիակն ուստի կոչ է անում ուսանողին չխնայել դասագիրքը և չզլանալ նրա էջերն անընդհատ ետ շրջելուց:

Դասագրքի առանձնահատկություններից է մեխանիկական ոճի վարժությունների սահմանափակ թիվը, որոնցից ուսանողները, որպես կանոն, խուսափում են: Այստեղ հեղինակը ղեկավարվել է սեփական դասախոսական փորձից բյուրեղացած համոզմամբ, որ լավագույն և ուսանողի կողմից առավել սիրված վարժությունը թարգմանությունն է. այն ներգրավում է ուսանողին լեզվակառուցման մեջ, ակտիվացնում ու ամրա-

* "עברית בקלות", "שעת העברית", "עברית חיה" , "אהבה בעברית קלה", "מקראיתון"

գրում ենթագիտակցության մեջ կուտակվող քերականական գիտելիքներն ու պասիվ բառապաշարը: Սա հատկապես կարևոր է, երբ լեզուն ուսումնասիրվում է համապատասխան լեզվական միջավայրից դուրս: Ուստի հեղինակը ջանացել է ընդգրկել դասագրքի մեջ հնարավորին չափ մեծ ծավալի թարգմանական վարժություններ: Որոշ դեպքերում թարգմանության համար տրվող նախադասության կառուցվածքը հուշում է ուսանողին երբայերեն նախադասության ճիշտ շարահյուսությունը, հանգեցնելով հայերենի շարահյուսական նորմերի խախտմանը, ինչի համար հեղինակը հայցում է մայրենիի համար ցավողների ներողամտությունը:

Թարգմանական վարժությունները պետք է կատարվեն և որպես տնային գրավոր աշխատանք, և բանավոր կերպով՝ լսարանում (առնվազն հինգ նախադասություն յուրաքանչյուր ուսանողին): Վերջին դեպքում դասախոսը կարող է առաջարկել ուսանողին որոշ փոփոխություններ կատարել թարգմանված նախադասության մեջ, օրինակ՝ փոխել ենթակայի սեռը կամ թիվը, ստորոգյալի ժամանակը, և այլն: Ելնելով նախադասության իմաստից՝ դասախոսը կարող է հարցեր տալ, ներգրավելով ուսանողին խոսակցության մեջ: Չափազանց կարևոր է, որ դասախոսն օգնի ուսանողին հաղթահարել օտար լեզվով արտահայտվելու վախը, բացատրելով, որ օտար լեզվով խոսելիս սխալվելը միանգամայն նորմալ երևույթ է և ամենևին ամոթալի չէ: Լսարանում բանավոր թարգմանություններ կատարելիս, դասախոսը պետք է ձգտի նրան, որ ուսանողը կենտրոնանա ոչ այնքան քերականորեն և շարահյուսորեն ճիշտ կապակցություն արտաբերելու վրա, ինչը միանգամայն տեղին է տնային գրավոր թարգմանության պարագայում, որքան կարողանա հնարավորին չափ արագ, առանց բարդույթի և անկաշկանդ կերպով միտք արտահայտել ուսումնասիրվող լեզվով:

Դասախոսին խորհուրդ է տրվում յուրաքանչյուր տասը դասից հետո անցկացնել լսարանում գրավոր թեստ, որը կպարունակի թարգմանության համար տրված հայերեն ու երբայերեն քսանականից ոչ պակաս նախադասություններ: Նման թեստերը, որոնք փաստորեն կհանդիսանան միջանկյալ քննություններ, թույլ կտան դասախոսին ավելի ստույգ պատկերացում կազմել ուսանողի առաջադիմության մասին:

Քանի որ դասագիրքը նախատեսված է առաջին հերթին ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի արաբագետ ուսանողների համար, որոնք երբայերենն ուսումնասիրում են որպես երկրորդ սեմական լեզու, դասախոսը, եթե տիրապետում է արաբերենին, կարող է, քերականական այս կամ այն երևույթը բացատրելիս, զուգահեռներ անցկացնել արաբերենի հետ կամ քաջալերել ուսանողներին կռահել նոր բառի իմաստն արաբերենի միջոցով: Սա լրացուցիչ հետաքրքրություն ու թարմություն է հաղորդում ուսումնական գործընթացին, վստահություն ներշնչում ուսանողներին և հնարավորություն տալիս նրանց կատարել առաջին փորձնական քայլերը համեմատական սեմագիտության ասպարեզում:

Երկու խոսք դասագրքում կիրառվող ձայնանշության համակարգի մասին: Երբայերեն լեզվի ժամանակակից դասագրքերի ճնշող մեծամասնությունը սկզբունքորեն խուսափում է ձայնանիշերից: Սա ունի գործնական նշանակություն, որի մասին արդեն ասվել է: Համալսարանական դասագիրքն, այնուամենայնիվ, չի կարող անտեսել ու շրջանցել ձայնանիշերի գոյությունը, քանի որ երբայերեն ուսումնասիրող արևելագետ ուսանողը պարտադիր կերպով պետք է ծանոթ լինի ձայնանիշերի համակարգին և ձայնավորման հիմնական սկզբունքներին: Սակայն քանի որ երբայերենի ավանդական ձայնավորման հիմքում ընկած է սույն դասագրքի առարկան չհանդիսացող հին երբայերենի հնչյունական համակարգը, հեղինակը նպատակահարմար է գտել չծանրաբեռնել ուսանողին ձայնանիշադրության այն կանոններով, որոնք բացատրելի չեն արդի երբայերենի հնչյունական առանձնահատկություններով և կարող են միայն խառնաշփոթ առաջացնել և կեղծ կարծիք ստեղծել, թե լեզուն ավելի բարդ է, քան կա իրականում:

Դասագիրքն սկսվում է դասական՝ «պակասավոր» ուղղագրությամբ և ձայնանիշերի ողջ հավաքածույով: Ապա ձայանահիշերը, ըստ հեղինակի կողմից մշակված սկզբունքի, աստիճանաբար պակասում են և գրեթե ամբողջությամբ անհայտանում ուսումնական մասի վերջին տեքստերում և ընթերցարանում: Դրան զուգահեռ՝ «պակասավոր» ուղղագրությունն աստիճանաբար փոխարինվում է Իսրայելում ներկայումս ավելի տարածված «ամբողջական» ուղղագրությամբ: Արդյունքում ուսանողը պետք է մշակի ինչպես ձայնավորված, այնպես էլ չձայնավորված տեքստեր ընթերցելու հմտություններ:

Ուղղագրության հարցն արդի եբրայերենի ամենացավոտ հարցերից մեկն է: Չնայած որ Եբրայերեն լեզվի ակադեմիան մշակել է ուղղագրության հստակ կանոններ, դրանք շատ հաճախ անտեսվում են, և Իսրայելում շարունակում է ուղղագրական խառնաշփոթ տիրել: Այդ խառնաշփոթը ներթափանցել է նաև սույն դասագրքի էջերի մեջ, սակայն հեղինակը նպատակահարմար է գտել չպայքարել դրա դեմ, որպեսզի ուսանողը պատկերացում կազմի այդ ոլորտում տիրող իրական իրավիճակի մասին:

Դասագրքի երկրորդ մասը բաղկացած է ընթերցարանից, որում զետեղված են տարբեր բարդության և ոճի տեքստեր: Բնական է, որ ընթերցարանի սկզբնամասում տեղ են գտել ավելի հեշտ, պարզեցված տեքստերը, մինչ վերջնամասի տեքստերը վերցված են իսրայելյան մամուլից ու գրականությունից և որևէ փոփոխությունների ենթարկված չեն: Դասախոսից և ուսանողից չի ակնկալվում իրար հետևից անդրադառնալ ընթերցարանի բոլոր տեքստերին, և այս կամ այն տեքստի ընտրությունն անշուշտ պայմանավորված կլինի ուսանողների լեզվական պատրաստվածության մակարդակով: Ելնելով ուսումնական գործընթացի անհրաժեշտությունից կամ սեփական նախասիրություններից՝ դասախոսն, իհարկե, կարող է առաջարկել ուսանողներին այլ տեքստեր, նամանավանդ որ Համացանցը տալիս է լեզվական նյութի ընտրության անսպառ հնարավորություններ: Այնուամենայնիվ, դասախոսի ուշադրությունը հրավիրվում է այն հանգամանքի վրա, որ քերականական մի քանի երևույթներ զետեղված են ընթերցարանի հատվածում, և դրանց հետ կապված տեքստերի յուրացումն անհրաժեշտ է:

Հեղինակը ցավով նշում է, որ իր սկզբնական մտադրությանը հակառակ, չհաջողվեց եբրայերեն տեքստերի միջոցով հետևողականորեն և կանոնավոր կերպով մատուցել ուսանողին հրեական պատմությունը, կրոնն ու մշակույթը: Այնուամենայնիվ, տեքստերի մի զգալի մասը ինչպես ուսումնական հատվածում, այնպես էլ ընթերցարանում ուսանողին տալիս է պատկերացում նշված ոլորտների մասին: Հեղինակը հուսով է, որ դասախոսը կլրացնի տեքստերի մեջ պարունակվող ինֆորմացիան սեփական պարզաբանումներով՝ հարստացնելով ուսանողների գիտելիքներն ուսումնասիրվող լեզվով խոսող ժողովրդի մասին:

Դասագրքի վերջնամասում ուսանողը կգտնի քերականական աղյուսակներ, որոնք ի մի են բերում եբրայերենի բայական համակարգը, ինչպես նաև քերականական այլ երևույթներ: Աղյուսակներում զետեղված են նաև որոշ հազվադեպ հանդիպող բայաձևեր, որոնց անդրադարձ չի արվել ուսումնական մասում:

Դասագրքի կարևոր մասն է եբրայերեն-հայերեն ընդարձակ բառարանը: Ի տարբերություն ընթերցարան պարունակող դասագրքերի մեծամասնության՝ սույն դասագրքի եբրայերեն-հայերեն բառարանը պարունակում է ընթերցարանի ողջ բառապաշարը և ազատում ուսանողին լրացուցիչ բառարան հայթայթելու անհրաժեշտությունից: Ավելին՝ բառարանը պարունակում է նաև մեծ թվով բառեր, որոնք չեն հանդիպում դասագրքում, սակայն որոնք կարելի է դասել առավել գործածելի բառերի ցանկին: Սա թույլ է տալիս հեղինակին հուսալ, որ ուսանողը, դասագրքի վերջին էջը պատվով շրջելուց հետո դեռ որոշ ժամանակ կշարունակի օգուտ քաղել նրա բառարանից:

Հայերեն-եբրայերեն բառարանն իր ծավալով զիջում է եբրայերեն-հայերեն բառարանին և հիմնականում կոչված է օգնել ուսանողին կատարել թարգմանական

վարժությունները: Պետք է նկատի ունենալ, որ թեև հեղինակը ջանացել է երկու բառարաններում էլ ընդգրկել յուրաքանչյուր բառի հիմնական բոլոր իմաստները, դա չի ընկալվել որպես պարտադիր պայման:

Հեղինակը, անշուշտ, գիտակցում է, որ դասագիրքը զերծ չէ թերություններից ու բացթողումներից և կանխավ իր երախտագիտությունն է հայտնում նրանց, ովքեր նպատակահարմար կգտնեն հայտնել իրենց դիտողությունների ու առաջարկների մասին:

Հեղինակն իր ամենախորին երախտագիտությունն է հայտնում անանուն մնալ նախընտրած հայ բարերարին՝ գրքի հրատարակման ծախսերի մեծագույն մասը հոգալու համար:

Հեղինակը երախտագիտություն է հայտնում պարոն Ցոլակ Մոմջյանին՝ գրքի հրատարակմանը ցուցաբերած ֆինանսական աջակցության համար:

Հեղինակը երախտագիտություն է հայտնում նաև ԵՊՀ արաբագիտության ամբիոնի վարիչ Սամվել Կարաբեկյանին՝ ընդհանուր աջակցության և մասնագիտական բնույթի արժեքավոր խորհուրդների համար և իսրայելցի լրագրող Յոավ Կառնիին՝ Հայաստանի մասին իր հոդվածաշարը դասագրքում ընդգրկելու թույլտվության համար:

Արման ՀԱԿՈԲՅԱՆ

ԵԲՐԱՅԵՐԵՆ ԼԵԶՎԻ ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Մ.Թ.Ա.

≈XIV դ.
Եբրայական ցեղերը Միջագետքից գաղթում են Քանաան, ապա նրանց հիմնական մասն ուղղվում է դեպի Եգիպտոս, հավանաբար՝ երաշտից փրկվելու համար:

≈1250
Հրեաները հեռանում են Եգիպտոսից դեպի Քանաան («Ելք Եգիպտոսից»):

1200-1020
Հրեական 12 ցեղերը գրավում են Քանաանը և ստեղծում ժամանակավոր ցեղային միություններ «դատավորների» առաջնորդությամբ:

≈1200
Քանաանի հարավային մերձափնյա շրջաններում բնակություն են հաստատում ֆիլիստիմացիները:

1020
Սամուել մարգարեն հռչակում է Շաուլին հրեական միացյալ Իսրայելի թագավորության առաջին թագավոր:

Իսրայելի պետական լեզուն՝ եբրայերենը, աշխարհի հնագույն ու պատմալեզվական մեծ արժեք ներկայացնող լեզուներից է, որն անցել է զարգացման եզակի ուղի: Պատմության թատերաբեմ մտնելով որպես ոչնչով աչքի չընկնող (բացի, թերևս, իր միաստվածական կրոնից) նահապետական քոչվոր ցեղի լեզու, այն դարձավ հուդայականության ու քրիստոնեության սուրբ գրքի՝ Հին կտակարանի լեզուն՝ ստանալով հին աշխարհի դասական լեզուներին հավասար կարգավիճակ: Մոտ մեկ հազարամյակ լինելով հին հրեաների՝ եբրայեցիների կենդանի լեզուն, եբրայերենն այնուհետև երկու հազար տարի գոյատևել է, ինչպես լատիներենը կամ սանսկրիտը, որպես լոկ կրոնի ու գրականության լեզու, ապա 19-րդ դարի վերջից նորից դարձել կենդանի խոսակցական, իսկ 1948 թվականից՝ Իսրայելի պետական լեզուն: Եբրայերենի այս աննախադեպ վերակենդանացումը հիրավի համարվում է պատմալեզվական բացառիկ երևույթ:

Եբրայերենը պատկանում է սեմա-քամական (աֆրասիական) լեզվընտանիքի սեմական ճյուղի հյուսիս-արևմտյան խմբին: Այս խմբին պատկանում են նաև մերձավորարևելյան մի քանի մեռած լեզուներ՝ քանաաներենը[1], սրանից գրեթե չտարբերվող փյունիկերենն ու մոավերենը[2] (այս լեզուները եբրայերենի հետ միասին կազմում են «քանաանական» ենթախումբը), ինչպես նաև ամորերենը, էբլայերենը, ուգարիթերենն ու արամեերենը՝ իր բազմաթիվ տարբերակներով, ներառյալ դասական ասորերենը (Syriac, չշփոթել ասորա-բաբելոներենի (աքքադերենի) հետ, որը պատկանում է սեմական խմբի հյուսիսարևելյան ճյուղին[3]): Եբրայերենից բացի, հյուսիս-արևմտյան սեմական լեզուներից վերապրել է միայն արդի ասորերենը, որը, անցելով զարգացման ուրույն ուղի, բավականին հեռացել է սեմական լեզուներին բնորոշ քերականական կառուց-

[1] «Քանաան» էր կոչվում Պաղեստինի և Փյունիկիայի տարածքը մինչև հրեական ցեղերի ներխուժումը մ.թ.ա. երկրորդ հազարամյակի երկրորդ կեսում: Քանաանը հանդիսանում է այբբենական գրի բնօրրանը:
[2] Մոավ երկիրը գտնվում էր Մեռյալ ծովից արևելք՝ ժամանակակից Հորդանանի միջին հատվածում:
[3] Ասածից հետևում է, որ ժամանակակից ասորիները իրականում արաբացումից խուսափած արամեացիներ են և, տարածված պատկերացմանը հակառակ, չեն հանդիսանում Հին Ասորեստանի ժողովրդի շառավիղները:

վածքից: Ինչ վերաբերում է սեմական լեզուներին ընդհանրապես, ապա եբրայերենից ու արդի ասորերենից բացի, կենդանի լեզուների թվին են պատկանում արաբերենն իր բազմաթիվ բարբառներով[1], Եթովպիայի պետական լեզու ամհարերենը[2] և Եթովպիայում ու Էրիթրեայում տարածված մի քանի այլ լեզուներ:

Եբրայերենի ծագման հարցը, բնականաբար, անմիջականորեն կապված է հրեա ժողովրդի պատմության հնագույն շրջանի հետ: Թանախից[3] հայտնի պատմությունն Աբրահամ հայրապետի ու իր տոհմի՝ Միջագետքի[4] Քաղդեացվոց Ուր քաղաքից դեպի «ավետյաց երկիր» Քանաան ճամփորդության մասին, առասպելացված կերպով արտահայտում է պատմական համարվող այն փաստը, որ եբրայական ցեղերը մ.թ.ա. երկրորդ հազարամյակի կեսին իրոք անցել են այդ ճանապարհը: Թե ինչու հնագույն եբրայեցիները, որոնք, ամենայն հավանականությամբ, արամեական կամ ամորական ծագում ունեցող ցեղախումբ էին, նախընտրեցին լքել բերրի Միջագետքը, այսօր կարելի է միայն գուշակել: Հավանաբար նրանք հարկադրված են եղել դիմել այդ քայլին կրոնական նկատառումներով, քանի որ իրենց միաստվածական հավատալիքների պատճառով կարող էին ենթարկված լինել խտրականության և հալածանքների: Աբրահամ նահապետի կերպարն այդ ճանապարհորդությունը առաջնորդած ցեղապետերի հավաքական մարմնավորումն է:[5]

Հաստատվելով Քանաանում՝ եբրայեցիները հայտնվեցին զարգացման անհամեմատ ավելի բարձր մակարդակի վրա գտնվող քանաանա-փյունիկյան քաղաքակրթության ուժեղ ազդեցության տակ և ժամանակի ընթացքում յուրացրեցին քանաաներենը՝ ստեղծելով իրենց հին լեզվի որոշ ազդեցությունը կրած ևս մեկ քանաանական բարբառ: Սա նշանակում է, որ եբրայերենն իրականում քանաաներենի շառավիղն ու շարունակությունն է, ինչի օգտին է խոսում այն փաստը, որ Թանախի ամենավաղ հատվածներում եբրայեցիներն իրենց լեզուն անվանում են «քանաաներեն» (եբրայերեն՝ *սղֆաթ քընաան*): Երբ ավելի ուշ շրջանում եբրայեցիների կողմից Քանաանի նվաճմամբ ստեղծված եբրայա-քանաանական քաղաքական սուր անտագոնիզմին Թանախի հեղինակների կողմից տրվեց հստակ կրոնական հիմնավորում, և «քանաանական» բառը դարձավ եբրայեցիների պատկերացմամբ հեթանոսության վատագույն դրսևորումների խորհրդանիշը, *սղֆաթ քանաան*

1000-961
Դավիթ արքան թագավորում է Իսրայելը, գրավում է Երուսաղեմը հեբուսացիներից և հռչակում այն իր մայրաքաղաքը:

961
Սողոմոնը դառնում է Իսրայելի թագավոր և կառուցում է Երուսաղեմի Տաճարը:

922
Սողոմոնի մահից հետո թագավորությունը բաժանվում է երկու մասի՝ հյուսիսային (Իսրայել, մայրաքաղաքը՝ Շիլո) և հարավային (Հուդա, մայրաքաղաքը՝ Երուսաղեմ):

722
Ասորեստանը գրավում է հյուսիսային Իսրայելի թագավորությունը և գերության տանում այն բնակեցնող 10 հրեական ցեղերը, որոնք այնուհետև անհայտանում են պատմության թատերաբեմից («Տասը կորած ցեղեր»):

586
Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագավորը վերջ է դնում Հուդայի անկախությանը, ավերում է Երուսաղեմն ու Տաճարը և հրեաներին գերության տանում Բաբելոն:

539
Աքեմենյան Կյուրոս թագավորը գրավում է Բաբելոնը և թույլ տալիս հրեաներին վերադառնալ Հուդա:

515
Ավարտվում է Երուսա-

---

[1] Դրանցից մեկը՝ Մալթայի բարբառը, որը մոտ է Թունիսի բարբառին, վերածվել է ինքնուրույն լատինատառ լեզվի:

[2] Ինչպես և արդի ասորերենը, ամհարերենը նույնպես կորցրել է սեմական լեզուներին բնորոշ հատկանիշներից շատերը և զգալիորեն տարբերվում է իր վաղ միջնադարյան տարբերակից՝ *գեեզից*: Այս վերջինն իր քերականությամբ ու բառապաշարով բավականին մոտ էր դասական արաբերենին:

[3] Հին կտակարանի եբրայերեն անվանումն է՝ կազմված «Թորա» (Մովսեսի Հնգամատյան), «Մարգարեներ» և «Գրություններ» եբրայերեն բառերի սկզբնատառերից:

[4] Հրեաների նախնիները, ամենայն հավանականությամբ, Միջագետք էին եկել Արաբական թերակղզուց, որը գիտնականների մեծ մասը մատնանշում է որպես սեմական ժողովուրդների բնօրրան և որից նրանք մի քանի ալիքներով արտագաղթել են սկսած մ.թ.ա. երրորդ հազարամյակից, վերջիններս լինելով արաբները՝ մ.թ. յոթերորդ դարում:

[5] Չի բացառվում, որ «Աբրահամ» անվան հիմքում կարող է ընկած լինել եբրայեցի ցեղապետերի տիտղոսը, օրինակ՝ *ավ(վա)-արամ* «արամեացիների հայր»:

ղեմի Երկրորդ Տաճարի շինարարությունը:

445
Արտաքսերքսեսի կողմից Հուդայի կառավարիչ նշանակված Նեեմիան վերակառուցում է Երուսաղեմի պարիսպը: Եզրա դպիրը հասարակական ու կրոնական բարեփոխումներ է նախաձեռնում:

332
Ալեքսանդր Մակեդոնացին գրավում է Պաղեստինը:

320-198
Պաղեստինը Պտղոմեոսների իշխանության տակ:

198-167
Պաղեստինը սելեւկյան տիրապետության տակ:

167
Սելևկյան Անտիոքոս IV թագավորն արգելում է հուդայական կրոնը և պղծում Տաճարը, որին ի պատասխան հրեաները՝ Մակաբեացիների (Խասմոնեյաններ) գլխավորությամբ, ապստամբում են Սելևկյանների դեմ:

164
Եհուդա Մակաբեացին գրավում է Երուսաղեմը և վերականգնում Տաճարը (ի հիշատակումն դրա սահմանվում է Խանուկա տոնը):

160-63
Հուդան այլ Խասմոնեյանների տիրապետության տակ: Կրոնա-փիլիսոփայական և քաղաքական հակադիր խմբավորումների ձևավորում (փարիսեցիներ և սադուկեներ):

տերմինը եբրայեցիների համար անընդունելի դարձավ և փոխարինվեց «հուդայերեն» (*յէհուդիթ*), կամ պարզապես՝ «սուրբ լեզու» (*լշօն հակկօդէշ*) տերմիններով: Ավելի ուշ՝ հռոմեական շրջանում, ի հայտ է գալիս *լշօն իվռի(թ)* տերմինը (հունարեն՝ *Hebraios*, որից և ծագում է հայերեն «եբրայերեն» բառը):

Ինչ վերաբերում է *իվռի* բառին, ապա, ավանդապահների կարծիքով, այն ծագել է Նոյի թոռ՝ Սեմի որդի Էվեռի (հայկական ավանդական ձևը՝ Եբեր) անունից, որը, ըստ Թանախի, եղել է հրեաների նախահայրը: Ավելի գիտական մի տեսություն գտնում է, որ բառը կապված է «անցնել, հատել» նշանակող քանաանա-եբրայական עבר արմատի հետ և արտացոլում է այն փաստը, որ եբրայական ցեղերը Միջագետքից Քանաան են հասել «անցնելով» Եփրատ գետը: Տրամաբանական է թվում, որ այսպես պետք է կոչեին եկվոր «անդրգետացիներին» քանաանացիները և նրանց միջոցով՝ տարածաշրջանի մյուս ժողովուրդները: Այսպես, եգիպտական աղբյուրներում հիշատակվում են *հաբիռու* կոչվող ցեղերը, որոնք, գիտնականների կարծիքով, եբրեյեցիներն են:

* * *

Եբրայերեն լեզվի պատմությունը բաժանվում է մի քանի փուլերի՝ «աստվածաշնչային», «հետաստվածաշնչային»[1], միջնադարյան և արդի:

«ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱՅԻՆ» ԵԲՐԱՅԵՐԵՆ

Աստվածաշնչային եբրայերենը, ինչպես ինքն անվանումն է հուշում, հիմնականում հայտնի է Թանախում զետեղված դիցաբանական, կրոնաիրավագիտական, պատմական և գեղարվեստական ստեղծագործություններից, որոնք գրվել, խմբագրվել ու վերախմբագրվել են գրեթե մեկ հազարամյակի ընթացքում և ի վերջո ամբողջացվել ու կանոնակարգվել են Հին կտակարանի տեսքով: Այս լեզուն անցել է զարգացման երկու փուլ՝ վաղ աստվածաշնչային (մ.թ.ա. XII-VI դդ., այսինքն՝ եբրայական ցեղերի[2] կողմից Քանաանի գրավումից մինչև Հուդայի թագավորության անկումն ու հրեաների Բաբելոնյան գերությունը) և ուշ աստվածաշնչային (մ.թ.ա. V-II դդ., այսինքն՝ հետբաբելոնյան ժամանակաշրջանից մինչև Մակաբեացիների իշխանության ավարտը):

[1] Այս երկու փուլերի լեզուն հաճախ անվանվում է հին եբրայերեն:

[2] Ըստ Թանախի մեջ ամրագրված կրոնապատմական ավանդույթի՝ այդ ցեղերը տասներկուսն էին՝ Դան, Շիմոն, Նաֆտալի, Էֆռայիմ, Զվուլուն, Իսախխար, Աշեռ, Մենաշե, Ռեուվեն, Գադ, Եհուդա, Բինյամին: Բացի վերջին երկուսից, մնացած բոլորը մ.թ.ա. VIII դարում գերության են տարվում Ասորեստան, ուր ի վերջո ձուլվում են, ստանալով «տասը կորած ցեղեր» անվանումը:

Վաղ աստվածաշնչային եբրայերենով են գրված Թորան (նույն ինքը Մովսեսի Հնգամատյանը՝ Թանախի առաջին հինգ գլուխները), մարգարեական ու դատավորաց գրքերը, Թագավորությունների գրքերը և Թանախի մի քանի այլ գլուխները: Թանախում արձանագրված եբրայերենի հնագույն նմուշը համարվում է «Դեբորայի[1] երգը»: Այս շրջանում եբրայերենը գործում էր նաև որպես Իսրայելի միացյալ թագավորության[2], իսկ նրա տրոհումից հետո՝ հյուսիսային (Իսրայել, 922-724 թթ.) ու հարավային (Հուդա, 922-587 թթ.) թագավորությունների պաշտոնական լեզու:

Ուշ աստվածաշնչային եբրայերենով են գրված Սաղմոսները, «Երգ Երգոցը», մարգարեական մի քանի գրքեր: Այս շրջանում, որը մոտավորապես սկսվում է Բաբելոնյան գերությունից հրեաների ազատագրումով, եբրայերենը, հարակից սեմական այլ լեզուների հետ մեկտեղ, սկսում է աստիճանաբար դուրս մղվել արամեերենի կողմից որպես խոսակցական, սակայն շարունակում է օգտագործվել որպես գրական ու ծիսական լեզու, կրելով այնուամենայնիվ արամեերենի զգալի ազդեցությունը: Հրեական միջավայրում արամեերենի նշանակության ու ազդեցության մասին վկայում է այն փաստը, որ Թանախի վերջնամասում զետեղված գլուխները (Եզրասի ու Դանիելի գրքերը) արդեն գրված են արամեերենով: Հետագայում ստեղծվում են նաև ամբողջ Թանախի արամեերեն մի քանի թարգմանություններ, որոնք հայտնի են արամեական *թարգում* («թարգմանություն») անունով: Թրանցից առավել հայտնին և հուդայական կրոնական դպրոցներում հատուկ ուսումնասիրվողը հուդայականություն ընդունած հույն Օնկելոսի թարգմանությունն է՝ հայտնի որպես *Թարգում Օնկելոս:*

Աստվածաշնչային եբրայերենը, չնայած ընդգրկում է գրեթե մեկ հազարամյակ, աչքի է ընկնում քերականության ընդհանուր կայունությամբ, թեև շարադրանքի ոճի վրա զգալի է այս կամ այն ժամանակաշրջանի խոսակցական լեզվի ազդեցությունը: Թանախի ընդհանուր բառապաշարը կազմում է մոտավորապես ութ հազար բառ: Արդի եբրայերենի առավել գործածելի հազար բառից ութ հարյուրը հանդիպում են Թանախում:

Եբրայերենն իր պատմության ամենավաղ շրջանից ևեթ գրավոր լեզու էր: Չպետք է մոռանալ, որ նվաճելով Քանաանը, եբրայեցիները հայտնվեցին մի երկրում, որը ճանաչված է որպես տառային այբուբենի բնօրրան: Գրի ու գրականության հարուստ ավանդույթներ ունեին նաև հարակից երկրները, հատկապես՝ Եգիպտոսն ու Միջագետքը: Եբրայեցիները բավականին արագ փոխ առան փյունիկյան գիրը, որն իրենց մոտ ժամանակի ընթացքում ինքնուրույն զարգացում ապրեց և որոշակիորեն հեռացավ փյունիկյան սկզբնատեսակից: Այս գիրը մասնագիտական գրականության մեջ հաճախ անվանվում է «պալեոհրեական»:

70
Տիգրան Մեծի բանակը պաշարում է Հուդայի հյուսիսային Աքքո քաղաքը, սակայն Սալոմե-Ալեքսանդրա թագուհին կարողանում է հարուստ ընծաներով կանխել հայոց բանակի հետագա առաջխաղացումը: Տիգրան Մեծն իր հետ Հայաստան է բերում հազարավոր հրեաների, որոնց բնակեցնում է Տիգրանակերտում ու Արտաշատում:

63
Հռոմեացիները գրավում են Հուդան: Խասմոնեյանների իշխանությունը պահպանվում է Հռոմի գերակայության ներքո:

37
Հռոմը Հուդայի թագավոր է ճանաչում Հերովդես Մեծին (մ.թ.ա. 37-4): Հերովդեսի մահից հետո Հուդան բաժանվում է նրա երեք որդիների միջև:

Մ.Թ.

6
Հռոմը՝ ի դեմս պրոկուրատորների, դնում է Հուդան իր ուղղակի կառավարման տակ:

Հայաստանի թագավոր է դառնում Տիգրան Ե-ն՝ Հերովդես Մեծի թոռը:

26-36
Հուդան կառավարում է Պոնտիոս Պիլատոս պրոկուրատորը, որը, ըստ Նոր կտակարանի, տվել է Հիսուս Քրիստոսին խաչելու հրամանը:

66
Հրեաները ապստամբում են Հռոմի դեմ:

68-69
Կրոնագետ Յոխանան Բեն Զաքքայը փախչում է պաշարված Երուսա-

[1] Քանաանցիների դեմ հրեական ցեղերի պատերազմներից մեկը գլխավորած ու ոգեշնչած հերուսուհի ու մարգարե:

[2] Դավիթ ու Սողոմոն թագավորների օրոք՝ մ.թ.ա. 1000-922 թթ.:

ղեմից և ուսումնական կենտրոն («Սինեդրիոն») հիմնում Յավնե քաղաքում, մշակելով Երուսաղեմի հնարավոր անկման դեպքում հրեաների առանց հայրենիքի գոյատևելու հիմնական սկզբունքները:

70
Տիտոսը գրավում ու ավերում է Երուսաղեմը:

73
Ապստամբների վերջին հենակետ Մասադա ամրոցի անկումը:

≈100
Յավնեի Սինեդրիոնը քայլեր է ձեռնարկում Քրիստոսին որպես Մեսիա ճանաչողներին հրեաների հիմնական զանգվածից տարանջատելու ուղղությամբ, ինչը նպաստում է հուդայականության ու քրիստոնեության վերջնական տարանջատմանը:

132-135
Հեռմեացիները ճնշում են Շիմոն Բար-Կոխբայի գլխավորած հրեաների ապստամբությունը: Ադրիանոս կայսրը վերակառուցում է Երուսաղեմը հռոմեական ոճով և վերանվանում այն *Էլիա Կապիտոլինա*: Երկիրը պաշտոնապես վերանվանվում է «Պաղեստին»: Հրեաներին արգելվում է մուտք գործել Երուսաղեմ, և նրանց ազգային կենտրոնը, ներառյալ Սինեդրիոնը, տեղափոխվում է Գալիլեա:

Բաբելոնյան գերությունից վերադառնալուց հետո հրեաները, որոնք արդեն առավելապես արամեախոս էին, գործածության առան արամեական տառատեսակներից մեկը, որը հայտնի է որպես «քառակուսի գիր»: Ենթադրվում է, որ գրի փոփոխությունը տեղի ունեցավ փյունիկյան այբուբենը պահպանած սամարացիներից[1] հրեաների կրոնական և ազգային տարանջատման գործընթացի շրջանակներում: Այնուամենայնիվ, փյունիկյան ու արամեական գրերը դեռ երկար ժամանակ օգտագործվում էին զուգահեռաբար, սակայն ի վերջո արամեական «քառակուսի գիրը» հաստատվեց որպես հրեաների միակ այբուբեն և որպես այդպիսին օգտագործվում է մինչև այսօր:

«ՀԵՏԱՍՏՎԱԾԱՇՆՉԱՅԻՆ» ԵԲՐԱՅԵՐԵՆ

Հետաստվածաշնչային («միշնայական» կամ «ռաբբինական») եբրայերենը նույնպես անցել է զարգացման երկու փուլ՝ թանայական և ամորայական[2]: Թանայական ժամանակաշրջանի (մ.թ.ա. I – մ.թ. II դդ.) հիմնական գրավոր հուշարձաններն են Միշնան, որն իրենից ներկայացնում է ընդարձակ կրոնաիրավագիտական աշխատություն, Տոսեֆտա կոչվող Միշնայի հավելվածները, Թանախի զանազան մեկնաբանությունները՝ Միդռաշները:

Թանայական ժամանակաշրջանին են հարում նաև XX դ. 40-ական թվականներին Մեռյալ ծովի առափնյա քարանձավներում հայտնաբերված այսպես կոչված «Կումռանի ձեռագրերը» կամ «Մեռյալ ծովի գլանները»: Կավե սափորների մեջ զմռսված այս ձեռագրերը հրեական ամենահայտնի աղանդավորական՝ «Լույսի որդիներ» համայնքի գրադարանի մնացորդներն են, որոնք ունեն բացառիկ պատմական և լեզվաբանական արժեք: Նրանց լեզուն միջանկյալ դիրք է զբաղեցնում աստվածաշնչային ու հետաստվածաշնչային լեզուների միջև՝ ներառելով երկու տարբերակներին բնորոշ հատկանիշներ:

[1] Սամարացիները ժողովուրդ են, որն առաջացել է հրեական տասը գերված ցեղերի մնացորդների ու ասորեստանցիների կողմից հյուսիսային Պաղեստինում բնակեցված ժողովուրդների միաձուլումից: Սամարացիները պահպանել են հուդայական կրոնը, սակայն որպես սուրբ գիրք ճանաչում են միայն Թորան: Բաբելոնյան գերությունից հրեաների վերադառնալուց հետո սամարացիները նրանց օգնություն են առաջարկում երկրի վերականգնման և Երուսաղեմի տաճարի վերակառուցման գործում, սակայն հրեաները հրաժարվում են ճանաչել սամարացիներին որպես արյունակիցների ու կրոնակիցների, ինչը երկու ժողովուրդների միջև հարյուրամյակներ տևած և նույնիսկ Նոր կտակարանում արձանագրված թշնամանքի սկիզբ է դնում: Ներկայումս Իսրայելում բնակվում են մոտ վեց հարյուր արաբախոս սամարացիներ (Նաբլուս և Խոլոն քաղաքներում), որոնք յուրատեսակ միջանկյալ դիրք են զբաղեցնում հրեաների ու պաղեստինցիների միջև:

[2] «Թանայներ» և «ամորայներ» էին կոչվում հետաստվածաշնչային ժամանակաշրջանի հրեա կրոնագետները:

Թանայական ժամանակաշրջանը համընկավ հրեա ժողովրդի պատմության ամենաողբերգական ժամանակաշրջաններից մեկի հետ: Ճնշելու համար հրեաների ապստամբությունը, Տիտոսի գլխավորած հռոմեական բանակը 70 թ. ներխուժեց Պաղեստին, ավերեց Երուսաղեմը՝ հողին հավասարեցնելով հրեաների մեծագույն սրբությունը՝ Երուսաղեմի տաճարը: Սկսվեց Պաղեստինից հրեաների աստիճանական արտահոսքը և հրեական սփյուռքի ձևավորումը: Այս ժամանակաշրջանում, որն արտացոլված է արդեն Նոր կտակարանում, Պաղեստինի խոսակցական լեզուն գրեթե բացառապես արամեերենն էր[1]: Այնուամենայնիվ, եբրայերենը պահպանում էր գրական ու կրոնական լեզվի իր կարևոր ֆունկցիան և, քերականությամբ ու բառապաշարով շատ մոտ լինելով արամեերենին, այս կամ այն չափով հասկանալի էր ժողովրդի մեծամասնությանը: Հենվելով այն փաստի վրա, որ մ.թ. II դ. հակահռոմեական վերջին ապստամբության ղեկավար Շիմոն Բառ-Կոխբայի պահպանված նամակներից մի քանիսը գրված են եբրայերենով, գիտնականներից ոմանք ենթադրում են, որ երկրի որոշ շրջաններում եբրայերենը կարող էր պահպանված լինել որպես հաղորդակցության միջոց և որ գրական ստեղծագործությունների միշնայական եբրայերենը ժամանակի խոսակցական լեզվի գրական տարբերակն է: Սակայն գիտնականների մեծ մասն այն կարծիքին է, որ միշնայական եբրայերենը երբեք խոսակցական լեզու չի եղել և բացառապես գրական գործունեության արդյունք է, այնպես, ինչպես միջնադարի լատիներենը:

Ամորայական ժամանակաշրջանում (II-VII դդ.) Պաղեստինում արդեն քիչ թե շատ զգալի հրեա բնակչություն չկար, և հրեա ժողովրդի ու նրա լեզվի պատմությունը շարունակվում էր տարբեր երկրներով մեկ սփռված գաղթօջախներում: Դրանցից դիտարկվող ժամանակաշրջանում առավել կարևորն Իրանի տիրապետության տակ գտնվող Միջագետքի գաղթօջախն էր, որը վայելում էր ներքին ինքնավարություն և վերածվել էր հրեաների կրոնական ու մշակութային գլխավոր կենտրոնի: Այստեղ գործում էին հրեական մի քանի գիտական և ուսումնական հաստատություններ՝ *եշիվաներ*, որոնցում շարունակվում էր եբրայերենով ստեղծագործելու ավանդույթը: Իրենց նշանակությամբ հատկապես աչքի էին ընկնում Սուրա և Պումբեդիտա քաղաքների եշիվաները: Մի քանի եշիվաներ գործում էին նաև Պաղեստինում: Միջագետքում ու Պաղեստինում այս ժամանակաշրջանում ստեղծվեց հրեական կրոնափիլիսոփայական և իրավագիտական խոշորագույն աշխատությունը՝ Թալմուդը, որի մեծ մասը գրված է արամեերենով: Գոյություն ունի Բաբելոնյան Թալմուդ և ավելի փոքր



140
ագետքի հրեական համայնքում հիմնվում է «էկզիլարխի» (արամեերեն՝ *ռեշ գալուտա*) հրեա համայնքապետի պաշտոնը:

200-215
Նշանավոր կրոնագետ Եհուդա Հա-Նասիի գլխավորությամբ կազմվում է Միշնան:

326
Քրիստոնեությունը օրինականացրած Կոնստանտին կայսրը կառուցում է Երուսաղեմում Սուրբ Հարության, իսկ Բեթղեհեմում՝ Սուրբ Ծննդյան եկեղեցիները:

360-363
Հուլիանոսը՝ հռոմեական վերջին հեթանոս կայսրը, թույլատրում է հրեաներին բնակվել Երուսաղեմում և խոստանում նրանց վերականգնել Տաճարը, սակայն իր մահը և քրիստոնեության հետագա վերելքը անավարտ են թողնում այդ ծրագիրը:

≈400
Երուսաղեմյան Թալմուդի կազմավորման ավարտը:

429
Սիներդրիոնը լուծարվում է, և հրեական հոգևոր կենտրոնը տեղափոխվում է Միջագետք:

450-470
Սասանյաններն հակահրեական հալածանքներ են ծավալում՝ փորձելով զրադաշտականություն պարտադրել հրեաներին:

≈500
Բաբելոնյան Թալմուդի կազմավորման ավարտը:

513-520
Էկզիլարխ Մար Զուտրան Միջագետքի մի շրջանում ստեղծում է հրեական պետություն, որը գոյատևում է յոթ տարի:

[1] Հետևաբար արամեերենը նաև Հիսուս Քրիստոսի մայրենի լեզուն էր: Հատկանշական է, որ խաչի վրա արտասանած նրա հայտնի խոսքերը՝ «Տե՛ր իմ, Տե՛ր իմ, ինչո՞ւ լքեցիր ինձ», Նոր կտակարանի հունարեն բնագրում և բոլոր թարգմանություններում մեջբերվում են արամեերենով:

≈600
Հռոմի Պապ Գրիգոր I-ը մշակում է կաթոլիկ եկեղեցու պաշտոնական դիրքորոշումը հրեաների նկատմամբ, որը նպատակաուղղվում է հրեաների կրոնափոխությանը՝ հօգուտ քրիստոնեության:

622-628
Մուհամմադ մարգարեն, համոզվելով, որ Արաբիայի հրեաները մտադիր չեն ճանաչելու նրան որպես մարգարե, փոխում է իր բարյացակամ վերաբերմունքը նրանց հանդեպ և հրեական որոշ ցեղերի վտարում իր տիրույթներից:

638
Արաբները գրավում են Երուսաղեմը և երաշխավորում հրեաների իրավունքները: Սողոմոնի տաճարի վայրում կառուցվում է ալ-Ակսա մզկիթը (660-691):

765
Անան Բեն Դավիթը հիմնում է Միջագետքում կարաիմների աղանդը:

780-800
Խազարական կագանաթի վերնախավը հուդայականություն է ընդունում:

800
Շարլեման կայսրն ու Հռոմի պապը քաջալերում են հրեաներին բնակություն հաստատել Սրբազան Հռոմեական կայսրության տարածքներում:

ծավալի ու նշանակության՝ Երուսաղեմյան Թալմուդ:

Ամորայական ժամանակաշրջանի եբրայերեն գրված ամենանշանավոր գրական հուշարձանը Գեմառան է, որն իրենից ներկայացնում է Միշնայի մեկնաբանությունների հավաքածու: Չնայած եբրայերենն այլևս խոսակցական լեզու չէր, այնուամենայնիվ նրա զարգացումը չդադարող գրական գործունեության շնորհիվ շարունակվում էր, և ամորայական ժամանակաշրջանն աչքի ընկավ հետաստվածաշնչային եբրայերենի վերջնական ձևավորումով և այն հատկանիշների ամրագրումով, որոնցով նա տարբերվում է աստվածաշնչային լեզվից: Հետաստվածաշնչային եբրայերենն աչքի էր ընկնում ավելի ճկուն քերականությամբ ու շարահյուսությամբ, ուներ ավելի հարուստ բառակազմական հնարավորություններ: Բառապաշարն ընդլայնված էր բազմաթիվ արամեական, հունական, լատինական ու պահլավական փոխառություններով և հասնում էր 14 հազարի՝ վեց հազարով գերազանցելով աստվածաշնչային եբրայերենի բառապաշարը: Պետք է նշել, որ հետաստվածաշնչային եբրայերենը զգալի ազդեցություն է գործել արդի եբրայերենի ձևավորման վրա:

Պաղեստինում՝ նախ և առաջ Տիբերիաս քաղաքում բնակվող գիտնականները ամորայական ժամանակաշրջանի վերջում հանդես եկան մի նորամտությամբ, որը հետագայում չափազանց կարևոր դեր խաղաց եբրայերենի պահպանման գործում: Խոսքը «քառակուսի» գրին, որը մինչև այդ արտահայտում էր միայն բաղաձայն հնչյունները, ձայնավորներ նշող ձայնանիշերի ավելացման մասին է: Բաղաձայններով գրված կրոնական և այլ տեքստերի ճիշտ ընթերցումը փոխանցվում էր կրոնական դասի մի սերնդից մյուսին, սակայն երբ եբրայերենը դուրս մղվեց խոսակցական ոլորտից, ի հայտ եկան ընթերցման մի քանի տարբերակներ, ինչն ահազանգում էր ճիշտ արտասանության աղավաղման և վերջնական կորստի վտանգի մասին: Մի խումբ լեզվաբաններ, որոնք հայտնի են «մասորեթներ[1]» անունով, կատարելով հսկայական համեմատական ու վերլուծական աշխատանք, մշակեցին ընթերցման՝ իրենց պատկերացմամբ ճիշտ եղանակը, որը և ամրագրեցին ձայնանշության նոր համակարգով: Մասորեթական ընթերցումն ու ձայնանիշերի համակարգը գոյատևեցին հարյուրամյակներ և ի վերջո ժառանգվեցին արդի եբրայերենի կողմից:

[1] Եբրայերեն «ավանդույթ» բառից:

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԵԲՐԱՅԵՐԵՆ

Միջնադարյան եբրայերենը (VII-XVIII դդ.) սփյուռքի հրեական գաղթօջախներում շարունակում էր կատարել այն նույն դերը, որը և լատիներենը միջնադարի Եվրոպայում: Նրանով գրվում էին բազմաթիվ կրոնական, փիլիսոփայական, քերականական, բժշկական և նույնիսկ գեղարվեստական գործեր, սակայն առօրյայում հրեաները խոսում էին իրենց բնակության երկրի լեզվով: Այս ժամանակաշրջանի առաջին հարյուրամյակներին եբրայերենի ակտիվ գործածության և զարգացման կենտրոնը շարունակում էր մնալ Միջագետքը, ուր Սասանյան Իրանի տիրապետությունը յոթերորդ դարի 30-ական թվականներին փոխարինվեց արաբականով:

Ճիշտ այնպես, ինչպես ժամանակին արամեերենը դուրս մղեց խոսակցական ոլորտից Մերձավոր Արևելքի գրեթե բոլոր սեմական լեզուները, այնպես էլ արաբերենը, առավել ևս լինելով Մերձավոր Արևելքի վրա իշխող գերտերության պաշտոնական լեզուն, սկսեց աստիճանաբար տարածվել Արաբական խալիֆայության սեմական և նույնիսկ ոչ սեմական, ինչպես օրինակ Հյուսիսային Աֆրիկան, տարածքներում՝ դառնալով զանազան ժողովուրդների ընդհանուր խոսակցական լեզուն: Թեև հրեաները բացառություն չէին կազմում այս օրինաչափությունից և նույնպես աստիճանաբար անցնում էին արաբերենի, նրանց, այնուամենայնիվ, հաջողվեց քաղաքական նոր պայմաններում ևս պահպանել եբրայերենը՝ որպես գրավոր և ծիսական լեզու:

Շփումները ցեղակից արաբերենի հետ դրական մեծ ազդեցություն գործեցին եբրայերենի վրա՝ նպաստելով նրա քերականության և բառապաշարի զարգացմանն ու հարստացմանը: Կարելի է ասել, որ արաբերենի ազդեցության ներքո եբրայերենն ապրեց ծաղկման նոր շրջան:

Ընդօրինակելով կամ ուղղակիորեն թարգմանելով արաբական գրականության նմուշները՝ հրեա հեղինակները ստեղծում էին ամենազանազան բնույթի աշխատություններ: Նրանցից շատերը ստեղծագործում էին ինչպես եբրայերենով, այնպես էլ արաբերենով՝ հաճախ ինքնուրույն արաբերենի թարգմանելով եբրայերենով գրված գործը և հակառակը: Իրենց թարգմանչական ունակությունները հրեաներն օգտագործում էին նաև ազգային մշակույթի շրջանակներից դուրս՝ պարսիկների ու ասորիների հետ մեկտեղ ներգրավվելով Աբբասյան խալիֆայությունում թափ առնող թարգմանչական գործունեության մեջ:

Տեսնելով, թե ինչ սեր ու հեղինակություն է վայելում արաբների մոտ նրանց հեթանոս քոչվոր նախնիների մաքուր լեզուն, հրեաները իրենց հերթին սկսեցին նույն ակնածանքով վերաբերվել աստվածաշնչային եբրայերենին, դիտելով այն գրական գործունեության համար ընդունելի միակ ոճ: Միևնույն ժամանակ գտնվելով արաբերենի ուժեղ ազդեցության տակ, հրեա հեղինակները փորձում էին հարմարեցնել եբրայերենն արաբերենի շարահյուսական և ձևաբանական կանոններին՝ ստեղծելով բավականին արհեստական և առանց արաբերենի իմացության դժվարըմբռնելի մի ոճ:

≈900-1480
Արաբական Իսպանիան որպես հրեական մշակույթի գլխավոր կենտրոն:

≈950
Լեհաստանի տարածքում հիմնվում են առաջին հրեական բնակավայրերը:

969
Եգիպտոսի Ֆատիմյան խալիֆները գրավում են Երուսաղեմը և ավերում նրա եկեղեցիներն ու սինագոգաները:

1066
Անգլիայի նորմանական նվաճումից հետո այս երկիր ոտք են դնում առաջին հրեաները:

1071
Սելջուկները գրավում ու ավերում են Երուսաղեմը:

1099
Խաչակիրները գրավում են Երուսաղեմը: Բոլդուին I-ը հռչակվում է Երուսաղեմի թագավոր և սրի քաշում քաղաքում բնակվող մահմեդականներին ու հրեաներին:

1144
Անգլիայում, առաջին անգամ պատմության մեջ, հրեաների դեմ օգտագործվում է «արյան զրպարտությունը». նրանք մեղադրվում են քրիստոնյա տղային սպանելու և նրա արյունը ծիսական կարիքների համար օգտագործելու մեջ:

1163
Կառուցվում է առաջին սինագոգան Չինաստանում:

1187
Սալահ-էդ-Դինը գրավում է Երուսաղեմը խաչակիրներից և թույլատրում մահմեդականներին ու հրեաներին վերստին բնակություն հաստատել քաղաքում:

1220
Իտալական մի ժամանակագրության մեջ առաջին անգամ հիշատակվում է «թափառական հրեայի» մասին ա-

ռասպելը, ըստ որի Հայաստանում տեսել էին Հիսուս Քրիստոսին Գողգոթայի ճանապարհին անպատված ու հարվածած հրեային, որն այդ արարքի համար դատապարտվել էր առանց հոգու հանգստի հավերժ թափառումների: Հանդիպելով Հայաստանում Քրիստոսին՝ նա քրիստոնյա է դառնում և վերջ դնում դրանով իր տառապանքին:

1260
Երուսաղեմը հայտնվում է եգիպտոսի մամլուքների տիրապետության տակ:

1290
Հրեաների վտարումն Անգլիայից:

1391
Իսպանիայում բռնկվում են հրեական կոտորածներ, որոնց հետևանքով տասնյակ հազարավոր հրեաներ քրիստոնեություն են ընդունում, բայց շարունակում են գաղտնի դավանել իրենց կրոնը՝ ստանալով «մառաններ» («խոզեր») մականունը:

1394
Հրեաների վտարումը Ֆրանսիայից:

1478
Իսպանիայում հիմնադրվում է ինկվիզիցիան՝ պարզելու համար մառանների «ճշմարիտ» քրիստոնյաներ լինելու հարցը:

1492
Ֆերդինանդ և Իզաբելլա թագավորական զույգի հրամանով հրեաները վտարվում են Իսպանիայից:

1516
Վենետիկում ստեղծվում է առաջին գետտոն (իտալերեն՝ «ձուլարան»), որում հրեաները մեկուսացվում են քաղաքի քրիստոնյա բնակչությունից:

1517
Պաղեստինը դառնում է Օսմանյան կայսրության մասը:

Արաբների հարուստ պոեզիայի ազդեցությամբ նոր շունչ առավ *պիյութ* կոչվող եբրայական աշխարհիկ պոեզիան: Հրեա բանաստեղծները՝ *պայթանները*, ոչ միայն ընդօրինակում էին արաբերենի շարահյուսությունը, այլ նաև փորձում էին կիրառել արաբական բանաստեղծական չափերը: Որպես այս շրջանի նշանավոր պայթան հատկապես հայտնի է միջագետքցի Սաադիա Գաոնը (882-942 թթ.), որը գրում էր գրեթե անբասիր աստվածաշնչային լեզվով և հայտնի է նաև արաբներից փոխառած հանգավոր արձակով:

Արաբների ուղղակի ազդեցությամբ հրեաների մոտ նոր վերելք ապրեց քերականական դպրոցը, որում հատկապես աչքի էին ընկնում Կիմհի ընտանիքի ներկայացուցիչները:

Արաբական ժամանակաշրջանի եբրայերենն իր ծաղկման գագաթնակետին հասավ արաբական Իսպանիայում՝ Կորդովայի Օմայան խալիֆայությունում, ուր աննախադեպ կրոնական ու ազգային հանդուրժողականության պայմաններում արաբների ու տեղաբնիկ քրիստոնյաների կողքին ապրում ու բարգավաճում էին հարյուր հազարավոր հրեաներ, որոնցից շատերը նույնիսկ զբաղեցնում էին բարձրաստիճան պետական պաշտոններ: Կորդովան և Իսպանիայի մյուս խոշոր քաղաքներն այդ ժամանակաշրջանի հրեական հոգևոր կյանքի գլխավոր կենտրոններն էին. այստեղ ապրում և ստեղծագործում էին այնպիսի նշանավոր հեղինակներ, ինչպես Մայմոնիդը, Եհուդա Հալևին, Մոշե Իբն Էզռան, Եհուդա Ալխարիզին և շատ ուրիշներ: Այս հեղինակները հիմնականում գրում էին աստվածաշնչային եբրայերենով, սակայն շարունակում էին եբրայերենն արաբերենին հարմարացնելու ավանդույթը: Միևնույն ժամանակ նրանց ակտիվ գրական գործունեության շնորհիվ եբրայերենի բառապաշարը զգալիորեն հարստացավ, այդ թվում՝ զանազան գիտական տերմիններով:

Չնայած Իսպանիայում եբրայերենի գործածության ոլորտի աննախադեպ ընդլայնմանը՝ այն, ինչպես և այլուր, շարունակում էր մնալ զուտ գրական լեզու: Իսպանական հրեաների խոսակցական լեզուն արաբերենն էր, ապա միջնադարյան իսպաներենի բարբառներից մեկի հիման վրա առաջացած հրեաների հատուկ լեզուն՝ *լադինոն*, որը պահպանվել է մինչև այսօր, թեև նրան տիրապետողների թիվը շատ քիչ է:



Իսպանիայում հրեաների ապահով կյանքն ու եբրայերենի ծաղկման շրջանն ավարտվեցին, երբ Իբերական թերակղզու հյուսիսում պահպանված քրիստոնեական թագավորություններն աստիճանաբար դուրս մղեցին արաբներին թերակղզուց և վերանվաճեցին այն: «Ռեկոնկիստա» կոչվող այս շարժումը ողբերգական հետևանքներ ունեցավ հրեաների համար, քանի որ Իսպանիայի կաթոլիկ թագավորները բնավ օժտված չէին Օմայան խալիֆների լայնամտությամբ ու կրոնական հանդուրժողականությամբ և թշնամաբար էին տրամադրված «հավատքի թշնամի» հրեաների նկատմամբ: Սկսվեցին հրեաների հալածանքներն իսպանական ինկվիզիցիայի կողմից, ապա 1492 թ. Իսպանիայի թագավորական զույգի՝ Ֆեր-

դինանդի ու Իզաբելլայի հրամանով հրեաներն արտաքսվեցին երկրից: Դրանով ավարտվեց եբրայերեն լեզվի պատմության իսպանական ժամանակաշրջանը:

Իսպանիայից վտարված հրեաների մեծ մասը բնակություն հաստատեց հրեաների նկատմամբ բավականին բարեհաճ Օսմանյան կայսրության սահմանների ներքո, հիմնականում Հյուսիսային Աֆրիկայում և Բալկաններում: Մի խումբ իսպանացի հրեաներ հաստատվեցին հյուսիսային Եվրոպայի երկրներում, ուր նրանց գլխավոր կենտրոնը դարձավ Ամստերդամը: Սակայն *սֆարդի* կամ *սեֆարդի* («իսպանացի») հրեաներին[1], որոնց խոսակցական լեզուն լադինոն էր, չհաջողվեց վերականգնել Օսմանյան կայսրությունում եբրայերենի երբեմնի դիրքը, և այդ լեզվի հետագա զարգացումը շարունակվեց Եվրոպայի այլ հրեական գաղթօջախներում, որոնք մեկուսացած էին արաբական տիրույթներում բնակվող հրեաներից և շատ քիչ էին ծանոթ նրանց մշակութային նվաճումներին: Հետիսպանական ժամանակաշրջանում հատկապես աչքի ընկան Իտալիայի և Հարավային Ֆրանսիայի գաղթօջախները, ուր ծավալվել էր համեմատաբար ակտիվ գրական գործունեություն: Սակայն ընդհանուր առմամբ Իսպանիայից վտարվելուց հետո մինչև ուշ միջնադարյան եբրայերենն ապրում էր լճացման և անկման ժամանակաշրջան:

Սկսած ուշ միջնադարից՝ հրեական ամենախոշոր համայնքներն ու հոգևոր գործունեության կենտրոնները գտնվում էին Արևելյան Եվրոպայում, ուր հրեաները եկել էին Գերմանիայից՝ փախչելով ժանտախտի համաճարակին ուղեկցող հակահրեական հալածանքներից: Հյատնվելով նոր՝ առավելապես սլավոնական լեզվական միջավայրում, *աշքենազներ*[2] («գերմանացիներ») կոչվող այս հրեաները շարունակում էին խոսել միջնադարյան գերմաներենի բարբառներից մեկով, որն աստիճանաբար, ինչպես ժամանակին լադինոն, վերածվեց ինքնուրույն հրեական լեզվի՝ *իդիշի* (բառացիորեն՝ «հրեերեն»): Այս լեզվով, որի բառապաշարում շատ են եբրայական ու սլավոնական բառերը և որը գրվում է հրեական «քառակուսի» գրով, ստեղծվեց հարուստ գրականություն[3], ինչպես նաև ոչ պակաս հարուստ ֆոլկլոր[4]: Արևելյան Եվրոպայի իդիշալեզու հարուստ մշակույթը գրեթե հիմնովին ոչնչացվեց նացիստների կողմից Երկրորդ համաշխարհային պատերազմի օրերին: Այնուամենայնիվ, որպես խոսակցական և գրական լեզու, իդիշն օգտագործվում

1543
Մարտին Լյութերը, հիասթափություն ապրելով նրանից, որ հրեաները չեն հրապուրվում իր բարեփոխումներով և չեն ընդունում քրիստոնեության նոր տարատեսակը, հրապարակում է հակահրեական մի աշխատություն, որը համարվում է ժամանակակից հակասեմականության արմատներից մեկը:

1577
Պրահաբնակ հրեա դրամատեր Մորդեխայ Մարկուսը նշանակվում է արքունիքի ֆինանսիստ, սկսելով «արքունիքի հրեաների» շարքը, որոնք մինչև XVIII դ. կեսը եվրոպական զանազան արքունիքներում կատարում էին ֆինանսական խորհրդատուների դեր:

1654
Բրազիլիայից արտագաղթած հրեաները բնակություն են հաստատում Հյուսիսային Ամերիկայում հոլանդական հենակետ՝ Նոր Ամստերդամ քաղաքում (ներկայումս՝ Նյու Յորք):

1665-66
Թուրքահպատակ Շաբթայ Ցվին իրեն Մեսիա է հռչակում խանդավառություն առաջացնելով հրեաների միջավայրում: Սակայն երբ նրանից պահանջում են ընտրել մահվան և իսլամ ընդունելու միջև, նա ընտրում է երկրորդը: Մի խումբ հրեաներ հետևում են նրա օրի-

---

[1] Ներկայումս ընդունված է «սեֆարդ» կոչել հյուսիսաֆրիկյան, մերձավորարևելյան, կովկասյան ու միջինասիական ծագում ունեցող բոլոր հրեաներին, ինչը գիտական առումով արդարացված չէ: Այս առումով ավելի ընդունելի է «արևելյան հրեաներ» տերմինը:

[2] «Աշքենազ» (հայկական ավանդական արտասանությամբ՝ Ասքանազ) տերմինը բավականին հետաքրքրական է: Նրանով հրեաները ավանդականորեն նշում էին իրենց ծանոթ ամենահյուսիսային երկիրը: Ենթադրվում է, որ Հին կտակարանում հիշատակվող Աշքենազը Արարատյան թագավորությունն է: Միջնադարում Աշքենազ էին կոչում Գերմանիան, որը երկար ժամանակ հրեաների բնակության ամենահյուսիսային երկիրն էր:

[3] Որպես իդիշով ստեղծագործող ամենահայտնի հեղինակ՝ կարելի է նշել Շալոմ Ալեյխեմին (1859-1916):

[4] Իդիշալեզու հարուստ ֆոլկլորով հատկապես աչքի էր ընկնում XVIII դ. առաջին կեսին Լեհաստանում գոյացած օրտոդոքս հրեաների՝ «խասիդների» («բարեպաշտների») համայնքը, որի ծիսակատարություններում մեծ տեղ է հատկացված երգին ու երաժշտությանը:

նակին, սակայն շարունակում են գաղտնի դավանել իրենց հին կրոնը: Նորաստեղծ այս համայնքը հայտնի է դառնում «դյոնմե» անունով:

1740
Բաալ Շեմ-Տովը հիմնում է Լիտվայում խասիդականությունը, որն արագորեն տարածվում է Արևելյան Եվրոպայում:

1792
Ֆրանսիայի հրեաներին տրվում է լիիրավ քաղաքացիություն:

1795
Լեհաստանի երրորդ բաժանումից հետո նրա տարածքի մեծագույն մասը, մեկ միլիոն հրեաներով, անցնում է Ռուսաստանին:

1804
Ռուսաստանի Ալեքսանդր I կայսեր օրոք վերջնականապես ձևավորվում է «Նստակեցության գիծը», որից դուրս հրեաները Ռուսաստանում բնակվելու իրավունք չունեին:

1821
Ավելի քան հինգ հարյուր հրեաներ կոտորվում են հույների կողմից այն բանից հետո, ինչ հրաժարվում են միանալ հակաթուրքական ապստամբությանն ու դաշնակցում են թուրքերի հետ՝ ընդդեմ հույների:

1826
Վալենսիա քաղաքում իսպանական ինկվիզիցիան իրականացնում է մարդու վերջին հրկիզումը ("auto de fe"):

1848
Երաշխավորվում են Գերմանիայի հրեաների քաղաքացիական իրավունքները:

է մինչև այսօր, հիմնականում՝ ԱՄՆ-ի, Եվրոպայի ու Իսրայելի օրտոդոքս համայնքներում և ունի գործածության անհամեմատ ավելի լայն ասպարեզ, քան անհայտացման վտանգի առջև կանգնած լադինոն[1]:

ԱՐԴԻ ԵԲՐԱՅԵՐԵՆ

Արդի եբրայերենի արմատները նկատելի են դեռևս XVI դարում, երբ գրվեց առաջին եբրայալեզու դրամատիկական և կազմվեց առաջին իդիշ-եբրայերեն բառարանը: Եբրայերենի զարգացման այս նոր փուլը վերջնականապես ձևավորվեց աշքենազյան հրեաների միջավայրում XVIII դարի 70-ականներին սկսված լուսավորչական շարժման ժամանակաշրջանում: Այդ շարժումը, որը ծնվեց ու զարգացավ ֆրանսիական Լուսավորության գաղափարների ազդեցությամբ, հայտնի է եբրայերեն *Հասկալա* անվանումով: Հասկալան հետապնդում էր ինչպես սոցիալական նպատակներ (հրեաների մեկուսացման հաղթահարում և հասարակության մեջ նրանց ներդաշնակ ինտեգրացում), այնպես էլ մշակութային ու կրթական, որոնցից մեկը եբրայերեն լեզվի գործածության ոլորտի ընդլայնումն էր: Այս վերջինը հիմնականում պայմանավորված էր Եվրոպայում ազգային լեզուների կայացման գործընթացի հաջողությամբ: Հասկալայի նշանավոր գործիչներից էր գերմանացի հրեա Մոզես Մենդելսոնը (1729-1786), որը 1783 թ. սկսեց հրատարակել *Համեասսեֆ* («Միավորիչ») եբրայերեն ամսագիրը՝ նույն թվին լույս ընծայելով նաև Թորայի գերմաներեն թարգմանություն: Մենդելսոնն ու իր հետևորդները արհամարհանքով էին վերաբերվում հետաստվածաշնչային եբրայերենին, համարելով, որ այն գերհագեցած է արամեական բառերով և քերականական սխալներով: Նույնն էր նրանց վերաբերմունքը նաև պայտանների ժառանգության, եբրայերենի վրա արաբերենի ազդեցության և իդիշի նկատմամբ: Նրանց հավատացած էին, որ վերակենդանացված եբրայերենի հիմքում պետք է ընկած լինի աստվածաշնչային մաքուր լեզուն, անտեսելով այն փաստը, որ հետաստվածաշնչային ու միջնադարյան փուլերի լեզուներն ավելի էին հարմար կյանքի նոր իրողություններն արտահայտելու համար:

XIX դ. սկզբից Հասկալայի կենտրոնը Գերմանիայից աստիճանաբար տեղափոխվում է Ռուսաստան ու Ավստրո-Հունգարիա, ուր երևան են գալիս եբրայերենով ստեղծագործող բազմաթիվ հեղինակներ, իսկ 40-ականներից սկսած լույս են տեսնում եբրայական պարբերականներ: Դրանցից առավել նշանավորներն էին Վիլնյուսում 1841-1844 թթ. հրատարակվող *Պիռխեյ ցաֆոն* («Հյուսիսի ծաղիկներ») և 1860-1880 թթ. Վարշավայում հրատա-

[1] Պետք է նշել, որ սիոնիզմի գաղափարախոսներն ու Իսրայելի Պետության հիմնադիրները, թեև նրանց մեծամասնության համար իդիշը մայրենի լեզու էր, բացասաբար էին տրամադրված այդ լեզվի նկատմամբ, դիտելով այն որպես Եվրոպայում հրեաների մեկուսացման արդյունք ու հալածանքների խորհրդանիշ: Իսրայելում իդիշը երկար ժամանակ մնում էր անտեսված «ժարգոն», սակայն վերջերս երկրում նկատվում է իդիշի հանդեպ հետաքրքրության զգալի աճ, և այդ լեզուն սկսում է դիտվել որպես հրեական հոգևոր կյանքի ու մշակույթի անքակտելի և կարևոր մի մաս:

րակվող *Հակարմել* («Ծաղկաստան») ամսագրերը: Ի տարբերություն Մենդելսոնի *Համեասսեֆ* ամսագրի՝ այս նոր պարբերականներում տպագրվող հեղինակները փորձում էին միահյուսել բոլոր ժամանակաշրջաններին բնորոշ տարրերը: Արդյունքում ի հայտ եկավ չափազանց վերամբարձ մի ոճ, որը հայտնի դարձավ *մելիցա* («փքուն») անունով և որը ոչ պակաս արհեստական էր, քան Մենդելսոնի «նորացված» աստվածաշնչային լեզուն:

XIX դ. երկրորդ կեսին սկսվեց հրեաների կանոնավոր ներգաղթը Պաղեստին, որին մեծապես նպաստում էին Ռուսաստանում թափ առնող հակահրեական տրամադրություններն ու դրանցից սնվող սիոնիստական շարժումը, որի գլխավոր նպատակն էր ստեղծել Պաղեստինում հրեական «ազգային օջախ», ապա՝ պետություն: 1900 թ. Պաղեստինի հրեա բնակչության թիվը կազմում էր 50 հազար և շարունակում էր արագ աճել: Երկու հազար տարվա ընդմիջումից հետո Պաղեստինում հրեական հոծ բնակչության գոյացումը անհրաժեշտ նախադրյալներ ստեղծեց նաև եբրայերենի գործածության շրջանակների ընդլայնման համար: Արդեն իսկ մինչև մասսայական ներգաղթի սկիզբը Երուսաղեմում բնակվող սակավաթիվ, սակայն բազմալեզու հրեաներն ունեին եբրայերենը որպես միջհամայնքային հաղորդակցության միջոց օգտագործելու որոշ փորձ: Այժմ հասունանում էր եբրայերենի, որպես միասնական ու միակ ազգային լեզվի վերականգնման անհրաժեշտության գաղափարը՝ «մեկ ազգ - մեկ լեզու» կարգախոսի ներքո:

Թեև Պաղեստինում եբրայերենի վերակենդանացումն ավանդականորեն համարվում է սիոնիզմի սկզբնական նպատակներից մեկը, այնուամենայնիվ պետք է նշել, որ սիոնիզմի հիմնադիր Թեոդոր Հերցելը թերահավատ էր եբրայերենի ապագայի նկատմամբ: «Մեզանից ո՞վ այդքան եբրայերեն գիտի, որ կարողանա այդ լեզվով գնացքի տոմս պատվիրել», – հարցնում էր նա իր հոդվածներից մեկում: Ըստ նրա՝ եբրայերենի վերակենդանացմանն ուղղված ջանքերն անպտուղ էին: Նա գտնում էր, որ Պաղեստինում յուրաքանչյուր հրեա կխոսի իր լեզվով, և այդ լեզուներից մեկն ի վերջո կընդունվի բոլորի կողմից: Ենթադրվում էր, որ այդ լեզուն կլինի գերմաներենը կամ իդիշը:

Եբրայերենի վերակենդանացման գործում բացառիկ դեր խաղաց հայտնի հասարակական գործիչ, լուսավորիչ ու լեզվաբան, լիտվացի հրեա Էլիեզեր Բեն-Եհուդան (1858-1922, իսկական անունը՝ Լազար Պերելման): Եբրայերենի վերակենդանացման եռանդուն ջատագով, Բեն-Եհուդան 1879 թ. հրապարակում է «Հրատապ հարց» հոդվածը, որում հիմնավորում է եբրայերենի վերակենդանացման անհրաժեշտությունը, ապա 1881 թ. իր ընտանիքով տեղափոխվում է Պաղեստին և գլխավորում եբրայերենի գործածության ոլորտներն ընդլայնելուն ուղղված գործունեությունը: Բեն-Եհուդան չի սահմանափակվում միայն եբրայերենն առօրյայում օգտագործելու կոչերով, այլ

1858
Լայոնել Ոտշիլդը դառնում է Մեծ Բրիտանիայի խորհրդարանի առաջին հրեա պատգամավորը:

1860
Երուսաղեմի պարիսպներից դուրս հիմնվում է առաջին հրեական Միշկենոթ Շաանանիմ թաղը:

1872
Առաջին անգամ օգտագործվում է «հակասեմականություն» բառը:

1882-1902
Հրեաների համատարած կոտորածները Ռուսաստանում առաջացնում են արևելաեվրոպական հրեաների արտագաղթի առաջին ալիքը դեպի Պաղեստին:

1894
Ֆրանսիական բանակի սպա, հրեա Ալֆրեդ Դրեյֆուսը մեղադրվում է Գերմանիային ռազմական գաղտնիքներ փոխանցելու մեջ: Մեղադրանքի ու դատավարության բացահայտորեն հակասեմական երանգների պատճառով «Դրեյֆուսի գործը» հասարակական մեծ արձագանք է ստանում Ֆրանսիայում, և 1906թ. Դրեյֆուսն ի վերջո ազատ է արձակվում: Դրեյֆուսի դատավարությանը ներկա վիեննաբնակ հրեա լրագրող Թեոդոր Հերցելը հանգում է եզրակացության, որ եթե հրեաները կարող են հակասեմականության զոհ դառնալ Ֆրանսիայում, ուր ընդրանց քաղաքացիական իրավունքները ճանաչվել էին դեռևս մեկ հարյուրամյակ առաջ, ապա նույնը կարող է տեղի ունենալ Եվրոպայի ցանկացած այլ երկրում: Հերցելի հետևությունն այն էր, որ հրեաները Եվրոպայում ապագա չունեն:

1896
Թեոդոր Հերցելը հրատարակում է «Հրեական պետություն» գիրքը, որում հայտարարում է,

որ հրեաների անվտանգությունը կարող է ապահովված լինել միայն սեփական հրեական պետության սահմանների ներքո: Գիրքը դնում է քաղաքական սիոնիզմի գաղափարախոսության հիմքերը:

1896
Կահիրեում հայտնաբերվում է հնագույն սինագոգայի գենիզան (հատուկ փոս, ուր նետվում են անօգտագործելի գրքերն ու փաստաթղթերը), բացահայտելով արժեքավոր տեղեկություններ Միջերկրականի ավազանում բնակվող հրեաների պատմության ու մշակույթի մասին:

1897
Բազելում (Շվեյցարիա) գումարվում է Սիոնիստական առաջին համաժողովը և հիմնադրվում է Համաշխարհային սիոնիստական կազմակերպությունը:

1903
Սիոնիստական 6-րդ համաժողովը մերժում է Բրիտանիայի առաջարկը՝ ստեղծել Արևելյան Աֆրիկայում հրեական ազգային օջախ («Ուգանդայի ծրագիր»):

1904-1914
Հրեա գաղթականների երկրորդ ալիքը դեպի Պաղեստին:

1905
Հրատարակվում է «Սիոնի ավագանու արձանագրություններ» հակասեմական փաստաթուղթը:

1909
Յաֆֆայի հարևանությամբ հիմնադրվում է Թել-Ավիվ քաղաքը:

1917
Բրիտանական զորքերը մտնում են Պաղեստին: «Բալֆուրի հռչակագիրը» խոստանում է Բրիտանիայի աջակցությունը Պաղեստինում հրեական ազգային օջախ հիմնելու հարցում:

ինքն առաջինն է տալիս դրա օրինակը: Շրջապատի թերահավատության և նույնիսկ ծաղրանքին հակառակ՝ Բեն-Եհուդան իր տանը խոսում է միայն եբրայերեն: Պաղեստինում ծնված նրա որդին դարձավ երկու հազար տարվա ընդմիջումից հետո առաջին եբրայախոս մանուկը:

Եբրայերենի վերակենդանացումը պահանջում էր լուրջ գիտական հետազոտություններ: Անհրաժեշտ էր մշակել գրական լեզվի նոր ստանդարտ, ինչը ենթադրում էր նաև արտասանական կանոնների հղկում: Թեև դասական տեքստերի մասորեթական ձայնավորումն ընդունված էր հրեական բոլոր համայնքների կողմից, այնուամենայնիվ հարյուրամյակների ընթացքում ձևավորվել էին երկու հիմնական արտասանական տարբերակներ՝ սեֆարդյան ու աշքենազյան: Բեն-Եհուդան կանգ առավ սեֆարդյան արտասանության վրա, քանի որ այն ավելի էր համապատասխանում հին եբրայերենի հնչյունային համակարգին, մինչդեռ աշքենազյանում զգացվում էր եվրոպական լեզուների ուժեղ ազդեցությունը: Այդուհանդերձ աշքենազյան արտասանությունը որոշ ազդեցություն գործեց նոր գրական լեզվի արտասանության վրա, քանի որ XIX դարի վերջում և XX դարի սկզբում Պաղեստինի հրեա բնակչության ճնշող մեծամասնությունը աշքենազներ էին: Բեն-Եհուդայի արտասանական ստանդարտին զուգահեռ՝ մի խումբ լեզվաբաններ և ուսուցիչներ Պաղեստինի հյուսիսում՝ Գալիլեայում, փորձում էին արմատավորել արտասանական այլ տարբերակ, որը գոյատևեց մինչև 1920-ականները, ապա վերջնականապես դուրս եկավ գործածությունից:

Արդի եբրայերենի շարահյուսության և ընդհանուր ոճի ձևավորման վրա մեծ ազդեցություն գործեց ռուսաստանցի գրող Մենդելե Մոյխեր-Սֆորիմը (1835-1917, իսկական անունը՝ Շալոմ Աբրամովիչ), որը սկզբնապես գրում էր իդիշով, ապա անցավ եբրայերենի և նույնիսկ վերաշարադրեց եբրայերենով իր իդիշալեզու ստեղծագործությունները: Աստվածաշնչային ու միշնայական տարրեր միավորող նրա լեզուն դարձավ նոր գրական լեզվի հիմքը: Ինքը Բեն-Եհուդան չափազանց կարևոր դեր խաղաց նորացված լեզվի բառապաշարի կանոնավարման ու ընդլայնման գործում: Բառաստեղծությունը դարձավ նրա գործունեության կարևոր ոլորտներից մեկը, քանի որ եբրայերենում բացակայում էին ժամանակակից առօրյայի իրողություններն արտահայտող հազարավոր բառեր: Լրացնելու համար այդ բացը, Բեն-Եհուդան օգտագործում էր հին եբրայերենի բառերը, տալով նրանց նոր իմաստ, ստեղծում բոլորովին նոր բառեր հին արմատներից, օգտվում էր արամեերենի[1] լեզվական նյութից կամ ուղղակիորեն փոխառություններ էր անում այլ լեզուներից: Եբրայերենի բառապաշարային բացերը լրացնելու գործում Բեն-Եհուդան հատկապես կարևորում էր արաբերենը, որպես ձևաբանության առումով եբրայերենին մոտ կանգնած լեզու և լայնորեն օգտագործում էր նրա բառակազմական հարուստ կարողությունները եբրայական նոր բառեր ստեղծելիս: Այդուհանդերձ, պետք է նշել, որ Բեն-Եհուդայի կողմից ստեղծված

[1] Արամեերենը մինչև այսօր օգտագործվում է որպես նոր, հիմնականում՝ գիտական տերմինների ստեղծման աղբյուր:

բառերի մի մասն այդպես էլ չամրագրվեց լեզվում, և դրանցից շատերը փոխարինվեցին ժողո-վրդի կողմից տարերայնորեն ստեղծված բառերով:

Բառակազմական գործունեությանը զուգահեռ՝ Բեն-Եհուդան 1910 թ. ձեռնարկում է նաև եբրայերենի առաջին ամբողջական պատմական բառարանի կազմումը, որն իր մահից հետո ավարտին հասցրեցին նրա կինն ու որդին: 1890 թ. Բեն-Եհուդան իր համախոհների հետ հիմնում է Եբրայերեն լեզվի կոմիտեն, որը կոչված էր ղեկավարելու եբրայերենի վերակենդանացման գործընթացը: 1953 թ. կոմիտեն վերածվում է Եբրայերեն լեզվի ակադեմիայի:

Առաջին համաշխարհային պատերազմի օրերին կտրուկ աճեց Գերմանիայից Պաղեստին ներգաղթած հրեաների թիվը, և գերմաներենը սկսեց սասանել եբրայերենի՝ որպես հաղորդակցության միջոցի դեռ չամրապնդված դիրքերը: Այս ժամանակաշրջանը հայտնի դարձավ որպես «լեզուների պատերազմ», որից եբրայերենն ի վերջո դուրս եկավ հաղթանակած: Դրան մեծապես նպաստեց այն, որ եբրայերենն արդեն մուտք էր գործել կրթական համակարգ և միայն եբրայերենով դասավանդող դպրոցներն ու նույնիսկ բարձրագույն ուսումնական հաստատություններն արդեն պատկառելի թիվ էին կազմում:

1923 թ. Պաղեստինը հայտնվեց Մեծ Բրիտանիայի մանդատի տակ, և եբրայերենը արաբերենի հետ մեկտեղ ստացավ պաշտոնական լեզվի կարգավիճակ: Բրիտանական մանդատի տարիներին, երբ Պաղեստինի հրեա բնակչությունը զգալիորեն աճեց, եբրայերենի վերակենդանացումը դարձավ իրողություն, ինչին նպաստեց նաև Պաղեստինում եբրայալեզու բարձրագույն ուսումնական հաստատությունների հիմնումը, ինչպես, օրինակ, Երուսաղեմի Եբրայական համալսարանը և Խայֆայի ճարտարագիտական ինստիտուտը՝ Տեխնիոնը: Եբրայերենի մուտքը բարձրագույն ուսումնական հաստատություններ կանգնեցրեց լեզվաբաններին գիտատեխնիկական տերմիններ ստեղծելու անհրաժեշտության առջև՝ դնելով մինչ օրս շարունակվող գործընթացի սկիզբը:

1948 թ. մայիսին հռչակվեց Իսրայելի Պետությունը, և եբրայերենը դարձավ նրա պետական լեզուն, կարգավիճակ, որը չէր ունեցել ավելի քան երկու հազար տարի:

Եբրայերենի վերակենդանացումը երկու հազար տարվա ընդմիջումից հետո համարվում է լեզվական ու պատմական բացառիկ երևույթ: Եբրայերենն այսօր գործում է որպես լիարժեք գրական ու խոսակցական ազգային լեզու, իր կատարած ֆունկցիաներով չտարբերվելով այլ կենդանի լեզուներից: Հասկանալի պատճառներով Իսրայելում դեռ չեն ձևավորվել տարածքային բարբառներ, սակայն առկա են զգալի տարբերություններ գրական ու խոսակցական լեզուների միջև: Շարունակվող ներգաղթը և Իսրայելի հրեա բնակչության դեռ պահպանվող համայնքային բաժանումը հանգեցնում են նրան, որ երկրում եբրայերենից ու արաբերենից բացի հնչում են բազմաթիվ այլ լեզուներ, որոնք այս կամ այն ուժգնությամբ ազդում են խոսակցական եբրայերենի արտասանության ու բառապաշարի վրա: Արդյունքում ձևավորվել են խոսակցական լեզվի արտասանական մի քանի տարբերակներ, ինչպես,

Բոլշևիկյան հեղափոխությունը վերացնում է ցարական Ռուսաստանում գոյություն ունեցած հակահրեական բոլոր օրենքները և երաշխավորում հրեաների քաղաքացիական բոլոր իրավունքները:

1922
Պաղեստինը դրվում է բրիտանական մանդատի տակ:

1924
Խայֆայում հիմնադրվում է «Տեխնիոն» եբրայալեզու ճարտարագիտական ինստիտուտը:

1925
Բացվում է Երուսաղեմի Եբրայական համալսարանը:

1928
Ռուսաստանում ստեղծվում է Հրեական ինքնավար մարզը Բիրոբիջան կենտրոնով:

1930ականներ
Ստալինի հրահանգով Խորհրդային Միությունում գրեթե ամբողջությամբ ոչնչացվում են հրեական մշակութային հաստատություններն ու կրթական համակարգը:

1938
Որպես պատրվակ օգտագործելով Լոնդոնում հրեա մի պատանու կողմից գերմանացի դիվանագետի սպանությունը, նացիստական կառավարությունը Գերմանիայում ու Ավստրիայում կազմակերպում է հրեաների կոտորած, որը հայտնի է դառնում «Բյուրեղապակե գիշեր» ("Kristallnacht") անունով:

1941-1945
Երկրորդ համաշխարհային պատերազմի օրերին նացիստները ոչնչացնում են վեց միլիոն հրեաների:

1947, նոյեմբերի 29
ՄԱԿ-ը որոշում է կայացնում բաժանել Պաղեստինը արաբական ու հրեական պետությունների միջև:

1948, մայիսի 15
Հռչակվում է Իսրայելի Պետությունը:

1949
Երուսաղեմը բաժանվում է Իսրայելի ու Հորդանանի միջև, արևմտյան Երուսաղեմը հայտարարվում է Իսրայելի մայրաքաղաք:

1949-1951
Արաբական երկրներում բնակվող հրեաների մասսայական ներգաղթն Իսրայել:

1956
Անգլիան, Ֆրանսիան ու Իսրայելը գրոհում են Եգիպտոսը՝ ի պատասխան Եգիպտոսի կողմից Սուեզի ջրանցքի ազգայնացման:

1961
Նացիստական պատերազմական հանցագործ Ադոլֆ Էյխմանը Արգենտինայից բերվում է Իսրայել և դատվում համաշխարհային երկրորդ պատերազմի օրերին հրեաների բնաջնջմանը մասնակցելու համար: Էյխմանի նկատմամբ իրագործված մահապատիժը Իսրայելում իրականացված միակ մահապատիժն է:

1967
«Վեցօրյա պատերազմի» ընթացքում Իսրայելը գրավում է Արևելյան Երուսաղեմը, Հորդանան գետի արևմտյան ափը, Գոլանի բարձունքը և Սինայ թերակղզին: Միացյալ Երուսաղեմը հայտարարվում է Իսրայելի մայրաքաղաք:

1973
«Դատաստանի օրվա» պատերազմ Իսրայելի և Սիրիայի ու Եգիպտոսի միջև:

1978
Քարթեր-Բեգին-Սադաթ հանդիպումը Քեմփ-Դեյվիդում հող է պատրաստում իսրայելա-եգիպտական խաղա-

օրինակ, արաբական երկրներից ներգաղթած հրեաների և Իսրայելի արաբների արտասանությունը, որին բնորոշ է կոկորդային հնչյունների առկայությունը, կամ աշքենազյան արտասանությունը, որի վրա զգացվում է իդիշի և եվրոպական այլ լեզուների ազդեցությունը:

Ավանդականորեն ուժեղ է եբրայերենի վրա ռուսերենի ազդեցությունը, քանի որ XIX և XX դարերի վերջին տասնամյակներում ներգաղթած հրեաների մեծամասնությունը Ռուսաստանից էր: Ռուսերենի ազդեցությունը զգացվում է խոսակցական լեզվի բառապաշարի վրա: Գրական լեզվում օգտագործվող բազմաթիվ արտահայտություններ, կայուն բառակապակցություններ ու ասացվածքներ ուղղակիորեն թարգմանված են ռուսերենից: XX դարի 50-ական թվականներից եբրայերենի վրա կտրուկ աճում է անգլերենի ազդեցությունը:

Եվրոպական եզուների ազդեցության արդյունքը եղավ այն, որ որոշ լեզվաբաններ սկսեցին խոսել եբրայերենի «հնդեվրոպացման» մասին, իսկ ոմանք նույնիսկ պնդել, թե եբրայերենը վերջնականապես կորցրել է իր սեմական էությունը: Իրոք, եբրայերենի շարահյուսության ու հնչյունական համակարգի վրա հնդեվրոպական լեզուների ազդեցությունն ակնհայտ է, սակայն այն, ակասկած, պահպանում է սեմական լեզուներին բնորոշ հիմնական բոլոր ցուցանիշները և չի կարող առանձնացվել այդ լեզվական խմբից:[1]

Եբրայերենի կանոնակարգման և զարգացման համար պատասխանատու գլխավոր մարմինը Եբրայերեն լեզվի ակադեմիան է, որը զբաղվում է գիտական հետազոտություններով, քերականական, ուղղագրական, արտասանական, կետադրական, տառադարձական և այլ կանոնների սահմանումով, նոր տերմինների ստեղծումով, զանազան պարբերականների հրատարակումով: Ակադեմիայի կողմից մշակվող կանոնները պարտադիր են օգտագործման համար, սակայն իրականում շատ հաճախ անտեսվում են:

ՀԱՅ-ՀՐԵԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայերենի շփումները եբրայերենի հետ, հավանաբար, սկսվել են մ.թ.ա. I դարում, երբ իր զորքով մինչև Պաղեստին հասած Տիգրան Մեծը հազարավոր հրեաներ է բնակեցնում Հայաստանում՝ զարգացնելու համար առևտուրն ու արհեստները: Մ.թ. I դարում ամուսնություններ են կնքվում վերջին Արտաշեսյանների և Հուդայում Հռոմի հովանության ներքո իշխող Հերովդես Մեծի ընտանիքի միջև: Թեև այդ ժամանակաշրջանի հրեաները արամեախոս էին, հայտնի է, որ Հայաստանի հրեական համայնքը տվել է առնվազն մեկ նշանավոր կրոնագետ, ինչը ենթադրում է եբրայերենի գործածության որոշակի ծավալ: Միջնադարին վերագրվող եբրայական արձանագրություններով տապանաքարեր հայտնաբեր-

[1] Այս առումով ավելի տեղին է, թերևս, խոսել արդի ասորերենի «ապասեմականացման» մասին (եթե այդպիսի տերմինն ընդհանրապես տեղին է լեզվաբանական տեսանկյունից): Սեմական լեզուները միավորող կարևորագույն գործոնը՝ բայական համակարգը, ասորերենում ամբողջությամբ կորցրել է իր սեմական էությունը, մինչ արդի եբրայերենի բայական համակարգն ակնհայտորեն սեմական է:

վել են Սյունիքի մարզում: Սա աշխարհում հայտնի ամենահին հրեական գերեզմանատունն է: Եբրայական կարճ արձանագրություններով տապանաքարեր կան նաև Սևան քաղաքի մերձակայքում պահպանված ռուս «շաբաթականների» («ջհուդականների») գերեզմանատանը: Եբրայական ձեռագրերի ու հնատիպ գրքերի որոշ հավաքածու կա Մատենադարանում:

Եբրայերենի հետ համահունչ զուգահեռներ ունեցող հայկական բառերից կարելի է հիշատակել «բազե», «բեմ», «գաղութ», «դատ», «դույլ», «զույգ», «թոհուբոհ», «թոնիր», «թութ», «խանութ», «խառատ», «խավար», «ծոմ», «կամար», «կլեպ», «կռիվ», «հաշիվ», «մաքս», «նիզակ», «շաբաթ», «շեփոր», «շուկա», «շուշան», «պալատ», «պղպեղ», «պրակ», «ռաբբի», «սատանա», «վարդ», «ցամաք», «քահանա», «քերովբե», «քնար», «քուրա» և բազմաթիվ այլ բառեր: Սրանց զգալի մասը հայերեն մուտք են գործել արամեերենի և ասորերենի միջոցով, սակայն չի բացառվում, որ կան նաև ուղղակիորեն եբրայերենից փոխառվածներ:

Եբրայական ծագում ունեցող բառերի շարքում հատուկ տեղ են զբաղեցնում անձնական անունները, ինչպես օրինակ Աբիաղոմ, Աբրահամ, Ահարոն, Ասքանազ, Բաղդասար, Դանիել, Դավիթ, Եղիազար, Եղիշե, Եղյա, Զաքար, Իսահակ, Իսրայել, Հաբեթ, Հակոբ, Հովհաննես, Հովսեփ, Մանվել, Միքայել, Մովսես, Սամվել, Սողոմոն և այլ: Հետաքրքրական է, որ հայերի մոտ անունների կամ ազգանունների տեսքով տարածված են Աստվածաշնչից փոխառված եբրայական այնպիսի անուններ, որոնք քրիստոնեական այլ ժողովուրդների մոտ կամ շատ հազվագյուտ են, կամ բնավ չեն հանդիպում, ինչպես, օրինակ, Ասքանազ, Բաղդասար, Եղիազար, Եղիշե, Իսրայել, Հաբեթ և այլն:

Չնայած հայ-հրեական կապերի վաղեմությանը՝ եբրայագիտությունը Հայաստանում որպես առանձին գիտություն գոյություն չի ունեցել: Եբրայերեն լեզուն առաջին անգամ մուտք է գործել Երևանի պետական համալսարան 1991թ. որպես ֆակուլտատիվ առարկա, ապա իր կայուն տեղն է զբաղեցրել արևելագիտության ֆակուլտետում դասավանդվող լեզուների ցանկում:

ղության պայմանագրի համար, որն ստորագրվում է մեկ տարի անց:

1982
Իսրայելը ներխուժում է Լիբանան:

1987
Պաղեստինյան համատարած հակաիսրայելյան ապստամբության («Ինթիֆադա») սկիզբը:

1991
Մադրիդի խաղաղության կոնֆերանսն առաջ է քաշում «Հող խաղաղության դիմաց» դրույթը՝ որպես արաբա-իսրայելյան հակամարտության խաղաղ կարգավորման հիմք:

1992
Հայաստանն ու Իսրայելը հաստատում են դիվանագիտական հարաբերություններ:

1993
Պաղեստինի ազատագրման կազմակերպությունն ու Իսրայելը ստորագրում են Օսլոյի համաձայնությունները:

1995
Իսրայելն ու Հորդանանը ստորագրում են խաղաղության պայմանագիր և դիվանագիտական հարաբերություններ են հաստատում:

Վարչապետ Յիցխակ Ռաբինի սպանությունը:

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Դասեր Ա-Է

Ա

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵԲՐԱՅԱԿԱՆ ԳՐԻ ՄԱՍԻՆ

Ա.1. Եբրայերեն լեզվի այբուբենը բաղկացած է արամեական ծագում ունեցող 22 տառերից, որոնք հայտնի են նաև որպես «քառակուսի գիր»: Տառերը նշում են բաղաձայն հնչյուններն ու այն ձայնավորները, որոնք հին եբրայերենում երկար էին (ձայնավորների երկարության մասին՝ ստորև): Սնացած ձայնավորները նշվում են կետերից ու գծիկներից կազմված հատուկ նշաններով՝ *ձայնանիշերով* (եբրայերեն՝ *նեկուդօթ*), որոնք, բացի մեկից, դրվում են տառի տակ և ընթերցվում նրանից հետո: Ձայնանիշերով գրությունը կոչվում է «ձայնավորված գրություն»: Այս գրությամբ, որպես կանոն, տպվում են բանաստեղծական ժողովածուները, կրոնական ու մանկական գրքերը, եբրայերեն լեզվի ուսումնական ձեռնարկներն ու բառարանները: Տեքստերի ճնշող մեծամասնությունը, սակայն, ձայնանիշեր չունի. այսպիսի գրությունը կոչվում է «չձայնավորված»:

Ա.2. Ներկայումս չձայնավորված տեքստերի ընթերցումը դյուրացնելու համար ձայնավորները, որտեղ հնարավոր է, նշվում են այբուբենի տառերով: Գրության այս համակարգը կոչվում է «ամբողջական ուղղագրություն», ի տարբերություն աստվածաշնչային ու հետաստվածաշնչային գրականությամբ ամրագրված ձայնավորման դասական համակարգի, որն առավելապես հենվում է ձայնանիշերի վրա և կոչվում «պակասավոր ուղղագրություն»: Թեև Եբրայերեն լեզվի ակադեմիայի կարգադրությամբ ամբողջական ուղղագրությունը պարտադիր է, իրականում Իսրայելում երկու համակարգերն էլ օգտագործվում են, հանգեցնելով ուղղագրական խառնաշփոթի, քանի որ նույնիսկ միևնույն տեքստում բառերի մի մասը կարող է գրված լինել ամբողջական ուղղագրությամբ, մյուս մասը՝ պակասավոր:

Ա.3. Ինչպես սեմական լեզուների մեծամասնության, եբրայերեն գրի ուղղությունն աջից ձախ է: Եբրայերեն գրքերը սկսվում են այնտեղ, որտեղ այլ լեզուներով գրվածներն ավարտվում են:

Ա.4. Տառերը չեն բաժանվում մեծատառերի ու փոքրատառերի, սակայն մեծ է տարբերությունը տպագիր ու ձեռագիր տառերի միջև: Ձեռագիր տառերը, որպես կանոն, չեն կապակցվում և գրվում են իրարից անջատ:

Ա.5. Տառերն ունեն նաև թվային արժեք և օգտագործվում են հրեական տոմարի տարե-

թվերի նշման, համարակալման և այլ նպատակներով:

Ա.6. Արդի երբայերենում՝ հին երբայերենի համեմատ, տառերի հնչյունական որակը կրել է որոշ փոփոխություններ, քանի որ արդի երբայերենն ամբողջությամբ չի պահպանել հին երբայերենի հնչյունական համակարգը: Սույն դասագիրքը հետևում է Իսրայելում ընդունված նորմատիվ, այսպես կոչված՝ «հաղորդավարական» արտասանությանը:

ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐ ԵՎ ՁԱՅՆԱՆԻՇԵՐ

Բ.1. Հին եբրայերենի ձայնավորները բաժանվում էին երկարների, կարճերի ու գերկարճերի («կիսաձայնավորներ»): Ձայնավորի յուրաքանչյուր տարբերակը նշվում էր առանձին ձայնանիշով: Արդի եբրայերենի հինգ ձայնավորները՝ «ա», «ի», «օ», «ու», «է», չեն տարբերակվում ըստ երկարության, սակայն հին եբրայերենի ձայնանիշային համակարգն ու բառի ձայնավորման ավանդական եղանակը պահպանվել են, այսինքն արդի եբրայերենում բառերը շարունակում են ձայնավորվել այնպես, ինչպես նրանք հնչում էին հին եբրայերենում: Սա նշանակում է, որ միևնույն ձայնավորը կարող է նշվել մեկից ավելի ձայնանիշով: Յուրաքանչյուր նոր բառի հետ պետք է յուրացվի նրա ձայնավորումը, քանի որ ձայնանիշերը չեն կարող կամայականորեն փոխարինվել մեկը մյուսով:

Գծիկը (־) *պայմանականորեն ներկայացնում է այբուբենի ցանկացած տառը:*

Բ.2. ָ *կամաց,* նշում է «ա» ձայնավորը (հին եբրայերենում՝ երկար «ա»):

Բ.3. ֵ *ցէ՛ռէ,* նշում է «է» ձայնավորը (հին եբրայերենում՝ երկար «է»):

Բ.4. ֹ *խոլամ* կամ «պակասավոր խոլամ», տառի վերևը (ձախ կողմում) դրվող միակ ձայնանիշն է, նշում է «օ» ձայնավորը (հին եբրայերենում՝ երկար «օ»):

ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐ

Բ.5. א - ԱԼԷՖ - ձեռագիր տարբերակը՝ ﬡ: Արդի եբրայերենում այս տառը չունի սեփական հնչողություն և հիմնականում հանդես է գալիս որպես հենարան ձայնանիշի համար, արտահայտելով ցանկացած ձայնավոր՝ אָ -«ա», אֶ -«է», אֹ -«օ»:

Բ.6. Բառամիջում և բառավերջում առանց ձայնանիշի א տառը չի արտասանվում:

Բ.6.1. Բառավերջում א տառ ունեն հիմնականում արամեերենից փոխառված բառերը:

Բ.7. א տառը պատկանում է այսպես կոչված «կոկորդայինների» խմբին: Հին եբրայերենում այն նշում էր սեմական լեզուներին բնորոշ կոկորդային հնչյուն՝ այսպես կոչված «կոկորդային պայթյունը» (*glottal stop, гортанный взрыв*): Արդի եբրայերենում կոկորդային պայթյունը մասամբ վերականգնվում է բառամիջում՝ բաղաձայնի ու ձայնավորի միջև՝ առաջացնելով խոսքային հոսքի ընդհատում: Հայերեն տառադարձության

մեջ կոկորդային պայթյունը նշվում է ապաթարցով (՚):

Բ.8. בּ - ԲԷԹ - ձեռագիր տարբերակը՝ ב: Այս տառն ունի արտասանության երկու տարբերակ. «թեթև *դագեշ*» կոչվող կետով (בּ) այն հնչում է «բ», առանց դագեշի (ב)՝ «վ», այս դեպքում կոչվելով «վէթ»: Չնայած այս երկակի արտասանության, սա մեկ տառ է՝ «բէթ» ընդհանուր անունով, քանի որ նույն բառի նույն ב տառը մի դեպքում կարող է հնչել «բ», մյուսում՝ «վ»:

Բ.9. Չձայնավորված տեքստերում դագեշը չի նշվում, և արտասանական երկու տարբերակներն էլ ունեն նույն՝ առանց դագեշի գրություն (ב): Տառը ճիշտ արտաբերելու համար պետք է նկատի ունենալ, որ բառասկզբում այն միշտ հնչում է «բ», իսկ բառավերջում՝ «վ»: (Բառավերջում «բ» հնչյունը հանդիպում է միայն փոխառություններում):

Կարդացե՛ք. [1]אָב בָּא בֶּב בֵּב בֳּב בָּב בֹּב בֻּב בְּב בִּב בַּב בָּב ⇦

[1] Տե՛ս Բ.6.

Բ.10. גּ - ԳԻՄԷԼ - ձեռագիր տարբերակը՝ ג: Հնչում է «գ»:

Բ.11. Հին եբրայերենում տարբերակվում էր թեթև դագեշով ג, որը հնչում էր «գ», և առանց դագեշի ג, որը հնչում էր «ղ»: Արդի եբրայերենը չունի «ղ» հնչյուն, սակայն դասական ձայնավորման մեջ պահպանվում են ג-ג տարբերակները, որոնք երկու դեպքերում էլ պետք է արտասանել «գ»՝ גָּג *գագ:*

Կարդացե՛ք. [1]אָג גָּב גֶּג גֵּג גֳּג גָּג גֹּג גֻּג גְּג גִּג גַּג גָּג ⇦

[1] Բ.6.

Բ.12. דּ - ԴԱԼԷԹ - ձեռագիր տարբերակը՝ ד: Հնչում է «դ»:

Բ.13. Հին եբրայերենում տարբերակվում էր թեթև դագեշով דּ, որը հնչում էր «դ», և առանց դագեշի ד, որը հնչում էր ինչպես անգլերենի *th* կապակցությունը *this* բառում: Արդի եբրայերենը չունի *th* հնչյուն, սակայն դասական ձայնավորման մեջ պահպանվում են ד-דּ տարբերակները, որոնք երկու դեպքերում էլ պետք է արտասանել «դ»՝ דָּד *դաղ:*

Կարդացե՛ք. דָּד [1]אָד דָּג גָּג דָּד הֵד דָּד הֶד דָּד הֵד דָּד ⇦

[1] Բ.6.

Բ.14. הּ - ՀԷ - ձեռագիր տարբերակը՝ ה: Հնչում է «հ»: Ինչպես և א տառը, ה տառը պատկանում է «կոկորդայինների» խմբին:

Բ.14.1. Բառավերջում ה տառը չի հնչում՝ בָּה *բա:* Բ.14.2. Եթե բառավերջի «հ»-ն պետք է հնչի, ապա ה տառի մեջ դրվում է *մապիկ* կոչվող կետը (הּ)՝ בָּהּ *բահ,* הָהּ *հահ:* .

Բ.14.3. Խոսակցական լեզվում ה-ն նույնպես, որպես կանոն, չի արտասանվում:

Կարդացե՛ք. [3]בָּה [2]הֵד הָהּ [1]הָא הָה הֳה הָה הֹה הֻה הְה הִה הַה הָה ⇦

[1] Բ.6. [2] Բ.14.1. [3] Բ.14.2.

Բ.15. Եբրայերենում, որպես կանոն, շեշտադրվում է բառի վերջին վանկը:

Հայերեն տառադարձության մեջ շեշտը (՝) նշվում է միայն այն դեպքերում, երբ չի ընկնում վերջին վանկի վրա:

Կարդացե՛ք և արտագրե՛ք հետևյալ կապակցությունները.

⇦

אָ בָּ כָּ גָּ דָּ הָ אֵ בֵּ כֵּ גֵּ דֵּ הֵ א בּ כ ג ד ה
בֵּ ה ג דָּ דֵּ אֹ כֵּ גָּ הָ הֵ דֵּ ג אֵּ כֵּ אָ בָּ גָּ הָ
אָב אֵד בָּא[1] בָּה[2] גֵּא[1] דָּא[1] דָּג הֵד הָה[2]
אָבָה[3] בָּדָד בָּהָה[3] גָּאָה[3] גָּדָה[3] גֵּהָה[3] דָּאָה[3] דָּהָה[3]

[1] Բ.6. [2] Բ.14.2 [3] Բ.14.1.

Կարդացե՛ք նույն կապակցությունների ծեռագիր տարբերակը.

אָ בָּ כָּ גָּ דָּ הָ אֵ בֵּ כֵּ גֵּ דֵּ הֵ א בּ כ ג ד ה
בֵּ ה ג דָּ דֵּ אֹ כֵּ גָּ הָ הֵ דֵּ ג אֵּ כֵּ אָ בָּ גָּ הָ
אָב אֵד בָּא בָּה גֵּא דָּא דָּג הֵד הָה
אָבָה בָּדָד בָּהָה גָּאָה גָּדָה גֵּהָה דָּאָה דָּהָה

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բ.16. Եբրայերենն ունի հետևյալ խոսքի մասերը՝ գոյական անուն, ածական անուն (գոյականն ու ածականը հաճախ միավորվում են «անուն» ընդհանուր խոսքի մասի մեջ), թվական անուն, դերանուն, բայ, մակբայ, շաղկապ, նախդիր, մասնիկ ու ձայնարկություն:

Բ.17. Եբրայերենն ունի երկու սեռ՝ արական ու իգական: Ըստ սեռի տարբերակվում են գոյականները, ածականները, բայերը, թվականներն ու դերանունների մի մասը:

Հիշե՛ք հետևյալ բառերը.

ավ	אָב	«հայր» (արական)
ուզա		«թխվածք, կարկանդակ» (իգական)
բուբա		«տիկնիկ» (իգ.)
դիռա		«բնակարան» (իգ.)
դազ	גָּד	«ծուկ» (ար.)
տօվ		«լավ» (ար.)

Գ

ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐ ԵՎ ՁԱՅՆԱՆԻՇԵՐ

Գ.1. ◌ַ *պատախ,* նշում է «ա» ձայնավորը (հին եբրայերենում՝ կարճ «ա»):

Գ.2. ◌ֶ *սեգոլ,* նշում է «է» ձայնավորը (հին եբրայերենում՝ կարճ «է»):

Գ.3. ◌ִ *խիրիկ,* նշում է «ի» ձայնավորը (հին եբրայերենում՝ կարճ «ի»):

Գ.4. ◌ֻ *կուբուց,* նշում է «ու» ձայնավորը (հին եբրայերենում՝ կարճ «ու»):

ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐ

Գ.5. ו - ՎԱՎ - ձեռագիր տարբերակը՝ /: Այս տառով նշվում են «օ», «ու» ձայնավորները ու «վ» բաղաձայնը:

Գ.6. «Օ» ձայնավորի դեպքում ו-ի վրա դրվում է խոլամ ձայնանիշը (וֹ): Այս կապակցությունը կոչվում է «ամբողջական խոլամ»:

Գ.7. «Ու» ձայնավորի դեպքում կետը դրվում է տառի մեջ (וּ): Այս կապակցությունը կոչվում է *շուռուկ*:

Գ.7.1. Ամբողջական ուղղագրության մեջ կուբուցը սովորաբար փոխարինվում է շուռուկով՝ בּוּ ՝ בֻּ:

Գ.8. «Վ» բաղաձայնի դեպքում տառը ոչ մի կետ չունի (ו):

Գ.8.1. Ամբողջական ուղղագրության մեջ բառամիջի «վ»-ն նշվում է երկու ו տառով (וו):

Գ.9. Չձայնավորված տեքստերում ամբողջական խոլամի և շուռուկի կետերը չեն դրվում, և արտասանության երեք տարբերակներն էլ ունեն գրության միևնույն՝ առանց կետի ձևը (ו): Պետք է նկատի ունենալ, որ բառասկզբում ամբողջական խոլամ (וֹ) երբեք չի լինում, իսկ շուռուկ (וּ) լինում է միայն մի դեպքում: Այսպիսով՝ բառասկզբի ו-ը, որպես կանոն, միշտ «վ» է:

Գ.10. Բառասկզբում հնչող «օ» ձայնավորը գրվում է אֹ կամ וֹא, իսկ «ու» ձայնավորը՝ אֻ կամ וּא:

Գ.12. Չձայնավորված գրության մեջ ו-ն ձայնավորից հետո կարող է հնչել «վօ», իսկ ו-ն՝ «վ»:

Կարդացե՛ք. ⇦

וֹ וֵ וִ וּ וֶ וָ וַ וָ וֹ וֻ אוֹ¹ אוּ¹ בּוֹ בּוֹ דּוֹ דּוֹ הוֹ דּוּ גּוֹ גּוּ בּוּ בּוּ וָו אוֹכֵ¹ בּוֹא² גּוֹכ דּוֹד

דּוֹכ דּוֹד הוּא² הָבוּ גֵּוָה³ אָבוּד אָהוּב אוֹבֵד¹ אוֹהֵב¹ אוֹגֵד¹ בּוֹאָה³ בּוּבָה³

הוֹדָה[3] הוּדָא[2] הודו וּדָא[2] הוֹדָה[3] («տիկնիկ»)

[1] Գ.10. [2] Բ.6. [3] Բ.14.1.

Գ.13. ז - ԶԱՅԻՆ - ձեռագիր տարբերակը՝ ʒ: Հնչում է «զ»: (Չշփոթել ו տառի հետ):

Կարդացե՛ք. ⇦

זָ זָ זֵ זַ זָ זֶ זִ זוֹ זוּ זָ אָז בָּז גָּז גַז זָב זֵד זֶה[1] בָּזָה[1] גָּזָה[1] הָזָה[1] זָהָב זָזָה[1] זוּג אֵזוֹב גָּזוּז זָהוֹב זוּגָה[1] הוֹזֶה[1]

[1] Բ.14.1.

Գ.14. ח - ԽԷԹ - ձեռագիր տարբերակը՝ ɦ: Համապատասխանում է հայերենի «խ» բաղաձայնին, սակայն ավելի կոշտ է: Այս հնչյունը ճիշտ արտասանելու համար լեզուն պետք է զբաղեցնի այն դիրքը, որը զբաղեցնում է «ղ» բաղաձայնն արտաբերելիս: א և ה տառերի հետ մեկտեղ ח տառը պատկանում է «կոկորդայինների» խմբին:

Գ.15. Բառավերջի ח տառի տակ որոշ բառերում դրվում է պատախ ձայնանիշը (ַ), որն այդ դեպքում կոչվում է «սողոսկած պատախ»: Այդ դեպքում ընթերցվում է նախ ձայնանիշը, ապա տառը, այսինքն «ախ», և ոչ՝ «խա», իսկ շեշտը տեղափոխվում է այս կապակցությանը նախորդող ձայնավորի, այսինքն՝ բառի նախավերջին վանկի վրա՝ חֹזַ֫אוֹ *օ՛ախ,* דּוּחַ *դու՛ախ,* חוֹחַ *խօ՛ախ:*

Գ.16. «Սողոսկած պատախ» կարող է լինել բառավերջի ה տառի տակ՝ הַ, ընթերցվում է «ահ»*:*

Կարդացե՛ք. ⇦

חַ חֹ חֵ חַ חִ חֶ חָ חִ חָ חַ חֹ חֵ חֶ חִ חָ חַ חֵ אָח גָּח חַג חַד חָח זַח חָב אֶחָד חוּג חוֹב חָזֶה[1] חוֹבָה[1] חָדוּד זָחוּחַ[2]

[1] Բ.14.1. [2] Գ.15.

Գ.17. ט - ՏԷԹ - ձեռագիր տարբերակը՝ ɓ: Համապատասխանում է հայերենի «տ» բաղաձայնին, սակայն հնչում է ավելի լարված:

Կարդացե՛ք. ⇦

ט טַ טֵ טִ טֶ טָ טִ טָ טֵ טֶ טַ טָ טִ טָ טַ אַט גֵּט זָט חָט חָב טֶה[1] וֶטוֹ חָטָא[2] טוֹב טַבּוּ טוּב טָחוּב טְווּחַ[3] טָבוּחַ[3]

[1] Բ.14.1. [2] Բ.6. [3] Գ.15.

Կարդացե՛ք և արտագրե՛ք հետևյալ կապակցությունները.

⇦

אָב («հայր») אָח אַט בַּד בַּז גַּב גַּג גַּד גַז גָּח גֵּט דָּג («ձուկ») דַּד וָט חַג חַד חָח חָט טָב טֶה[1] טָח אִבֵּד אֶחָא[2] אֵדֵג אֶחָד בִּדֵּד בָּזַז בִּטַח גַּבֵּב גֵּהָה[1] דָּאַג דּוֹב הֵאֵט זֵוֵג חִוָּה[1] טָוָה[1] וֶטוֹ וְדָה[1] זָהָב זֶהוּ זוּג זָבַח חָגָב חָגָו חָטָא[2] טַבּוּ טוֹב («վատ») אַבּוּב גְּבוּב חָדוּד טְווּחַ[3] אָחוּז אָהוּד

חוֹלָה[1] בָּדוּחַ[3] בּוֹגֵד גּוֹבֶה[1] זוּגָה[1] חוֹבֵב דּוֹבָה[1] חָבוּט חוֹטֵא[2] הוֹטֵב חָטוּב גָּבוֹהַ[4]

[1] Բ.14.1. [2] Բ.6. [3] Գ.15. [4] Գ.16.

Կարդացե՛ք նույն կապակցությունների ճեռագիր տարբերակը.

אַב אָת אַט בַּד בַּי בַּם בַּר בָּת גַּי דָּי דָּת הַט הָת וַי זַי חַד חָת טַי יָד יָת יַי יַת כַּי כָּת לַי לָת מַי מָת נַי נָת סַי סָת עַי עָת פַּי פָּת צַי צָת קַי קָת רַי רָת שַׁי שָׁת תַּי תָּת

Հիշե՛ք հետևյալ բառերը.

ախ	אָח	«եղբայր» (ար.)
հիուռ		«դաս» (ար.)
խավէռ		«ընկեր» (ար.)
էտ		«գրիչ» (ար.)
մօռէ		«ուսուցիչ» (ար.)
յաֆէ		«գեղեցիկ» (ար.)

Փորձե՛ք գտնել բառարանում հետևյալ բառերը.

חַג, דּוֹב, זוּג, אֶחָד, זָהָב, אָחוּז, גָּבוֹהַ

Դ

ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐ

Դ.1. י - ՅՈԴ (ՅՈՒԴ) - ձեռագիր տարբերակը՝ ׳: Ինչպես և ו տառը, արտահայտում է թե բաղաձայն, թե ձայնավոր: Բառամիջում և բառավերջում՝ խիրիկ ձայնանիշից հետո (ִי), այն հնչում է «ի»: (ִי կապակցությունը երբեմն անվանում են «մեծ խիրիկ»):

Դ.2. Մյուս դեպքերում տառը հնչում է «յ», կազմելով יַ יָ «յա», יֹ י «յօ», יֶ יֵ «յէ», יוּ יָ «յու», יָ «յի» և ִי ֵי «այ», ֹי «օյ», וּי «ույ», ֶי ֵי «էյ» կապակցությունները:

Դ.2.1. ִי կապակցության «յ» հնչյունը որոշ դեպքերում չի հնչում:

Դ.3. Բառասկզբում հնչող «ի» ձայնավորը գրվում է אִ կամ יִ:

Դ.3.1. Որոշ բառերում י տառը գրվում է, բայց չի հնչում:

Դ.4. Ամբողջական չձայնավորված ուղղագրության մեջ բառամիջի և բառավերջի «յ»-ն նշվում է երկու י տառով (ייִ):

Կարդացե՛ք. ⇦

יָ יָ יַ י יוֹ יֹ יֵ יַ יוּ אִי בִּי דִּי גִּי הִי וִי זִי חִי טִי דַּי הֵי בֶּי חַי בִּי הִי יוֹ אִטִי אִיטִי גַּבִּי גָּזִי טִיט בָּדוּי יָדִיד חִטּוּי הִבִּיט הִגִּיהַ[1]

[1] Գ.16.

Դ.5. כ - ԿԱՖ - ձեռագիր տարբերակը՝ כ: Ինչպես և ב տառը, ունի արտասանության երկու տարբերակ: Թեթև դագեշով (כ) հնչում է հայերենի «կ» բաղաձայնի պես, սակայն ավելի լարված՝ որոշ դեպքերում մոտենալով «ք»-ին. առանց դագեշի (כ) հնչում է «խ» և կոչվում «խաֆ»: Սա նույնպես համարվում է մեկ տառ՝ «կաֆ» ընդհանուր անունով, քանի որ միևնույն բառում կարող է լինել «կ-խ» բաղաձայնների հերթագայություն:

Դ.6. Չձայնավորված տեքստերում դագեշը չի դրվում, և արտասանության երկու տարբերակներն էլ ունեն նույն՝ առանց դագեշի գրություն (כ): Տառը ճիշտ ընթերցելու համար պետք է նկատի ունենալ, որ բառասկզբում այն միշտ հնչում է «կ», բառավերջում՝ միշտ «խ»:

Դ.7. Բառավերջի խաֆն ունի հատուկ ձև՝ ך, ձեռագիր տարբերակը՝ ך:

Կարդացե՛ք. ⇦

כַּ כְּ כֵּ כֲ כָּ כֶּ כִּ כֹּ כֻּ כָּ כַּ כְּ כֵּ כֲ כָּ כֶּ כִּ כֹּ כֻּ כַּד כָּךְ אַךְ בָּךְ חֵךְ זַךְ כָּבֵד כָּוָה[1] כּוּךְ וְכוּחַ[2] זְכוּךְ כָּבוֹד כְּבוּד כּוֹכָב

[1] Բ.14.1. [2] Գ.15.

Դ.8. ל - ԼԱՄԷԴ - ձեռագիր տարբերակը՝ 𝆑: Համապատասխանում է հայերենի «լ» բաղաձայնին, սակայն հնչում է ավելի կոշտ: Այս տառն արտասանելիս լեզվի ծայրը պետք է դիպչի վերևի ատամներին և չդիպչի քիմքին:

Կարդացե՛ք. ⇦

לַ לֶ לִ לֹ לָ לֶ לִ לֹ לָ לַ אַל אָל אֵל בַּל דַּל חֵל חַל טַל כַּל לֹא לֵב לָהּ[1] לוֹ לוּ לַח לָט לִי לָךְ אָבָל אֶלָּא[2] אַלְט בְּדֵל בָּחַל בָּטֵל בְּלָהּ[3] אָחוּל

[1] Բ.14.2. [2] Բ.6. [3] Բ.14.1.

Դ.9. מ - ՄԷՄ - ձեռագիր տարբերակը՝ 𝆥: Հնչում է «մ»: Ունի հատուկ ձև բառավերջի համար՝ ם, ձեռագիր տարբերակը՝ 𝆦:

Կարդացե՛ք. ⇦

מ מֵ מַ מָ מְ מֶ מִ מֹ מֻ מָ מַ מְ מֵ מַ מָ מֶ מִ מֹ מָ מַד מַט מִי מָךְ מָל מֵם אִם אֵם גַּם דָּם הֵם חַם יָם אָדָם אַלָּם אָמַד גָּמָל מוּל

ՁԱՅՆԱՆԻՇԵՐ

Դ.10. ֻ *շվա:* Այս ձայնանիշն ունի երկու տարբերակ՝ «համր» և «ձայնեղ»:
Դ.11. Եթե տառի տակ դրված է *համր* շվա, ապա դա նշանակում է, որ այդ տառով արտահայտված բաղաձայնից հետո ձայնավոր չկա՝ גִּלְגּוּל *գիլ-գուլ*:
Դ.11.1. Բառավերջում համր շվան դրվում է միայն ך տառի տակ (ֻך) և մի քանի այլ դեպքերում:

ՇԵՇՏԱԴՐՈՒՄ

Դ.12. Մի խումբ երկվանկ բառեր, որոնք ունեն հետևյալ կառուցվածքը՝ ־ָּ־ ־ֶּ־ ־ִּ־ ־ֹּ־ ־ֻּ־ ־ַ־ ־ֵ־ ־ִ־ ־ֹ־ ־ֻ־ կոչվում են «սեգոլային» (սեգոլ ձայնանիշի անունով) և շեշտավորվում են առաջին վանկի վրա՝ חֶבְרָה *խե՛վրե, տա՛խավ,* זְבַח *զե՛վախ*:

✍ *Կարդացե՛ք և արտագրե՛ք հետևյալ կապակցությունները.*

⇦

בְּהֵם בְּלָה בֶּגֶד[1] בַּלָּט בֶּטַח[1] גָּאַל גִּיל דֶּגֶל[1] דָּלַח דָּמַם הַאִם וָלֹא זְכָה זָחַל[1] חָבָט[1] חוֹל חָכִי חָלָב חָכַךְ[2] חָלַט טָחַב[1] יָבָם יוֹם יַחַד[1] יַמִי יֶלֶד[1] כִּיל כַּמָה לֵבָב לָגַם לֵדָה לָחִי לֶחֶם[1] לָחַךְ[2] לָמַד מוֹחַ[3] מִיָד מֶלַח[1] מֹאָל מַגֵב מַהוּ מוֹךְ[2] מֶזֶג[1] מַזָל מִחָה מַטֶה מָלֵא מִלָה מֶלֶךְ[1,2] אֵלוּחַ[3] אָמִיד בָּדוּי דְמוּי וַדַי זַחְלָם[4] חָבוּל חוֹלָם טוֹחֵם יָלוּד יָדִיד לֶגָטוֹ לְכְלֵךְ[4,2] מַגְבֵּהַּ[4,5] מִזְבֵּחַ[4,3] מִחְיָה[4] בַּלוּטָה גִלְגוּל[4] הַבְדָלָה[4] הוֹבָלָה הַחְלָטָה[4] זִלְזוּל[4] טִלְטוּל[4] כַּלְכָּלָה[4] מַבְהִיל[4] מַטְוִיָה[4] מִכְלָאָה[4] מֶזוּזָה מוּבָלָט[4] כִּימוּי טוּזִיג

[1] Դ.12. [2] Դ.11.1. [3] Գ.15. [4] Դ.11. [5] Գ.16.

✍ *Կարդացե՛ք նույն կապակցությունների ծեռագիր տարբերակը.*

בְּהֵם בְּלָה בֶּגֶד בַּלָּט בֶּטַח גָּאַל גִּיל דֶּגֶל דָּלַח דָּמַם הַאִם וָלֹא זְכָה זָחַל חָבָט חוֹל חָכִי חָלָב חָכַךְ חָלַט טָחַב יָבָם יוֹם יַחַד יַמִי יֶלֶד כִּיל כַּמָה לֵבָב לָגַם לֵדָה לָחִי לֶחֶם לָחַךְ לָמַד מוֹחַ מִיָד מֶלַח מֹאָל מַגֵב מַהוּ מוֹךְ מֶזֶג מַזָל מִחָה מַטֶה מָלֵא מִלָה מֶלֶךְ אֵלוּחַ אָמִיד בָּדוּי דְמוּי וַדַי זַחְלָם חָבוּל חוֹלָם טוֹחֵם יָלוּד יָדִיד לֶגָטוֹ לְכְלֵךְ מַגְבֵּהַּ מִזְבֵּחַ מִחְיָה בַּלוּטָה גִלְגוּל הַבְדָלָה הוֹבָלָה הַחְלָטָה זִלְזוּל טִלְטוּל כַּלְכָּלָה מַבְהִיל מַטְוִיָה מִכְלָאָה מֶזוּזָה מוּבָלָט כִּימוּי טוּזִיג

✍ *Հիշե՛ք հետևյալ բառերը.*

յօմ	יוֹם	«օր» (ար.)
լէխէմ[1]	לֶחֶם	«հաց» (ար.)
սէֆէր[2]		«գիրք» (ար.)
պէ՛ռախ[3]		«ծաղիկ» (ար.)
շուլխան		«սեղան» (ար.)
գառօլ	גָּדוֹל	«մեծ» (ար.)

[1] -ֶ- (Դ.12.) [2] -ֵ- (Դ.12.) [3] -ַ- (Դ.12.)

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դ.13. Եբրայերենում ածականը միշտ դրվում է գոյականից հետո, համաձայնեցվելով նրա հետ թվով և սեռով՝ *մօռէ տօվ* «լավ ուսուցիչ», *խավէռ տօվ* «լավ ընկեր», *դագ յաֆէ* «գեղեցիկ ձուկ», *պէ՛ռախ յաֆէ* «գեղեցիկ ծաղիկ», *սէ՛ֆէռ գառօլ* «մեծ գիրք», *պէ՛ռախ գառօլ* «մեծ ծաղիկ»: Նշված բոլոր կապակցություններում գոյականներն ու ածականները արական սեռի են:

✍ *Թարգմանե՛ք երբայերեն.*

Մեծ ծուկ, գեղեցիկ գրիչ, լավ սեղան, լավ եղբայր, գեղեցիկ գիրք, լավ հաց, լավ ուսուցիչ, լավ գրիչ, մեծ գրիչ, գեղեցիկ ծաղիկ, լավ ծաղիկ, մեծ դաս, լավ օր, գեղեցիկ օր:

✍ *Փորձե՛ք գտնել բառարանում հետևյալ բառերը և գտնել նրանց մեջ սեգոլայինները.*

בֶּגֶד, דֶּגֶל, חוֹל, חָלָב, יַחַד, יֶלֶד, מֶלֶךְ, חוֹלָם

Ե

ՔԱՂԱՁԱՅՆՆԵՐ

Ե.1. נ - ՆՈՒՆ - ձեռագիր տարբերակը՝ ן: Հնչում է «ն»: Ունի հատուկ ձև բառավերջի համար՝ ן (չշփոթել ז տառի հետ), ձեռագիր տարբերակը՝ ן:

Կարդացե՛ք. ⇦

נָא גֵד נָד נָם בֵּן בִּן גֵן גַן דָן הֵן זָן חֵן כֵּן לָן מִן מָן אִגֵּן אִכֵּן נָאֶה נֶבֶל[1] נוֹחַ[2] נָאוָה[3] נָגוּז נִדְהָם[4] נֶחְבָּא[4] נֶחָמָה יוֹנָה יוּנִי לַמְדָן[4]

[1] Դ.12. [2] Գ.15. [3] Բ.6. [4] Դ.11.

Ե.2. ס - ՍԱՄԵԽ - ձեռագիր տարբերակը՝ ס: Հնչում է «ս»: (Չշփոթել ם տառի հետ):

Կարդացե՛ք. ⇦

סַל סָךְ סָם חָס סַבָּא[1] יָסַד סֶגֶן[1] אֵסֶל[2] מֵמֵס סַיָס סָלַד יַחַס[2] סוֹבֵא סַבּוֹן סָלוּחַ[3] חָסוֹן כּוֹגֵס נָסוּךְ נִסְלַח[4] חָסוּי טִיסָן כָּבִיס מוֹסָד אָסוֹן

[1] Բ.12. [2] Դ.12. [3] Գ.15. [4] Դ.11.

Ե.3. ע - Ա՛ՅԻՆ - ձեռագիր տարբերակը՝ ע: Ինչպես և א ה ח տառերը, այս տառը պատկանում է «կոկորդայիններին» խմբին: Հին եբրայերենում այն արտահայտում էր սեմական լեզուներին բնորոշ կոկորդային խորը հնչյուն (արաբերենում՝ ع), որն արդի եբրայերենում չի պահպանվել և հանդիպում է միայն եբրայախոս արաբների և արաբական երկրներից ներգաղթած հրեաների խոսքում: Արդի եբրայերենում իր հնչյունական առանձնահատկություններով այս տառը նման է א տառին, այսինքն կարող է արտահայտել ցանկացած ձայնավոր հնչյուն՝ עָ - «ա», עֶ - «է», עֻ - «ու», עוֹ - «o», עוּ - «ու», עִ - «ի», և այլն:

Ե.4. Բառամիջում՝ բաղաձայնից հետո, ע տառն առաջացնում է խոսակցական հոսքի ընդհատում՝ מִסְעָד *միս'ադ*, իսկ բառավերջում համր է՝ נַע *նա:*

Ե.5. Բառավերջում ע-ը կարող է ստանալ «սողոսկած» պատախ (ַע): Քառն այդ դեպքում ավարտվում է «ա» ձայնավորով, իսկ շեշտը տեղափոխվում է նախորդող ձայնավորի վրա՝ מַרְוַע *մարդ'ա:*

Կարդացե՛ք. ⇦

עַל עַם סַע[1] בַּעַל[2] עָבָה סַעַד[2] דָּמַע[1,2] עֶגֶב[2] סָלַע[1,2] עוֹלָם עָזוֹב עָמִיל עֶלְיוֹן[3] מַדוּעַ[4] עָדִין עִנְיָן[3] מַגָּע[1] עִילּוּי

[1] Ե.4. [2] Դ.12. [3] Դ.11. [4] Ե.5.

Ե.6. פ - ՊԷ - ձեռագիր տարբերակը 𐡐: Ինչպես և ב ու כ տառերը, այս տառն ունի արտասանության երկու տարբերակ. թեթև դագեշով (פ) հնչում է «պ», առանց դագեշի (פּ) հնչում է «ֆ» և կոչվում ֆէ: Սա նույնպես համարվում է մեկ տառ՝ պէ ընդհանուր անվանումով, քանի որ միևնույն բառում կարող է լինել «պ-ֆ» բաղաձայնների հերթագայություն:

Ե.7. Չձայնավորված տեքստերում դագեշը չի դրվում, և արտասանության երկու տարբերակներն էլ ունեն նույն՝ առանց դագեշի գրությունը (פ): Տառը ճիշտ ընթերցելու համար պետք է նկատի ունենալ, որ բառասկզբում այն միշտ հնչում է «պ», իսկ բառավերջում՝ «ֆ»: Ե.7.1. Բառասկզբում «ֆ» և բառավերջում «պ» կարող են ունենալ միայն փոխառությունները (*Ֆորդ, պոպ*):
Ե.8. Բառավերջի ֆեն ունի գրության հատուկ ձև՝ ף, ձեռագիր տարբերակը՝ 𐡓:
Ե.9. Փոխառությունների բառավերջի «պ»-ն գրվում է פּ (פּוֹפּ):

Կարդացե՛ք. ⇦

פֶּה פַּט פֵּן פַּס פָּךְ עָךְ סַךְ עוֹף סְגֻלָּה סִיפָא פְּכֻפֶּךָ פָּנִים פָּעִיל סָפוּג נְפָסָד נִפְעָם[1] נִפְלָא מַפְגִּין

[1] Ե.4.

ՁԱՅՆԱՆԻՇԵՐ

Ե.10. Երեք ձայնանիշեր կազմված են շվա և մեկ այլ ձայնանիշի համադրությամբ: Այդ ձայնանիշերը կոչվում են «խատեֆային» և դրվում են կոկորդային բաղաձայնների տակ (א ה ח ע):

Ե.11. ◌ֲ *խատեֆ-պատախ,* նշում է «ա» ձայնավորը (հին եբր.՝ գերկարճ «ա»):

Ե.12. ◌ֱ *խատեֆ-սեգոլ,* նշում է «է» ձայնավորը (հին եբր.՝ գերկարճ «է»):

Ե.13. ◌ֳ *խատեֆ-կամաց,* նշում է «օ» ձայնավորը (հին եբր.՝ գերկարճ «օ»): Այս ձայնանիշը հանդիպում է բավականին հազվադեպ:

ՇԵՇՏԱԴՐՈՒՄ

Ե.14. Շեշտն ընկնում է նախավերջին վանկի վրա, եթե բառի վերջին ձայնավորն արտահայտված է י «յի» կապակցությամբ՝ יַיִן *յա՛յին* , מַיִם *մա՛յիմ* :

✍ *Կարդացե՛ք և արտագրե՛ք հետևյալ կապակցությունները.*

⇦

אָבָן[1] אֶדֶן[1] אֹגֶן אִבֵּן אִמֵּן אֻמָּן אִנָּה דִּין הֵגֶן הֶדֶן וֹלֵן זַבָּן זִין חָגָן חָכָם חָמָה חִנֵּךְ יַיִן[2] לָכַן מַיִם[2] נִדָּה סַלָּא נָחָה סוֹף עֻלִּי עַיִן[2] פֶּלֶא[1] פַּעַם[1] אֱלוֹהַּ[3] אֱלוּל אִילָן גָּאוֹן וָנִיל כּוֹהֵן מֵאוֹן מַדְחָן מַטְבֵּעַ[4] מַטְעָם[5] נִזְעָף[5] סַחְבָּן עֲגָלָה עֲדַיִן[2] עֲוָיָה עַזְפָּן פַּזְזָן פִּלּוּחַ[6] פִּגּוּעַ[4] פַּסְחָא אֲפוּנָה בִּלְיוֹן גֶּנְיוּס דּוֹלְמָן דִּיעָמוֹ הִנְהִיג הֶחֱלִיף וִיטָמִין חֲמוּלָה טֶלֶפוֹן לוּלְיָן מוּזְמָן עוֹלֵלָה פוֹסְפָט[7] פַּמְפִּיָה מַכְבֵּנָה נִיחוּחִי מאזְנַיִם[2] אֲבַטִּיחַ[6] בַּעֲלִיל הֶעֱמִיד חִילּוֹנִי יַהֲלוֹם אֱלוֹהִים

[1] Դ.12. [2] Ե.14. [3] Գ.16. [4] Ե.5. [5] Ե.4. [6] Գ.15. [7] Ե.7.1.

✍ *Կարդացե՛ք նույն կապակցությունների ծեռագիր տարբերակը.*

אָבָן אֶדֶן אֹגֶן אִבֵּן אִמֵּן אֻמָּן אִנָּה דִּין הֵגֶן הֶדֶן וֹלֵן זַבָּן זִין חָגָן חָכָם חָמָה חִנֵּךְ יַיִן לָכַן מַיִם נִדָּה סַלָּא נָחָה סוֹף עֻלִּי עַיִן פֶּלֶא פַּעַם אֱלוֹהַּ אֱלוּל אִילָן גָּאוֹן וָנִיל כּוֹהֵן מֵאוֹן מַדְחָן מַטְבֵּעַ מַטְעָם נִזְעָף סַחְבָּן עֲגָלָה עֲדַיִן עֲוָיָה עַזְפָּן פַּזְזָן פִּלּוּחַ פִּגּוּעַ פַּסְחָא אֲפוּנָה בִּלְיוֹן גֶּנְיוּס דּוֹלְמָן דִּיעָמוֹ הִנְהִיג הֶחֱלִיף וִיטָמִין חֲמוּלָה טֶלֶפוֹן לוּלְיָן מוּזְמָן עוֹלֵלָה פוֹסְפָט פַּמְפִּיָה מַכְבֵּנָה נִיחוּחִי מאזְנַיִם אֲבַטִּיחַ בַּעֲלִיל הֶעֱמִיד חִילּוֹנִי יַהֲלוֹם אֱלוֹהִים

✍ *Հիշե՛ք հետևյալ բառերը.*

אֲנִי *ani*	«ես»
הוּא *hu*	«նա» (ար.)
מַה *ma*	«ի՞նչ»
זֶה *ze*	«սա» (ար.)
כֵּן *ken*	«այո»
לֹא *lo*	«ոչ»

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ե.15. Եբրայերենում՝ ի տարբերություն հայերենի և արևմտաեվրոպական լեզուների, ենթական և անվանական ստորոգյալը ներկա ժամանակում կապակցվում են առանց որևէ օժանդակ բայածևի՝ *զէ շուլխան* «սա սեղան (է)», *զէ սէֆէր* «սա գիրք (է)», *զէ լէխէմ* «սա հաց (է)», *անի մօռէ* «ես ուսուցիչ (եմ)», *զէ շուլխան գադօլ* «սա մեծ սեղան է», *զէ պէ՛ռախ յաֆէ* «սա գեղեցիկ ծաղիկ է»:

Ե.16. Հարցական նախադասությունները տարբերվում են պատմողականներից միայն հարցական հնչերանգով՝ *մա՞ զէ* «ի՞նչ (է) սա», *զէ սէ՞ֆէր* «սա գի՞րք (է)» - *քէն, զէ սէ՛ֆէր*

«այո, սա գիրք (է)», *զէ լէ՞խէմ* «սա հա՞ց (է) - *լօ, զէ դազ* «ոչ, սա ձուկ է», *դավիդ մօռէ տօ՞վ* «Դավիթը լա՞վ ուսուցիչ է» - *քէն, հու մօռէ տօվ* «այո, նա լավ ուսուցիչ է»:

✍ ***Թարգմանե՛ք երթայերեն.***

Ի՞նչ է սա: Սա ձուկ է: Սա մեծ ձուկ է: Սա գի՞րք է: Ոչ, սա գրիչ է: Սա ծաղի՞կ է: Այո, սա ծաղիկ է: Սա գեղեցի՞կ ծաղիկ է: Այո, սա գեղեցիկ ծաղիկ է: Սա լա՞վ ուսուցիչ է: Այո, սա լավ ուսուցիչ է: Դավիթը լա՞վ ընկեր է: Այո, նա լավ ընկեր է: Դավիթը լա՞վ հայր է: Այո, նա լավ հայր է:

✍ ***Փորձե՛ք գտնել բառարանում հետևյալ բառերը.***

אֶבֶן, יַיִן, מַיִם, עַיִן, אֱלוֹהַּ, אֱלוֹהִים, יַהֲלוֹם, אֲבָטִיחַ

Ձ

ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐ

Ձ.1. צ - ՑԱ՛ԴԻ - ձեռագիր տարբերակը՝ ʒ: Հնչում է «ց»: Ունի հատուկ ձև բառավերջի համար՝ ץ, ձեռագիր տարբերակը �uʒ:

Կարդացե՛ք. ⇦

צַח צֶל צֶא צָג צָד צָף צָץ פָּץ עֵץ צָץ צאן עָצֵל צְעֵף צִפָּה נָצַח[1] מָצָץ[1] צִיּוֹן יָפוּת לָצוֹן צַוָּאָה נִיצוּחַ[2] לְנָצוּץ

[1] Դ.12. [2] Գ.15.

Ձ.2. ק - ԿՈՖ - ձեռագիր տարբերակը՝ ꝑ: Հնչում է «կ»:

Կարդացե՛ք. ⇦

קַו קֵץ קַם קַל קוֹל קָהָה קֵיץ[1] קָלַע[2,3] קָצַף קָבָל קוֹלֵעַ[4] קָלוּט קַנְקַן קָפוּא קָצִין קָקִיצָה פִּקָּחוֹן

[1] Ե.14. [2] Դ.12. [3] Ե.4. [4] Ե.5.

Ձ.3. ר - ՌԷՇ - ձեռագիր տարբերակը՝ ꝛ: Համապատասխանում է հայերենի «ռ» բաղաձայնին, ընդ որում միշտ կոշտ հնչողություն ունի: (Չ՛շփոթել ד տառի հետ):

Կարդացե՛ք. ⇦

רָן רַע[1] רַף רָץ רַק רָד סָר פַּר צָר קַר רוּחַ[2] רָגַע[3,1] רִבֵּעַ[4] עָרָב עִדֵּר רַפָּף רָצַע[1] רִצֵּף רִבּוּא רַהֲטָן קֵרוּר רָבּוּס רָסִיטָל

[1] Ե.4. [2] Գ.15. [3] Դ.12. [4] Ե.5.

Ձ.4. ש - ՇԻՆ - ձեռագիր տարբերակը՝ ꝭ (գրվում է ներքևից վերև): Ունի արտասանության երկու տարբերակ՝ կոշտ «շ» (ש) և «ս» (שׂ). վերջին դեպքում կոչվում է «սին»: Ձեռագրված տեքստերում արտասանության երկու տարբերակներն էլ ունեն նույն՝

առանց կետի ձևը (ש):

Չ.5. Նորագույն բառարաններում ու դասագրքերում «շ»-ն գրվում է առանց կետի (ש), իսկ «ս»-ն ավանդական ձևով (ס):

Չ.6. Պետք է նկատի ունենալ, որ ש տառը չի պատկանում երկակի արտասանություն ունեցող ב כ פ տառերի խմբին: Նրա կետը չի կոչվում «թեթև դագեշ», և միևնույն բառի մեջ «շ-ս» տարբերակների հերթագայություն հնարավոր չէ: Այնուամենայնիվ ש տառը համարվում է մեկ տառ՝ շին ընդհանուր անվանմամբ, և բառարաններում שׁ և שׂ տարբերակներով սկսվող բառերը տրվում են խառը, սովորական հերթականությամբ:

Չ.7. Չայնավորված տեքստերում ש-ի կետը կարող է ծուլվել նախորդող, իսկ ש-ի կետը՝ հաջորդող խոլամ (־) ձայնանիշի հետ. օրինակ՝ מָשְׁכָה *մոշէ*, שָׁתָה *ստա՛վա:* Ամբողջական ուղղագրության մեջ այս օրինակները ունեն հետևյալ տեսքը՝ מוֹשֶׁה, שׁוֹתָה:

Կարդացե՛ք. ⇦

שָׁל שֵׁן שַׁק שָׁק שַׂר שֶׁש שָׁש רָשׁ עָשׁ פָּשׁ קַשׁ קָשַׁשׁ קָדַשׁ רֹאשׁ שִׂיא שֵׂיךְ שָׁלַף שָׁמָא שָׁגָא שַׂגִּיא שִׂטְעֵן[1] שָׁלוֹם

[1] Ե.4.

Չ.8. ת - ՏԱՎ - ձեռագիր տարբերակը՝ 𝒯: Համապատասխանում է հայերենի «տ» բաղաձայնին, սակայն հնչում է ավելի լարված՝ որոշ դեպքերում մոտենալով «թ»-ին:

Չ.9. Հին եբրայերենում տարբերակվում էր թեթև դագեշով ת, որը հնչում էր «տ», և առանց դագեշի ת, որը հնչում էր անգլերենի *th* կապակցության պես ***th**ing* բառում: Արդի եբրայերենը չունի *th* հնչյուն, սակայն դասական ձայնավորման մեջ պահպանվում են ת-ת տարբերակները, որոնք երկու դեպքում էլ պետք է արտասանել «տ»՝ תָּ *տատ:*

Կարդացե՛ք. ⇦

תָּר תָּשׁ תָּא שָׁת תַּת פַּת תִּבֵּן תַּחַת[1] תֹּלֶם תָּמַךְ שְׁתֵּךְ עַתָּק פָּתַח[1] רָשָׁת[1] תִּעֲשׂ תָּפָל תָּקֵף תָּדִיר תּוֹהוּ תֵּימָן שָׁרוּת

[1] Գ.12.

ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐ ԵՎ ՁԱՅՆԱՆԻՇԵՐ

Չ.10. *Ձայնեղ* շվան հին եբրայերենում մոտ էր «ը» ձայնավորին: Արդի եբրայերենում այն հնչում է «է»՝ יְלָדִים *յէլադիմ:*

Չ.11. Համր և ձայնեղ շվան տարբերակվում են հետևյալ հիմնական կանոններով.

ա) Բառասկզբում շվան ձայնեղ է, այսինքն՝ արտասանվում է «է» נ מ ל ר י տառերի տակ՝ יְהוּדִי *յէհուդի,* יְצִיר *ոէցիր,* לְבָנָה *լէվանա,* מְכוֹנִית *մէխօնիթ,* נְשִׁיקָה *նէշիկա,* ինչպես նաև որոշ նախդիրներում ու շաղկապներում:

բ) Մյուս տառերի տակ շվան համր է՝ טֶרֶף *պռատ,* קֶנֶס *կնաս,* רֶגֶשׁ *առաֆ,* סִפּוּג *սֆօգ:*

գ) Բառասկզբում շվան միշտ ձայնեղ է, եթե նրան հետևում են א կամ ע տառերը՝ זְאֵב *զէէվ,* תְּעָלָה *տէալա:*

դ) Բառամիջում իրար հաջորդող երկու շվաներից առաջինը համր է, երկրորդը

ձայնեղ՝ יִלְמְדוּ *yilmədu*: Բառասկզբում երկու շվա լինել չի կարող:

ե) Նախածանցի կցման դեպքում, երբ բառասկզբի ձայնեղ շվան հայտնվում է բառամիջում, այն կարող է վերածվել համր շվայի՝ הַמְכוֹנִית *hamχoʊnit*, կամ պահպանել իր ձայնեղությունը՝ *hamɛχoʊnit*:

զ) այլ դեպքերում բառամիջի շվան սովորաբար համր է:

Զ.12. Ներկայումս՝ խառնաշփոթից խուսափելու համար, ընդունված է նշել միայն ձայնեղ շվան, իսկ ձայնավորի բացակայությունը նշել ձայնանիշի բացակայությամբ՝ לְמַד, יִלְמְדוּ (դասական ձևերը՝ יִלְמְדוּ, לְמַד): Սույն դասագրքում այս սկզբունքը կիրառվում է 11-րդ դասից:

ՇԵՇՏԱԴԲՈՒՄ

Զ.13. Եթե ավելի քան երկու վանկից բաղկացած բառի վերջին երկու վանկերն ունեն սեգոլային բառի կառուցվածք (օրինակ՝ --ְ---ֶ --ְ---ֶ --ְ---ֶ և այլն), ապա շեշտն ընկնում է նախավերջին վանկի վրա՝ מַחְבֶּרֶת *maχbɛ́ret*, תִלְבּוֹשֶׁת *tilbóʃet*, קַדַחַת *qadaχát*, יְכוֹלֶת *jɛχolɛ́t*:

Կարդացե՛ք և արտագրե՛ք հետևյալ կապակցությունները.

⇦

סֶרֶק[1] סַהַר[1] סְחִי[2] סְטָו[2] סְפָר[2] פְּאֵר[3] פְּסָק[2] פֶּצַע פֶּרַא[1] פְּרָט[2] פְּרָק[2] קֶרֶב[2] רָנָק רֵעַף שְׁאֵר[3] שְׁכָב[2] שָׁעָה שֶׁקֶר[1]
תְּאוֹ[3] עֶרֶב עֲשָׂיָה עִתּוֹן פּוֹרֵץ צְבָאִי[2] צוֹמֶת[1] צָלוּי צָעָקָה[3] צְפִיָּה[2] צְרוֹר[2] דּוּחַ[4] קַדַּחַת[5] קָשִׁיחַ[4] רַאֲוָה רְחוֹב[6]
רָעוּץ[7] תְּחִיָּה[2] דְּרִישָׁה[2] יְהוּדִי[6] יְהוּדָה[6] יְכוֹלֶת[5,6] כְּתָבִים[2] שְׁאֵלָה[3] שָׁעֲוִי שָׁקִים[8] תְּאוֹם[3] נֶחֱלָץ סְפָרְדִי[2] קְעוּרַת[5]
שׁוּעָלִי תִּלְבּוֹשֶׁת[5] קַלֶּטֶת[5] קַלֶּטֶרֶת[5] פָּזֻלַת[5] צָרְפָת[9] פָּרֶדֶס[9] שָׁלוֹם סוֹלְחָנוּת[9] נִצָּחִיוּת[9] בֶּאֱמֶת בּוּסְתָן[9] גְּרוּשִׁין
מַלְקוֹחַ[4] לוֹעֲזִית חַנְטָרִישׁ[9] סַיֶּרֶת[5] עִיקְצוּץ[9] נָפַחַת[5] נֶעֱקָף עֶקְרוֹנוֹת[9] נוֹקְדָנוּת[9] סְחַרְחֹר[2,9] הֲעָלִים טַפְטָפַת[5,9]
הִתְנַפֵּץ[9] אִירוּחַ[4,9] אֵיפְשָׁהוּ[9] זִיקוּקִין דִּתְּמֶר[5] יְהוֹדָה חַרְחָרָן[9] אֶשְׁכּוֹלִית[9] לְחִיצָה[6] הֶפְקֵרוּת[9] עֲפָצַף[9,10] לְעִתִּים[6]
אַפִּיפְיוֹר מֶלְחָצַיִם[8,9] פּוּטוּרִיקִם[11] מְשׁוּפְשָׁף[6,9] כַּעֲסָנוּת הִידְרוֹמֶטֶר[5,9] מְמוּזָלָג[6,9] אֶצְבָּעוֹן[9] אֲשְׁכְּנָזִי[12] חֲלַקְלַקָּה[9]
מְשׁוּרְבָּב[6,9] דּוּגְמָנִית[9] אֲפַרְסְמוֹן[12]

[1] Դ.12. [2] Զ.11.բ. [3] Զ.11.գ. [4] Գ.15. [5] Զ.13. [6] Զ.11.ա.
[7] Ե.5. [8] Ե.14. [9] Դ.11. [10] Ե.4. [11] Ե.7.1. [12] Զ.11.դ.

Կարդացե՛ք նույն կապակցությունների ծեռագիր տարբերակը.

סֶרֶק סַהַר סְחִי סְטָו סְפָר פְּאֵר פְּסָק פֶּצַע פֶּרַא פְּרָט פְּרָק קֶרֶב רָנָק רֵעַף שְׁאֵר שְׁכָב שָׁעָה שֶׁקֶר
תְּאוֹ עֶרֶב עֲשָׂיָה עִתּוֹן פּוֹרֵץ צְבָאִי צוֹמֶת צָלוּי צָעָקָה צְפִיָּה צְרוֹר דּוּחַ קַדַּחַת קָשִׁיחַ רַאֲוָה רְחוֹב
רָעוּץ תְּחִיָּה דְּרִישָׁה יְהוּדִי יְהוּדָה יְכוֹלֶת כְּתָבִים שְׁאֵלָה שָׁעֲוִי שָׁקִים תְּאוֹם נֶחֱלָץ סְפָרְדִי קְעוּרַת
שׁוּעָלִי תִּלְבּוֹשֶׁת קַלֶּטֶת קַלֶּטֶרֶת פָּזֻלַת צָרְפָת פָּרֶדֶס שָׁלוֹם סוֹלְחָנוּת נִצָּחִיוּת בֶּאֱמֶת בּוּסְתָן גְּרוּשִׁין
מַלְקוֹחַ לוֹעֲזִית חַנְטָרִישׁ סַיֶּרֶת עִיקְצוּץ נָפַחַת נֶעֱקָף עֶקְרוֹנוֹת נוֹקְדָנוּת סְחַרְחֹר הֲעָלִים טַפְטָפַת
הִתְנַפֵּץ אִירוּחַ אֵיפְשָׁהוּ זִיקוּקִין דִּתְּמֶר יְהוֹדָה חַרְחָרָן אֶשְׁכּוֹלִית לְחִיצָה הֶפְקֵרוּת עֲפָצַף לְעִתִּים
אַפִּיפְיוֹר מֶלְחָצַיִם פּוּטוּרִיקִם מְשׁוּפְשָׁף כַּעֲסָנוּת הִידְרוֹמֶטֶר מְמוּזָלָג אֶצְבָּעוֹן אֲשְׁכְּנָזִי חֲלַקְלַקָּה
מְשׁוּרְבָּב דּוּגְמָנִית אֲפַרְסְמוֹן

פּוּטִירַת אִשׁוּכָּת בַּסְטוֹת הִידְרוֹגֵן אֲאַבְּדוֹן, חֲזַקְזַקָּה אֲאִבְּדוֹן יְאִיזְמֵל רִאֲאֵר יְהֹוָה חֻרְחֻרוֹ הֲהִתּוּרוּת אֲבָּשׁ יְאִיתִּים אֲפִיּוֹר אֲיְחֲזִים אֲיִהְיֶה יְיִדְוֹן רִאֲאֵר יְהֹוָה חֻרְחֻרוֹ הֲהִתּוּרוּת אֲבָּשׁ יְאִיתִּים אֲפִיּוֹר אֲיְחֲזִים

Հիշե՛ք հետևյալ բառերը.

יְהוּדִי *յէհուդի*	«հրեա, հրեական» (ար.)
מִלָּה *միլա*	«բառ» (հգ.)
מַחְבֶּרֶת *մախբէ՛ռէթ*[1]	«տետր» (հգ.)
תַּלְמִיד *տալմիդ*	«աշակերտ» (ար.)
לָבָן *լավան*	«սպիտակ» (ար.)
כִּסֵּא *քիսէ*	«աթոռ» (ար.)

[1] ----- (Զ.13.)

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Զ.15. Անվանական ստորոգյալի ժխտումը կատարվում է *լօ* (לֹא) «ոչ» բառի օգնությամբ՝ *դավիդ լօ տալմիդ* «Դավիթը աշակերտ չէ», *զէ լօ սէֆէր* «սա գիրք չէ», *զէ լօ շուլխան, զէ քիսէ* «սա սեղան չէ, սա աթոռ է», *անի լօ տալմիդ, անի մօռէ* «ես աշակերտ չեմ, ես ուսու-ցիչ եմ», *հու լօ մօռէ, հու տալմիդ* «նա ուսուցիչ չէ, նա աշակերտ է»:

Թարգմանե՛ք երկայներեն.

Սա ծո՞ւկ է: Այո, սա մեծ ծուկ է: Սա գի՞րք է: Ոչ, սա գիրք չէ, սա գրիչ է: Սա սպիտակ ծաղի՞կ է: Այո, սա սպիտակ ծաղիկ է: Սա սեղա՞ն է: Ոչ, սա սեղան չէ, սա մեծ աթոռ է: Սա աշակե՞րտ է: Ոչ, սա աշակերտ չէ, սա ուսուցիչ է: Սա լավ ուսուցիչ է: Ես ուսուցիչ չեմ, ես աշակերտ եմ: Դավիթը ուսուցիչ չէ, նա աշակերտ է: Դավիթը հրեա՞ է: Ոչ, նա հրեա չէ:

Փորձե՛ք գտնել բառարանում հետևյալ բառերը.

שָׂעָה, רְחוֹב, צָרְפָת, שְׁאֵלָה, שָׁלוֹם, סְפָרַדִי, אַשְׁכְּנָזִי

הא-ב-ג-ד-ה-ו-ז-ח-ט-י-כ-ל-מ-נ-ס-ע-פ-צ-ק-ר-ש-ת

האלפבית העברי

ת	ת	תּ	תָּ
ש	שׁ	שּׁ	שָׁ
ר	ר	רּ	רָ
ק	ק	קּ	קָ
צ	צ	צּ	צָ
פ (ף)	פ (ף)	פּ	פָּ
ע	ע	עּ	עָ
ס	ס	סּ	סָ
נ	נ	נּ	נָ
מ (ם)	מ (ם)	מּ	מָ
ל	ל	לּ	לָ
כ (ך)	כ (ך)	כּ	כָּ
י	י	יּ	יָ
ט	ט	טּ	טָ
ח	ח	חּ	חָ
ז	ז	זּ	זָ
ו	ו	וּ	וָ
ה	ה	הּ	הָ
ד	ד	דּ	דָ
ג	ג	גּ	גָ
ב	ב	בּ	בָ
א	א	אּ	אָ
-	-	-	-

* בתצוגתמונה

Է.1. Ձայնանիշերի ամբողջական ցանկ

ա	◌ַ	◌ָ	◌ָה	
հ	◌ַ	◌ַה		
է	◌ֶ	◌ֵ	◌ֵי	◌ֶי
օ	◌ָ	◌ֹ	◌ָו	◌ֹו
ու	◌ֻ	◌ּו		

Է.2. Պակասավոր ուղղագրության մեջ շեշտ չկրող փակ (բաղաձայնով ավարտվող) վանկերում և մի քանի այլ դեպքերում, կամաց ձայնանիշը արտասանվում է «օ»՝ կոչվելով *կամաց-խատուֆ*, կամ «փոքր կամաց»՝ חָכְמָה *խօխմա,* לָ֫ *քօլ*: Ամբողջական ուղղագրության մեջ կամաց-խատուֆը սովորաբար փոխարինվում է ו տարով՝ כּוֹל ,חוֹכְמָה:

Է.3 Կամացը հնչում է «օ», եթե նրան հաջորդում է խատեֆ-կամացը՝ מָחֳמָ֫ת *մօխօռաթ:*

Է.4. Ինչպես հետևում է նախորդ դասերից, որոշ հնչյուններ կարող են արտահայտված լինել երկու տառով, այսինքն՝ երկու տարբեր տառեր կարող են ունենալ նույն հնչողությունը.

ו և ב ընթերցվում են «վ» (բառասկզբում հնչող «վ»-ն միշտ ו է)
ח և כ ընթերցվում են «խ» (բառասկզբում հնչող «խ»-ն միշտ ח է)
ק և כ ընթերցվում են «կ» (բառավերջում հնչող «կ»-ն միշտ ק է)
ט և ת ընթերցվում են «տ»
ס և ש ընթերցվում են «ս»

Է.5. Թեթև դագեշը դրվում է ב ג ד כ פ ת տառերի մեջ (դասական սեմագիտության մեջ բաղաձայնների այս խումբը կոչվում է *bagad-kapat*): ב כ פ տառերի դեպքում դագեշը տարբերակում է այս տառերի երկակի արտասանությունը, համապատասխանաբար՝ «բ-վ», «կ-խ», «պ-ֆ»:

Է.6. ג ד ת տառերի դեպքում դագեշի առկայությունը կամ բացակայությունը չի ազդում արտասանության վրա, և երկու տարբերակներն էլ ունեն նույն արտասանությունը, համապատասխանաբար՝ «գ», «դ», «տ»:

Է.7. א ה ח ע բաղաձայնները, ինչպես քանիցս նշվել է, կազմում են կոկորդային բաղաձայնների խումբը և ունեն որոշ հնչյունային առանձնահատկություններ: Հնչյունային որոշ օրինաչափությունների դեպքում կոկորդայիններին հարում է նաև ר բաղաձայնը:

Է.8. ו և י տառերը ամբողջական ուղղագրության մեջ, որոշ սահմանափակումներով, օգտագործվում են «օ», «ու», «ի», «է» (ցեռե ձայնանիշի փոխարեն) ձայնավորները նշելու համար: «Ա» ձայնավորի նշումը א տառով խիստ սահմանափակ է:

Է.9. Հետևյալ հինգ տառերը՝ כ מ נ פ צ ունեն հատուկ ձևեր բառավերջի համար, համապատասխանաբար՝ ך ם ן ף ץ:

Է.10. Հին եբրայերենում գոյություն ուներ բաղաձայնների կրկնության երևույթ, որը գրության մեջ նշվում էր կրկնվող բաղաձայնի մեջ դրվող՝ կետով՝ «ուժեղ դագեշով»՝ שִׁלּוּם *շիլլում*, הַשָּׁמְּ *հաշշէմէշ*: Արդի եբրայերենում բաղաձայնների կրկնություն գոյություն չունի, և դասական ձայնավորման դեպքում դրվող ուժեղ դագեշը չի ազդում բաղաձայնի արտասանության վրա: Հետևաբար բերված օրինակները պետք է ընթերցել՝ *շիլում, հաշէմէշ*:

Է.11. Ուժեղ դագեշը կարող է լինել բոլոր տառերի մեջ, բացառությամբ կոկորդայիններին (א ה ח ע) և ר-ի:

Է.12. Եբրայերենում օգտագործվող կետադրական նշանները հիմնականում համընկնում են եվրոպական լեզուների կետադրական նշանների հետ: Եբրայերենին հատուկ նշաններից են՝ *մակէֆ* (־), որը միացնում է երկու կամ ավելի գոյականների կապակցությունը՝ בֵּית־סֵפֶר, *գէրէշ* (׳), որը դրվում է կրճատված բառերի վերջում՝ דוקטור = דר׳, և *գեռշա՛յիմ* (״), որը դրվում է եբրայերենում լայնորեն օգտագործվող հապավումների վեր-ջին տառից առաջ՝ ת״ת:

Է.13. Փոխառությունների «ժ» բաղաձայնը նշելու համար օգտագործվում է ׳ז (*զային-գեռէշ*) կապակցությունը, «ջ» բաղաձայնի համար՝ ג׳ (*գիմել-գեռէշ*) կապակցությունը, «չ» բաղաձայնի համար՝ ׳צ (*զային-գեռէշ*) կապակցությունը:

Է.14. Ինչպես նշվել է Ա.5. պարբերությունում, եբրայական տառերն ունեն նաև թվային արժեք.

א - 1	ו - 6	ל - 30	צ - 90
ב - 2	ז - 7	מ - 40	ק - 100
ג - 3	ח - 8	נ - 50	ר - 200
ד - 4	ט - 9	ס - 60	ש - 300
ה - 5	י - 10	ע - 70	ת - 400
	כ - 20	פ - 80	

Մյուս թվականները կազմվում են տառերի համադրությամբ, գեռշայիմ նշանի օգտագործմամբ՝ י״א - 11, י״ב - 12, י״ג - 13, י״ד - 14, ט״ו - 15, ט״ז - 16 (י״ו և י״ה կապակցությունները կրոնական նկատառումներով չեն օգտագործվում, քանի որ առկա են יהוה կապակցության մեջ, որով նշվում է Եհովայի անունը), י״ז - 17, י״ח - 18, י״ט - 19, כ״א - 21, ס״ה - 65, קס״ח - 168, תתק״ט - 909 (400+400+100+9), ת״ק -500 (400+100) և այլն:

Կարդացե՛ք և արտագրե՛ք հետևյալ կապակցությունները (բառամիջի շվան, եթե այլ նշում չկա, համր է).

⇦

אַבְרָהָם זַעֲזוּעַ[1] כַּשָּׁפוּת[2] גִּדְעוֹן[3] בִּנְיָמִין מַכְפֵּלָה שַׁלְגִּיָּה אֱלִישָׁע[3] גִּלְבּוֹעַ[1] רַבַּת־עַמּוֹן[2,4] דָּנִיֵּאל[2] פֶּרְצוּפוֹן מִצְרַיִם[5] עֲצָמוֹת[6] פֶּרַע[3] לָחְמָא יְשָׁרָאֵל דֶּמֶשֶׁק[2,6] דַּרְיָוֶשׁ חָסָכוֹן[2] חֲנוּכָּה צַעֲתָנוּת[3] הִיגְרוֹסְקוֹפּ[7] הָכֵיצַד רְאוּבֵן[8] אֶלְעָזָר[3] אֱלִיעֶזֶר[6] הֲיִתָּכֵן שִׁמְשׁוֹן חַזָּנוּת[2] טַיֶּלֶת[2,6] אַבְשָׁלוֹם אֶבְיָתָר יְהוָה[9] יְרוּשָׁלַיִם[9,5] תֵּל־אָבִיב[4] בֵּית־שָׁאן[4,8] שְׁחַרְחֹרֶת[10,6] עֶצְיוֹן־גֶּבֶר[4,11] רַבְצֶלְעוֹן[3] קְדֵשָׁה[10] צִיקְלוֹפּ[7] פֶּמְבִּיוּת הִתְעַנְיֵן[3] כַּרְכְּמִישׁ[12] אַהֲרוֹן סַנְהֶדְרִין סַנְדָּלָר[12] יְהוֹשָׁעַ[9,1] אֲרָרָט הוֹרְקָנוֹס[12] חֲטוּטֶרֶת[6] יַהֲלוֹמָנוּת אוֹנְקְלוֹס[12] לִשָּׁנָא[2] כַּדּוּרַגְלָן מְאֻגָּרָף[9] שְׁעוּעִית[8] יִזְרְעֶאל[12] יְהוֹיָכִין[9] שִׁבְעָתַיִם[3,5] רַחֲבָעָם[9,3] יְהוֹנָתָן[9] עֲשְׁתֹרֶת[6] צְפַרְדֵּעַ[10,1] נַמְנָמָן[12] מְכוּפְתָּר[9] מָחֳרָת[13] מָחֳרָתַיִם[13,5] יְרַקְרָקוּת[9,2] צָהֳרַיִם[13,5] מְחֻרְגָּמָן[9,12] שְׁמוּאֵל[10] יְהוֹשָׁפָט[9] אֲבִינָדָב מִתְפַּלֵּסֵף תָּג־יְקִיסְתָּן[14] צֶ׳לוֹ[14] זְ׳אנְר[14] פְּלִשְׁתִּים[10] אֶפְרַיִם[5] צְמַרְמֶרֶת[10,6] נְחֶשְׁתָּן[9] יִשְׁמָעֵאל זֶרֶבֶל[10] לְשֶׁעָבָר[9] קִרְיַת־יְעָרִים[4,9] יְהוֹאָחָז[9] אֶרֶץ־יִשְׂרָאֵל[11,4] טַהֲרָנוּת שְׁלוֹמְצִיּוֹן[10,2] פִּרְקֵי־אָבוֹת[4] אַרְגָּזָן[12] אַב־בֵּית־דִּין[4] אַשְׁקְלוֹן[12] נַפְתָּלִי זְבָלוּן[10] מַסְכְּתוֹת[2] בְּרֵיתָא תּוֹסֶפְתָּא סָבוֹרָאִים אַבִּימֶלֶךְ[6] בֶּסְתְּנַאי[12] אֵסֶר־חַדּוֹן[4] חִלְקִיָּה[2] אֲחַשְׁוֵרוֹשׁ בְּלְשַׁאצַּר[2] נְבוּכַדְנֶאצַּר[9]

[1] Ե.5. [2] Է.10. [3] Ե.4. [4] Է.12. [5] Ե.14. [6] Զ.14. [7] Ե.9. [8] Զ.11.գ.
[9] Զ.11.ա. [10] Զ.11.բ. [11] Դ.12. [12] Զ.11.դ. [13] Է.3. [14] Է.13.

✍ *Կարդացե՛ք նույն կապակցությունների ծեռագիր տարբերակը.*

אַבְּיתִי־לִי אֶת־הַנַּעַר הַזֶּה, וְיֵלֵךְ אִתִּי וְאֵרְדָה אֵלָיו וְאֶשְׁבָּה תַּחְתָּיו אֶל־מְקוֹם אֲשֶׁר־יִבְחַר יְהוָה וְאֶשְׁכְּנָה שָׁם עַד־עוֹלָם וְגַם־אֲנִי הִשְׁאִלְתִּיהוּ לַיהוָה כֹּל הַיָּמִים אֲשֶׁר הָיָה הוּא שָׁאוּל לַיהוָה וַיִּשְׁתַּחוּ שָׁם לַיהוָה וַיִּתְפַּלֵּל חַנָּה וַתֹּאמֶר עָלַץ לִבִּי בַּיהוָה רָמָה קַרְנִי בַּיהוָה רָחַב פִּי עַל־אוֹיְבָי כִּי שָׂמַחְתִּי בִּישׁוּעָתֶךָ אֵין־קָדוֹשׁ כַּיהוָה כִּי אֵין בִּלְתֶּךָ וְאֵין צוּר כֵּאלֹהֵינוּ אַל־תַּרְבּוּ תְדַבְּרוּ גְבֹהָה גְבֹהָה יֵצֵא עָתָק מִפִּיכֶם כִּי אֵל דֵּעוֹת יְהוָה וְלוֹ נִתְכְּנוּ עֲלִלוֹת קֶשֶׁת גִּבֹּרִים חָתָּים וְנִכְשָׁלִים אָזְרוּ חָיִל שְׂבֵעִים בְּלֶחֶם נָרָעֵבוּ עַד־עֲקָרָה יָלְדָה שִׁבְעָה וְרַבַּת בָּנִים אֻמְלָלָה יְהוָה מֵמִית וּמְחַיֶּה מוֹרִיד שְׁאוֹל וַיָּעַל יְהוָה מוֹרִישׁ וּמַעֲשִׁיר מַשְׁפִּיל אַף מְרִים׃

Ձեռագիր տառերի այլ տարբերակ ✍

✍ *Հիշե՛ք հետևյալ բառերը.*

שֵׁם *շէմ*	«անուն» (ար.)
אָרוֹן *առօն*	«պահարան» (ար.)
כִּסֵּא *կիսէ*	«ծանր, դժվար» (ար.)
טָעִים *տաիմ*	«համեղ» (ար.)
חָדָשׁ *խադաշ*	«նոր» (ար.)

✍ *Թարգմանե՛ք երրայերեն.*

Սա նոր անուն է: Սա գեղեցիկ անուն չէ: Սա դժվա՞ր դաս է: Այո, սա դժվար դաս է: Սա մեծ պահարան է: Ես նոր ուսուցիչ չեմ: Սա դժվար անուն է: Սա սպիտակ աթոռ է: Ի՞նչ է սա: Սա համեղ հաց է: Սա գիրք չէ: Սա մե՞ծ սեղան է: Այո, սա մեծ սեղան է: Սա նոր հաց է: Դավիթը գեղեցիկ անուն է: Սա նոր անուն չէ: Սա գեղեցիկ օր է: Դավիթը լավ եղբայր չէ:

☝

Մույն դասագրքում մինչև 10-րդ դասը ներառյալ կիրառվում է դասական՝ պակասավոր ուղղագրությունը, այսինքն՝ ձշվում է ուժեղ դագերը, ո ու ա տառերի թեթև դագերը, համր շվան: Ապա մինչև 20-րդ դասը ծայնավորումը շարունակվում է առանց ձշված ծայնանիշերի՝ ամբողջական ուղղագրության սկզբունքների կիրառմամբ: Այս եղանակով բառերը ծայնավորված են նաև դասագրքի վերջում զետեղված բառարանում: 21-րդ դասից ծայնանիշերի քանակը աստիճանաբար կրճատվում է:

Մինչև 40-րդը յուրաքանչյուր դասն ունի նոր բառերի ցանկ, որում բառերը զետեղված են ըստ այբբենական կարգի, ինչը կօգնի ուսանողին մշակել բառարանի հետ աշխատելու հմտություններ: Մինչև 20-րդ դասը նոր բառերի ցանկում և քերականական բացատրություններում տրված է նաև հայերեն տառադարձությունը: Տառադարձության մեջ, այդ թվում՝ քերականական բացատրություններում, շեշտը ձշված է միայն այն դեպքում, երբ չի ընկնում վերջին վանկի վրա:

ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍ

Դասեր 1-80

1 אַחַת

ԳՈՅԱԿԱՆ ԱՆՎԱՆ ՍԵՌԸ

1.1. Եբրայերենն ունի երկու սեռ՝ արական և իգական: Արական սեռի գոյականները չունեն սեռի որևէ հատուկ ցուցանիշ՝ שִׁעוּר *շիուր* «դաս», סֵפֶר *սէֆէր* «գիրք», עַט *էտ* «գրիչ», מוֹרֶה *մօռէ* «ուսուցիչ», תַּלְמִיד *տալմիդ* «աշակերտ», שֻׁלְחָן *շուլխան* «սեղան», גַּג *գագ* «ձուկ», לֶחֶם *լէխէմ* «հաց»:

1.2. Իգական սեռին են պատկանում (որոշ բացառություններով) ־ה և ת վերջավորություններով գոյականները՝ בֻּבָּה *բուբա* «տիկնիկ», דִּירָה *դիռա* «բնակարան», עֻגָה *ուգա* «թխվածք», מַחְבֶּרֶת *մախբէռէթ* «տետր»:

1.3. Վերջավորությունից անկախ, իգական սեռին են պատկանում մարմնի զույգ անդամների անվանումները, երկրների ու քաղաքների անունները (գետերի անուններն արական սեռի են), ինչպես նաև որևէ խմբի չպատկանող բազմաթիվ բառեր: 1.3.1. Մի խումբ գոյականներ կարող են հանդես գալ և՛ իբրև արական, և՛ իբրև իգական սեռի գոյականներ:

1.4. Անձ նշող գոյականներն իգական սեռ են կազմում ־ה վերջավորության կցմումով՝ תַּלְמִיד - תַּלְמִידָה *տալմիդ - տալմիդա* «աշակերտ - աշակերտուհի», կամ, ավելի հազվադեպ, ־ית վերջավորությամբ՝ סְטוּדֶנְט - סְטוּדֶנְטִית *ստուդէնտ - ստուդէնտիթ* «ուսանող - ուսանողուհի»: 1.4.1. ־ֶה վերջավորությունն իգական սեռում փոխարինվում է ־ה վերջավորությամբ՝ מוֹרֶה - מוֹרָה *մօռէ - մօռա* «ուսուցիչ - ուսուցչուհի»:

ԱԾԱԿԱՆ ԱՆՎԱՆ ՍԵՌԸ

1.5. Ածականների իգական սեռը կազմվում է ־ה վերջավորության կցումով՝ טוֹב - טוֹבָה *տօվ - տօվա* «լավ»:

1.6. Իգական սեռում ածականի առաջին ձայնանիշը հաճախ վերածվում է համր կամ ձայնեղ շվայի՝ גָּדוֹל - גְּדוֹלָה *գադօլ - գդօլա*, טָעִים - טְעִימָה *տաիմ - տէիմա*, לָבָן - לְבָנָה *լավան - լէվանա:* 1.6.1. Եթե առաջին տառը կոկորդային է, նրա ձայնանիշը վերածվում է խատեֆ-պատախի՝ חָשׁךְ - חֲשָׁכָה *խադաշ - խադաշա*: Այսպիսի ձայնանիշափոխությունները պայմանավորված են հին եբրայերենի հնչյունային առանձնահատկություններով:

1.7. ה֫ վերջավորությունն իգական սեռում փոխարինվում է ה֣ վերջավորությամբ՝ - יָפָ֫ה יָפָ֣ה *յաֆէ - յաֆա* «գեղեցիկ», קָשֶׁ֫ה - קָשֶׁ֣ה *կաշէ - կաշա* «ծանր, դժվար»:

1.8. י֫ վերջավորություն ունեցող ածականների իգական սեռը կազմվում է ת վերջավորության կցումով՝ מוֹדֶ֫רְנִי - מוֹדֶ֫רְנִית *մօդէ՛ռնի - մօդէ՛ռնիթ* «ժամանակակից», אַרְמֶ֫נִי - אַרְמֶ֫נִית *առմէնի - առմէնիթ* «հայկական», יְהוּדִי - יְהוּדִית *յէհուդի -յէհուդիթ* «հրեական»: 1.8.1. Եթե այդպիսի ածականը վերաբերում է մարդուն (օրինակ՝ նշում է ազգությունը), ապա իգական սեռը կազմվում է י֫ה վերջավորությամբ՝ אַרְמֶ֫נִי - אַרְמֶ֫נְיָה *առմէնի - առմէնիյա* «հայ - հայուհի», יְהוּדִי - יְהוּדִיָּה *յէհուդի - յէհուդիյա* «հրեա - հրեուհի»:

1.9. Ածականը միշտ դրվում է գոյականից հետո և համաձայնեցվում նրա հետ թվով և սե-ռով՝ תַּלְמִיד טוֹב - תַּלְמִידָה טוֹבָה *տալմիդ տօվ - տալմիդա տօվա* «լավ աշակերտ - լավ աշակերտուհի», מוֹרֶה חָדָשׁ - מוֹרָה חֲדָשָׁה *մօռէ խադաշ - մօռա խադաշա* «նոր ուսուցիչ - նոր ուսուցչուհի»:

ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

1.10. «Սա» ցուցական դերանունը եզակի թվում տարբերակվում է ըստ սեռի՝ זֶה *զէ* (արական), זאת *զօթ* կամ זוֹ *զօ* (իգական): Ցուցական դերանվան սեռը պայմանավորված է մատնանշվող գոյականի սեռով՝ זֶה סֵפֶר *զէ սէֆէռ* «սա գիրք է», זאת מַחְבֶּרֶת *զօթ մախբէ՛ռէթ* «սա տետր է», זוֹ בֻּבָּה *զօ բուբա* «սա տիկնիկ է»:

ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

1.11. II և III դեմքի անձնական դերանուններն ունեն առանձին ձևեր արական և իգական սեռերի համար: I դեմքի դերանուններն ընդհանուր են երկու սեռերի համար: Ստորև ներկայացված են եզակի թվի անձնական դերանունները.

	արական	*իգական*	
I	*անի* אֲנִי		«ես»
II	אַתָּה *ադա*	אַתְּ *ադ*	«դու»
III	הוּא *հու*	הִיא *հի*	«նա»

Ուշադրություն դարձրե՛ք, որ արական սեռի אַתָּה դեռահունն ունի իգական սեռին բնորոշ վերջավորություն: Ուշադրություն դարձրե՛ք նաև אַתְּ դերանվան վերջում դրվող շվայի վրա:

Ի ՇԱՂԿԱՊԸ

1.12. Ի *վէ* «և, ու, իսկ» կցական շաղկապը կցվում է հաջորդող բառին և ընթերցվում նրա հետ որպես մեկ բառ՝ ֆՈՂԵՂՆ ՎԻՊՂՈՒ *շուխան վէտէլէֆօն* «սեղան ու հեռախոս», ԱՆԻ ՎԱԹԱ *անի վէաթա* «ես ու դու», ԶԱՒՐԻՏ ՄԱՀԲԵՐԹ ԱԶ *զէ սէֆէռ, վէզօթ մախբէռէթ* «սա գիրք է, իսկ սա տետր է»: 1.12.1. Եթե հաջորդող բառի առաջին տառն ունի թեթև դագեշ, ապա Ի շաղկապի շվայի ազդեցությամբ այն ընկնում է՝ ՏԱԼՄԻԴ ՎԵՏԱԼՄԻԴԱ *տալմիդ վէտալմիդա* «աշակերտ ու աշակերտուհի» (ՏԱԼՄԻԴԱ ֆ ՏԱԼՄԻԴ): ב כ פ տառերի դեպքում տեղի է ունենում համապատասխան հնչյունափոխություն՝ ՇՈՒԽԱՆ ՎԷԽԻՍԷ *շուխան վէխիսէ* «սեղան և աթոռ» (ԽԻՍԱ ֆ ՇՈՒԽԱՆ):

ԱՅԼ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.13. ՄԱԶ *մէօղ* «շատ, չափազանց» բառը դրվում է ածականից հետո՝ ԳԱԶՈԼ ՄԱԶ *գաղօլ մէօղ* «շատ մեծ», ՅԱՖԱ ՄԱԶ *յաֆա մէօղ* «շատ գեղեցիկ»:

1.13.1. Խոսակցական լեզվում ՄԱԶ բառը կարող է դրվել ածականից առաջ՝ ՄԱԶ ԳԱԶՈԼ:

1.14. ԳԱՄ *գամ* «նաև, նույնպես» բառը սովորաբար դրվում է հստակեցվող բառից առաջ՝ ԳԱՄ ԱՆԻ *գամ անի* «ե՛ս էլ, ես նույնպես», ԳԱՄ ԴԱՎԻԹ *գամ դավիդ* «Դավի՛թն էլ, նաև Դավիթը»:

✍ *Կարդացե՛ք, թարգմանե՛ք և արտագրե՛ք հետևյալ տեքստը.*

ՄԱ ԶԷ ? ԶԷ ՏԷՖՐ. ԶԷ ՏԷՖՐ ? ԶԻՆ, ԶԷ ՏԷՖՐ. ԶԷ ՏԷՖՐ ԽԱՇ ? ԶԻՆ, ԶԷ ՏԷՖՐ ԽԱՇ.
ՄԱ ԶԷ ? ԶԷ ՇՈՒԽԱՆ. ԶԷ ՇՈՒԽԱՆ ? ԶԻՆ, ԶԷ ՇՈՒԽԱՆ. ԶԷ ՇՈՒԽԱՆ ԳԱԶՈԼ ? ԶԻՆ, ԶԷ ՇՈՒԽԱՆ ԳԱԶՈԼ.
ՄԱ ԶԷ ? ԶԷ ԴԱԳ. ԶԷ ԴԱԳ ? ԶԻՆ, ԶԷ ԴԱԳ. ԶԷ ԴԱԳ ՏԱՅԻՄ ? ԶԻՆ, ԶԷ ԴԱԳ ՏԱՅԻՄ ՄԱԶ
ՄԱ ԶԷ ? ԶԷ ԼԻՀՄ. ԶԷ ԼԻՀՄ ? ԶԻՆ, ԶԷ ԼԻՀՄ. ԶԷ ԼԻՀՄ ԼԱՔԱՆ ? ԶԻՆ, ԶԷ ԼԻՀՄ ԼԱՔԱՆ.
ՄԱ ԶԷ ? ԶԷ ԱՏ. ԶԷ ԱՏ ? ԶԻՆ, ԶԷ ԱՏ. ԶԷ ԱՏ ԹՈՒՔ ? ԶԻՆ, ԶԷ ԱՏ ԹՈՒՔ ՄԱԶ.
ՄԱ ԶԷ ? ԶԷ ԹԼՖՈՒՆ. ԶԷ ԹԼՖՈՒՆ ? ԶԻՆ, ԶԷ ԹԼՖՈՒՆ. ԶԷ ԹԼՖՈՒՆ ՄՈՒԶՐՆԻ ? ԶԻՆ, ԶԷ ԹԼՖՈՒՆ ՄՈՒԶՐՆԻ.

ԶԷ ԴԱԳ ? ԼԱ, ԶԷ ԼԱ ԴԱԳ, ԶԷ ԼԻՀՄ.
ԶԷ ԱՏ ? ԼԱ, ԶԷ ԼԱ ԱՏ, ԶԷ ՏԷՖՐ.
ԶԷ ՇՈՒԽԱՆ ? ԼԱ, ԶԷ ԼԱ ՇՈՒԽԱՆ, ԶԷ ԽԱՇ.

ՄԱ ԶԱԹ ? ԶԱԹ ԲԵՔԱ. ՄԱ ԶԱԹ ? ԶԱԹ ԴԻՐԱ. ՄԱ ԶԱԹ ? ԶԱԹ ԱԳԱ. ՄԱ ԶԱԹ ? ԶԱԹ ՄԱՀԲԵՐԹ.
ԶԱԹ ՄԱՀԲԵՐԹ ? ԶԻՆ, ԶԱԹ ՄԱՀԲԵՐԹ. ԶԱԹ ԱԳԱ ? ԼԱ, ԶԱԹ ԼԱ ԱԳԱ, ԶԱԹ ԲԵՔԱ.

ԶԷ ՏԷՖՐ ԽԱՇ ԻԱԹ ՄԱՀԲԵՐԹ ԽԱՇԱ.
ԶԷ ԱՏ ԹՈՒՔ ԻԱԹ ԱԳԱ ԹՈՒՔԱ.
ԶԷ ՇՈՒԽԱՆ ԳԱԶՈԼ ԻԱԹ ԲԵՔԱ ԳԱԶՈԼԱ.
ԶԷ ԹԼՖՈՒՆ ՄՈՒԶՐՆԻ ԻԱԹ ԴԻՐԱ ՄՈՒԶՐՆԻԹ.

ՄԻ ԶԷ ? ԶԷ ՄՈՒՐԱ. ՄԻ ԶԷ ? ԶԷ ԹԱԼՄԻԴ. ՄԻ ԱԹԱ ? ԱԹԱ ՄՈՒՐԱ ? ԶԻՆ, ԱՆԻ ՄՈՒՐԱ, ԱՆԻ ԼԱ ԹԱԼՄԻԴ.
ՄԻ ՀՈՒԱ ? ՀՈՒԱ ԹԱԼՄԻԴ. ԱՅՓԱ ՀՈՒԱ ? ՀՈՒԱ ՇՄ. ԻԱՅՓԱ ԱԹԱ ? ԱՆԻ ՓԱ ?

מִי זֹאת? זֹאת תַּלְמִידָה. מִי זֹאת? זֹאת מוֹרָה.
הִיא תַּלְמִידָה? לֹא, הִיא לֹא תַּלְמִידָה, הִיא מוֹרָה.
הִיא מוֹרָה טוֹבָה? כֵּן, הִיא מוֹרָה טוֹבָה מְאוֹד. אַתְּ מוֹרָה? לֹא, אֲנִי לֹא מוֹרָה, אֲנִי תַּלְמִידָה.
אֵיפֹה הִיא? הִיא שָׁם? לֹא, הִיא לֹא שָׁם, הִיא פֹּה. וְאֵיפֹה אַתְּ? גַּם אֲנִי פֹּה.
זֶה תַּלְמִיד וְאֵת תַּלְמִידָה. הוּא תַּלְמִיד טוֹב וְהִיא תַּלְמִידָה טוֹבָה.
זֶה מוֹרֶה וְאֵת מוֹרָה. הוּא מוֹרֶה חָדָשׁ, גַּם הִיא מוֹרָה חֲדָשָׁה.

Թարգմանե՛ք երկայերեն.

1. Սա շատ մեծ գիրք է: 2. Նա շատ լավ աշակերտ է: 3. Սա ձո՞ր հեռախոս է: Այո, սա ձոր հեռախոս է: 4. Սա համե՞ղ ծառ է: Ոչ, սա համեղ ծառ չէ: 5. Սա գիրք է, իսկ սա տետր է: 6. Որտե՞ղ է նա: Նա այստեղ չէ, նա այնտեղ է: 7. Դու լավ աշակերտուհի ես, ես էլ եմ լավ աշակերտ: 8. Սա ձոր տիկնիկ է, նա շատ լավն է: 9. Սա սպիտակ հաց է, այն (նա) շատ համեղ է: 10. Դու ուսուցչուհի՞ ես: Ոչ, ես ուսուցչուհի չեմ, ես աշակերտուհի եմ: 11. Ես հրեա չեմ, ես հայ եմ: 12. Նա էլ է հայուհի, նա հրեուհի չէ:

ՆՈՐ ԲԱՌԵՐ

אַחַת ש״מ נ *մեկ, ախատ*
אֵיפֹה תה״פ *որտե՞ղ, էյֆօ կամ է՛յֆօ*
אֲנִי מ״ג *ես, անի*
אַתָּה ז׳, **אַתְּ** נ מ״ג *դու, աթա, աթ*
גַּם מ״ח *նաև, նույնիսկ, գամ*
הוּא ז׳, **הִיא** נ מ״ג *նա, հու, հի*
וְ מ״ח *և, ու, իսկ, վե*
זֹאת, זוֹ מ״ג נ *սա, այս, զոթ, զո*
זֶה מ״ג ז׳ *սա, այս, զե*
טֶלֶפוֹן ז׳ *հեռախոս, տելեֆօն*
כֵּן תה״פ *այո, այսպես, քեն*
לֹא תה״פ *ոչ, լօ*
מְאֹד תה״פ *շատ, չափազանց, մեօդ*
מָה מ״ג *ի՞նչ, մա*
מוֹדֶרְנִי ת *ժամանակակից, մօդե՛ռնի*
מִי מ״ג *ո՞վ, մի*
פֹּה *այստեղ, պօ*
שָׁם תה״פ *այնտեղ, շամ*

(քերականական հապավումների ցանկը տե՛ս դասագրքի վերջի բառարանի առաջին էջում)

2ա שְׁתַּיִם

ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ՀՈԳՆԱԿԻ ԹԻՎԸ

Արական սեռի գոյականներ ու ածականներ

2.1. Արական սեռի գոյականների ու ածականների հոգնակին կազմվում է יִם- *-իմ* վերջածանցի կցումով՝ תַּלְמִיד - תַּלְמִידִים *տալմիդ - տալմիդիմ* «աշակերտներ», שִׁעוּר - שִׁעוּרִים *շիուռ - շիուրիմ* «դասեր», טוֹב - טוֹבִים *տօվ - տօվիմ* «լավ(եր)»:

2.2. ֵה- վերջավորությունը հոգնակիում սղվում է՝ מוֹרֶה - מוֹרִים *մօռէ - մօռիմ* «ուսուցիչ(ներ)», יָפֶה - יָפִים *յաֆէ - յաֆիմ* «գեղեցիկ(ներ)», קָשֶׁה - קָשִׁים *կաշէ - կաշիմ* «դժվար(ներ), ծանր(եր)»:

2.3. Քանի որ հոգնակիում շեշտը տեղափոխվում է կցված վարջածանցի վրա, ապա բառը հաճախ կրում է ներքին հնչյունափոխություն՝ סֵפֶר - סְפָרִים *սէֆէր - սֆառիմ* «գրքեր», עֵט - עֵטִים *էտ - իտիմ* «գրիչներ»: (Այս տիպի «անկանոն» հոգնակիները հատուկ նշված են յուրաքանչյուր դասի բառարանում):
2.3.1. Փոփոխությունը կարող է վերաբերել միայն ձայնանիշերին և չազդել բառի արտասանության վրա՝ חֵבֵר - חֲבֵרִים *խավէռ - խավէռիմ* «ընկերներ»:
2.3.2. Ածականները հոգնակիում կրում են նույն հնչյունափոխությունը, ինչ և իգական սեռ կազմելիս՝ גָּדוֹל - (גְּדוֹלָה) - גְּדוֹלִים *գադօլ - (գդօլա) - գդօլիմ* «մեծ(եր)», - (לְבָנָה) - לָבָן *լավան - (լէվանա) - լէվանիմ* «սպիտակ(ներ)», טָעִים - (טְעִימָה) - טְעִים *տաիմ - (տէիմա) - տէիմիմ* «համեղ(ներ)»:

Իգական սեռի գոյականներ ու ածականներ

2.4. Իգական սեռի գոյականներն ու ածականները հոգնակի թվում փոխարինում են ָה- վերջավորությունը וֹת- *-օթ* վերջածանցով՝ מוֹרָה - מוֹרוֹת *մօռա - մօռօթ* «ուսուցչուհիներ», תַּלְמִידָה - תַּלְמִידוֹת *տալմիդա - տալմիդօթ* «աշակերտուհիներ», דִּירָה - דִּירוֹת *դիռա - դիռօթ* «բնակարաններ», בֻּבָּה - בֻּבּוֹת *բուբա - բուբօթ* «տիկնիկներ», לְבָנָה - לְבָנוֹת *լէվանա - լէվանօթ* «սպիտակ(ներ)», חֲדָשָׁה - חֲדָשׁוֹת *խադաշա-*

խաղաշօթ «նոր(եր)», יָפָה - יָפוֹת *յաֆա - յաֆօթ* «գեղեցիկ(ներ)», טוֹבָה - טוֹבוֹת *տօվա - տօվօթ* «լավ(եր)»:

2.5. Այսպիսով՝ ածականները կարող են ունենալ չորս ձև՝ երկու եզակի (արական ու իգական) և երկու հոգնակի (արական ու իգական)՝ טוֹב - טוֹבָה - טוֹבִים - טוֹבוֹת *տօվ - տօվա - տօվիմ - տօվօթ,* יָפֶה - יָפָה - יָפִים - יָפוֹת *յաֆէ - յաֆա -յաֆիմ - յաֆօթ,* גָּדוֹל - גְּדוֹלָה - גְּדוֹלִים - גְּדוֹלוֹת *գադօլ - գդօլա - գդօլիմ - գդօլօթ:*

2.6. Ածականը թվով և սեռով համաձայնեցվում է նախորդող գոյականի հետ՝ טוֹבִים תַּלְמִידִים *տալմիդիմ տօվիմ* «լավ աշակերտներ», טוֹבוֹת תַּלְמִידוֹת *տալմիդօթ տօվօթ* «լավ աշակերտուհիներ», חֲדָשִׁים סְפָרִים *սֆառիմ խադաշիմ* «նոր գրքեր»:

ՀՈԳՆԱԿԻ ԹՎԻ ՀԱՏՈՒԿ ԶԵՎԵՐ

2.7. -ִית *-իթ* վերջավորությամբ գոյականները հոգնակիում ստանում են -ִיּוֹת *-իյօթ* վերջավորությունը՝ סְטוּדֶנְטִית - סְטוּדֶנְטִיּוֹת *ստուդէնտիթ - ստուդէնտիյօթ* «ուսանողուհիներ»:

2.8. Իգական սեռի ת վերջավորությունը հոգնակիում փոխարինվում է -וֹת *-օթ* վերջածանցով և, որպես կանոն, տեղի է ունենում ներքին հնչյունափոխություն՝ מַחְבֶּרֶת - מַחְבָּרוֹת *մախբէռէթ - մախբառօթ* «տետրեր»:

2.9. Արական սեռի բազմաթիվ, հիմնականում՝ *-օն* և *-ան* վերջավորությամբ գոյականների հոգնակին կազմվում է իգական սեռի -וֹת *-օթ* վերջածանցով՝ שַׁלְחָן - שֻׁלְחָנוֹת *շուլխան - շուլխանօթ* «սեղաններ», אָרוֹן - אֲרוֹנוֹת *առօն - առօնօթ* «պահարաններ», שֵׁם - שֵׁמוֹת *շէմ - շէմօթ* «անուններ»:

2.10. Նմանապես, իգական սեռի բազմաթիվ գոյականների հոգնակին կազմվում է արական սեռի -ִים վերջածանցով՝ מִלָּה - מִלִּים *միլա - միլիմ* «բառեր»:

2.11. Համաձայնեցվելով «հակառակ» սեռի հոգնակի ունեցող գոյականի հետ՝ ածականը պահպանում է սեռի «ճիշտ» վերջավորությունը՝ גְּדוֹלִים שֻׁלְחָנוֹת *շուլխանօթ գդօլիմ* «մեծ սեղաններ», יָפִים שֵׁמוֹת *շէմօթ յաֆիմ* «գեղեցիկ անուններ», לְבָנִים אֲרוֹנוֹת *առօնօթ լէվանիմ* «սպիտակ պահարաններ», חֲדָשִׁים מִלִּים *միլիմ խադաշօթ* «նոր բառեր»:

Հոգնակիի վերածե՛ք հետևյալ կապակցությունները՝ טָעִים דָּג *դագ տաիմ* «համեղ ձուկ», חֲדָשִׁים תַּלְמִידִים *տալմիդ խադաշ* «նոր աշակերտ», גְּדוֹלָה מַחְבֶּרֶת *մախբէռէթ գդօլա* «մեծ տետր», חָבֵר טוֹב *խավէռ տօվ* «լավ ընկեր», חֲבֵרָה טוֹבָה *խավէռա տօվա* «լավ ընկերուհի», בַּבָּה גְּדוֹלָה *բաբա գդօլա* «մեծ տիկնիկ», שֻׁלְחָן לָבָן *շուլխան լավան* «սպիտակ սեղան», שָׁקֶר אֵשֶׁת *շիռտ կաշէ* «դժվար դաս», שָׁקֶר מִלָּה *միլա կաշա* «դժվար բառ»:

Թարգմանե՛ք երրայերեն, ապա հոգնակիի վերածե՛ք հետևյալ կապակցությունները՝ մեծ գրիչ, գեղեցիկ գիրք, սպիտակ տետր, նոր ընկեր, դժվար բառ, համեղ թխվածք, սպիտակ գիրք, նոր դաս, մեծ բնակարան, նոր սեղան, լավ բառ:

Ինքնուրույն կազմե՛ք մի քանի նման կապակցություններ:

2.12. ՀՈԳՆԱԿԻ ԹՎԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ

	արական	*իգական*	
I	אָנוּ *կամ* נַחְנוּ *ա՛նու*	אֲנַחְנוּ *անա՛խնու*	«մենք»
II	אַתֶּם *աթէմ*	אַתֶּן *աթէն*	«դուք»
III	הֵם *հէմ*	הֵן *հէն*	«նրանք»

אָנוּ ձևը ավելի բնորոշ է խոսակցական լեզվին:

Եբրայերենում ընդունված չէ մեկ անձին դիմել «Դուք» դերանունով. հետևաբար բոլոր դեպքերում օգտագործվում են אַתָּה և אַתְּ եզակի թվի դերանունները:

2.12.1. Իգական սեռի անձնական դերանունները նշում են բացառապես կանանցից բաղկացած խմբեր՝ אַתֶּן סְטוּדֶנְטִיּוֹת טוֹבוֹת *աթէն ստուդէնտիյօթ տօվօթ* «դուք լավ ուսանողուհիներ եք»: Եթե ուսանողուհիների խմբին միանա մեկ ուսանող, նախադասությունը կվերածվի արական սեռի՝ אַתֶּם סְטוּדֶנְטִים טוֹבִים *աթէմ ստուդէնտիմ տօվիմ* «դուք լավ ուսանողներ եք»:

ՀՈԳՆԱԿԻ ԹՎԻ ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ

2.13. זֶה և זֹאת (זוֹ) ցուցական դերանունները հոգնակի թվում ունեն երկու սեռերի համար ընդհանուր אֵלֶּה *է՛լէ* «սրանք» ձևը՝ אֵלֶּה סְטוּדֶנְטִים חֲדָשִׁים *է՛լէ ստուդէնտիմ խադաշիմ* «սրանք նոր ուսանողներ են», אֵלֶּה סְטוּדֶנְטִיּוֹת חֲדָשׁוֹת *է՛լէ ստուդէնտիյօթ խադաշօթ* «սրանք նոր ուսանողուհիներ են», אֵלֶּה מִלִּים חֲדָשׁוֹת *է՛լէ միլիմ խադաշօթ* «սրանք նոր բառեր են», אֵלֶּה שֻׂלְחָנוֹת חֲדָשִׁים *է՛լէ շուլխանօթ խադաշիմ* «սրանք նոր սեղաններ են»:

Հոգնակիի վերածե՛ք հետևյալ կապակցությունները՝ יָפָה תַּלְמִידָה אֲנִי *անի տալմիդա յաֆա* «ես գեղեցիկ աշակերտուհի եմ», טוֹב סְטוּדֶנְט אֲנִי *անի ստուդէնտ տօվ* «ես լավ ուսանող եմ», לֹא מוֹרָה אַתָּה *աթա լօ մօռէ խադաշ* «դու նոր ուսուցիչ չես», חֲדָשָׁה מוֹרָה אַתְּ *աթ մօռա խադաշա* «դու նոր ուսուցչուհի ես», טוֹב חָבֵר הוּא *հու խավէռ տօվ* «նա լավ ընկեր է», טוֹבָה חֲבֵרָה הִיא *հի խավէռա տօվա* «նա լավ ընկերուհի է», סֵפֶר לָבָן זֶה *զէ սէ՛ֆէռ լավան* «սա սպիտակ գիրք է», מְחֻבֶּרֶת לְבָנָה זֹאת *զօթ մախբէ՛ռէթ լէվանա* «սա սպիտակ տետր է», עֲגָה טְעִימָה מְאוֹד זֹאת *զօթ ուգա տէիմա մէօդ* «սա շատ համեղ թխվածք է», מְלָה חֲדָשָׁה זֹאת *զօթ միլա խադաշա* «սա նոր բառ է», שֻׁלְחָן גָּדוֹל מְאוֹד זֶה *զէ շուլխան գադօլ մէօդ* «սա շատ մեծ սեղան է»:

Թարգմանե՛ք եբրայերեն, ապա հոգնակիի վերածե՛ք հետևյալ նախադասությունները՝

Ես նոր ուսուցիչ եմ: Դու նոր ուսուցչուհի չես: Սա շատ լավ աշակերտուհի է: Սա շատ մեծ գրիչ է: Սա նոր տետր է: Նա շատ գեղեցիկ ուսանողուհի է: Նա շատ լավ ուսուցիչ է: Սա շատ դժվար բառ է: Սա նոր և դժվար դաս է:

ԴԵՐԱՆՎԱՆԱԿԱՆ ՎԵՐՋԱԾԱՆՑՆԵՐ

2.14. Պատկանելությունը եբրայերենում արտահայտվում է հատուկ վերջածանցներով, որոնք կոչվում են «դերանվանական վերջածանցներ»: Ստորև տրված են եզակի թվի դերանվանական վերջածանցները.

	արական	*իգական*	
I	*-ի* ִי֫-		«իմ»
II	ךָ֫ *-խա*	ךְ֫ *-էխ*	«քո»
III	וֹ- *-օ*	הָ֫ *-ահ*	«նրա»
I	*շուխանի* שֻׁלְחָנִי		«սեղանս»
II	שֻׁלְחָנְךָ *շուխանխա*	שֻׁלְחָנֵךְ *շուխանէխ*	«սեղանդ»
III	שֻׁלְחָנוֹ *շուխանօ*	שֻׁלְחָנָהּ *շուխանահ*	«նրա սեղանը»

בְּ-ի-שֻׁלְחָן բառի օրինակով կցե՛ք դերանվանական վերջածանցներ נתן *շիռտ «դաս», טַלְמִיד տալմիդ «աշակերտ» և גַּג դագ «ծուկ» բառին: Ուշադրություն դարձրե՛ք* תַּלְמִידָהּ *տալմիդահ «նրա (իգ.) աշակերտը» և* תַּלְמִידָה *տալմիդա «աշակերտուհի» բառերի տարբերության վրա:*

2.15. Շեշտի տեղափոխումը դերանվանական վերջածանցի վրա կարող է առաջացնել բառի հնչյունափոխություն, ինչպես օրինակ שֵׁם *շէմ* «անուն» և סֵפֶר *սէֆէր* «գիրք» բառերում, կամ արտասանության վրա չազդող ձայնանիշափոխություն.

	արական	*իգական*	
I	*շմի*	שְׁמִי	«անունս»
II	שִׁמְךָ *շիմխա*	שְׁמֵךְ *շմէխ*	«անունդ»
III	שְׁמוֹ *շմո*	שְׁמָהּ *շմահ*	«նրա անունը»
I	*սիֆռի*	סִפְרִי	«գիրքս»
II	סִפְרְךָ *սիֆռէխա*	סִפְרֵךְ *սիֆռէխ*	«գիրքդ»
III	סִפְרוֹ *սիֆռո*	סִפְרָהּ *սիֆռահ*	«նրա գիրքը»

✍ ***Կցե՛ք դերանվանական վերջածանցներ*** מוֹשָׁב *շալօմ* «առողջություն» *(հնչյունափոխված հիմքը՝* -מוֹשַׁב *շլօմ-) և* חֲבֵר *խավէռ* «ընկեր» *(ծայնանիշերի փոփոխությունը՝* -חֲבֵר *խավէռ-) բառերին: Ուշադրություն դարձրե՛ք* חֲבֵרָהּ *խավէռահ* «նրա (իգ.) ընկերը» *և* חֲבֵרָה *խավէռա* «ընկերուհի» *բառերի տարբերության վրա:*

ו ԿՑԱԿԱՆ ՇԱՂԿԱՊԻ ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.16. ו *վէ* կցական շաղկապը ստանում է וּ *ու* ձևը,

ա) երբ բառի առաջին ծայնանիշը շվա է՝ מַחְבָּרוֹת וּסְפָרִים *մախբառոթ ուսֆառիմ* «տետրեր ու գրքեր»: Բառասկզբի ծայնեղ շվան այդ դեպքում կարող է վերածվել համրի կամ մնալ ծայնեղ, նայած խոսքի արագությանը՝ וּלְבָנָה *ու(լ)վանա* «ու սպիտակ»: Եթե բառի առաջին տառն ունի թեթև դագեշ, այն ընկնում է՝ וּגְדוֹלָה *ուգդօլա* «ու մեծ»:

բ) երբ բառը սկսվում է מ ב פ տառերով, ընդ որում ב և פ տառերից թեթև դագեշն ընկնում է (ինչպես նաև դագեշ ունեցող այլ տառերից)՝ וּמַחְבֶּרֶת סֵפֶר *սէֆէր ումախբէռէթ* «գիրք ու տետր», וּבֵבָה פֶּרַח *պէռախ ուվուբա* «ծաղիկ ու տիկնիկ», וּפֶרַח בֵּבָה *բուբա ուֆէռախ* «տիկնիկ ու ծաղիկ»:

2.17. Եթե բառի առաջին ծայնանիշը խատեֆային է (ֱ ֲ ֳ), ապա շաղկապը ստանում է խատեֆային ծայնանիշի հիմնական (ոչ շվա) ծայնանիշը (וֱ וֲ וֳ)՝ וַאֲנִי אַתָּה *աթա վաանի* «դու և ես», וַאֲנַחְנוּ אַתֶּם *աթէմ վաանախնու* «դուք և մենք», וְחֲבֵרִים חֲבֵרוֹת *խավէռիմ վախավէռոթ* «ընկերներ ու ընկերուհիներ»:

2.17.1. Խոսակցական լեզվում այս հնչյունափոխությունները սովորաբար չեն պահպանվում, և շաղկապը, բացի մի քանի քարացած արտահայտություններից, գրեթե միշտ հնչում է *վէ:*

בְּ ԿՑԱԿԱՆ ՆԱԽԴԻՐԸ

2.18. בְּ *բէ* կցական նախդիրը կցվում է հաջորդող բառին և համապատասխանում է հայերենի ներգոյական հոլովին կամ «մեջ» նախդիրին՝ בְּסֵפֶר *բէսէֆէր* «գրքում, գրքի մեջ», בְּאוּנִיבֶרְסִיטָה *բէունիվէռսիտա* «համալսարանում», בְּיִשְׂרָאֵל *բէյիսռաէլ* «Իսրայելում», կամ (2.18.1.) գործիական հոլովին՝ בְּעֵט *բէէտ* «գրիչով»:

2.19. Ինչպես և ի շաղկապի դեպքում, ב նախդիրի շվայի ազդեցությամբ հաջորդ տառի թեթև դագեշն ընկնում է՝ בְּדִירָה - *դիռա* - *բէդիռա* «բնակարանում»: כ פ ב տառերի դեպքում տեղի է ունենում համապատասխան հնչյունափոխություն՝ בֶּבֶה - *բուբա* - *բէվուբա* «տիկնիկով», כְּסֵא - *քիսէ* - *բէխիսէ* «աթոռի մեջ», פְּרָח - *պէռախ* - *բէֆէռախ* «ծաղիկի մեջ»:

Կարդացե՛ք, թարգմանե՛ք և արտագրե՛ք հետևյալ տեքստը.

מִי זֶה? זֶה אַבְרָהָם. וּמִי[1] זֶה? זֶה דָּוִד. זֶה אַבְרָהָם וְזֶה דָּוִד. אֵלֶּה אַבְרָהָם וְדָוִד[2].
מִי זאת? זאת שָׂרָה. וּמִי זאת? זאת שׁוֹשַׁנָּה. זאת שָׂרָה וְזאת שׁוֹשַׁנָּה. אֵלֶּה שָׂרָה וְשׁוֹשַׁנָּה.
אַבְרָהָם סְטוּדֶנְט? כֵּן, אַבְרָהָם סְטוּדֶנְט. אַבְרָהָם סְטוּדֶנְט טוֹב? כֵּן, הוּא סְטוּדֶנְט טוֹב מְאֹד.
דָּוִד תַּלְמִיד? לֹא, הוּא לֹא תַּלְמִיד, הוּא סְטוּדֶנְט. אַבְרָהָם וְדָוִד[2] לֹא תַּלְמִידִים וְלֹא מוֹרִים, הֵם סְטוּדֶנְטִים. הֵם סְטוּדֶנְטִים טוֹבִים מְאֹד.
שָׂרָה סְטוּדֶנְטִית? לֹא, הִיא לֹא סְטוּדֶנְטִית, הִיא תַּלְמִידָה. הִיא תַּלְמִידָה טוֹבָה מְאֹד.
גַּם שׁוֹשַׁנָּה[3] תַּלְמִידָה טוֹבָה מְאֹד. שָׂרָה וְשׁוֹשַׁנָּה לֹא מוֹרוֹת, הֵן תַּלְמִידוֹת. הֵן תַּלְמִידוֹת טוֹבוֹת.

זֶה פֶּרַח יָפֶה - אֵלֶּה פְּרָחִים[4] יָפִים.
זֶה מוֹרֶה חָדָשׁ - אֵלֶּה מוֹרִים חֲדָשִׁים.
זֶה דָּג גָּדוֹל - אֵלֶּה דָּגִים גְּדוֹלִים.
זאת תַּלְמִידָה טוֹבָה - אֵלֶּה תַּלְמִידוֹת טוֹבוֹת.
זאת מוֹרָה חֲדָשָׁה - אֵלֶּה מוֹרוֹת חֲדָשׁוֹת.
זאת עֲגָה טְעִימָה - אֵלֶּה עֻגוֹת טְעִימוֹת.
זֶה שֻׁלְחָן לָבָן - אֵלֶּה שֻׁלְחָנוֹת לְבָנִים[5].
זֶה אָרוֹן יָפֶה - אֵלֶּה אֲרוֹנוֹת יָפִים[5].
זאת מִלָּה קָשָׁה - אֵלֶּה מִלִּים קָשׁוֹת[5].

זֶה אַבְרָהָם, זֶה חֲבֵרוֹ[6] דָּוִד.
אֲנִי מוֹרֶה, זֶה תַּלְמִידִי[7], שְׁמוֹ[6] יִצְחָק.
אַתָּה מוֹרֶה, זֶה תַּלְמִידְךָ[7], וּשְׁמוֹ[6,8] יַעֲקֹב.
אַתְּ מוֹרָה, זֶה תַּלְמִידֵךְ[7], וּשְׁמוֹ אַבְרָהָם.
זֶה סִפְרְךָ[9]? - לֹא, זֶה לֹא סִפְרִי[9]. - וְאֵיפֹה סִפְרְךָ[9]? - סִפְרִי[9] בְּשֻׁלְחָנִי[7,9].
זֶה סִפְרֵךְ[9], שָׂרָה? - כֵּן, זֶה סִפְרִי[9].
שִׁמְךָ[9] שָׂרָה? - לֹא, שְׁמִי[9] לֹא שָׂרָה, שְׁמִי שׁוֹשַׁנָּה, וְשִׁמְךָ[9]? - שְׁמִי דָּוִד.
זאת שׁוֹשַׁנָּה, זֶה חֲבֵרָהּ[6], שְׁמוֹ יַעֲקֹב.

- שָׁלוֹם! מַה שִּׁמְךָ[9]?
- שָׁלוֹם! שְׁמִי אַבְרָהָם. וּמַה[1] שִּׁמֵךְ?
- שְׁמִי שָׂרָה.
- נָעִים מְאֹד. אַתְּ סְטוּדֶנְטִית?
- לֹא, אֲנִי לֹא סְטוּדֶנְטִית, אֲנִי תַּלְמִידָה, וְאַתָּה?
- אֲנִי סְטוּדֶנְט.
- מִי זֶה?
- זֶה חֲבֵרִי[9], שְׁמוֹ[6] יַעֲקֹב. גַּם הוּא[3] סְטוּדֶנְט.

- אַתֶּם סְטוּדֶנְטִים בְּאוּנִיבֶרְסִיטָה[9]?
- כֵּן, אֲנַחְנוּ סְטוּדֶנְטִים בְּאוּנִיבֶרְסִיטָה, בְּתֵל־אָבִיב[9].
- וְאֵת שׁוֹשָׁנָה, גַּם הִיא[3] תַּלְמִידָה.
- נָעִים מְאֹד. אַתֶּן חֲבֵרוֹת?[10]
- כֵּן, אָנוּ חֲבֵרוֹת טוֹבוֹת.
- גַּם אֲנַחְנוּ[3] - יַעֲקֹב וַאֲנִי[11] - חֲבֵרִים טוֹבִים.

[1] 2.16.բ. [2] 1.12.1. [3] 1.14. [4] 2.3. [5] 2.11. [6] 2.15. [7] 2.14. [8] 2.16.ա. [9] 2.18. [10] 2.12.1 . [11] 2.17.

Թարգմանե՛ք երբայերեն.

1. Ո՞վ է սա: Սա նոր ուսանող է: 2. Սրանք նոր ուսանողնե՞ր են: Այո, սրանք նոր ուսանողներ են: 3. Սառան և Շուշան նաև լավ ընկերուհիներ են, Դավիթն ու Աբրահամն էլ են լավ ընկերներ: 4. Դու ուսանողուհի ես համալսարանո՞ւմ: Ոչ, ես ուսանողուհի չեմ, ես աշակերտուհի եմ: 5. Իմ անունը Դավիթ է, ես ուսանող եմ Թել-Ավիվում, իսկ սա Աբրահամն է, նա էլ է ուսանող: 6. Մենք աշակերտներ ենք, իսկ դուք՝ ուսուցչուհիներ: 7. Նրանք շատ լավ ուսանողներ են, մենք էլ ենք լավ ուսանողներ: 8. Սրանք նոր բնակարաններ են, նրանք շատ լավն են: 9. Որտե՞ղ են նրանք: Նրանք համալսարանում են: 10. Որտե՞ղ ենք մենք: Մենք Թել-Ավիվում ենք: 11. Թել-Ավիվը գեղեցիկ է և մեծ (1.3.): 12. Սա իմ աշակերտն է, իսկ սա քո աշակերտն է: 13. Սա քո՞ գիրքն է, Սառա: Ոչ, սա իմ գիրքը չէ, սա քո գիրքն է: 14. Անունդ Աբրահա՞մ է: Ոչ, անունս Հակոբ է: 15. Նրա ընկերը լավ ուսանող է: 16. Որտե՞ղ է գիրքդ: Գիրքս նրա սեղանի մեջ է: 17. Որտե՞ղ է սեղանդ: Սեղանս այնտեղ է: 18. Նրա առողջությունը շատ լավն է:

מִלִּים חֲדָשׁוֹת

Ավանդական անունները թարգմանվում են Աստվածաշնչի հայերեն թարգմանության ամրագրված ձևերով

אַבְרָהָם ז *Աբրահամ*
אוּנִיבֶרְסִיטָה נ *համալսարան*
אֵלֶּה מ״ג ר *սրանք, այս*
אֲנַחְנוּ, אָנוּ מ״ג ר *մենք*
אַתֶּם, אַתֶּן מ״ג ר/נ *դուք*
דָּוִד ז *Դավիթ*
הֵם, הֵן מ״ג ר/נ *նրանք*
יַעֲקֹב ז *Հակոբ*
תֵּל־אָבִיב נ *Թել-Ավիվ*
יִצְחָק ז *Իսահակ*
נָעִים ת (נ נְעִימָה) ת הה״פ *հաճելի*
סְטוּדֶנְט ז *ուսանող*
סְטוּדֶנְטִית נ *ուսանողուհի*
שׁוֹשָׁנָה נ *Շուշանն*
שָׁלוֹם ז *խաղաղություն, առողջություն, ողջույն, ցտեսություն*
שָׂרָה נ *Սառա*
שְׁתַּיִם ש״מ נ *երկու*

3 שָׁלוֹשׁ

ՈՐՈՇՅԱԼ ԱՌՈՒՄ ԵՎ ՈՐՈՇԻՉ ՀՈԴ

3.1. Որոշյալ առումը բնորոշ է գոյականներին և նրանց հետ համաձայնեցվող ածականներին ու ցուցական դերանուններին: Քառը որոշյալ առման մեջ է, երբ նրան կըցված են.
ա) դերանվանական վերջածանցներ՝ סִפְרִי *sifri* «գիրքս», תַּלְמִידֵךְ *talmidekh* «աշակերտդ», שְׁמוֹ *shmo* «նրա անունը», עִטָּהּ *itah* «նրա գրիչը»;
բ) -ה *ha* որոշիչ հոդը, որը կցվում է բառին որպես նախածանց և արտասանվում նրա հետ միասին: Հին եբրայերենում հոդի կցումն առաջացնում էր բառի առաջին բաղաձայնի (եթե այն կոկորդային կամ ר չէր) կրկնությունը, որը նշվում էր ուժեղ դագեշով: Արդի եբրայերենում բաղաձայնի կրկնություն տեղի չի ունենում, սակայն դասական ձայնավորման մեջ ուժեղ դագեշը նշվում է: Օրինակ՝ הַשֻּׁלְחָן *hashulkhan* «սեղանը» (հին եբրայերենում՝ *hashshulkhan*), הַסֵּפֶר *hasefer* «գիրքը», הַמִּלָּה *hamila* «բառը», הַגָּדוֹל *hagadol* «մեծը»: Դերանվանական վերջածանցով բառերը հոդ չեն ստանում, քանի որ նրանց որոշելիությունն արտահայտված է դերանվանական վերջածանցով:

3.2. א ע ר տառերից առաջ հոդը ձայնավորվում է կամացով՝ הַעֵט *haet* «գրիչը», הָאִישׁ *haish* «մարդը», הָאָרוֹן *haaron* «պահարանը», הָרוֹפֵא *harofe* «բժիշկը»:

3.3. Եթե բառը սկսվում է הָ կամ אָ չշեշտվող և חָ (շեշտով և առանց շեշտի) կապակցություններով, հոդը ձայնավորվում է սեգոլով՝ הֶחָבֵר *hekhaver* «ընկերը» (բայց՝ הַחֲבֵרִים *hakhaverim*), הֶחָדָשׁ *hekhadash* «նորը», (բայց՝ הַחֲדָשָׁה *hakhadasha*), הֶאָרִים *hearim* «քաղաքները» (բայց՝ הָעִיר *hair*):
3.3.1. Խոսակցական լեզվում հոդն ունի միայն *ha-* ձևը:

3.4. Հատուկ անունների մեծ մասը հոդ չի ստանում, սակայն մի շարք տեղանուններ օգտագործվում են հոդավորված՝ הַגָּלִיל *hagalil* «Գալիլեա» (Իսրայելի հյուսիսային շրջանը), הַנֶּגֶב *hanegev* «Նեգև» (անապատ Իսրայելի հարավում), הַיַּרְדֵּן *hayarden* «Հորդանան (գետը)», הַכַּרְמֶל *hakarmel* «Քարմել» (սար Իսրայելում):

3.5. Որոշիչ հոդի գործածությունը եբրայերենում հիմնականում համընկնում է հայերենի -ը (-ն) որոշիչ հոդի գործածության հետ:

3.6. Որոշիչն ու որոշյալը համաձայնեցվում են միմյանց հետ առումով՝ חֵדֶר קָטָן *խէդէռ կատան* «փոքր սենյակ» - הַחֵדֶר הַקָּטָן *հախէդէռ հակատան* «փոքր սենյակը», אִשָּׁה יָפָה *իշա յափա* «գեղեցիկ կին» - הָאִשָּׁה הַיָּפָה *հաիշա հայափա* «գեղեցիկ կինը», עִיר גְּדוֹלָה *իռ գդօղա* «մեծ քաղաք» - הָעִיר הַגְּדוֹלָה *հաիռ հագդօղա* «մեծ քաղաքը», עִיר יָפָה וּגְדוֹלָה *իռ յափա ուգդօղա* «գեղեցիկ ու մեծ քաղաք» - הָעִיר הַגְּדוֹלָה וְהַיָּפָה *հաիռ հագդօղա վէհայափա* «գեղեցիկ և մեծ քաղաքը»:

3.7. Դերանվանական վերջածանցով գոյականի որոշիչը ստանում է հոդ՝ שֻׂלְחָנִי הַגָּדוֹל *շուլխանի հագադօղ* «մեծ սեղանս», סִפְרְךָ הֶחָדָשׁ *սիֆռէխա հէխադաշ* «նոր գիրքդ», שְׁמֵךְ הַיָּפֶה *շմէխ հայափէ* «գեղեցիկ անունդ», דְּגוֹ הַטָּעִים *դագօ հատափիմ* «նրա համեղ ձուկը»:

Թարգմանե՛ք երբայերեն. մեծ սեղանը, փոքր երեխան, վատ բժիշկը, մեծ քաղաքները, գեղեցիկ կինը, նոր քարտուղարուհին, դժվար բառերը, սպիտակ տետրը, փոքր աթոռը, վատ մարդը, նոր քաղաքները, մեծ տետրերը, նոր ու ժամանակակից բնակարանը, սպիտակ ու համեղ հացը, լավ ու գեղեցիկ հեռախոսը:

3.8. Ածականով կամ գոյականով արտահայտված անվանական ստորոգյալը, ի տարբերություն ենթակայի, հոդ չի ստանում, սակայն համաձայնեցվում է ենթակայի հետ թվով ու սեռով՝ הַחֵדֶר קָטָן *հախէդէռ կատան* «սենյակը փոքր է», הַבַּיִת יָפָה *հաբայթ ռա* «տունը վատն է», הַתַּלְמִידִים טוֹבִים *հատալմիդիմ տօվիմ* «աշակերտները լավն են», הָעִיר יָפָה וּגְדוֹלָה *հաիռ յափա ուգդօղա* «քաղաքը գեղեցիկ է ու մեծ»: 3.8.1. Անվանական ստորոգյալը կա-րող է արտահայտված լինել որոշիչ-որոշյալով՝ הַיֶּלֶד תַּלְמִיד רַע *հայէլէդ տալմիդ ռա* «երե-խան վատ աշակերտ է», אֲנוּ מְזַכִּירוֹת חֲדָשׁוֹת *ա՛նու մազկիռօթ խադաշօթ* «մենք նոր քար-տուղարուհիներ ենք»:

3.9. Այսպիսով՝ հնարավոր է գոյականի ու ածականի կապակցության երեք ձև.
שֻׂלְחָן גָּדוֹל «մեծ սեղան» (որոշիչ-որոշյալ, անորոշ առում)
הַשֻּׁלְחָן הַגָּדוֹל «մեծ սեղանը» (որոշիչ-որոշյալ, որոշյալ առում)
הַשֻּׁלְחָן גָּדוֹל «սեղանը մեծ է» (ենթակա-անվանական ստորոգյալ)

Թարգմանե՛ք երբայերեն. տունը փոքր է, կինը գեղեցիկ է, բառերը դժվար են, նոր բառերը դժվար են, սեղանները սպիտակ են, դասը դժվար է, թխվածքը համեղ է, քաղաքը շատ գեղեցիկ է, պահարանը նոր է ու մեծ, բնակարանը մեծ ու ժամանակակից է:

ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

3.10. זֶה, זֹאת (זוֹ), אֵלֶּה ցուցական դերանունները, ինչպես նշվել է, դրվելով գոյականից և նրա լրացումներից առաջ, համապատասխանում են հայերենի «սա, սրանք» դերանուններին՝ זֶה יֶלֶד *զէ յէլէդ* «սա երեխա է», זֹאת מְזַכִּירָה חֲדָשָׁה *զօթ մազկիռա խադաշա* «սա նոր քարտուղարուհի է», אֵלֶּה רוֹפְאִים טוֹבִים *էլէ ռոֆ'իմ տօվիմ* «սրանք լավ բժիշկներ են»:

3.11. Նույն դերանունները, դրվելով գոյականից և նրա լրացումներից հետո, համապատասխանում են հայերենի «այս» ցուցական դերանունին՝ יֶלֶד זֶה *յէլէդ զէ* «այս տղան», מְזַכִּירָה חֲדָשָׁה זֹאת *մազկիռա խադաշա զօթ* «այս նոր քարտուղարուհին», רוֹפְאִים טוֹבִים אֵלֶּה *ռոֆ'իմ տօվիմ էլէ* «այս լավ բժիշկները»:

3.12. Քանի որ «այս» դերանունը կոնկրետացնում է գոյականը և տալիս նրան որոշյալ

առում (ինչպես և հայերենում՝ «այս գիրքը»), ապա նա և գոյականը հաճախ հանդես են գալիս որոշիչ հոդով՝ הַיֶּלֶד הַזֶּה *hayʧ'ɛɫɛդ hazɛ,* הַמַּזְכִּירָה הַחֲדָשָׁה הַזֹּאת *hamazkʲirɑ hakhɑdɑʃɑ hazoթ,* הָרוֹפְאִים הַטּוֹבִים הָאֵלֶּה *hառoֆ'im hատovʲim hաէ'lɛ:* Ինչպես պարզորոշ երևում է, նախադասության անդամների կարգն այս կապակցություններում ամբողջությամբ հակառակ է հայերենի կարգին. եբրայերենում՝ գոյական(ներ), ածական(ներ), ցուցական դերանուն, հայերենում՝ ցուցական դերանուն, ածական(ներ), գոյական(ներ): Այս հանգամանքը պետք է նկատի ունենալ թարգմանություններ կատարելիս:

3.13. Այսպիսով, הַבַּיִת הַיָּפֶה וְהַמּוֹדֶרְנִי הַזֶּה קָטָן *hաբայթ հայֆէ վէհամօդէ'ռնի հazէ կատան* նախադասությունը պետք է վերլուծել հետևյալ կերպ. הַיָּפֶה ու הַמּוֹדֶרְנִי ածականները առումով համաձայնեցված են הַבַּיִת ենթակայի հետ, ուստի հանդիսանում են նրա որոշիչները («գեղեցիկ և ժամանակակից տունը»): קָטָן ածականը հոդ չունի, ուրեմն այն անվանական ստորոգյալ է («փոքր է»): Ուստի՝ «այս գեղեցիկ և ժամանակակից տունը փոքր է»:

✍ ***Թարգմանե՛ք եբրայերեն.*** այս աշակերտը, այս աշակերտները, այս ուսանողուհիները, այս փոքր սենյակը, այս սպիտակ տունը, այս նոր բժիշկները, այս լավ քարտուղարուհիները, այս դժվար բառերը, այս նոր դասերը, այս համեղ ծկները, այս վատ գրիչները, այս լավ աշակերտները, այս մեծ և գեղեցիկ պահարանը, այս լավ և գեղեցիկ ուսանողները:

ԱՅԼ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.14. אִישׁ *իʃ* «(տղա)մարդ» և אִשָּׁה *իʃɑ* «կին» բառերն ունեն հոգնակիի անկանոն ձևեր, համապատասխանաբար՝ אֲנָשִׁים *ɑնɑʃʲim* և נָשִׁים *նɑʃʲim:* אֲנָשִׁים բառը ունի «մարդիկ» իմաստը՝ առանց սեռային տարբերակման:

3.15. כָּל *քol* բառն ունի իմաստային հետևյալ երանգավորումները.

ա) եթե հաջորդ բառը չունի հոդ, כָּל բառը թարգմանվում է «ամեն (մի), յուրաքանչյուր»՝ כָּל סֵפֶר *քol sէֆէr* «յուրաքանչյուր, ամեն մի գիրք», כָּל תַּלְמִיד *քol tալmʲid* «ամեն մի աշակերտ», כָּל לַיְלָה *քol lա'յlɑ* «ամեն գիշեր», כָּל אִשָּׁה *քol իʃɑ* «յուրաքանչյուր կին»:

բ) եթե հաջորդ բառն ունի հոդ և եզակի թվում է, ապա כָּל բառը թարգմանվում է «ամբողջ»՝ כָּל הַסֵּפֶר *քol hասէֆէr* «ամբողջ գիրքը», כָּל הַלַּיְלָה *քol hալա'յlɑ* «ամբողջ գիշերը», כָּל הָעִיר *քol hաիr* «ամբողջ քաղաքը»:

գ) եթե հաջորդ բառը հոդակիր է և հոգնակի թվում է, ապա כָּל բառը թարգմանվում է «բոլոր»՝ כָּל הַסְּפָרִים *քol hասֆառʲim* «բոլոր գրքերը», כָּל הַתַּלְמִידִים הָאֵלֶּה *քol hատալմʲիդʲim hաէ'lɛ* «այս բոլոր աշակերտները», כָּל הָאֲנָשִׁים הַטּוֹבִים *քol hաանɑշʲim hատովʲim* «բոլոր լավ մարդիկ», כָּל הַמִּלִּים הַחֲדָשׁוֹת הָאֵלֶּה *քol hամիլʲim hախադաշօթ hաէ'lɛ* «այս բոլոր նոր բառերը»:

✍ ***Թարգմանե՛ք եբրայերեն.*** այս բոլոր ուսուցիչները, ամեն մի ուսուցիչ, բոլոր լավ բժիշկները, բոլոր դժվար բառերը, ամբողջ քաղաքը, բոլոր մեծ քաղաքները, յուրաքանչյուր մարդ, յուրաքանչյուր. լավ մարդ, բոլոր սպիտակ ծաղիկները, ամեն մի նոր ուսանող, յուրաքանչյուր գեղեցիկ կին, բոլոր գեղեցիկ կանայք, ամբողջ համալսարանը, բոլոր փոքր երեխաները:

3.16. עַל *al* նախդիրն ունի երկու հիմնական իմաստ՝ «վրա» և «մասին»՝ הַמַּחְבֶּרֶת עַל הַסֵּפֶר *hամախբէռէթ al hասէֆէռ* «տետրը գրքի վրա է», הַסֵּפֶר הַזֶּה עַל יִשְׂרָאֵל *hասէֆէռ hազէ al յիսռաէլ* «այս գիրքն Իսրայելի մասին է»:

3.17. III դեմքի անձնական դերանունները երբեմն հանդես են գալիս որպես կապ ենթակայի և անվանական ստորոգյալի միջև, սեռով և թվով համաձայնեցվելով ենթակայի հետ՝ שָׂרָה הִיא סְטוּדֶנְטִית *դավիդ հու տալմիդ* «Դավիթը (նա) աշակերտ է», דָּוִד הוּא תַּלְמִיד *սառա հի ստուդէնտիհ* «Սառան (նա) ուսանողուհի է»:

✍ *Կարդացե՛ք, թարգմանե՛ք և արտագրե՛ք հետևյալ տեքստը.*

זֶה חֶדֶר[1]. הַחֶדֶר גָּדוֹל[2]. הַחֶדֶר הַזֶּה[3] גָּדוֹל.
זֶה שֻׁלְחָן[1]. הַשֻּׁלְחָן קָטָן[2]. הַשֻּׁלְחָן הַזֶּה[3] קָטָן.
אֵיפֹה הַחֶדֶר הַגָּדוֹל[4]? הַחֶדֶר הַגָּדוֹל פֹּה, הַחֶדֶר הַקָּטָן[4] שָׁם.
זֶה סֵפֶר[1]. הַסֵּפֶר חָדָשׁ[2]. הַסֵּפֶר הַזֶּה[3] חָדָשׁ.
אֵיפֹה הַסֵּפֶר הֶחָדָשׁ[5]? הַסֵּפֶר הֶחָדָשׁ עַל הַשֻּׁלְחָן.
זֶה יֶלֶד. הַיֶּלֶד הַזֶּה תַּלְמִיד טוֹב[6].
זֶה מוֹרֶה. הַמּוֹרֶה הַזֶּה רַע. אֵיפֹה הַמּוֹרֶה הָרַע? הַמּוֹרֶה הָרַע שָׁם, בְּחֶדֶר.
זֶה בַּיִת. הַבַּיִת הַזֶּה יָפֶה. הַבַּיִת הַיָּפֶה הַזֶּה קָטָן[7]. הַבַּיִת הַקָּטָן הַיָּפֶה הַזֶּה בְּתֵל־אָבִיב. אֵיפֹה תֵּל־אָבִיב?
תֵּל־אָבִיב עִיר יָפָה וּגְדוֹלָה בְּיִשְׂרָאֵל.

זאת דִּירָה. הַדִּירָה הַזֹּאת גְּדוֹלָה. זאת מַחְבֶּרֶת. הַמַּחְבֶּרֶת הַזֹּאת עַל הַסֵּפֶר.
זאת תַּלְמִידָה. הַתַּלְמִידָה הַזֹּאת יָפָה. זאת מוֹרָה. הַמּוֹרָה הַזֹּאת רָעָה.
זאת עִיר. הָעִיר הַזֹּאת קְטַנָּה. הָעִיר הַקְּטַנָּה הַזֹּאת יָפָה. הָעִיר הַקְּטַנָּה הַיָּפָה הַזֹּאת בְּיִשְׂרָאֵל.

אֵלֶּה תַּלְמִידִים וְתַלְמִידוֹת. הַתַּלְמִידִים הָאֵלֶּה וְהַתַּלְמִידוֹת הָאֵלֶּה פֹּה.
הַתַּלְמִידִים הָאֵלֶּה טוֹבִים, גַּם הַתַּלְמִידוֹת הָאֵלֶּה טוֹבוֹת. כָּל הַתַּלְמִידִים וְהַתַּלְמִידוֹת הָאֵלֶּה[8] טוֹבִים.
אֵלֶּה סְפָרִים. הַסְּפָרִים הָאֵלֶּה חֲדָשִׁים. הַסְּפָרִים הַחֲדָשִׁים הָאֵלֶּה עַל יִשְׂרָאֵל.
אֵלֶּה מוֹרִים. הַמּוֹרִים הָאֵלֶּה רָעִים. אֵלֶּה מוֹרוֹת. הַמּוֹרוֹת הָאֵלֶּה רָעוֹת.
כָּל הַמּוֹרִים הָאֵלֶּה[8] עֲכְשָׁיו[9] בְּחֶדֶר.

מִי הָאִישׁ הַזֶּה? הָאִישׁ הַזֶּה רוֹפֵא. וּמַה[10] שְּׁמוֹ[11]? שְׁמוֹ דָּנִיאֵל שָׁרוֹן.
מִי הָאִשָּׁה הַזֹּאת? הָאִשָּׁה הַזֹּאת מַזְכִּירָה, וּשְׁמָהּ[11,12] שָׂרָה גִּידוֹר.
הָאֲנָשִׁים הָאֵלֶּה רוֹפְאִים, הַנָּשִׁים הָאֵלֶּה מַזְכִּירוֹת.
כָּל הָאֲנָשִׁים הָאֵלֶּה[8] יָפִים, גַּם כָּל הַנָּשִׁים הָאֵלֶּה[8] יָפוֹת.
אֵיפֹה עֲכְשָׁיו כָּל הַסְּטוּדֶנְטִים[8]? כָּל הַסְּטוּדֶנְטִים עֲכְשָׁיו בְּאוּנִיבֶרְסִיטָה.
כָּל הַמִּלִּים הַחֲדָשׁוֹת הָאֵלֶּה קָשׁוֹת מְאֹד.
כָּל הַסְּפָרִים וְהַמַּחְבָּרוֹת הָאֵלֶּה עַל הַשֻּׁלְחָן הַגָּדוֹל הַזֶּה.
כָּל פֶּרַח[13] פֹּה לָבָן. כָּל הַפְּרָחִים הַלְּבָנִים הָאֵלֶּה[8] גְּדוֹלִים וְיָפִים.
הֶעָרִים[5] הַגְּדוֹלוֹת[14] בְּיִשְׂרָאֵל הֵן[15] יְרוּשָׁלַיִם, תֵּל־אָבִיב וְחֵיפָה[16].

[1] 3.10. [2] 3.8. [3] 3.12. [4] 3.6. [5] 3.3. [6] 3.8.1. [7] 3.13. [8] 3.15.գ. [9] Դ-3.1. [10] 2.16.բ. [11] 2.15. [12] 2.16.ա.
[13] 3.15.ա. [14] 2.11. [15] 3.17. [16] 1.3.

Թարգմանե՛ք երբայերեն.

1. Բոլոր նոր գրքերը սպիտակ սեղանի վրա են: 2. Այս տղամարդը լավ ուսուցիչ է, այս կինն էլ է լավ ուսուցչուհի: 3. Այս փոքր տները շատ գեղեցիկ են: 4. Սա շատ փոքր քաղաք է: 5. Բոլոր նոր ուսանողները հիմա այստեղ են: 6. Որտե՞ղ են հիմա բոլոր մարդիկ: 7. Սա նոր ուսուցիչ է, նրա անունն Աբրահամ է, իսկ սա նոր ուսուցչուհի է, նրա անունը Սառա է: 8. Այս բոլոր ծկները շատ համեղ են: 9. Այս նոր բնակարանները շատ մեծ և գեղեցիկ են: 10. Այս սպիտակ հեռախոսը ժամանակակից չէ: 11. Երուսաղեմը մեծ և գեղեցիկ քաղաք է: 12. Քո նոր աշակերտը շատ լավն է: 13. Իմ նոր սեղանը վատն է, նրա սպիտակ սեղանը ժամանակակից է: 14. Այս փոքր գիրքը Գալիլեայի և Նեգևի մասին է: 15. Իմ լավ ընկերն այժմ Խայֆայում է, նա Թել-Ավիվում չէ: 16. Բոլոր փոքր երեխաները գեղեցիկ են: 17. Այս մեծ ծաղիկը գեղեցիկ է: 18. Այս բոլոր ծաղիկները շատ գեղեցիկ են: 19. Թել-Ավիվը մեծ և գեղեցիկ քաղաք է Իսրայելում: 20. Փոքր քաղաքներն Իսրայելում շատ գեղեցիկ են:

מִלִּים חֲדָשׁוֹת

אִישׁ ז (ר׳ אֲנָשִׁים) *իշ (անաշիմ)* (տղա)մարդ
אִשָּׁה נ (ר׳ נָשִׁים) *իշա (նաշիմ)* կին
בַּיִת ז (ר׳ בָּתִּים) *բայթ (բաթիմ)* տուն
חֶדֶר ז (ר׳ חֲדָרִים) *խէ՛դէր (խադաթիմ)* սենյակ
חֵיפָה נ *խէյֆա* (քաղաք Իսրայելի հյուսիսում) Խայֆա
יֶלֶד ז (ר׳ יְלָדִים) *յէ՛լէդ (յէլադիմ)* երեխա, տղա
יָפֶה ת תה״פ *յաֆէ* գեղեցիկ, լավ
יְרוּשָׁלַיִם נ *յէռուշալա՛յիմ* Երուսաղեմ
יִשְׂרָאֵל ז *յիսռաէ՛լ* Իսրայել
כָּל *քոլ* բոլոր, ամեն մի, յուրաքանչյուր
מַזְכִּירָה נ *մազկիռա* քարտուղարուհի
עִיר נ (ר׳ עָרִים) *իռ (առիմ)* քաղաք
עַכְשָׁיו תה״פ *ախշա՛վ* այժմ, հիմա
עַל מ״י *ալ* վրա, մասին
קָטָן ת *կատա՛ն* փոքր
רוֹפֵא ז (ר׳ רוֹפְאִים) *ռոֆէ՛ (ռոֆէ՛իմ)* բժիշկ
שָׁלוֹשׁ ש״מ נ *շալո՛շ* երեք

4 אַרְבַּע

4.1. ԴԵՐԱՆՎԱՆԱԿԱՆ ՎԵՐՋԱԾԱՆՑՆԵՐ
(հոգնակի թիվ)

	արական	*իգական*	
I	*-էնու*	־֫נוּ	«մեր»
II	־֫כֶם *-խեմ*	־֫כֶן *-խեն*	«ձեր»
III	־֫ם *-ամ*	־֫ן *-ան*	«նրանց»
I	*հուխանէնու*	שֶׁלְּחָנֵנוּ	«մեր սեղանը»
II	שֶׁלְּחָנְכֶם *հուխանխեմ*	שֶׁלְּחָנְכֶן *հուխանխեն*	«ձեր սեղանը»
III	שֶׁלְּחָנָם *հուխանամ*	שֶׁלְּחָנָן *հուխանան*	«նրանց սեղանը»
I	*շմէնու*	שְׁמֵנוּ	«մեր անունը»
II	שִׁמְכֶם *շիմխեմ*	שִׁמְכֶן *շիմխեն*	«ձեր անունը»
III	שָׁמָם *շմամ*	שָׁמָן *շման*	«նրանց անունը»
I	*սիֆռէնու*	סִפְרֵנוּ	«մեր գիրքը»
II	סִפְרְכֶם *սիֆռէխեմ*	סִפְרְכֶן *սիֆռէխեն*	«ձեր գիրքը»
III	סִפְרָם *սիֆռամ*	סִפְרָן *սիֆռան*	«նրանց գիրքը»

Վերը բերված օրինակների նմանությամբ, եզակի և հոգնակի թվի դերանվանական վերջածանցներ կցե՛ք հետևյալ բառերին՝ שִׁיר *շիռ «դաս», גַּג *գագ «ծուկ», בִּנְיָן *բինյան «շենք, կառույց», טֶלֶפוֹן *տելէֆօն «հեռախոս», תַּלְמִיד *տալմիդ «աշակերտ», שָׁלוֹם *շալօմ «առողջություն», חָבֵר *խավէռ «ընկեր» (հնչյունափոխված հիմքը՝* חֲבַר- *խավէռ-), אָרוֹן *առոն «պահարան» (հնչյունափոխված հիմքը՝* אֲרוֹנ- *առօն), טַע *էտ «գրիչ» (հնչյունափոխված հիմքը* טְע- *իտ-), בַּיִת *բայթ «տուն» (հնչյունափոխված հիմքը* בֵּית- *բէյթ):*

לְ- USԱՑԱԿԱՆ ՆԱԽԴԻՐԸ

4.2. Պատկանելությունը եբրայերենում դերանվանական վերջածանցներից բացի արտահայտվում է לְ- *լէ* ստացական նախդիրի միջոցով՝ אִשָּׁה לְ יַעֲקֹב *իշա լէ յաակով* «Հակոբի կինը», סֵפֶר לְ תַּלְמִיד *սէֆէռ լէ տալմիդ* «աշակերտի գիրք», חֲדָרִים לְ מָלוֹן *խադառիմ լէ մալօն* «հյուրանոցի սենյակներ»:

4.2.1. Որոշելիության աստիճանի համեմատ, կապակցության անդամները կարող են ստանալ հոդ՝ הַ(סֵפֶר) לְ (הַ)תַּלְמִיד *(հա)սէֆէռ լէ (հա)տալմիդ* «աշակերտի գիրք(ը)», הַ(מְכוֹנִית) לְ (הָ)רוֹפֵא *(հա)մէխօնիտ լէ (հա)ոօֆէ* «բժիշկի ավտոմեքենա(ն)»:

4.3. Կապակցության առաջին բառի որոշյալ առումը, բացի որոշիչ հոդից, կարող է արտահայտվել III դեմքի դերանվանական վերջածանցով, որը թվով և սեռով համաձայնեցվում է կապակցության երկրորդ բառի հետ՝ סִפְרוֹ שֶׁל דָּוִד *սիֆռօ շէլ դավիթ* «(նրա՝) Դավիթի գիրքը», סִפְרָהּ שֶׁל שָׂרָה *սիֆռահ շէլ սա՛ռա* «(նրա՝) Սա-ռայի գիրքը», חֲדָרָם שֶׁל הַתַּלְמִידִים *խադռամ շէլ հատտալմիդիմ* «(նրանց՝) աշակերտների սենյակը», חֲדָרָן שֶׁל הַתַּלְמִידוֹת *խադռան շէլ հատտալմիդօթ* «(նրանց՝) աշակերտուհիների սենյակը»: Այս ձևը հատկապես բնորոշ է մամուլի լեզվին:

בְּ- ՆԱԽԴԻՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇԻՉ ՀՈԴԻ ՀԵՏ

4.4. Կցվելով որոշիչ հոդ ունեցող բառին՝ בְּ- նախդիրը դուրս է մղում հոդի ה տառը և կլանում նրա ձայնանիշը.

בְּ + הַ--- = בַּ---
בְּ + הָ--- = בָּ---
בְּ + הֶ--- = בֶּ---

Օրինակ՝ בְּבַיִת *բաբայթ* «տանը» (בְּ + הַבַּיִת), בְּאוּנִיבֶרְסִיטָה *բաունիվէռսիտա* «համալսարանում» (בְּ + הָאוּנִיבֶרְסִיטָה), בְּעָרִים *բէառիմ* «քաղաքներում» (בְּ + הֶעָרִים): Այսպիսով, בַּ בָּ בְּ ձևերը միևնույն ժամանակ թե՛ նախդիր են, թե՛ որոշիչ հոդ:

4.4.1. Հոդի սղման դեպքում, բառի առաջին տառի ուժեղ դագեշը պահպանվում է՝ בְּסֵפֶר *բասէֆէռ* «գրքում»:

מַה יֵּשׁ עַל שֻׁלְחָנְכֶם[1] ? עַל שֻׁלְחָנֵנוּ[1] יֵשׁ סֵפֶר וּמַחְבֶּרֶת[2].
יֵשׁ לֶחֶם עַל שֻׁלְחָנָם[1] ? לֹא, עַל שֻׁלְחָנָם אֵין לֶחֶם, יֵשׁ רַק חֶמְאָה וּגְבִינָה[3].
אֵיפֹה הָעֵט[4] וְהָעִפָּרוֹן[4] ? הָעֵט וְהָעִפָּרוֹן עַל הַשֻּׁלְחָן הַזֶּה. כָּל הָעֻפְרוֹנוֹת[4] וְהָעֵטִים[5] עַל הַשֻּׁלְחָן הַזֶּה.
וְאֵיפֹה הַסֵּפֶר וְהַמַּחְבֶּרֶת ? גַּם הַסֵּפֶר וְהַמַּחְבֶּרֶת עַל הַשֻּׁלְחָן הַלָּבָן הַזֶּה.
שֶׁל מִי הַבַּיִת הַזֶּה ? הַבַּיִת הַזֶּה שֶׁל יוֹסֵף.
שֶׁל מִי הַמְּכוֹנִית הַזֹּאת ? הַמְּכוֹנִית הזֹאת שֶׁל הַמּוֹרֶה[6] הֶחָדָשׁ[7] הַזֶּה.
אֵיפֹה הַבַּיִת שֶׁל יִצְחָק ? הַבַּיִת שֶׁל יִצְחָק[8] בְּחֵיפָה. בֵּיתוֹ שֶׁל יִצְחָק[8] גָּדוֹל וְיָפֶה מְאֹד. גַּם בֵּיתָם[1] שֶׁל יוֹסֵף וַחֲנָה[9] יָפֶה, אֲבָל הוּא לֹא גָּדוֹל, בֵּיתָם[1] קָטָן מְאֹד.
אֵיפֹה הַתַּלְמִיד וְהַמּוֹרֶה ? הַתַּלְמִיד וְהַמּוֹרֶה בְּחֶדֶר, הֵם לֹא פֹּה.
אֵיפֹה עַכְשָׁיו אַבְרָהָם וְדִינָה ? אַבְרָהָם וְדִינָה עַכְשָׁיו בְּחַדְרָם[1]. חַדְרָם שֶׁל אַבְרָהָם וְדִינָה[8] קָטָן, אֲבָל יָפֶה מְאֹד.
זֶה אָרוֹנְךָ ? לֹא, זֶה לֹא אָרוֹנִי, זֶה אָרוֹנוֹ[8] שֶׁל אַבְרָהָם, וְזֶה אָרוֹנָהּ[8] שֶׁל דִּינָה.
אֵיפֹה חַדְרָן[1] שֶׁל דִּינָה וְשָׂרָה[8] ? שָׁם, אֲבָל עַכְשָׁיו הֵן לֹא בְּחַדְרָן.
הָעִיר הַזֹּאת יָפָה ? כֵּן, הָעִיר הַזֹּאת יָפָה מְאֹד. הָעִיר הַיָּפָה הַזֹּאת גְּדוֹלָה ? הִיא לֹא גְּדוֹלָה וְלֹא קְטַנָּה.

הַחֶדֶר שֶׁל אַבְרָהָם גָּדוֹל. מַה יֵּשׁ בַּחֶדֶר (בְּ + הַחֶדֶר)[9] שֶׁל אַבְרָהָם ? בַּחֶדֶר שֶׁל אַבְרָהָם יֵשׁ שֻׁלְחָן, כִּסֵּא, אָרוֹן גָּדוֹל וּמִטָּה[2].
מַה יֵּשׁ בַּשֻּׁלְחָן (בְּ + הַשֻּׁלְחָן)[9] שֶׁל אַבְרָהָם ? בַּשֻּׁלְחָן שֶׁל אַבְרָהָם יֵשׁ הַרְבֵּה מַחְבָּרוֹת.
מַה יֵּשׁ בָּאָרוֹן[9] (בְּ + הָאָרוֹן)[9] שֶׁל אַבְרָהָם ? בָּאָרוֹן שֶׁל אַבְרָהָם יֵשׁ הַרְבֵּה סְפָרִים.
יֵשׁ סַפָּה בַּחֶדֶר (בְּ + הַחֶדֶר)[9] שֶׁל אַבְרָהָם ? לֹא, בַּחֶדֶר שֶׁל אַבְרָהָם אֵין סַפָּה, אֲבָל יֵשׁ מִטָּה גְּדוֹלָה.
אֵיפֹה עַכְשָׁיו כָּל הַסְּטוּדֶנְטִים[5] ? כָּל הַסְּטוּדֶנְטִים עַכְשָׁיו בָּאוּנִיבֶרְסִיטָה (בְּ + הָאוּנִיבֶרְסִיטָה)[9].
גַּם דָּוִד בָּאוּנִיבֶרְסִיטָה ? לֹא, דָּוִד עַכְשָׁיו בַּבַּיִת (בְּ + הַבַּיִת)[9].
הָעִיר[4] הַזֹּאת יָפָה. מַה יֵּשׁ בָּעִיר הַיָּפָה הַזֹּאת (בְּ + הָעִיר הַיָּפָה הַזֹּאת)[9] ? בָּעִיר הַיָּפָה הַזֹּאת יֵשׁ הַרְבֵּה בְּנָיְנִים יָפִים.
כָּל הַבְּנָיְנִים[5] בָּעִיר[4] הַזֹּאת לְבָנִים.
הַבִּנְיָן הַגָּדוֹל הַזֶּה מָלוֹן. בַּמָּלוֹן הַגָּדוֹל הַזֶּה (בְּ + הַמָּלוֹן הַגָּדוֹל הַזֶּה)[9] יֵשׁ הַרְבֵּה חֲדָרִים טוֹבִים.

[1] 4.1. [2] 2.16.բ. [3] 2.16.ա. [4] 3.2. [5] 3.15.գ. [6] 4.2. [7] 3.3. [8] 4.3. [9] 4.4.

Թարգմանե՛ք եբրայերենի.
1. Աբրահամի բնակարանը մեծ է և գեղեցիկ: 2. Դավիթի ավտոմեքենան սպիտակ է: 3. Սառայի մահճակալի վրա կան շատ տետրեր և գրքեր: 4. Համալսարանում հիմա ուսանողներ չկան: 5. Աբրահամի տանը հիմա շատ մարդիկ կան: 6. Այս սեղանի վրա կա հաց, պանիր և կարագ: 7. Մատիտն այս գրքի մեջ է, իսկ գիրքը՝ այս տետրի վրա: 8. Շուշանյայի սենյակում կա բազմոց և փոքր պահարան: 9. Այս գեղեցիկ շենքը նոր հյուրանոց է: 10. Այս քաղաքում կան բազմաթիվ գեղեցիկ և ժամանակակից հյուրանոցներ:

מִלִּים חֲדָשׁוֹת

אֲבָל մ״ח *ավել* բայց, սակայն
אֵין תה״פ *չկա* չկա
אַרְבָּע ש״מ נ *առջև* ոտք
בֵּטוּי ז *բիտույ* արտահայտություն

בִּנְיָן ז *gnjaŋ* շենք, կառույց
גִּבְיָנָה נ *gavhna* պանիր
הַרְבֵּה תה״פ *harbe* շատ, բազմաթիվ
חֲמָאָה נ *xema'a* կարագ
חַנָּה נ *hanna* Խաննա
יוֹסֵף ז *josef* Հովսեփ
יֵשׁ תה״פ *ješ* կա
מִטָּה נ *mita* մահճակալ
מְכוֹנִית נ (ר מְכוֹנִיּוֹת) *mexonit (mexoniyot)* ավտոմեքենա
מָלוֹן ז (ר מְלוֹנוֹת) *malon (melonot)* հյուրանոց
סַפָּה נ *safa* բազմոց
עִפָּרוֹן ז (ר עֲפָרוֹנוֹת) *iparon (apharonot)* մատիտ
רַק תה״פ *rak* միայն

בְּטוּיִים

שֶׁל מִי? *šel mi?* ո՞ւմ

5 חָמֵשׁ

לְ ՆԱԽԴԻՐԸ

5.1. לְ կցական նախդիրը, իմաստային իր հարուստ երանգավորումների շնորհիվ, մեծ գործածություն ունի արդի եբրայերենում: Այն, մասնավորապես, արտահայտում է «տրական» հոլովի իմաստ՝ לְיִצְחָק *լէյիցխակ* «Իսահակին», לְאַבָּא *լէսա՛բա* «պապիկին», לְרוֹפְאִים *լէռոֆ՛իմ* «բժիշկներին»:

5.2. «Տրական» հոլովի ձևերը, օգտագործվելով יֵשׁ «կա» և אֵין «չկա» մակբայների հետ, փոխարինում են եբրայերենում բացակայող «ունենալ/չունենալ» բայը՝ לְאַבְרָהָם יֵשׁ אִשָּׁה *լէավռահամ յէշ իշա* «Աբրահամն ունի կին» (բառացիորեն՝ «Աբրահամին կա կին»), אֵין לְעֵבֶר בַּיִת *էյն լէռի՛վկա բա՛յս* «Ռեբեկան չունի ամուսին» (բառացիորեն՝ «չկա Ռեբեկային ամուսին»):

5.3. Իր հնչյունային և հնչյունափոխական առանձնահատկություններով לְ նախդիրը համընկնում է בְּ նախդիրի հետ (2.19, 4.4.)՝ לְפֶרַח - בְּפֶרַח *պէ՛ռախ - լէֆէ՛ռախ,* לְבִנְיָן - בְּבִנְיָן *բինյա՛ն - լէվինյա՛ն,* לְכִסֵּא - בְּכִסֵּא *քիսէ՛ - լէխիսէ՛,* יֵשׁ לַמּוֹרֶה (לְ+הַ) הַזֶּה *յէշ լամո՛ռէ հազէ՛* «այս ուսուցիչն ունի...», אֵין אֵת הַיַּלְדָּה הַזֹּאת (לְ+הַ) לַיַּלְדָּה *լայալդա՛ հազո՛թ էյն* «այս աղջիկը չունի...»:

Թարգմանե՛ք եբրայերեն. Շուշաննան ունի տիկնիկ: Սառան չունի ամուսին: Այս ուսուցիչն ունի շատ աշակերտներ: Հովսեփն ունի մեծ ընտանիք: Հովսեփն ունի մեծ տուն: Խաննան ունի փոքր աղջիկ: Դանիելն ունի նոր բազմոց: Իսահակը չունի քարտուղարուհի: Իսահակը չունի մեքենա: Հակոբը չունի հեռախոս: Այս մարդիկ ունեն լավ բնակարաններ: Դավիթը չունի մեծ սենյակ: Այս ուսանողները չունեն նոր գրքեր: Դինան ունի պապիկ և տատիկ Խայֆայում: Այս ճարտարագետն ունի փոքր բնակարան:

«ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎԻ» ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

5.4. לְ նախդիրը դերանվանական վերջածանցների հետ կազմում է «տրական» հոլովի անձնական դերանուններ (որոշ հնչյունափոխություններով).

	եզակի թիվ		*հոգնակի թիվ*	
	իգական	*արական*	*իգական*	*արական*
I	לִי *li* «ինձ»		לָנוּ *lanu* «մեզ»	
II	לָךְ *lax* «քեզ»	לָךְ *lexa* «քեզ»	לָכֶן *lakhén* «ձեզ»	לָכֶם *lakhém* «ձեզ»
III	לָהּ *lah* «նրան»	לוֹ *lo* «նրան»	לָהֶן *lahén* «նրանց»	לָהֶם *lahém* «նրանց»

Ուշադրություն դարձրեք, որ III դեմքի հոգնակիի ձևերում (לָהֶם, לָהֶן) դերանվանական վերջածանցները փոխարինված են անձնական դերանուններով:

5.5. «Տրական» հոլովի դերանունները יֵשׁ և אֵין մակբայների հետ կազմում են «ես (չ)ունեմ» տիպի կապակցությունները՝ יֵשׁ לִי *yéš li* «ես ունեմ», אֵין לִי *éyn li* «ես չունեմ» ... יֵשׁ לָהֶם *yéš lahém* «նրանք ունեն», אֵין לָהֶם *éyn lahém* «նրանք չունեն», יֵשׁ לוֹ בַּיִת בְּתֵל־אָבִיב *yéš lo báyt bətel-avív* «նա ունի տուն Թել-Ավիվում», ?יֵשׁ לָכֶם מְכוֹנִית *yéš lakhém məxonít* «դուք ունե՞ք մեքենա»:

5.6. «Տրական» հոլովի դերանունը դրվում է יֵשׁ և אֵין մակբայներից առաջ, եթե նրա վրա է ընկնում տրամաբանական շեշտը՝ (אֵין) יֵשׁ לִי גַּם *gam li yéš (éyn)* «ե՛ս էլ ունեմ (չունեմ)»:

✍ *Թարգմանե՛ք երբայերեն.* Աբրահամն ունի մեծ սենյակ, ե՛ս էլ ունեմ մեծ սենյակ: Դու ունե՞ս ծնողներ: Մենք չունենք մեծ պահարան: Նրանք չունեն հեռախոս, մե՛նք էլ չունենք հեռախոս: Ես ունեմ լավ ընկերներ: Միայն ես չունեմ գիրք: Ես չունեմ ընկերներ Իսրայելում: Նրանք հիմա չունեն դասեր: Մենք ունենք փոքր հյուրանոց Խայֆայում: Դուք ունե՞ք բնակարան այս նոր շենքում: Ես ունեմ սենյակ, նա՛ էլ ունի սենյակ:

ՍՏԱՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

5.7. Ստացական («սեռական» հոլովի) դերանունները կազմվում են שֶׁל ստացական նախդիրին համապատասխան դերանվանական վերջածանցների կցումով.

.

	եզակի թիվ		*հոգնակի թիվ*	
	իգական	*արական*	*իգական*	*արական*
I	שֶׁלִּי *šelí* «իմ»		שֶׁלָּנוּ *šelánu* «մեր»	
II	שֶׁלָּךְ *šelax* «քո»	שֶׁלְּךָ *šelxa* «քո»	שֶׁלָּכֶן *šelakhén* «ձեր»	שֶׁלָּכֶם *šelakhém* «ձեր»
III	שֶׁלָּהּ *šelah* «նրա»	שֶׁלּוֹ *šelo* «նրա»	שֶׁלָּהֶן *šelahén* «նրանց»	שֶׁלָּהֶם *šelahém* «նրանց»

5.8. Ստացական դերանունը դրվում է գոյականից հետո, որը սովորաբար ստանում է ո-րոշիչ հոդ (ինչպես և հայերենում)՝ הַסֵּפֶר שֶׁלִּי *haséper šelí* «իմ գիրքը», הַהוֹרִים שֶׁלָּהֶם *hahorím šelahém* «նրանց ծնողները», הַמִּשְׁפָּחָה הַגְּדוֹלָה שֶׁלָּהּ *hamišpaxa hagdola šel-*

լահ «նրա մեծ ընտանիքը», שְׁלָּךְ הָאָח וְהָאָחוֹת *հասխ վէհասխօթ շէլխա* «քո եղբայրն ու քույրը», שְׁלָנוּ הַחֲדָשִׁים הַלְּבָבוֹת כָּל *քօլ հաէֆռօնօթ հախսադաշիմ շէլա՛նու* «մեր բոլոր նոր մատիտները»:

5.9. Այսպիսով՝ պատկանելությունը եբրայերենում կարող է արտահայտվել կամ դերանվանական վերջածանցով՝ סִפְרִי *սիֆռի* «գիրքս», կամ ստացական դերանունով՝ הַסֵּפֶר שֶׁלִּי *հասէֆէռ շէլի* «իմ գիրքը»: Արդի եբրայերենում, հատկապես՝ խոսակցական լեզվում, ավելի տարածված է պատկանելիության արտահայտումը ստացական դերանունների միջոցով:

Թարգմանություններ կատարելիս, դերանվանական վերջածանցները տեղին է օգտագործել, երբ հայտնի է, թե վերջածանցի կցումն ինչ հնչյունափոխություն կառաջացնի բառի հնչյունական կազմում: Այլապես նախընտրելի է օգտագործել համապատասխան ստացական դերանունները, որոնք չեն ազդում բառի հնչյունական կազմի վրա:

Թարգմանե՛ք՝ *օգտագործելով ստացական դերանուններ.* մեր ծնողները, իմ բոլոր ընկերները, քո նոր մեքենան, ձեր գեղեցիկ ծաղիկները, նրանց բոլոր աշակերտները, նրա ամուսինը, նրա կինը, քո հայրը և մայրը, իմ մեծ եղբայրները, մեր նոր հյուրանոցը, քո գեղեցիկ քարտուղարուհին, նրանց համեղ կարագը, ձեր նոր ճարտարագետները:

ՄԻ ՆԱԽԴԻՐԸ

5.10. מִן *մին* նախդիրը համապատասխանում է հայերենի բացառական հոլովին՝ מִן הַבַּיִת *մին հաբայթ* «տնից», מִן יִשְׂרָאֵל *մին յիսռաէլ* «Իսրայելից», מִן הַהוֹרִים שֶׁלִּי *մին հահոռիմ շէլի* «իմ ծնողներից»:

5.11. מִן նախդիրն ունի նաև կրճատ, կցական ձևեր՝ -מִ *մի* (դասական ուղղագրության մեջ հաջորդ տառը ստանում է ուժեղ դագեշ) և -מֵ *մէ* (կոկորդային տառերից և ר-ից առաջ)՝ מִיִּשְׂרָאֵל *միյիսռաէլ* «Իսրայելից», מִמִּשְׁפָּחָה *միմիշպախա* «ընտանիքից», բայց՝ מֵאַרְמֶנְיָה *մէառմէնյա* «Հայաստանից», מֵהַבַּיִת *մէհաբայթ* «տնից», מֵחֵיפָה *մէխէյֆա* «Խայֆայից», מֵעִרָאק *մէիռաք* «Իրաքից», מֵרוּמֶנְיָה *մեռումանյա* «Ռումինիայից»: Անջատ և կցական ձևերի միջև իմաստային տարբերություն չկա, և նրանք, բացի մի քանի քարացած կապակցություններից, կարող են փոխարինվել մեկը մյուսով:

ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ

5.12. Ածականների համեմատական աստիճանը կազմվում է יוֹתֵר *յոռթէռ* «ավելի» մակբայի միջոցով, որը դրվում է ածականից առաջ կամ, երբեմն, ածականից հետո՝ יוֹתֵר יָפָה *յոռթէռ յաֆէ* «ավելի գեղեցիկ», יוֹתֵר גְּדוֹלִים *գդոլիմ յոռթէռ* «ավելի մեծ»: Երկու երևույթների միջև համեմատության դեպքում օգտագործվում է יוֹתֵר ... מִן (-מִ, -מֵ) *յոռթէռ ... մին (մի, մէ)* «ավելի ... քան» կապակցությունը՝ הַמִּשְׁפָּחָה שֶׁלִּי יוֹתֵר גְּדוֹלָה מִן הַמִּשְׁפָּחָה שֶׁלָּךְ *համիշպախա շէլի յոռթէռ գդոլա մին համիշպախա շէլխա* «իմ ընտանիքն ավելի մեծ է, քան քո ընտանիքը», אַתְּ יוֹתֵר יָפָה מֵהָאָחוֹת שֶׁלָּךְ *աթ յոռթէռ յաֆա մէհաախօթ շէլախ* «դու ավելի գեղեցիկ ես, քան քո քույրը»:

Թարգմանե՛ք եբրայերեն. Քո մեքենան ավելի նոր է: Այս պանիրն ավելի համեղ է: Այս շենքերն ավելի մեծ են: Այս հեռախոսն ավելի ժամանակակից է: Քո կինն ավելի գեղեցիկ է, քան Դավիթի կինը:

Մեր սենյակն ավելի փոքր է, քան ձեր սենյակը: Այս դասն ավելի դժվար է: Սառայի տիկնիկն ավելի լավն է, քան Շուշաննայի տիկնիկը:

«ՄԵԿ» ԹՎԱԿԱՆԸ

5.13. «Մեկ» թվականը, ինչպես և մյուս թվականները, ունի երկու ձև. արական սեռի համար՝ אֶחָד *էխադ*, իգական սեռի՝ אַחַת *ախատ*: Այն դրվում է գոյականից ու նրա լրացումներից հետո և համաձայնեցվում նրա հետ սեռով՝ תַּלְמִיד אֶחָד - תַּלְמִידָה אַחַת *տալմիդ էխադ - տալմիդա ախատ* «մեկ աշակերտ - մեկ աշակերտուհի», אָח אֶחָד - אָחוֹת אַחַת *ախ էխադ - ախօտ ախատ* «մեկ եղբայր - մեկ քույր», סֵפֶר אַרְמֶנִי אֶחָד - מִלָּה אַרְמֶנִית אַחַת *սէֆէր առմէնի էխադ - միլա առմէնիտ ախատ* «մեկ հայկական գիրք - մեկ հայկական բառ»:

Թարգմանե՛ք երթայերեն. մեկ տիկնիկ, մեկ մատիտ, մեկ գիրք, մեկ բառ, մեկ դաս, մեկ ուսուցչուհի, մեկ բժիշկ, մեկ ճարտարագետ, մեկ քաղաք, մեկ տուն, մեկ հեռախոս, մեկ գիշեր, մեկ կին, մեկ հայկական աթոռ, մեկ հայկական համալսարան:

Կարդացե՛ք, թարգմանե՛ք և արտագրե՛ք հետևյալ տեքստը.

שְׁמִי דָּנִיאֵל. אֲנִי רוֹפֵא. אֲנִי מִתֵּל־אָבִיב[1]. אֲנִי רוֹפֵא בְּתֵל־אָבִיב. אֲנִי יְהוּדִי. יֵשׁ לִי[2] מִשְׁפָּחָה. הַמִּשְׁפָּחָה שֶׁלִּי[3] לֹא גְּדוֹלָה. יֵשׁ לִי[2] אַבָּא, אִמָּא וְאָח. אֵין לִי[2] אָחוֹת, יֵשׁ לִי[2] רַק אָח אֶחָד[4]. בְּתֵל־אָבִיב יֵשׁ לִי[2] גַּם הַרְבֵּה חֲבֵרִים.

זֶה הֶחָבֵר[5] שֶׁלִּי[3], מֹשֶׁה. גַּם הוּא מִתֵּל־אָבִיב[1]. מֹשֶׁה מְהַנְדֵּס. הוּא מְהַנְדֵּס טוֹב מְאֹד. לְמֹשֶׁה יֵשׁ[6] מִשְׁפָּחָה קְטַנָּה. יֵשׁ לוֹ[2] אִשָּׁה. הָאִשָּׁה שֶׁלּוֹ[3] יָפָה מְאֹד. יֵשׁ לוֹ[2] גַּם יֶלֶד אֶחָד[4] וְיַלְדָּה אַחַת[4]. הַיְלָדִים שֶׁלּוֹ[3] עוֹד קְטַנִּים.

זאת רִבְקָה. הִיא יְהוּדִיָּה. רִבְקָה לֹא מִתֵּל־אָבִיב, הִיא מֵחֵיפָה[1]. גַּם לְרִבְקָה אֵין[6] מִשְׁפָּחָה גְּדוֹלָה. הַמִּשְׁפָּחָה שֶׁלָּהּ[3] יוֹתֵר קְטַנָּה מִן הַמִּשְׁפָּחָה שֶׁל מֹשֶׁה[7]. יֵשׁ לָהּ[2] רַק בַּעַל. הַבַּעַל שֶׁלָּהּ[3] לֹא מֵחֵיפָה[1], הוּא מֵאֵילַת[1]. לַבַּעַל (לְ + הַבַּעַל)[8] שֶׁל רִבְקָה יֵשׁ הוֹרִים בְּאֵילַת. יֵשׁ לוֹ[2] גַּם סַבָּא וְסַבְתָּא בְּנָצְרַת. נָצְרַת וְאֵילַת הֵן[9] עָרִים גְּדוֹלוֹת בְּיִשְׂרָאֵל.

לַמִּשְׁפָּחָה (לְ + הַמִּשְׁפָּחָה)[8] שֶׁל הַמּוֹרֶה שֶׁלָּנוּ[3] יֵשׁ דִּירָה גְּדוֹלָה בְּתֵל־אָבִיב. לַמּוֹרֶה (לְ + הַמּוֹרֶה)[8] שֶׁלָּנוּ[3] יֵשׁ גַּם בַּיִת קָטָן עַל־יַד תֵּל־אָבִיב. לַמּוֹרֶה שֶׁלָּכֶם[3] יֵשׁ מְכוֹנִית חֲדָשָׁה. גַּם לָאִשָּׁה (לְ + הָאִשָּׁה)[8] שֶׁל הַמּוֹרֶה שֶׁלָּכֶם[3] יֵשׁ מְכוֹנִית קְטַנָּה. יֵשׁ לָהֶם מְכוֹנִיּוֹת[10] טוֹבוֹת.

- יֵשׁ לְךָ[2] אָחוֹת, דָּוִד?
- לֹא, אֵין לִי[2] אָחוֹת, יֵשׁ לִי רַק אָח אֶחָד[4].
- הֲאָח שֶׁלְּךָ[3] פֹּה, בְּתֵל־אָבִיב?
- לֹא, הוּא עֲכְשָׁיו לֹא בְּיִשְׂרָאֵל, הוּא בְּאַרְמֶנְיָה. אֲנוּ יְהוּדִים מֵאַרְמֶנְיָה. וְאַתְּ, חַנָּה, יֵשׁ לָךְ[2] אָחוֹת?
- כֵּן, יֵשׁ לִי אָחוֹת אַחַת[4]. הִיא סְטוּדֶנְטִית בָּאוּנִיבֶרְסִיטָה[11].
- הֲאָחוֹת שֶׁלָּךְ[3] יָפָה?
- כֵּן, הִיא יָפָה מְאֹד.
- גַּם אַתְּ יָפָה מְאֹד, חַנָּה!
- תּוֹדָה, דָּוִד, אֲבָל הָאָחוֹת שֶׁלִּי[3] יוֹתֵר יָפָה[7].
- לָאָחוֹת[8] שֶׁלְּךָ יֵשׁ[6] בַּעַל?

- עוֹד לֹא, אֲבָל יֵשׁ לָהּ חָבֵר טוֹב.
- גַּם לָךְ[12] יֵשׁ חָבֵר, חַוָּה?
- לֹא, אֵין לִי[2] חָבֵר.
- גַּם לִי אֵין[12] חֲבֵרָה...

[1] 5.11. [2] 5.5. [3] 5.8. [4] 5.13. [5] 3.3. [6] 5.2. [7] 5.12. [8] 5.3. [9] 3.17. [10] 2.7. [11] 4.4. [12] 5.6.

Թարգմանե՛ք եբրայերեն.

1. Ես ունեմ մեծ բնակարան Թել-Ավիվում, սակայն չունեմ մեքենա: 2. Իմ եղբայրն ունի շատ ընկերներ, նա ունի նաև գեղեցիկ ընկերուհի: 3. Այս ճարտարապետն ունի շատ գեղեցիկ կին և փոքր դուստր: 4. Ի՞նչ ունես այս պահարանում, Աբրահամ: 5. Մովսեսն ուսանող է, նրա սեղանի վրա շատ գրքեր կան: 6. Շոշանայի ծնողներն ունեն փոքր և գեղեցիկ տուն Նազարեթում: 7. Աբրահամի ընտանիքը մեծ է, սակայն Մովսեսի ընտանիքն ավելի մեծ է: 8. Այս բոլոր նոր ուսանողներն էյլաթից են: 9. Որտե՞ղ են հիմա քո բոլոր ընկերուհիները, Խաննա: 10. Ռեբեկայի ամուսինը չունի եղբայրներ, նա ունի միայն մեկ քույր: 11. Դավիթն ու Մովսեսը հրեաներ են Հայաստանից, իսկ Սառան և Դինան հրեուհիներ են Ռումինիայից: 12. Խայֆան Թել-Ավիվից փոքր է, սակայն նա ավելի մեծ է, քան Էյլաթը: 13. Ռեբեկան ունի մեկ պապիկ և մեկ տատիկ: Նրա պապիկը հրեա չէ, նա հայ է: 14. Այս բոլոր կանանց ամուսինները ճարտարապետներ են:

מִלִּים חֲדָשׁוֹת

אַבָּא ז *ա՛բա* հայրիկ
אָח ז *ախ* եղբայր
אֶחָד ש״מ ז *էխադ* մեկ
אָחוֹת נ (ר׳ אֲחָיוֹת) *ախօթ (ախայօթ)* քույր(քուժ)
אֵילַת נ *էյլատ* (քաղաք Իսրայելի հարավում) Էյլաթ
אִמָּא נ *ի՛մա* մայրիկ
אַרְמֶנְיָה נ *առմէ՛նյա* Հայաստան
בַּעַל ז *բա՛ալ* ամուսին, տեր
הוֹרֶה ז *հօռէ* ծնող
חָמֵשׁ ש״מ נ *խամէշ* հինգ
יְהוּדִי תו״י (ר׳ יְהוּדִים) *յէհուդի* հրեա, հրեական
יְהוּדִיָּה נ *յէհուդիյա* հրեուհի
יוֹתֵר תה״פ *յօռէր* ավելի
יַלְדָּה נ *յալդա* աղջիկ
מְהַנְדֵּס ז *մէհանդէս* ճարտարապետ
מֹשֶׁה ז *մօշէ* Մովսես
מִשְׁפָּחָה נ *միշպախա* ընտանիք
נָצְרַת נ *նացռաթ* (քաղաք Իսրայելի հյուսիսում) Նազարեթ
סַבָּא ז *սա՛բա* պապիկ
סַבְתָּא נ *սա՛վթա* տատիկ
עוֹד תה״פ *օդ* դեռ, էլի
עַל־יַד (עַל יָד) מ״י *ալ-յադ* կողքին
רִבְקָה נ *ռի՛վկա* Ռեբեկա
תּוֹדָה נ *տօդա* շնորհակալություն

6ա שָׁשׁ

ԵԲՐԱՅԵՐԵՆԻ ԲԱՅԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ
ԲԱՅԱԿԱՆ ԱՐՄԱՏՆԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ՏԵՍԱԿՆԵՐԸ

6.1. Եբրայերենի բայական համակարգի հիմքում ընկած է երեք, ավելի հազվադեպ՝ չորս բաղաձայններից բաղկացած արմատը: Քայարմատը լեզվում ինքնուրույն գոյություն չունի և հանդիսանում է այս կամ այն գործողության ընդհանուր իմաստն արտահայտող քերականական աբստրակցիա: Այսպես, כתב արմատն արտահայտում է գրելու ընդհանուր իմաստը, למד՝ սովորելու, אכל՝ ուտելու, עבד՝ աշխատելու, הלך՝ գնալու, חזר՝ վերադառնալու և այլն:

6.2. Դասական սեմագիտության և եբրայագիտության մեջ ընդունված է բայարմատի առաջին բաղաձայնը պայմանականորեն նշել פ, երկրորդը՝ ע, և երրորդը՝ ל տառով: Այս տառերով, որոնք վերցված են פעל արմատից, («անել, գործել») կազմվում են միանման քերականական ձևերն ընդհանրացնող և ներկայացնող հատուկ բանաձևեր, որոնք հեշտացնում են լեզվի ուսումնասիրությունը:

6.3. Ըստ բայարմատ կազմող բաղաձայնների որակի, արմատները բաժանվում են մի քանի խմբերի, որոնք կոչվում են גִּזְרָה *gizra* (հոգնակին՝ גִּזְרוֹת *gizrot*).

- «ամբողջական» (שְׁלֵמִים) արմատներ, որոնք չեն պարունակում կոկորդային կամ սղվող բաղաձայններ,
- արմատներ, որոնց I արմատականը կոկորդային բաղաձայն է (նշվում են פ״ג հապավումով, որում פ-ն I արմատականն է, իսկ ג-ն նշում է կոկորդային բաղաձայնը (גְּרוֹנִי *gronji* «կոկորդային» բառից),
- արմատներ, որոնց II արմատականը կոկորդային է (ע״ג),
- արմատներ, որոնց III արմատականը կոկորդային է (ג״ל),
- արմատներ, որոնց I արմատականը נ է (פ״נ),
- արմատներ, որոնց I արմատականը י է (פ״י),
- արմատներ, որոնց II արմատականը ו կամ י է (ע״ו, ע״י),
- արմատներ, որոնց III արմատականը ה է (ל״ה),
- արմատներ, որոնց II և III արմատականները նույնն են (ע״ע),
- քառատառ արմատներ:

Այս հիմնական խմբերն իրենց հերթին բաժանվում են մի քանի ենթախմբերի: Այսպես օրինակ I և III կոկորդային արմատականով բայերի խմբի մեջ առանձնանում են ալեֆով սկսվող և ավարտվող արմատները (פ״א ,ל״א), որոնք հաճախ դիտվում են որպես առանձին գիզռաներ:

ԲԱՅԱԿԱՆ «ԿԱՌՈՒՑՑՆԵՐ»

6.4. Միևնույն բայարմատը, ընդլայնվելով համապատասխան ածանցների միջոցով, կարող է դրսևորվել մի քանի տարբերակով, որոնցից յուրաքանչյուրն ունի իր ուրույն իմաստային երանգավորումը: Այդ տարբերակները, որոնք յոթն են, կոչվում են בִּנְיָנִים *բինյանիմ* «կառույցներ»: Բայարմատի դրսևորումը տարբեր կառույցների ձևով կարելի է համեմատել հայերենի բայի՝ ածանցների միջոցով փոփոխված իմաստային երանգավորումների շարքի հետ՝ կոտրել-կոտրվել-կոտրատել-կոտրատվել, ուտել-ուտվել-ուտեցվել և նմանապես:

Տեսականորեն ցանկացած բայարմատից կարելի է կազմել բոլոր յոթ կառույցները: Սակայն գործնականում բայարմատն արդի եբրայերենում հանդես է գալիս միջին հաշվով 3-4 կառույցներում:

6.5. Որպես տվյալ կառույցի «ներկայացուցիչ» հանդես է գալիս անցյալ ժամանակի III դեմքի եզակի արական ձևը, այսինքն՝ (Դավիթը) կարդաց, գրեց, կերավ, խփեց: Այս բայաձևը կոչվում է «ելման բայաձև», քանի որ բոլոր հնարավոր բայաձևերից ամենակարճն է, և նրանից են, փաստորեն, ածանցվում մյուսները: Այս առումով եբրայերենը տարբերվում է հնդեվրոպական լեզուներից, որոնցում որպես ելման բայաձև հանդես է գալիս անորոշ դերբայը (հայերենում՝ կարդալ, գրել, ուտել, խփել և այլն): Եբրայերենում անորոշ դերբայը ձևաբանական առումով ունի երկրորդական նշանակություն, քանի որ նրանից հնարավոր չէ ածանցել որևէ այլ ձև (անորոշ դերբայի մասին ավելի մանրամասն՝ ստորև): Այսպիսով՝ եբրայերենում ելման բայաձևն է հանդիսանում իրական անորոշ դերբայը և որպես այդպիսին նշվում բառարաններում:

לַעַ֫ף ԿԱՌՈՒՑԸ

6.6. Բայական յոթ կառույցներից առաջինը բաղկացած է երեք արմատականներից և երկու «ա» ձայնավորներից (առաջինը՝ կամաց, երկրորդը՝ պատախ)՝ לַעַ֫ף *պաալ* (սահմանափակ թվով բայեր ունեն לָעֵ֫ף *պաէլ* և לָעַ֫ף *պաօլ* կառուցվածքը): Ի տարբերություն մյուս վեց կառույցների, לַעַ֫ף կառույցն ընդլայնված չէ որևէ ածանցով և առանց ձայնանիշերի համընկնում է բայարմատի հետ: Այս պատճառով לַעַ֫ף կառույցը կոչվում է նաև לְקַ֫ל *կալ* «պարզ» և ելակետային է դիտվում մյուս կառույցների համար:

Այսպիսով՝ 6.1. պարբերությունում հիշատակված արմատները לַעַ֫ף կառույցում ունեն հետևյալ ելման բայաձևերը՝ כָּתַב *կատավ* «գրեց», לָמַד *լամադ* «սովորեց»,אָכַל *ախալ* «կերավ», עָבַד *ավադ* «աշխատեց», הָלַךְ *հալախ* «գնաց», חָזַק *խազաք* «վերաղարձավ»:

☝ Ելման բայաձևերն այսուհետև հայերեն են թարգմանվելու անորոշ դերբայով՝ כָּתַב «գրել», לָמַד «սովորել»:

6.7. Հին եբրայերենն ուներ անորոշ դերբայի երկու տեսակ՝ «բացարձակ» և «կապակցված»: Արդի եբրայերենում բացարձակ անորոշ դերբայի գործածության ոլորտը խիստ սահմանափակ է, և այն առայժմ չի դիտարկվի:

6.8. Կապակցված անորոշ դերբայն ստացել է այդ անվանումը, որովհետև կազմվում է կցական նախդիրների միջոցով. որպես կանոն դա ל կցական նախդիրն է (տարբեր ձայնանիշերով), ավելի հազվադեպ՝ ב, כ և מ: Օրինակ՝ לִכְתֹּב *լիխտոբ* «գրել» (כָּתַב բայից), לִלְמֹד *լիլմոդ* «սովորել, ուսումնասիրել» (לָמַד բայից), לֶאֱכֹל *լէէխոլ* «ուտել» (אָכַל բայից), לַעֲבֹד *լաավոդ* «աշխատել» (עָבַד բայից), לָלֶכֶת *լալէխէթ* «գնալ», (הָלַךְ բայից), לַחֲזֹר *լախազոր* «վերադառնալ» (חָזַר բայից):

6.9. Ինչպես նշվեց վերևում, եբրայերենում անորոշ դերբայը երկրորդական բայածև է: Ի տարբերություն ելման բայածևի, անորոշ դերբայում արմատական բաղաձայնները կարող են տղվել և փոխարինվել այլ տառերով, ինչպես օրինակ՝ לָלֶכֶת *լալէխէթ* «գնալ» (הָלַךְ բայից) անորոշ դերբայում, որում տղվել է առաջին արմատական ה տառը, և ավելացել է ոչ արմատական ת տառը: Կան անորոշ դերբայներ, որոնցում պահպանվել է միայն մեկ արմատական բաղաձայն: Սա նշանակում է, որ անորոշ դերբայը կարող է ոչ միայն հստակ պատկերացում չտալ բայարմատի մասին, այլ նաև ամբողջությամբ աղավաղել այն: Նկատի ունենալով բայարմատի առանցքային դիրքը եբրայերենի բայական համակարգում, հասկանալի է դառնում ելման բայածևի առաջնությունն անորոշ դերբայի նկատմամբ:

6.10. Բայական յոթ կառույցներից անորոշ դերբայ ունեն հինգը: Բացի פָּעַל կառույցից, մյուս չորս կառույցներից յուրաքանչյուրն ունի անորոշ դերբայի կազմության մեկ բանաձև: פָּעַל կառույցի բայերը անորոշ դերբայ են կազմում մոտ մի տասնյակ բանաձևերով, որոնց թվարկումն ու յուրացումը լեզվի ուսումնասիրման սկզբնական փուլում անիմաստ է: Ուստի ավելի նպատակահարմար է פָּעַל կառույցի յուրաքանչյուր նոր բայի հետ յուրացնել նրա անորոշ դերբայը: Լեզվի «կուտակմանը» զուգահեռ, ուսանողն աստիճանաբար ինքնուրույն կհանգի անորոշ դերբայի կազմության հիմնական օրինաչափություններին:

☝ Բառարանում անորոշ դերբայը ելման բայածևից հետո փակագծերի մեջ նշված առաջին բայածևն է և հեշտ տարբերակելի է ל կցական նախդիրի շնորհիվ, օրինակ՝ (...לִזְכֹּר) זָכַר:

6.11. Կիրառության առանձնահատկություններով եբրայերենի անորոշ դերբայը նման է հայերենի անորոշ դերբային:

ԼԱՖ ԿԱՌՈՒՑՑԻ ՔԱՅԵՐԻ ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԸ

6.12. Շնաբանության տեսանկյունից եբրայերենն ունի միայն երկու ժամանակ՝ անցյալ և ապառնի: Ներկա ժամանակն արտահայտվում է ենթակայական դերբայների, այսինքն՝ բայից կազմված ածականների օգնությամբ (գրող, սովորող, ուտող, աշխատող և այլն): Այսպիսով՝ խոսքը գնում է պայմանական «ներկա» ժամանակի մասին, ինչը միշտ պետք է նկատի ունենալ:

6.13. Քանի որ ենթակայական դերբայները ձևաբանական առումով ածականներ են, ուստի նրանք չեն փոփոխվում ըստ դեմքի և ունեն ածականներին բնորոշ չորս ձևերը (2.5.): ԼԱՖ կառույցի ենթակայական դերբայները կազմվում են հետևյալ սխեմայով (գծիկներով նշված են արմատական բաղաձայնները).

	եզակի	*հոգնակի*
արական	-ֵ--וֹ-	-וֹ-ִ--ים
իգական	-ֶ-ֶ--וֹ-ת	-וֹ-ִ--וֹת

Ըստ այս սխեմայի, לָמַד *լամադ* «սովորել, ուսումնասիրել» և אָכַל *ախալ* «ուտել» բայերն ունեն ենթակայական դերբայի հետևյալ ձևերը.

לוֹמֵד - לוֹמֶדֶת - לוֹמְדִים - לוֹמְדוֹת
լոմեդ - լոմէդէթ - լոմդիմ - լոմդոթ

אוֹכֵל - אוֹכֶלֶת - אוֹכְלִים - אוֹכְלוֹת
օխէլ - օխէլէթ - օխլիմ - օխլոթ

☝ Բառարանում ենթակայական դերբայի եզակի արականը ելման բայածևից հետո փակագծերի մեջ նշված երկրորդ բայածևն է՝ (...לוֹמֵד ,לָמַד):

6.14. Եթե ենթակայական դերբայի չորս ձևերը բաժանենք ըստ անձնական դերանունների, կստանանք հետևյալ պատկերը.

אֲנִי - אַתָּה - הוּא	אֲנִי - אַתְּ - הִיא	אֲנַחְנוּ - אַתֶּם - הֵם	אֲנַחְנוּ - אַתֶּן - הֵן
לוֹמֵד	לוֹמֶדֶת	לוֹמְדִים	לוֹמְדוֹת

6.15. «Ներկա» ժամանակում לָמַד բայերի «խոնարհումը» կստանա հետևյալ տեսքը.

אֲנִי	לוֹמֵד կամ לוֹמֶדֶת	אֲנַחְנוּ	לוֹמְדִים կամ לוֹמְדוֹת
אַתָּה	לוֹמֵד	אַתֶּם	לוֹמְדִים
אַתְּ	לוֹמֶדֶת	אַתֶּן	לוֹמְדוֹת
הוּא	לוֹמֵד	הֵם	לוֹמְדִים
הִיא	לוֹמֶדֶת	הֵן	לוֹמְדוֹת

Նույն սխեմայով խոնարհե՛ք «գրել», «ուտել», «գնալ», «վերադառնալ», «աշխատել» բայերը:

II ԿՈԿՈՐԴԱՅԻՆ ԱՐՄԱՏԱԿԱՆՈՎ ԲԱՅԵՐԻ ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԸ

6.16. Քանի որ կոկորդային տառերը շվայի փոխարեն սովորաբար ստանում են խատեֆ-պատախ, նրանց ենթակայական դերբայներն ունեն հետևյալ տեսքը՝ אוֹהֵב-אוֹהֶבֶת-אוֹהֲבִים-אוֹהֲבוֹת *oheḥ - oheḥ'leṭ - oheḥim - oheḥoṭ* «սիրել»:

II «ԹՈՒՅԼ» ԱՐՄԱՏԱԿԱՆՈՎ ԲԱՅԵՐԸ ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿՈՒՄ

6.17. Բայերը, որոնց երկրորդ արմատականը ו կամ י է (ע״ו, ע״י), որոշ բայածևերում կորցնում են այդ տառերը (այստեղից էլ առաջացել է նրանց «թույլ» անունը) և ստանում «երկտառ» բայերի տեսք: Այսպես, לָגוּר արմատն ունի גָּר *gar* ելման բայածև («բնակվել, ապրել»), שִׁיר արմատը՝ שָׁר *shar* ելման բայածև («երգել»):

6.18. Երկրորդ արմատականը սղվում է նաև ע״ו և ע״י խմբի բայերի ենթակայական դերբայներում, որոնք ունեն հետևյալ տեսքը.

גָּר - גָּרָה - גָּרִים - גָּרוֹת
gar - garah - garim - garot

שָׁר - שָׁרָה - שָׁרִים - שָׁרוֹת
shar - sharah - sharim - sharot

6.18.1. Ուշադրություն դարձրեք, որ ע״ו և ע״י բայերի ելման բայածևը և ենթակայական դերբայի եզակի արականը համընկնում են՝ גָּר *gar,* שָׁר *shar:* Ուստի, שָׁר דָּוִד *david shar* նախադասությունը կարող է թարգմանվել «Դավիթը երգում է» և «Դավիթը երգեց» (կամ՝ «երգում էր»):

Խոնարհե՛ք גָּר gar և שָׁר shar բայերն ըստ 6.15. պարբերության սխեմայի:

6.19. ע״ו և ע״י խմբի բայերի երկրորդ արմատականը վերականգնվում է անորոշ դերբայում՝ רוּגְלָ *լագուտ,* שִׁירְלָ *լաշիռ:* רוּגְלָ անորոշ դերբայը տիպային է ע״ו խմբի բայերի համար (-וּ-לָ բանաձևով), իսկ שִׁירְלָ անորոշ դերբայը՝ ע״י խմբի բայերի համար (-ִי-לָ բանաձևով):

6.20. Թեև ենթակայական դերբայներն արդի եբրայերենում հիմնականում հանդես են գալիս որպես ներկա ժամանակի ձևեր, չպետք է մոռանալ, որ նրանք կարող են հանդես գալ իրենց բուն՝ ենթակայական դերբայի իմաստով՝ תַּלְמִיד לוֹמֵד *տալմիդ լոմէդ* «սովորող աշակերտ», אִשָּׁה אוֹהֶבֶת *իշա օհէվէթ* «սիրող կին», נָשִׁים הוֹלְכוֹת *նաշիմ հոլխոթ* «գնացող կանայք»:

ՈՒՂՂՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ՁԵՎԵՐԸ

6.21. Շարժման ուղղությունը («ո՞ւր» հարցի պատասխանը) արտահայտվում է ל կցական նախդիրով՝ הוּא הוֹלֵךְ לָאוּנִיבֶרְסִיטָה *հու հոլէխ լաունիվէռսիտա* «նա գնում է համալսարան», הָאִשָּׁה הוֹלֶכֶת לַקּוֹלְנוֹעַ *սա՛ռա հոլէխէթ լակոլնո՛ա* «Սառան գնում է կինոթատրոն», կամ אֶל *էլ* նախդիրով, որը մոտ է հայերենի «դեպի» բառին՝ הוּא הוֹלֵךְ אֶל הָאוּנִיבֶרְסִיטָה *հու հոլէխ էլ հաունիվէռսիտա* «նա գնում է (դեպի) համալսարան»:

6.22. Մի շարք բառեր (տեղանուններ, աշխարհագրական բնույթի բառեր և այլն) «ուղղության» ձև են կազմում ה־ չշեշտվող վերջավորությամբ՝ עִירָה *ի՛ռա* «դեպի քաղաք», יְרוּשָׁלַיְמָה *յէռուշալա՛յմա* «դեպի Երուսաղեմ»: Այս ձևերից մի քանիսը կարող են օգտագործվել որոշիչ հոդով՝ הָעִירָה *հաի՛ռա* «դեպի քաղաքը», մյուսները միայն որոշիչ հոդով՝ הַבַּיְתָה *հաբա՛յտա* «դեպի տուն»:

Բ ԵՎ Լ ԿՑԱԿԱՆ ՆԱԽԴԻՐՆԵՐԻ ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

6.23. Ըվա ձայնանիշով սկսվող բառերից առաջ בְּ և לְ կցական նախդիրները ստանում են խիրիկ ձայնանիշը՝ բառասկզբում երկու շվայից խուսափելու համար՝ בְּרֹחֶב גַּלְגֹּלֶת *բիռխով գիզէնգոֆ* «Դիզենգոֆ փողոցում», לְרֹחֶב בֶּן־גּוּרְיוֹן *լիռխով բէնգուռյօն* «(դեպի) Բեն-Գուրիոնի փողոցը»: 6.23.1. Եթե բառի առաջին տառն ունի թեթև դագեշ, այն սղվում է, առաջացնելով համապատասխան հչյունափոխություն՝ לִפְרָחִים - פְּרָחִים *պռախիմ - լիֆռախիմ:*

ՄԱԿԲԱՅՆԵՐ

6.24. Որոշ ածականներ կարող են հանդես գալ նաև որպես մակբայներ: Մակբայի դերում ածականը սովորաբար հանդես է գալիս եզակի արականով՝ שָׁרָה יָפָה *դի՛նա շառա յաֆէ* «Դինան գեղեցիկ է երգում» (մակբայ), քայց՝ אִשָּׁה יָפָה הִיא *դի՛նա իշա յաֆա* «Դինան գեղեցիկ կին է» (ածական):

6.25. Իգական սեռի ածականները հանդես են գալիս որպես մակբայներ, երբ նշում են լեզուների անունները՝ אַרְמִנִית *առմէնիթ* «հայերեն», עִבְרִית *իվռիթ* «եբրայերեն», רוּסִית *ռու-*

սիք «ռուսերեն», אַנְגְלִית *անգլիք*, גֶרְמָנִית *գէռմանիք*, צָרְפָתִית *ցառֆատիք* «ֆրանսերեն», עֲרָבִית *առավիք* «արաբերեն»: Փաստորեն, -ִית վերջավորությունը հայերենի «-երեն» վերջածանցի համարժեքն է:

«Լեզվական» ձևերը հաճախ դիտվում են նաև որպես իգական սեռի գոյականներ. «այսինչ լեզու» իմաստով՝ דָוִד לוֹמֵד אַרְמָנִית *դավիդ լօմէդ առմէնիք* «Դավիթն ուսումնասիրում է հայոց լեզուն»:

☝ Քառարանում «լեզվական» ձևերը նշված են որպես իգական սեռի գոյականներ և մակբայներ:

ԹՎԱԿԱՆՆԵՐ

6.26. Հաշվելիս, թվաբանական գործողություններ կատարելիս, առանձին թվեր (հեռախոսի, մեքենայի, տան և այլ համարներ) նշելիս, օգտագործվում են իգական սեռի թվականները: Օրինակ, 564321 հեռախոսահամարն ընթերցվում է՝ חֲמֵשׁ-שֵׁשׁ-אַרְבַּע-שְׁלוֹשׁ-שְׁתַּיִם-אַחַת *խամէշ-շէշ-առբա-շալօշ-շտայմ-ախատ:*

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6.27. Որոշիչ հոդ չունեցող ուղիղ խնդիրն անմիջականորեն հետևում է բայիս՝ הוּא אוֹהֵב לֶאֱכֹל גְּלִידָה *հու օհէվ լէէխօլ գլիդա* «նա սիրում է ուտել պաղպաղակ», הִיא לוֹמֶדֶת עִבְרִית *հի լօմէդէթ իվռիթ* «նա եբրայերեն է ուսումնասիրում»:

ԱՅԼ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6.28. Երբ לְ բառին չի հետևում գոյական և նա ինքն է հանդես գալիս իբրև գոյական՝ «ամեն ինչը» իմաստով, ապա այդ դեպքում նա ձայնավորվում է խոլամով և ստանում է հոդ՝ הַכֹּל:

✍ *Կարդացե՛ք, թարգմանե՛ք և արտագրե՛ք հետևյալ տեքստը.*

דָּוִד גָּר[1] בְּתֵל־אָבִיב. הוּא לוֹמֵד[2] בָּאוּנִיבֶרְסִיטָה. הוּא לוֹמֵד אַנְגְלִית[3] וְעִבְרִית[3]. הוּא אוֹהֵב[2,4] לִלְמֹד[5] וְהוּא לוֹמֵד הַרְבֵּה. הוּא הוֹלֵךְ לָאוּנִיבֶרְסִיטָה[6] בַּבֹּקֶר וְחוֹזֵר הַבַּיְתָה[7] אַחֲרֵי הַצָּהֳרַיִם. בָּעֶרֶב הוּא כּוֹתֵב[2] מַרְגִּילִים[8].

גַּם שָׂרָה גָּרָה[1] בְּתֵל־אָבִיב. הִיא לֹא לוֹמֶדֶת[2], הִיא עוֹבֶדֶת[2] בְּמִשְׂרָד. הִיא מַזְכִּירָה. הִיא עוֹבֶדֶת[2] מִן הַבֹּקֶר[9] עַד הָעֶרֶב, וְחוֹזֶרֶת[2] הַבַּיְתָה[7] עֲיֵפָה מְאוֹד. שָׂרָה אוֹהֶבֶת[2,4] לָשִׁיר[10]. הִיא שָׂרָה[1] יָפֶה[11].

יוֹסֵף תַּלְמִיד. הוּא לוֹמֵד בְּבֵית־סֵפֶר[12]. אֲבָל יוֹסֵף עָצֵל מְאוֹד, הוּא לֹא אוֹהֵב[2,4] לִלְמֹד[5]. הוּא אוֹהֵב[2,4] לֶאֱכֹל[5] גְּלִידָה[5] אוֹ לָלֶכֶת[5] לַקּוֹלְנוֹעַ[5] עִם הַחֲבֵרִים שֶׁלּוֹ. יֵשׁ לוֹ הַרְבֵּה חֲבֵרִים.

שִׂיחָה בָּרְחוֹב[13]

- שָׁלוֹם, רוּת, מָה נִשְׁמָע?
- הַכֹּל[14] בְּסֵדֶר, יַעֲקֹב. וּמָה שְׁלוֹמְךָ?
- טוֹב, תּוֹדָה. אַתְּ גָּרָה[1] עַכְשָׁיו כָּאן, בְּתֵל־אָבִיב?
- כֵּן, אֲנִי גָּרָה[1] בְּתֵל־אָבִיב.
- אֵיפֹה אַתְּ גָּרָה?
- בִּרְחוֹב[15] דִיזֶנגוֹף, 5[16].
- גַּם אֲנִי גָּר עַכְשָׁיו בְּתֵל־אָבִיב.
- אַתָּה עוֹבֵד[2]?
- לֹא, אֲנִי לֹא עוֹבֵד[2], אֲנִי לוֹמֵד[2]. וְאַתְּ עוֹבֶדֶת[2]?
- כֵּן, אֲנִי עוֹבֶדֶת בְּבֵית־סֵפֶר[12].
- גַּם דָּוִד עוֹבֵד בְּבֵית־סֵפֶר?
- לֹא, דָּוִד עוֹבֵד בְּמִשְׂרָד חָדָשׁ, בִּרְחוֹב[15] בֶּן־גּוּרְיוֹן.
- דְּרִישַׁת שָׁלוֹם לְדָוִד[17]!
- תּוֹדָה רַבָּה, יַעֲקֹב, לְהִתְרָאוֹת.

[1] 6.18. [2] 6.13. [3] 6.25. [4] 6.16. [5] 6.7.-11. [6] 6.21. [7] 6.22. [8] 6.27. [9] 5.10. [10] 6.19. [11] 6.24. [12] 2.19. [13] 4.4. [14] 6.28. [15] 6.23. [16] 6.26. [17] 5.1.

Թարգմանե՛ք երբայերեն.

1. Հակոբը և Հռութն ապրում են Թել-Ավիվում: 2. Դավիթը գնում է համալսարան առավոտյան և տում է վերադառնում կեսօրից հետո: 3. Դինան և Հռութը գնում են կինոթատրոն: 4. Աբրահամը շատ ծույլ է, նա չի սիրում վարժություններ գրել: 5. Այս կանայք քարտուղարուհիներ են, նրանք աշխատում են այս մեծ գրասենյակում: 6. Համալսարանում մենք սովորում ենք երբայերեն: 7. Աշակերտները չեն սիրում գնալ դպրոց: 8. Դինան սովորում է երգել: Նա սիրում է երգել: 9. Դուք ապրում եք այս մեծ տա՞նը: 10. Իսահակը սովորում է առավոտից մինչև երեկո: 11. Այս փողոցում կան բազմաթիվ գեղեցիկ շենքեր: 12. Ես չեմ սիրում պաղպաղակ ուտել: 13. Հիմա ես գրում եմ նոր վարժություն: 14. Ես գնում եմ գրասենյակ միայն կեսօրից հետո: 15. Ամեն առավոտ ես ուտում եմ հաց և կարագ, ես չեմ սիրում պանիր ուտել: 16. Սառան աշխատում է առավոտից մինչև երեկո և տուն է վերադառնում շատ հոգնած: 17. Հռութը սիրում է գնալ կինոթատրոն իր ամուսնու հետ: 18. Դպրոցում աշակերտներն ուսումնասիրում են անգլերեն: 19. Ես ապրում եմ իմ ծնողների հետ այս փոքր բնակարանում: 20. Դավիթը շատ ծույլ երեխա է, նա չի սիրում գնալ դպրոց և սովորել:

מִלִּים חֲדָשׁוֹת

אָהַב פ (לֶאֱהֹב, אוֹהֵב) *(լէէհօվ, օհէվ)* սիրել *ահավ*
אוֹ מ״ח *օ* կամ
אַחֲרֵי מ״י *ախառէյ* հետո, ից
אָכַל פ (לֶאֱכֹל, אוֹכֵל) *(լէէխօլ, օխէլ)* ուտել *ախալ*
אַנְגְּלִית נ חה״פ *անգլիթ* անգլերեն
בֵּית־סֵפֶר ז *բէյթ-սէֆէր* դպրոց
בֹּקֶר ז *բօկէր* դպրոց
גְּלִידָה נ *գլիդա* պաղպաղակ
גָּר פ (לָגוּר, גָּר) *(լագուր, գառ)* ապրել, բնակվել *գառ*

הָלַךְ פ (לָלֶכֶת, הוֹלֵךְ) *(halax (laleχet, holeχ)* գնալ *halaxa (laleχet, holeχ)*

חָזַר פ (לַחֲזוֹר, חוֹזֵר) *(xazar (laxazor, xozer)* վերադառնալ *xazara (laxazor, xozer)*

כָּאן תה״פ *kan* այստեղ *kana*

כָּתַב פ (לִכְתֹּב, כּוֹתֵב) *(katav (lixtov, kotev)* գրել *katava (lixtov, kotev)*

לָמַד פ (לִלְמֹד, לוֹמֵד) *(lamad (lilmod, lomed)* սովորել, ուսումնասիրել *lamada (lilmod, lomed)*

מִשְׂרָד ז *misrad* գրասենյակ, նախարարություն *misrada*

סֵדֶר ז *séder* կարգ *sédera*

עָבַד פ (לַעֲבֹד, עוֹבֵד) *(avad (laavod, ovéd)* աշխատել *avada (laavod, ovéd)*

עִבְרִית נ תה״פ *ivrit* եբրայերեն *ivrita*

עַד מ״י *ad* մինչև *ad*

עָיֵף ת *ayéf* հոգնած *ayéfa*

עִם מ״י *im* հետ *im*

עָצֵל ת *atsél* ծույլ *atsla*

עֶרֶב ז *érev* երեկո *érava*

צָהֳרַיִם ז *tsohorayim* կեսօր *tsohoraim*

קוֹלְנוֹעַ ז *kolnóa* կինոնկար, կինոթատրոն *kolnóa*

רַב ת (נ רַבָּה) *rav (rabba)* շատ, մեծ *rav*

רוּת נ *rut* Հռութ *rut*

רְחוֹב ז (ר׳ רְחוֹבוֹת) *(rexov (rexovot)* փողոց *rexov*

שִׂיחָה נ *sixa* զրույց, խոսակցություն *sixa*

שָׁר פ (לָשִׁיר, שָׁר) *(shar (lashir, shar)* երգել *shara (lashir, shar)*

שֵׁשׁ ש״מ נ *shesh* վեց *shesh*

תַּרְגִּיל ז *targil* վարժություն *targila*

בִּטוּיִים

אַחֲרֵי הַצָּהֳרַיִם *axarey hatsohoraim* կեսօրից հետո, երեկոյան *axarey hatsohoraim*

בַּבֹּקֶר *babóker* առավոտյան *babóker*

בָּעֶרֶב *baérev* երեկոյան *baérev*

דְּרִישַׁת שָׁלוֹם לְדָוִד ! *drishat shalom ledavid* բարև՛ (բարևի՛ր) Դավիթին *drishat shalom ledavid*

הַכֹּל בְּסֵדֶר *hakol beséder* ամեն ինչ կարգին է *hakol besédera*

לְהִתְרָאוֹת מ״י *lehitraot* ցտեսություն *lehitraot*

מָה נִשְׁמָע ? *ma nishma* ի՞նչ կա, չկա *ma nishma*

מָה שְׁלוֹמְךָ (שְׁלוֹמֵךְ) ? *(ma shlomxa (shlomex)* ինչպե՞ս ես *ma shlomxa*

תּוֹדָה רַבָּה *toda raba* շատ շնորհակալություն *toda raba*

7 שֶׁבַע

א״ל ԽՄԲԻ ԲԱՅԵՐԸ לַעֲ ԿԱՌՈՒՑՈՒՄ

7.1. Բայերը, որոնց III արմատականը א է (א״ל), לַעֲ կառույցի ելման բայաձևում ձայնավորված են երկու կամացով՝ קָרָא *կառա* «կարդալ» և ունեն ենթակայական դերբայի հետևյալ ձևերը.

קוֹרֵא - קוֹרֵאת - קוֹרְאִים - קוֹרְאוֹת
կօռէ - կօռէթ - կօռ'իմ - կօռ'օթ

ה״ל ԽՄԲԻ ԲԱՅԵՐԸ לַעֲ ԿԱՌՈՒՑՈՒՄ

7.2. Բայերը, որոնց III արմատականը ה է (ה״ל), לַעֲ կառույցի ելման բայաձևում նույնպես ձայնավորված են երկու կամացով՝ רָצָה *ռացա* «ուզենալ, ցանկանալ» և ունեն ենթակայական դերբայի հետևյալ ձևերը.

רוֹצֶה - רוֹצָה - רוֹצִים - רוֹצוֹת
ռոցէ - ռոցա - ռոցիմ - ռոցօթ

7.3. לַעֲ կառույցում կոկորդային բաղաձայններ չունեցող ה״ל բայերն անորոշ դերբայներ են կազմում לִ-ת-- սխեմայով, որում գծիկներով նշված են I և II արմատականները, իսկ III ה արմատականը սղված է՝ לִרְצוֹת - רָצָה *լիռցօթ:*

7.4. רָצָה բայիկ կարող է հետևել ինչպես գոյական՝ שָׂרָה עֲבוֹדָה אַחֶרֶת *սա՛ռա ռոցա ավօդա ախէ՛ռէթ* «Սառան ուզում է ուրիշ աշխատանք», այնպես էլ բայի անորոշ դերբայ՝ אֲנִי רוֹצָה לִלְמֹד מוּסִיקָה *անի ռոցէ լիլմօդ մու՛սիկա* «Ես ուզում եմ երաժշտություն սովորել»:

ՃԻՒՀ ԱԾԱԿԱՆԸ

7.5. צָרִיךְ *ցառիխ* ածականը համապատասխանում է հայերենի «պետք է, հարկավոր է»

կապակցություններին և, ինչպես צָרִיךְ բայը, օգտագործվում է գոյականների և բայերի անորոշ դերբայների հետ՝ דָּנִיאֵל צָרִיךְ מַזְכִּירָה *դանիելին պետք է քարտուղարուհի*», אֲנַחְנוּ צְרִיכִים מְכוֹנִית חֲדָשָׁה *անախնու ցռիխիմ մէխօնիթ խադաշա* «մեզ հարկավոր է նոր ավտոմեքենա», הִיא לֹא צְרִיכָה לָלֶכֶת לָעֲבוֹדָה *հի՛նա լօ ցռիխա լալէխէթ լաավօդա* «Դինան չպետք է գնա աշխատանքի», הַתַּלְמִידוֹת הָאֵלֶּה צְרִיכוֹת לִכְתֹּב תַּרְגִּילִים *հատալմիդօթ հաէ՛լէ ցռիխօթ լիխտօվ տարգիլիմ* «այս աշակերտուհիները պետք է գրեն վարժություններ»:

ԱՅԼ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

7.6. וְ կցական շաղկապը որոշ «քարացած» կապակցություններում հանդես է գալիս հին եբրայերենից ժառանգված וְ *վա* ձևով՝ וְחֵצִי *վախէ՛ցի* «և կես» (ժամերը նշելու դեպքում):

7.7. לְ կցական նախդիրը հանդես է գալիս կապակցություններում, որոնցում պատկանելիության գաղափարը վերացական է կամ վերաիմաստավորված՝ מוֹרֶה לְמוּסִיקָה *մօռէ լէմու՛սիկա* «երաժշտության ուսուցիչ», קוֹרְסִים לְעִבְרִית *կու՛ռսիմ լէիվռիտ* «եբրայերենի դասընթացներ»:

✍ *Կարդացե՛ք, թարգմանե՛ք և արտագրե՛ք հետևյալ տեքստը.*

שָׂרָה וְדָנִיֵּאל

שָׂרָה עוֹבֶדֶת[1] בְּמִשְׂרָד גָּדוֹל. הַמִּשְׂרָד רָחוֹק מְאֹד מִן הַבַּיִת[2] שֶׁל שָׂרָה. שָׂרָה עוֹבֶדֶת[1] הַרְבֵּה. הִיא קָמָה[3] בְּשָׁעָה שֵׁשׁ בַּבֹּקֶר. הִיא אוֹכֶלֶת[1] אֲרוּחַת־בֹּקֶר בְּשָׁעָה שֵׁשׁ וָחֵצִי[4]. הִיא הוֹלֶכֶת[1] אֶל הַמִּשְׂרָד[5] בְּשָׁעָה שֶׁבַע וָחֵצִי[4]. הִיא עוֹבֶדֶת[1] בַּמִּשְׂרָד מִן הַשָּׁעָה שְׁמוֹנֶה וָחֵצִי עַד הַשָּׁעָה חָמֵשׁ אַחֲרֵי הַצָּהֳרַיִם. בָּעֶרֶב שָׂרָה יוֹשֶׁבֶת[1] בַּבַּיִת. הִיא אוֹכֶלֶת[1] אֲרוּחַת־עֶרֶב[6] וְקוֹרֵאת[7] סְפָרִים[6]. הִיא אוֹהֶבֶת לִקְרֹא, יֵשׁ לָהּ בַּבַּיִת הַרְבֵּה סְפָרִים. עַכְשָׁיו הִיא קוֹרֵאת סֵפֶר עַל מוּסִיקָה יִשְׂרְאֵלִית מוֹדֶרְנִית. שָׂרָה מַזְכִּירָה טוֹבָה, אֲבָל אַחֲרֵי הָעֲבוֹדָה הִיא עֲיֵפָה מְאֹד. הִיא רוֹצָה[8] עֲבוֹדָה אַחֶרֶת[9].

דָּנִיֵּאל רוֹפֵא. הוּא עוֹבֵד[1] בַּמִּשְׂרָד שֶׁלּוֹ בִּרְחוֹב[10] בֶּן־גּוּרְיוֹן. גַּם אַבָּא שֶׁל דָּנִיֵּאל רוֹפֵא. הוּא עוֹבֵד[1] עִם דָּנִיֵּאל. אֲבָל עַכְשָׁיו אַבָּא שֶׁל דָּנִיֵּאל חוֹלֶה, הוּא לֹא הוֹלֵךְ[1] לָעֲבוֹדָה[5]. הוּא יוֹשֵׁב[1] בַּבַּיִת וְקוֹרֵא[7] עִתּוֹנִים[6]. גַּם הַמַּזְכִּירָה שֶׁל דָּנִיֵּאל חוֹלָה. רַק דָּנִיֵּאל עוֹבֵד[1] בַּמִּשְׂרָד וְהוּא עָיֵף מְאֹד. הוּא צָרִיךְ[11] מַזְכִּירָה חֲדָשָׁה.

סְטוּדֶנְט וּמוֹרֶה[12]

- סְלִיחָה, כָּאן גָּר[3] בְּנְיָמִין צוּר?
- כֵּן, הוּא גָּר כָּאן, זֶה אֲנִי.
- אַתָּה מוֹרֶה לְמוּסִיקָה[13], לֹא?
- כֵּן, אֲנִי מוֹרֶה לְמוּסִיקָה.

- אֲנִי סְטוּדֶנְט בָּאוּנִיבֶרְסִיטָה[14], אֲנִי רוֹצֶה[8] לִלְמֹד[9] מוּסִיקָה. אֲנִי אוֹהֵב מוּסִיקָה.
- אַתָּה רוֹצֶה לִלְמֹד מוּסִיקָה? טוֹב מְאֹד. אֵין לִי עֲכָשָׁיו תַּלְמִידִים. מָה שְׁמְךָ?
- שְׁמִי שִׁמְעוֹן לֵוִי.
- נָעִים מְאֹד. מֵאַיִן אַתָּה?
- אֲנִי מִירוּשָׁלַיִם[15], אֲבָל עֲכָשָׁיו אֲנִי גָּר[3] וְלוֹמֵד[1] בְּתֵל־אָבִיב.
- מָה אַתָּה לוֹמֵד בָּאוּנִיבֶרְסִיטָה?
- אֲנִי לוֹמֵד צָרְפָתִית.

[1] 6.13. [2] 5.10. [3] 6.18. [4] 7.6. [5] 6.21. [6] 6.27. [7] 7.1. [8] 7.2. [9] 7.4. [10] 6.23. [11] 7.5. [12] 2.16.բ. [13] 7.7. [14] 4.4. [15] 5.11.

Թարգմանե՛ք երբայերեն.

1. Դինան հիմա նստած է տանը և գիրք է կարդում: 2. Ամեն օր Սիմոնը վեր է կենում ժամը յոթին և գնում է աշխատանքի: 3. Հռութն ուզում է գնալ կինոթատրոն իր ընկերուհիների հետ: 4. Ես չեմ ուզում աշխատել այս գրասենյակում, այն շատ հեռու է իմ տնից: 5. Այս ուսանողն ապրում է համալսարանից շատ հեռու: 6. Ես առավոտյան չեմ նստում, ես ուտում եմ միայն կեսօրից հետո: 7. Իմ քույրը չի սիրում սովորել, նա սիրում է միայն գրքեր կարդալ: Նրա սենյակում շատ գրքեր կան: 8. Այսօր ես չեմ գնում աշխատանքի, ես շատ հիվանդ եմ: 9. Բենյամինը պետք է անգլերեն սովորի, սակայն նա շատ ծույլ է: 10. Դինան պետք է նախաճաշի և գնա աշխատանքի: 11. Ինձ հարկավոր են նոր մատիտներ ու գրիչներ: 12. Դու չպետք է վեր կենաս առավոտյան ժամը վեցին: 13. Ես ուզում եմ երգել սովորել, սակայն մեր փոքր քաղաքում չկան լավ ուսուցիչներ: 14: Բենյամինը համալսարանում ֆրանսերեն է ուսումնասիրում:

מִלִּים חֲדָשׁוֹת

אָח ז (נ אָחוֹת) *ախէր (ախէ՛ռէք)* ուրիշ, այլ
אֲרוּחַת־בֹּקֶר נ *առուխաք-բօ՛կէռ* նախաճաշ
אֲרוּחַת־עֶרֶב נ *առուխաք-է՛ռէվ* ընթրիք
בִּנְיָמִין *բինյամին* Բենյամին
חוֹלֶה ת *խօլէ* հիվանդ
חֵצִי ז *խէ՛ցի* կես
יוֹם ז (ר יָמִים) *յօմ (յամի՛մ)* օր
יָשַׁב פ (לָשֶׁבֶת, יוֹשֵׁב) *յաշավ (լաշէ՛վէք, յօշէվ)* նստել
מֵאַיִן תה״פ *մէայի՞ն* որտեղի՞ց
מוּסִיקָה נ *մո՛ւսիկա* երաժշտություն
סְלִיחָה נ *սլիխա* ներողություն
עֲבוֹדָה נ *ավօդա* աշխատանք
עִתּוֹן ז *իտօ՛ն* թերթ
צָרִיךְ ת *ցառի՛խ* պետք է
צָרְפָתִית נ תה״פ *ցառֆատի՛տ* ֆրանսերեն
קָם פ (לָקוּם, קָם) *կամ (լակո՛ւմ, կա՛մ)* վեր կենալ
קָרָא פ (לִקְרֹא, קוֹרֵא) *կառա (լիկռօ՛, կօռէ՛)* կարդալ
רָחוֹק ת *ռախօ՛կ* հեռու
רָצָה פ (לָרוּצ, רָץ) *ռացա (լիռցօ՛ք, ռացէ՛)* ուզել
שָׁבַע ש״מ נ *շէ՛վա* յոթ
שְׁמוֹנָה ש״מ נ *շմօ՛նէ* ութ
שִׁמְעוֹן ז *շիմ՛օ՛ն* Սիմոն

שָׁעָה *շաաղ* ժամ

בִּטוּיִים

בְּבַקָּשָׁה *բէվակաշա* խնդրեմ
בְּשָׁעָה שֶׁ *բէշաա շէ* ժամը վեցին
מִן הַשָּׁעָה שְׁמוֹנָה *մին հաշաա շմօնէ* ութից ժամը
שֶׁ זֶחֲצִי *շէ վախէցի* վեց ու կես

8 שְׁמוֹנָה

ԹԱՑԱԿԱՆ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

8.1. רָאָה *ռասա* «տեսնել», עָשָׂה *ասա* «անել» և עָנָה *անա* «պատասխանել» բայերը պատկանում են ה״ל խմբին (7.2.-7.3.): Նրանց ենթակայական ղերբայներն ունեն հետևյալ տեսքը.

רוֹאֶה - רוֹאָה - רוֹאִים - רוֹאוֹת
roէ - roա - roհմ - roօթ

עוֹשֶׂה - עוֹשָׂה - עוֹשִׂים - עוֹשׂוֹת
oսէ - oսա - oսհմ - oսօթ

☙ עָשָׂה *բայի օրինակով կազմենք* עָנָה *անա «պատասխանել» բայի ենթակայական ղերբայները:*

8.2. שָׁאַל *շաալ* «հարցնել» բայը պատկանում է II կոկորդային արմատականներով խմբին (6.16.) և հոգնակիի ձևերում շվայի փոխարեն ստանում է խատեֆ-պատախ.

שׁוֹאֵל - שׁוֹאֶלֶת - שׁוֹאֲלִים - שׁוֹאֲלוֹת
շօէլ - շօէլէթ - շօալիմ - շօալօթ

8.3. יָדַע *յադա* «իմանալ, գիտենալ» բայը պատկանում է III կոկորդային արմատականներով խմբին և ունի ենթակայական ղերբայի հետևյալ ձևերը.

יוֹדֵעַ - יוֹדַעַת - יוֹדְעִים - יוֹדְעוֹת
յօղէ՛ա - յօղա՛թ - յօղ'հմ - յօղ'օթ

8.4. בָּא *բա* «գալ» բայը պատկանում է ע״ו խմբին (6.17-6.19., արմատը՝ בוא) և ունի ենթա-կայական ղերբայի հետևյալ ձևերը.

בָּא - בָּאָה - בָּאִים - בָּאוֹת
բա - բաա - բահմ - բաօթ

ՔԱՆԱԿԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ

8.5. Քանակական թվականները, բացի 1-ից (5.13., «երկու» թվականի մասին՝ ստորև) դրվում են հաշվվող բառից առաջ և համաձայնեցվում նրա հետ սեռով (խոսքն առայժմ գնում է իգական սեռի գոյականների և թվականների մասին)՝ שִׁלּשָׁ֫ת תַּלְמִידוֹת *շալոշ տալմիդօթ* «3 աշակերտուհի», אַרְבַּע מוֹרוֹת *առբա մօռօթ* «4 ուսուցչուհի», חָמֵשׁ בֻּבּוֹת *խամէշ բուբօթ* «5 տիկնիկ», שֵׁשׁ מִילִים *շէշ միլիմ* «6 բառ», שֶׁבַע נָשִׁים *շէ՛կա նաշիմ* «7 կին», שְׁמוֹנָה עָשׂוֹת *շմօնէ շաօթ* «8 ժամ», תֵּשַׁע מַחְבָּרוֹת *տէ՛շա մախբառօթ* «9 տետր», עֶשֶׂר מִשְׁפָּחוֹת *է՛սէռ միշպախօթ* «10 ընտանիք»:

Թարգմանե՛ք երբայերեն. 3 քույր, 4 կին, 5 բնակարան, 6 տիկնիկ, 7 ընկերուհի, 8 աղջիկ, 9 ուսուցչուհի, 10 քարտուղարուհի, 3 տետր, 4 ավտոմեքենա, 5 ընտանիք, 6 ուսանողուհի, 7 բազմոց, 8 թխվածք, 9 քաղաք, 10 ժամ, 7 աշակերտուհի, 8 մահճակալ:

ԾԱՌԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

8.6. (տե՛ս 6.27.) Եթե ուղիղ խնդիրն ունի որոշիչ հոդ կամ դերանվանական վերջածանց կամ արտահայտված է հատուկ անունով, ապա նրա առջև դրվում է אֶת *էտ* մասնիկը՝ יוֹסֵף כּוֹתֵב אֶת הַתַּרְגִּיל *յօսէֆ կօտէվ էտ հատտարգիլ* «Հովսեփը գրում է վարժությունը» (համեմատեք՝ יוֹסֵף כּוֹתֵב תַּרְגִּיל *յօսէֆ կօտէվ տարգիլ* «Հովսեփը վարժություն է գրում»), אֲנִי רוֹאֶה אֶת תַּלְמִידַי *անի ռօէ էտ տալմիդի* «Ես տեսնում եմ աշակերտիս», אֲנוּ אוֹהֲבִים אֶת יְרוּשָׁלַיִם *ա՛նու օհավիմ էտ յէռուշալա՛յիմ* «Մենք սիրում ենք Երուսաղեմը»:

8.7. Եթե բայն ունի մեկից ավելի ուղիղ խնդիրներ, ապա նրանցից յուրաքանչյուրն ստանում է אֶת մասնիկը՝ בִּנְיָמִין אוֹהֵב אֶת רִבְקָה וְאֶת רוּת *բինյամին օհէվ էտ ռի՛վկա վէէտ ռուտ* «Բենյամինը սիրում է Ռեբեկային և Հռութին»:

֫ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՇԱՂԿԱՊԸ

8.8. Քարդ ստորադասական նախադասություններում ստորադասական նախադասությունը գլխավորին է միանում ֫שׁ *շէ* կցական հարաբերական անփոփոխ շաղկապի միջոցով, որը համապատասխանում է հայերենի «որ» և «որը» կապերին (իրենց թվային և հոլովական բոլոր ձևերով)՝ אֲנִי רוֹאֶה שֶׁאַתְּ עֲיֵפָה *անի ռօէ շէաթ այէֆա* «ես տեսնում եմ, որ դու հոգնած ես», יֵ֫שׁ מִילִים שֶׁאֲנִי לֹא יוֹדֵעַ *յէ՛շ միլիմ շէանի լօ յոդէ՛ա* «կան բառեր, որոնք ես չգիտեմ», אֲנִי שָׁמֵחַ שֶׁיֵּשׁ לִי מְזַכִּירָה טוֹבָה *անի սամէ՛ախ շէյէ՛շ լի մազկիռա տօվա* «ես ուրախ եմ, որ ունեմ լավ քարտուղարուհի»:

דָּנִיֵּאל וְשָׂרָה בְּרְחוֹב

יוֹם אֶחָד דָּנִיֵּאל הוֹלֵךְ בְּרְחוֹב. הוּא רוֹאֶה[1] אֶת שָׂרָה[2].
- שָׁלוֹם, שָׂרָה - אוֹמֵר[3] דָּנִיֵּאל לְשָׂרָה[4] - מָה שְׁלוֹמֵךְ? אֲנִי רוֹאֶה שֶׁאַתְּ[5] עֲיֵפָה מְאֹד.
- כֵּן, דָּנִיֵּאל - אוֹמֶרֶת[3] לוֹ[6] שָׂרָה - הָעֲבוֹדָה שֶׁלִּי קָשָׁה מְאֹד. אֲנִי עוֹבֶדֶת עֶשֶׂר שָׁעוֹת[7] כָּל יוֹם[8] וְחוֹזֶרֶת[3] הַבַּיְתָה[9] עֲיֵפָה מְאֹד.
- אוּלַי אַתְּ רוֹצָה[10] עֲבוֹדָה אַחֶרֶת[11], עֲבוֹדָה יוֹתֵר קַלָּה[12]? - שׁוֹאֵל[13] דָּנִיֵּאל אֶת שָׂרָה[2].
- אַתָּה רוֹצֶה[10] לוֹמַר[11] שֶׁיֵּשׁ לָךְ[5] עֲבוֹדָה?
- כֵּן, שָׂרָה, יֵשׁ לִי עֲבוֹדָה בְּמִשְׂרָד - עוֹנֶה[1] לָהּ[6] דָּנִיֵּאל - אֲנִי צָרִיךְ[14] מַזְכִּירָה חֲדָשָׁה. הַמַּזְכִּירָה שֶׁלִּי חוֹלָה, הִיא לֹא בָּאָה[15] לָעֲבוֹדָה[16]. אֲנִי יוֹדֵעַ[17] שְׁאַתְּ[5] מַזְכִּירָה טוֹבָה מְאֹד.
- כַּמָּה שָׁעוֹת אֲנִי צְרִיכָה לַעֲבֹד[14] בְּמִשְׂרָד שֶׁלְּךָ?
- מִן הַשָּׁעָה תֵּשַׁע בַּבֹּקֶר עַד הַשָּׁעָה חָמֵשׁ אַחֲרֵי הַצָּהֳרַיִם. שְׁמוֹנֶה שָׁעוֹת[7]. מָה אַתְּ אוֹמֶרֶת[3]?
- טוֹב מְאֹד, דָּנִיֵּאל, אֲנִי מַסְכִּימָה לַעֲבֹד בְּמִשְׂרָדְךָ.
- תּוֹדָה רַבָּה, שָׂרָה. אֲנִי שָׂמֵחַ שֶׁיֵּשׁ לִי[5] עֲכְשָׁיו מַזְכִּירָה טוֹבָה וְיָפָה.

שִׂיחָה בַּשָּׁלֶפוֹן

- שָׁלוֹם, רוּת. מָה שְׁלוֹמֵךְ?
- בְּסֵדֶר, דָּוִד, וּמָה שְׁלוֹמְךָ?
- גַּם אֲנִי בְּסֵדֶר. בְּנָיְמִין בַּבַּיִת?
- לֹא, הוּא לֹא בַּבַּיִת, הוּא בְּאֵילַת, עִם שְׁלֹמֹה.
- בְּאֵילַת? מָה הֵם עוֹשִׂים[1] בְּאֵילַת?
- אֲנִי לֹא יוֹדַעַת[17]. הוּא לֹא אוֹמֵר לִי.
- הוּא לֹא בָּא[15] לָקוֹנְצֶרְט[16] הַיּוֹם?
- לֹא, הוּא לֹא בָּא. אֲנִי אוֹמֶרֶת לְךָ - הוּא בְּאֵילַת.
- וְאַתְּ? אַתְּ בָּאָה[15] לָקוֹנְצֶרְט?
- גַּם אֲנִי לֹא בָּאָה.
- לָמָּה אַתְּ לֹא רוֹצָה לָבוֹא[11]? אַתְּ אוֹהֶבֶת מוּסִיקָה, לֹא?
- אֲנִי צְרִיכָה לִלְמֹד[14] גְּרָמָנִית. בַּשָּׁבוּעַ הַחָדָשׁ יֵשׁ הַרְבֵּה מִלִּים חֲדָשׁוֹת שֶׁאֲנִי[5] עוֹד לֹא יוֹדַעַת[17]. אֲנִי צְרִיכָה לִלְמֹד[14] אֶת כָּל הַמִּלִּים הַחֲדָשׁוֹת אֵלֶּה[2].
- אַתְּ לוֹמֶדֶת הַרְבֵּה מְאֹד, רוּת; אַתְּ לֹא צְרִיכָה לִלְמֹד מֵהַבֹּקֶר עַד הָעֶרֶב.
- לְהִתְרָאוֹת, דָּוִד!

[1] 8.1. [2] 8.6. [3] 6.13. [4] 5.1. [5] 8.8. [6] 5.4. [7] 8.5. [8] 3.15.ա. [9] 6.22. [10] 7.2. [11] 7.4. [12] 5.12. [13] 8.2. [14] 7.5. [15] 8.4. [16] 6.21. [17] 8.3.

Թարգմանե՛ք բերայներեն.

1. Հիմա ես ունեմ նոր աշխատանք: 2. Մեր ուսուցիչն ասում է, որ մենք պետք է շատ կարդանք: 3. Ես չեմ ուզում պատասխանել քեզ: 4. Ինչո՞ւ դասի չեք գալիս: 5. Ես գիտեմ, որ Դինան շատ լավ է երգում: 6. Որտեղի՞ց են ձեր նոր ընկերները: Նրանք Երուսաղեմից են, սակայն հիմա նրանք աշխատում են մեր քաղաքում: 7. Մենք այսօր շատ աշխատանք չունենք և ուզում ենք գնալ համերգի: 8. Ի՞նչ ես ասում նրանց:

Ես ասում եմ, որ այսօր չեմ ուզում գնալ համալսարան: 9. Սողոմոնը բժիշկ է, նրա ընդունարանում (գրասենյակում) կան շատ հիվանդներ: 10. Նրանք չգիտեն, որ դու սիրում ես երգել: 11. Ես պետք է գրեմ այս վարժությունը մինչև ժամը երեքը: 12. Ես ուզում եմ հարցնել այս կնոջը իր երեխաների մասին: 13. Ես ուզում եմ ասել նրան, որ ես համաձայն չեմ: 14. Քանի՞ ժամ ես պետք է աշխատեմ գրասենյակումդ: 15. Այսօր երեկոյան ժամը ութին մենք գնում ենք համերգի: 16. Ես չգիտեմ ինչո՞ւ է Սողոմոնը ուրախ ամբողջ երեկոն: 17. Ի՞նչ ես դու անում այստեղ ժամը տասին: 18. Մենք հարցնում ենք այս աշակերտուհիներին, սակայն նրանք չեն պատասխանում մեզ: 19. Այս դասի նոր բառերն ավելի հեշտ են: 20. Դուք պետք է սովորեք այս դասի բոլոր նոր բառերը:

מִלִּים חֲדָשׁוֹת

אוּלַי *ուլայ* ած׳ միգուցե
אָמַר פ (לוֹמַר, אוֹמֵר) *ամար (լոմար, օմեր)* ասել
בָּא פ (לָבוֹא, בָּא) *բա (լավո, բա)* գալ
גֶּרְמָנִית נ *գերմանիթ* հե׳׳ע գերմաներեն
הַיּוֹם *հայոմ* հե׳׳ע այսօր
יָדַע פ (לָדַעַת, יוֹדֵעַ) *յադա (լադա՛ատ, յոդե՛ա)* իմանալ, գիտենալ
כַּמָּה *քամա, քա՛մա* հե׳׳ע քանի՞
לָמָּה *լա՛մա* հե׳׳ע ինչո՞ւ
מַסְכִּים *մասկիմ* ז համաձայն
עָנָה פ (לַעֲנוֹת, עוֹנֶה) *անա (լաանոտ, օնե)* պատասխանել
עָשָׂה פ (לַעֲשׂוֹת, עוֹשֶׂה) *ասա (լաասոտ, օսե)* անել
עֶשֶׂר ש׳׳מ נ *էսեր* տասը
קוֹנְצֶרְט ז *կոնցերտ* համերգ
קַל ת *կալ* թեթև, հեշտ
רָאָה פ (לִרְאוֹת, רוֹאֶה) *ռաա (լիռո՛ոտ, ռոե)* տեսնել
שָׁאַל פ (לִשְׁאוֹל, שׁוֹאֵל) *շաալ (լիշո՛ոլ, շոել)* հարցնել
שְׁלֹמֹה ז *շլոմո* Սողոմոն
שָׂמֵחַ ת *սամե՛ախ* ուրախ
תֵּשַׁע ש׳׳מ נ *տե՛շա* ինը

בְּטוּיִים

אֲנִי בְּסֵדֶר *անի բսե՛դեր* ես լավ եմ

9 תֵּשַׁע

ԲԱՅԱԿԱՆ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

9.1. בָּאַךְ *քաավ* «ցավել», פָּעַךְ *քաաս* «բարկանալ» և קָחַץ *ցախակ* «ծիծաղել» բայերը պատկանում են II կոկորդային արմատականով բայերի խմբին (6.16., 8.2.) և ունեն ենթակայական դերբայի հետևյալ ձևերը.

כּוֹאֵב - כּוֹאֶבֶת - כּוֹאֲבִים - כּוֹאֲבוֹת
քօէվ - քօէ՛վէթ - քօավիմ - քօավօթ

קְהִיטִים ז״ר *kehitim* կահույք

שׁוּם דָּבָר ז *šum davar* ոչ մի բան

שָׁטַח ז *šatax* գորգ

בְּטוּיִים

בְּיָמִים אֵלֶּה *bejamim élé* այս օրերին

מְאוּחָר בַּלַּיְלָה *meuxar balajla* ուշ գիշերով

עוֹד מְעַט *od meat* շուտով

16 שֵׁשׁ־עֶשְׂרֵה

Կարդացե՛ք, թարգմանե՛ք և արտագրե՛ք հետևյալ տեքստը.

רְאוּבֵן אוֹהֵב אֶת יְרוּשָׁלַיִם וְדִינָה אוֹהֶבֶת אֶת תֵּל־אָבִיב

רְאוּבֵן מְסַפֵּר:
אֲנִי אוֹהֵב אֶת יְרוּשָׁלַיִם. אֲנִי אוֹהֵב אֶת הָרְחוֹבוֹת[1] הַצָּרִים[2] וְאֶת הַבָּתִּים הַיְשָׁנִים בָּעִיר הָעַתִּיקָה, וַאֲנִי[3] אוֹהֵב אֶת הַבָּתִּים הַגְּבוֹהִים וְהַיָּפִים שֶׁל הָעִיר הַחֲדָשָׁה. אֲנִי אוֹהֵב לִרְאוֹת אֶת הָאֲנָשִׁים בָּרְחוֹבוֹת - יְהוּדִים, נוֹצְרִים, מוּסְלְמִים, אֲנָשִׁים שֶׁמְּדַבְּרִים בְּשָׂפוֹת[4] שׁוֹנוֹת, תַּיָּרִים מִכָּל הָעוֹלָם. בִּירוּשָׁלַיִם[5] אֶפְשָׁר לְהַרְגִּישׁ[6,7] אֶת הַהִיסטוֹרְיָה שֶׁל הָאֲדָמָה הָעַתִּיקָה הַזֹּאת.

דִּינָה מְסַפֶּרֶת:
אֲנִי אוֹהֶבֶת אֶת תֵּל־אָבִיב. תֵּל־אָבִיב הִיא עִיר חֲדָשָׁה וּשְׁמָהּ[8]. בְּתֵל־אָבִיב כּוּלָּם רָצִים[9] וְלֹא נָחִים[9]. אֲנִי אוֹהֶבֶת אֶת הַמִּסְעָדוֹת וְאֶת הַחֲנוּיוֹת הַיָּפוֹת בְּרְחוֹבוֹת[10] תֵּל־אָבִיב. בְּתֵל־אָבִיב אֶפְשָׁר לִרְאוֹת[8] אֶת הָאוֹפְנָה הָאַחֲרוֹנָה. הַרְבֵּה אֲנָשִׁים, הַרְבֵּה צְבָעִים, יָם כָּחוֹל ! בָּעֶרֶב עַל חוֹף הַיָּם תָּמִיד יֵשׁ מוּסִיקָה לִרְקוּדִים[11] וַהֲמוֹן[3] אֲנָשִׁים צְעִירִים[12] רוֹקְדִים וּמְדַבְּרִים זֶה עִם זֶה. בְּתֵל־אָבִיב אֲנִי מַרְגִּישָׁה[13] יוֹתֵר צְעִירָה[14] !

[1] 2.9. [2] 2.11. [3] 2.17. [4] 2.18.1. [5] 10.9. [6] 13.4. [7] 14.3. [8] 2.16.ա. [9] 6.18. [10] 6.23. [11] 10.7. [12] 12.1. [13] 14.2. [14] 5.12.

Թարգմանե՛ք երբայերեն.

1. Երուսաղեմում կարելի է տեսնել հրեաների, քրիստոնյաների և մահմեդականների: 2. Կեսօրին ծովափին միշտ շատ մարդիկ կան: 3. Ամեն տարի բազմաթիվ զբոսաշրջիկներ ամբողջ աշխարհից գալիս են Իսրայել: 4. Թել-Ավիվի փողոցներում կարելի է տեսնել ժամանակակից խանութներ: 5. Իսրայելում ապրում են հրեաներ ամբողջ աշխարհից, որոնք խոսում են տարբեր լեզուներով: 6. Թել-Ավիվը մեծ և գեղեցիկ քաղաք է ծովի ափին: 7. Հոռթը չի աշխատում, նա միայն խոսում է հեռախոսով: 8. Բավական է խոս-սես, պետք է աշխատել: 9. Ի՞նչ ես կարծում, ո՞ւր կարելի է գնալ երեկոյան: 10. Վերջին նորաձևությունը չունի շատ գույներ, միայն սև, սպիտակ և կապույտ: 11. Ես զգում եմ, որ դու չես կարող պատասխանել ինձ: 12. Երուսաղեմի փողոցներում կարելի է տեսնել զբոսաշրջիկների բազմություն: 13. Հին Քաղաքի փողոցները նեղ են, սակայն շատ գեղեցիկ: 14. Երուսաղեմի Հին Քաղաքում ապրում են բազմաթիվ հայ ընտանիքներ: 15. Ես չգիտեմ, թե ինչ լեզվով է խոսում այն երիտասարդ զբոսաշրջիկը: 16. Շաբաթը երկու անգամ մենք գնում ենք ծովափ, և երեխաները ամբողջ օրը խաղում են այնտեղ: 17. Այն

փոքր քաղաքում ապրում են միայն քրիստոնյաներ: 18. Միայն այստեղ կարելի է զգալ այս հինավուրց հողի պատմությունը: 19. Ես չեմ կարող հանգստանալ, որովհետև դու ամբողջ ժամանակ նվագում ես: 20. Ռուբենը սիրում է աղջիկների հետ խոսել վերջին նորաձևության մասին: 21. Զաբուղոնը չի կարող մտնել այն փոքր սենյակը, որովհետև նա չափազանց բարձրահասակ է: 22. Բոլորն ասում են, որ ծովն այսօր շատ կապույտ է:

מִלִּים חֲדָשׁוֹת

אֲדָמָה נ հող *ադամա*
אוֹפְנָה נ նորաձևություն *օֆնա*
אַחֲרוֹן ת վերջին *ախարոն*
גָּבוֹהַּ ת բարձր, բարձրահասակ *գավո՛ահ*
הָמוֹן ז բազմություն, ամբոխ *համոն*
הִסטוֹרְיָה נ պատմություն *հիստո՛ռյա*
הִרגִּישׁ פ (לְהַרגִּישׁ, מַרגִּישׁ) զգալ *հիռգիշ (լէհառգիշ, մառգիշ)*
חוֹף ז ափ, ծովափ *խոֆ*
יָם ז ծով *յամ*
כָּחוֹל ת (נ כְּחוּלָה) կապույտ *կախօլ (կխուլա)*
מוּסְלְמִי תו״י մահմեդական *մուսլէմի*
נוֹצְרִי תו״י քրիստոնյա, քրիստոնեական *նօցռի*
נָח פ (לָנוּחַ, נָח) հանգստանալ *նախ (լանու՛ախ, նախ)*
עוֹלָם ז աշխարհ *օլամ*
עָתִיק ת հին, հինավուրց, հնամյա *ատիք*
צֶבַע ז (ר צְבָעִים) գույն *ցե՛վա (ցվախիմ)*
צָעִיר ת երիտասարդ *ցախռ*
צַר ת նեղ *ցառ*
רְאוּבֵן ז Ռուբեն *ռեուվէն*
רָץ פ (לָרוּץ, רָץ) վազել *ռաց (լառռուց, ռաց)*
רָקוּד ז պար *ռիկուդ*
שׁוֹנָה ת տարբեր, զանազան *շոնէ*
שָׂפָה נ լեզու *սաֆա*
שֶׁשׁ־עֶשְׂרֵה ש״מ נ տասնվեց *շէշ-էսռե*
תֵּיָר ז զբոսաշրջիկ *տայառ*

בְּטוּיִים

זֶה עִם זֶה *զե իմ զե* իրար հետ
הָמוֹן אֲנָשִׁים *համոն անաշիմ* մարդկանց բազմություն
כּוּלָם *քուլամ* բոլորը (նրանք)
מִכָּל הָעוֹלָם *միքօլ հաօլամ* ամբողջ աշխարհից
הָעִיר הַחֲדָשָׁה *հաիռ հախադաշա* Նոր Քաղաք (Արևմտյան Երուսաղեմ)
הָעִיר הָעַתִּיקָה *հաիռ հաատիկա* Հին Քաղաք (Արևելյան Երուսաղեմ)

17 שִׁבְעָה־עָשָׂר

ԱՆՑՅԱԼ ԺԱՄԱՆԱԿ

17.1. Անցյալ ժամանակը կազմվում է ելման բայածևին անցյալ ժամանակի վերջածանցների կցումով: **נָפַל** կառույցի բայերի անցյալ ժամանակը կազմվում է հետևյալ սխեմայով.

אֲנִי	־ָ־תִּי	אֲנַחְנוּ	־ָ־נוּ
אַתָּה	־ָ־תָּ	אַתֶּם	־ָ־תֶּם
אַתְּ	־ָ־תְּ	אַתֶּן	־ָ־תֶּן
הוּא	־ָ־	הֵם	־ָ־וּ
הִיא	־ָ־ָה	הֵן	־ָ־וּ

Այս վերջածանցները նույնն են բոլոր կառույցների համար: Սխեմայից պարզորոշ երևում է, որ III դեմքի եզակի արական բայածևը միակն է, որ ածանց չունի (־ָ־) և նրանից է, որ ածանցվել են մյուս ձևերը: Այսպիսով՝ «ելման բայածև» տերմինը դառնում է ավելի իմաստավորված:

17.2. **פָּגַשׁ** և **לָמַד** բայերի խոնարհումն անցյալ ժամանակում ունի հետևյալ տեսքը («ես հանդիպեցի, դու հանդիպեցիր..., ես սովորեցի, դու սովորեցիր...» և այլն).

אֲנִי	פָּגַשְׁתִּי	*pagaští*	אֲנַחְנוּ	פָּגַשְׁנוּ	*pagašnú*
אַתָּה	פָּגַשְׁתָּ	*pagaštá*	אַתֶּם	פְּגַשְׁתֶּם	*pəgaštém*
אַתְּ	פָּגְשָׁה	*pagšá*	אַתֶּן	פְּגַשְׁתֶּן	*pəgaštén*
הוּא	פָּגַשׁ	*pagáš*	הֵם	פָּגְשׁוּ	*pagšú*
הִיא	פָּגְשָׁה	*pagšá*	הֵן	פָּגְשׁוּ	*pagšú*

אֲנִי	לָמַדְתִּי	*lamádti (lamáttti)*	אֲנַחְנוּ	לָמַדְנוּ	*lamádnu*
אַתָּה	לָמַדְתָּ	*lamádta*	אַתֶּם	לְמַדְתֶּם	*ləmadtém*
אַתְּ	לָמַדְתְּ	*lamádt*	אַתֶּן	לְמַדְתֶּן	*ləmadtén*
הוּא	לָמַד	*lamád*	הֵם	לָמְדוּ	*lamdú*
הִיא	לָמְדָה	*lamdá*	הֵן	לָמְדוּ	*lamdú*

17.3. Տառադարձությունից երևում է, որ անցյալ ժամանակի վերջածանցների մի մասը (-וּ, -תֶן, -תֶם, -נָה) շեշտավորվում են, մյուսները (-נוּ, -תָ, -תִי) ոչ: 17.3.1. -ה, -ָה վերջածանցներն առաջացնում են II արմատականի ձայնավորի սղում՝ לִמְּדָה *լմ-դա,* פִּגְּשׁוּ *պգ-շու:* 17.3.2. -תֶם, -תֶן վերջածանցները կոչվում են «ծանր վերջածանցներ». առնելով բայի շեշտն իրենց վրա, նրանք հանգեցնում են առաջին ձայնավորի սղմանը (կամացը փոխարինվում է շվայով)՝ פִּגַּשְׁתֶּם - פָּגַשׁ *պագաշ - պգաշտէմ,* לִמַּדְתֶּן - לָמַד *լամադ - լմադտէն:*

Անցյալ ժամանակում խոնարհե՛ք חָפַץ, כָּתַב, זָכַר, קָרָא, פָּתַח *բայերը:*

17.4. Խոսակցական լեզվում II դեմքի հոգնակին կազմվում է մյուս ձևերի նմանությամբ՝ առանց առաջին ձայնավորի սղման և վերջածանցի շեշտավորման՝ כְּתַבְתֶּם *կատա՛վտէմ,* (ճիշտ ձևը՝ כְּתַבְתֶּם *կտավտե՛մ*), יְשַׁבְתֶּן *յաշա՛վտէն* (ճիշտ ձևը՝ יְשַׁבְתֶּן *յէշավտե՛ն*) և այլն: Այս ձևերն աստիճանաբար թափանցում են նաև գրական լեզու և հանդիպում են սույն դասագրքում:

17.5. Եբրայերենի անցյալ ժամանակում «կատարյալն» ու «անկատարը» հստակորեն չեն տարբերակվում, ուստի כָּתַבְתִּי אֲנִי նշանակում է և՛ «ես գրեցի, գրել եմ (էի)», և՛ «ես գրում էի», יָשַׁבְתִּי «նստեցի, նստել եմ (էի), նստած էի»:

17.6. Քանի որ յուրաքանչյուր դեմք ունի համապատասխան վերջածանց, անցյալ ժամանակում I և II դեմքերի անձնական դերանունները սովորաբար չեն օգտագործվում՝ בַּבּוֹקֶר הָלַכְתִּי לָעֲבוֹדָה *բաբո՛կէր հալախտի լաավոդա* «առավոտյան գնացի աշխատանքի», חָזַרְנוּ הַבַּיְתָה מְאוּחָר בַּלַּיְלָה *խազա՛նու հաբա՛յտա մէուխար բալա՛յլա* «տուն վերադարձանք ուշ գիշերով»:

17.7. Ի״ע ԵՎ Ե״Ի ԲԱՅԵՐՆ ԱՆՑՅԱԼ ԺԱՄԱՆԱԿՈՒՄ

		Ի״ע			
אֲנִי	גָּרְתִּי	*գա՛ռտի*	אָנוּ	גָּרְנוּ	*գա՛նու*
אַתָּה	גָּרְתָּ	*գա՛ռտա*	אַתֶּם	גָּרְתֶּם	*գառտէմ*
אַתְּ	גָּרְתְּ	*գառտ*	אַתֶּן	גָּרְתֶּן	*գառտէն*
הוּא	גָּר	*գառ*	הֵם	גָּרוּ	*գա՛ռու*
הִיא	גָּרָה	*գա՛ռա*	הֵן	גָּרוּ	*գա՛ռու*
		Ե״Ի			
אֲנִי	שָׁרְתִּי	*շա՛ռտի*	אָנוּ	שָׁרְנוּ	*շա՛նու*
אַתָּה	שָׁרְתָּ	*շա՛ռտա*	אַתֶּם	שָׁרְתֶּם	*շառտէմ*
אַתְּ	שָׁרְתְּ	*շառտ*	אַתֶּן	שָׁרְתֶּן	*շառտէն*
הוּא	שָׁר	*շառ*	הֵם	שָׁרוּ	*շա՛ռու*
הִיא	שָׁרָה	*շա՛ռա*	הֵן	שָׁרוּ	*շա՛ռու*

Ուշադրություն դարձրեք ձայնանիշերի փոփոխությանը I և II դեմքերում՝ גָּר ← גָּר:

17.8. III դեմքի եզակի իգականը ներկա և անցյալ ժամանակներում ունի միևնույն ձևերը՝ גָּרָה, שָׁרָה, որոնք միմյանցից տարբերվում են շեշտադրությամբ. ներկա ժամանակում՝ *գառա՛,* անցյալ ժամանակում՝ *գա՛ռա:*

17.9. בָּא «գալ» բայն անցյալ ժամանակում խոնարհվում է հետևյալ կերպ («ես եկա, գալիս էի, դու եկար, գալիս էիր...»).

אֲנִי	בָּאתִי	*բա՛տի*	אָנוּ	בָּאנוּ	*բա՛նու*
אַתָּה	בָּאתָ	*բա՛տա*	אַתֶּם	בָּאתֶם	*բատէմ*
אַת	בָּאת	*բատ*	אַתֶּן	בָּאתֶן	*բատէն*
הוּא	בָּא	*բա*	הֵם	בָּאוּ	*բա՛ու*
הִיא	בָּאָה	*բա՛ա*	הֵן	בָּאוּ	*բա՛ու*

י״ע ԵՎ ו״ע ԲԱՅԵՐԸ הִפְעִיל ԿԱՌՈՒՑՎԱԾ ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿՈՒՄ

17.10. הִפְעִיל կառույցում ו״ע և י״ע բայերը ելման բայաձև են կազմում -הֵ֫י սխե-մայով՝ הֵבִין *հէվին* «հասկանալ» (בין արմատից), הֵכִין *հէխին* «պատրաստել» (כון արմատից), הֵקִים *հէկիմ* «հիմնել, հաստատել» (קום արմատից), הֵבִיא *հէվի* «բերել» (בוא արմատից): Ենթակայական դերբայն ունի հետևյալ տեսքը.

מֵבִין - מְבִינָה - מְבִינִים - מְבִינוֹת
մէվին - մէվինա - մէվինիմ - մէվինօթ

מֵבִיא - מְבִיאָה - מְבִיאִים - מְבִיאוֹת
մէվի - մէվիա - մէվիիմ - մէվիօթ

Ուշադրություն դարձրեք מ նախածանցի ձայնանիշի փոփոխությանը՝ מֵ ← מְ:

17.11. הִפְעִיל կառույցում ו״ע և י״ע բայերի անորոշ դերբայը կազմվում է -לְהָ֫י սխեմայով՝ לְהָבִין *լէհավին* «հասկանալ», לְהָבִיא *լէհավի* «բերել»:

17.12. Այսպիսով՝ անկախ երկրորդ արմատականի ו թե י լինելուց, הִפְעִיל կառույցում ו״ע և י״ע բայերը հանդես են գալիս י տառով:

✍ הֵבִין *բայի օրինակով կազմե՛ք* הֵכִין *հէխին «պատրաստել» և* הֵקִים *հէկիմ «հիմնել, հաստատել» բայերի ենթակայական և անորոշ դերբայները:*

ԱՅԼ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

17.13. הָיָה *հայա* «լինել» բայից (պատկանում է ל״ה խմբին) ենթակայական դերբայ չի կազմվում, և այն ներկա ժամանակում հանդես չի գալիս: Անցյալ ժամանակում նա համապատասխանում է հայերենի անցյալ ժամանակի օժանդակ բայերին՝ דָּוִד הָיָה חוֹלֶה *դավիդ հայա խօլէ* «Դավիթը հիվանդ էր», יֹאשִׁיָּהוּ הָיָה יוֹם רִאשׁוֹן *էհոմօլ հայա յօմ ռիշօն* «երեկ կիրակի էր», 17.13.1. կամ «(չ)կար» բառին՝ יֵשׁ גַּן גָּדוֹל בַּיִת שָׁם הָיָה *հայա շամ բայթ գադօլ* «այնտեղ մեծ տուն կար»: הָיָה բայի խոնարհումն անցյալ ժամանակում կներկայացվի առաջիկա դասերում:

17.14. Ժամանակամիջոց նշող բառերի հետ որոշիչ հոդը փոխարինում է «այս» ցուցա-

կան դերանունը՝ הַבּוֹקֶר «այս առավոտ, այսօր առավոտյան», הָעֶרֶב «այս երեկո, այսօր երեկոյան», הַשָּׁנָה «այս տարի», הַשַּׁבּוּעַ «այս շաբաթ», և այլն:

17.15. Եբրայերենը չունի «անցած» բառը: Փոխարենը օգտագործվում է עָבַר *ավառ* «անցնել» բայի անցյալ ժամանակը՝ שֶׁ հարաբերական շաղկապի հետ: עָבַר բայը թվով և սեռով համաձայնեցվում է գոյականի հետ՝ הַחוֹדֶשׁ שֶׁעָבַר *հախօդէշ շէավառ* «անցած ամիսը» (բառացիորեն՝ «ամիսը, որն անցավ»), בַּשָּׁנָה שֶׁעָבְרָה *բաշանա շէավռա* «անցած տարի» («տարի, որն անցավ»), הַיָּמִים שֶׁעָבְרוּ *հայամիմ շէավռու* «անցած օրերը» («օրերը, որոնք անցան»):

17.16. Ամիսների անվանումներն են՝ יָנוּאָר *յանուար,* פֶּבְרוּאָר *ֆեբրուար,* מֶרְס *մարս,* אַפְּרִיל *ապրիլ,* מַאי *մայ,* יוּנִי *յունի,* יוּלִי *յուլի,* אוֹגוּסְט *օգուստ,* סֶפְּטֶמְבֶּר *սեպտեմբեր,* אוֹקְטוֹבֶּר *օկտոմբեր,* נוֹבֶמְבֶּר *նոյեմբեր,* דֶּצֶמְבֶּר *դեկտեմբեր:* Ամսվա օրերը նշելու համար օգտագործվում են արական սեռի քանակական թվականները՝ שְׁלוֹשָׁה בְּסֶפְּטֶמְבֶּר *շլոշա բէսէպտեմբեր* «սեպտեմբերի 3-ը», עֲשָׂרָה בְּאַפְּרִיל *մէասառա բէապռիլ* «ապրիլի 10-ից», שִׁשָּׁה בְּדֶצֶמְבֶּר *բէշիշա բէդէցեմբեր* «դեկտեմբերի 6-ին»:

17.17. Հրեական ավանդական՝ լուսնային տոմարի ամիսները նշելու համար օգտագործվում են ընդհանուր սեմական ծագում ունեցող անվանումները՝ תִּשְׁרֵי *տիշռէ(յ)* «սեպտեմբեր-հոկտեմբեր», חֶשְׁוָן *խէշվան* «հոկտեմբեր-նոյեմբեր», כִּסְלֵו *քիսլէվ* «նոյեմբեր-դեկտեմբեր», טֵבֵת *տէվէթ* դեկտեմբեր-հունվար», שְׁבָט *շվաթ* «հունվար-փետրվար», אֲדָר *ադառ* «փետրվար-մարտ», נִיסָן *նիսան* «մարտ-ապրիլ», אִיָּר *իյառ* «ապրիլ-մայիս», סִיוָן *սիվան* «մայիս-հունիս», תַּמּוּז *թամուզ* «հունիս-հուլիս», אָב *ավ* «հուլիս-օգոստոս», אֱלוּל *էլուլ* «օգոստոս-սեպտեմբեր»: Հրեական ավանդական թվարկությունն սկսվում է երկրի արարումից. քրիստոնեական թվարկության 2002 թվականին համապատասխանում է հրեական թվարկության 5762 թվականը: Հրեական տոմարի տարեթվերը շատ հաճախ նշվում են քրիստոնեական տոմարի տարեթվերի կողքին, հատկապես պաշտոնական փաստաթղթերում, թերթերի վրա և այլուր: Կրոնական կարիքների համար օգտագործվում է միայն ավանդական տոմարը:

✍ *Կարդացե՛ք, թարգմանե՛ք և արտագրե՛ք հետևյալ տեքստը.*

אַהֲרוֹן בַּבַּיִת וּבָעֲבוֹדָה[1]

אַהֲרוֹן וְלֵאָה יוֹשְׁבִים בַּמִּטְבָּח שְׁלָהֶם וְאוֹכְלִים אֲרוּחַת־בּוֹקֶר.
- אַהֲרוֹן, מַדּוּעַ אַתָּה לֹא שׁוֹתֶה אֶת הַקָּפֶה? הַקָּפֶה לֹא מָתוֹק? - אָמְרָה[2] לֵאָה.
- לֹא, הַקָּפֶה מָתוֹק מְאוֹד. שָׁמְתִּי[3] שְׁלוֹשׁ כַּפִּיּוֹת[4] סוּכָּר - אָמַר[2] אַהֲרוֹן.
- מַדּוּעַ אַתָּה לֹא אוֹכֵל? הַגְּבִינָה לֹא טוֹבָה? לֹא אָכַלְתָּ[2] אֶת הַגְּבִינָה.
- אָכַלְתִּי[2], לֵאָה, אָכַלְתִּי[2] - אָמַר[2] אַהֲרוֹן - אַת תָּמִיד מְכִינָה[5] אֲרוּחַת־בּוֹקֶר מְצוּיֶנֶת.
- אֲנִי חוֹשֶׁבֶת, שֶׁאַתָּה עוֹבֵד הַרְבֵּה, אַהֲרוֹן - אָמְרָה[2] לֵאָה. - אַתָּה צָרִיךְ לָנוּחַ.
- לֹא, אֲנִי לֹא עוֹבֵד הַרְבֵּה. הִנֵּה, אֶתְמוֹל לֹא עָבַדְתִּי[2], הָיָה יוֹם רִאשׁוֹן[6]. גַּם בְּשַׁבָּת לֹא עָבַדְתִּי[2]. גַּם בַּשַּׁבּוּעַ שֶׁעָבַר[2.7] נָחְתִּי[3] יוֹמַיִם[8].
- טוֹב, כְּבָר מְאוּחָר, הַשָּׁעָה שְׁמוֹנֶה וָחֵצִי; צָרִיךְ לָלֶכֶת[9]!
- בְּסֵדֶר, לֵאָה, אֲנִי הוֹלֵךְ, לְהִתְרָאוֹת - אָמַר אַהֲרוֹן וְהָלַךְ[2] לָעֲבוֹדָה.

אַהֲרוֹן עוֹבֵד הַשָּׁנָה[10] בְּבֵית הַחוֹלִים[11] "צִיּוֹן". בַּשָּׁנָה שֶׁעָבְרָה[2.7] הוּא עָבַד[2.12] בְּבֵית־חוֹלִים אַחֵר. כָּל הַבּוֹקֶר אַהֲרוֹן עָבַד[12] הַרְבֵּה, הוּא לֹא יָשַׁב[2] אֲפִילוּ רֶגַע אֶחָד. עַכְשָׁיו הוּא יוֹשֵׁב וְכוֹתֵב אֶל דּוֹדוֹ[13] מָרְדְּכַי שְׁגָר בְּקִיבּוּץ.

גַם בַּשָׁבוּעַ שֶׁעָבַר[7] אַהֲרוֹן כָּתַב[2] לִדוֹדוֹ.
בְּרֶגַע זֶה בָּא[14] פָּקִיד מִמשׂרַד מְנַהֵל בֵּית־הַחוֹלִים[15] וְאָמַר[2]:
- שָׁלוֹם, דוֹקטוֹר בֶּן־אֱלִיעֶזֶר.
- שָׁלוֹם, רְאוּבֵן. מַה נִשְׁמָע? אֵיזוֹ חֲדָשָׁה אַתָה מֵבִיא[5] הַיוֹם?
- אָנוּ מְכִינִים[5] דוּחַ לַמְנַהֵל[16]. בְּבַקָשָׁה לוֹמַר[17] לִי, כַּמָה זמַן אַתָה עוֹבֵד בְּבֵית הַחוֹלִים שֶׁלָנוּ?
- אֲנִי עוֹבֵד פֹּה כְּבָר אַרְבָּעָה חֳדָשִׁים[18].
- לִפנֵי כַּמָה זמַן בָּאתָ[14]?
- בָּאתִי[14] לִפנֵי אַרְבָּעָה חֳדָשִׁים. זֶה הָיָה[6] בְּשִׁשָׁה בְּסֶפּטֶמבֶּר[19].
- בְּאֵיזֶה חוֹדֶשׁ אַתָה גוֹמֵר אֶת עֲבוֹדָתְךָ[20] כָּאן?
- אֲנִי גוֹמֵר אֶת עֲבוֹדָתִי[20] בְּתִשׁעָה בְּאוֹגוּסט[19], חוֹדֶשׁ לִפנֵי רֹאשׁ הַשָׁנָה[21].
- זאת אוֹמֶרֶת שֶׁיֵש לְךָ עוֹד תִשׁעָה חֳדָשִׁים[18] לַעֲבוֹד פֹּה.
- לֹא, יֵש לִי רַק שְׁמוֹנָה חֳדָשִׁים[18]. עָבַדתִי[2] כְּבָר אַרְבָּעָה חֳדָשִׁים[18]: סֶפּטֶמבֶּר - חוֹדֶשׁ אֶחָד, אוֹקטוֹבֶּר - שְׁנַיִם[22], נוֹבֶמבֶּר - שְׁלוֹשָׁה, דֶצֶמבֶּר - אַרְבָּעָה חֳדָשִׁים.
- עַכשָׁיו אֲנִי מֵבִין[5] - אָמַר[2] הַפָּקִיד - יֵש לָנוּ עוֹד יָנוּאָר, פֶּבּרוּאָר, מַרס, אַפּרִיל, מַאי, יוּנִי, יוּלִי, אוֹגוּסט. נָכוֹן, רַק שְׁמוֹנָה חֳדָשִׁים[18]. חֲבָל!

[1] 2.16.p. [2] 17.1. [3] 17.7. [4] 2.7. [5] 17.10. [6] 17.13. [7] 17.15. [8] 14.7. [9] 14.13. [10] 17.14. [11] 12.6.
[12] 17.5. [13] 2.14. [14] 17.9. [15] 12.7. [16] 13.7. [17] 9.6. [18] 10.8. [19] 17.16. [20] 12.8. [21] 12.1. [22] 11.2.1.

Թարգմանե՛ք երբայերեն.

1. Դու ոչինչ չկերար առավոտյան, քաղցած չե՞ս: 2. Երեկ մենք գնացինք տեսնելու մեր հին ընկերներին: 3. Նրանք չասացին մեզ, թե ինչքան ժամանակ են ուզում ապրել մեր քաղաքում: 4. Ինչո՞ւ եք հեռու նստել պատուհանից: 5. Ահարոնը բացեց դուռը և դուրս եկավ տնից: 6. Անցած տարի ես ապրում և սովորում էի ուրիշ քաղաքում: 7. Ամբողջ գիշեր մենք պարում և երգում էինք: 8. Դինան իր բոլոր գրքերը դրեց պահարանի մեջ: 9. Ես դռան վրա կարդացի, որ այս խանութում վաճառում են մեծ զեղչով: 10. Երբ ես եկա աշխատանքի, ինձ ասացին, որ տնօրենն ուզում է տեսնել ինձ: 11. Ես չեմ կարող խմել այս սուրճը, որովհետև այն շատ քաղցր է: 12. Մուրքքեն և ես վերադարձանք կիբուցից ուշ գիշերով: 13. Հրեաները հանգստանում են շաբաթ, իսկ քրիստոնյաները՝ կիրակի օրը: 14. Մենք պետք է պատրաստենք հաշվետվությունը մինչև դեկտեմբերի հինգը: 15. Երեկ կիրակի էր, և մենք չէինք աշխատում: 16. Հորեղբայրս երբայերեն չի խոսում, բայց հասկանում է: 17. Առավոտից գլուխս ցավում է, չեմ հասկանում ինչու: 18. Միայն դու կարող ես հասկանալ ինչ է գրված այստեղ: 19. Դու պետք է ավարտես աշխատանքդ մին-չև ժամը վեցը: 20. Անցած ամիս ես աշխատում էի միայն յոթ ժամ, սակայն այս ամիս ես արդեն պետք է աշխատեմ ինը ժամ:

מִלִים חֲדָשׁוֹת

אֲפִילוּ חա״י *աֆի՛լու* նույնիսկ
אֶתמוֹל ז *էտմօլ* երեկ
גָמַר פ (לִגמוֹר, גּוֹמֵר) *գամառ (լիգմօռ, գօմէռ)* ավարտել, վերջացնել
דוֹד ז *դոդ* հորեղբայր, քեռի
דוּחַ ז *դիվռա՛խ* զեկույց, հաշվետվություն
הֵבִין פ (לְהָבִין, מֵבִין) *հէվի՛ն (լէհավի՛ն, մէվի՛ն)* հասկանալ
הָיָה פ (לִהיוֹת, -) *հայա (լիհյօթ)* լինել
הֵכִין פ (לְהָכִין, מֵכִין) *հէխի՛ն (լէհախի՛ն, մէխի՛ն)* պատրաստել
חֲבָל ס״ז *խավա՛լ* ափսո՛ս, ավա՛ղ

חֲדָשָׁה נ *խադաշա* նորություն
כְּבָר תה״פ *գվար* արդեն
לִפְנֵי מ״י *լիփնէյ* առաջ, մինչև
מָתוֹק ת *մատօք* քաղցր
מְרְדָּכַי ז *մօռդէխայ* Մուրթքե
סוּכָּר ז *սուկար* շաքար
פָּקִיד ז *պակիդ* ծառայող, պաշտոնյա
צִיּוֹן נ *ցիօն* Սիոն (Երուսաղեմի կրոնա-պոետիկ մակդիր)
קִבּוּץ ז *կիբուց* կիբուց (գյուղատնտ. բնակավայր ընդհանուր սեփականության հիմունքով)
רֹאשׁ ז *ռօշ* գլուխ
שִׁבְעַ־עֶשְׂרֵה ש״מ נ *շվա-էսրէ* տասնյոթ
שַׁבָּת נ *շաբատ* շաբաթ օր

בְּטוּיִים

זאת אוֹמֶרֶת *զօթ օմէռէթ* այսինքն, ասել է թե
יוֹם רִאשׁוֹן *յօմ ռիշօն* կիրակի
רֹאשׁ הַשָּׁנָה *ռօշ հաշանա* Նոր Տարի

18 שְׁמוֹנָה־עָשְׂרֵה

Յ՛՛Բ ԲԱՅԵՐԸ ԼԻՎ ՀԵՓՅԻՒ ԿԱՌՈՒՑՎԻ ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿՈՒՄ

18.1. Բայերը, որոնց առաջին արմատականը נ է, לִיוִ֫ הֵפְעִיל կառույցում կորցնում են այն՝ הִכִּיר *հիկիր* «ծանոթանալ, ճանաչել» (נכר արմատից, ենթադրվող ձևը՝ הִכְיִ֫ר(נ)): Ենթակայական դերբայն ունի հետևյալ ձևերը.

מַכִּיר - מַכִּירָה - מַכִּירִים - מַכִּירוֹת
մակիր - մակիրա - մակիրիմ - մակիրոթ

18.2. Անորոշ դերբայը կազմվում է -לְהַ֫כִּיר ־יִ־ սխեմայով՝ לְהַכִּיר *լհակիր* «ծանոթանալ, ճանաչել»: Անհրաժեշտ է տարբերակել -לְהַ֫ ־יִ־ սխեմայով կազմված անորոշ դերբայները -לְהָ֫ ־יִ־ սխեմայով կազմվածներից (17.10. - 17.11.):

ԿՈԿՈՐԴԱՅԻՆ ԱՐՄԱՏԱԿԱՆՆԵՐՈՎ ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՀՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑՅԱԼ ԺԱՄԱՆԱԿՈՒՄ

18.3. I կոկորդային արմատականը II դեմքի հոգնակի ձևերում շվայի փոխարեն ունի խատեֆ-պատախ՝ אֲכַלְתֶּם *ախալտեմ*, אֲמַרְתֶּן *ամառտեն*, חֲזַרְתֶּם *խազառտեմ*, עֲבַדְתֶּן *ավադտեն*, הֲלַכְתֶּם *հալախտեմ*:

18.4. II կոկորդային արմատականը III դեմքի հոգնակիում և III դեմքի իգական սեռի եզակիում ձայնավորված է խատեֆ-պատախով՝ הִיא שָׁאֲלָה *հի շաալա*, הֵם/הֵן שָׁאֲלוּ *հեմ/հեն շաալու*, הִיא פָּעֲלָה *հի քաասա*, הֵם/הֵן פָּעֲלוּ *հեմ/հեն քաասու*:

18.5. III կոկորդային (א ע) արմատականով բայերի մոտ III դեմքի հոգնակիում և իգականի եզակիում առկա է կոկորդային պայթյուն՝ הִיא קָרְאָה *հի կառ'ա*, הֵם/הֵן יָדְעוּ *հեմ/հեն յադ'ու*: Ուշադրություն դարձրեք, որ կոկորդային պայթյունի միջոցով III դեմքի արականը տարբերակվում է իգականից՝ הוּא קָרָא - הִיא קָרְאָה *հու կառա - հի կառ'ա*, - הוּא יָדַע - הִיא יָדְעָה *հու յադա - հի յադ'ա*:

Անցյալ ժամանակում խոնարհե՛ք հետևյալ բայերը. הָלַךְ, אָמַר, עָבַד, חָשַׁב, עָבַר, חָזַר, שָׁאַל, כָּעַס, כָּאַב, קָרָא, יָצָא, מָצָא:

הַמִּכְתָּם שֶׁל שׁוֹשַׁנָּה

אֶפְרַיִם וְחַנָּה חָזְרוּ[1] הַבַּיְתָה מִן הַמִּסְעָדָה וּמָצְאוּ[2] מִכְתָּב עַל הַדֶּלֶת. הֵם קָרְאוּ[2] בַּמִּכְתָּב:
"שָׁלוֹם, אֶפְרַיִם וְחַנָּה ! לֹא יָדַעְתִּי[1], שֶׁעֲבַרְתֶּם[3] לְבַיִת חָדָשׁ. אֶתְמוֹל הָלַכְתִּי[1] לְקוֹנְצֶ'רְט וְיָשַׁבְתִּי[1] עַל־יַד בְּנְיָמִין צוּר (אֲנִי מְזַמֵּן מַכִּירָה[4] אוֹתוֹ). הוּא אָמַר[1] לִי שֶׁאַתֶּם גָּרִים עַכְשָׁיו בְּעִיר אַחֶרֶת. לָמָּה מְבַרְתֶּם[5] אֶת דִּירַתְכֶם[6] וַעֲבַרְתֶּם[3,7] מִתֵּל־אָבִיב? זֶה הָיָה[8] רָחוֹב כָּל־כָּךְ יָפֶה ! הַרבֵּה אֲנָשִׁים שָׁאֲלוּ[9] אוֹתִי עַל מִשְׁפַּחְתְּכֶם[10], וַאֲנִי[7] לֹא יָדַעְתִּי[1] מָה לַעֲנוֹת. הַרבֵּה חֲבֵרִים שְׁלָכֶם אֲפִילוּ כָּעֲסוּ[9], כִּי הֵם לֹא שָׁמְעוּ[2] עַל הַחֲדָשָׁה הַזֹּאת. שָׁמַעְתִּי[1,11] שֶׁאֵין לָכֶם טֶלֶפוֹן, לָכֵן נָסַעְתִּי[1,11] הַבּוֹקֶר[12] לְעִירְכֶם, אֲבָל לֹא מָצָאתִי[1,13] אֶתְכֶם בַּבַּיִת ! קָרָאתִי[1] עִתּוֹנִים, כָּתַבְתִּי[1] מִכְתָּבִים, אָכַלְתִּי[1] אֹרוּחַת־צָהֳרַיִם, אֲבָל אַתֶּם עוֹד לֹא חֲזַרְתֶּם[3]. כַּמָּה חֲבָל ! עַכְשָׁיו הַשָּׁעָה חָמֵשׁ וַאֲנִי[7] צְרִיכָה לַחֲזוֹר לְתֵל־אָבִיב. שָׁלוֹם, שׁוֹשַׁנָּה".

דִּירָה בְּקוֹמָה שְׁלִישִׁית[14]

אִישׁ אֶחָד חָזַר[1] מְאוּחָר הַבַּיְתָה, נִכְנַס[15] לַחֲדַר הַשֵּׁינָה וּמָצָא[1,13] אִישׁ זָר בָּאָרוֹן.
- מִי זֶה? - שָׁאַל[1] הָאִישׁ אֶת אִשְׁתּוֹ[16] - מָה עוֹשֶׂה הָאִישׁ הַזֶּה בַּחֲדַר[17] הַשֵּׁינָה שֶׁלָּנוּ?
- זֶה הַשָּׁכֵן שֶׁלָּנוּ מֵהַקוֹמָה הַשְּׁלִישִׁית[14], אַתָּה לֹא מַכִּיר[4] אוֹתוֹ? הוּא רָצָה לְתַקֵּן מַשֶּׁהוּ וְנָפַל[1] לַקוֹמָה הַשְּׁנִיָּה, לָאָרוֹן שֶׁלָּנוּ.
- סְלִיחָה - אָמַר[1] הַבַּעַל - לֹא יָדַעְתִּי[1,11]. עַכְשָׁיו אֲנִי מֵבִין[18].
הֵם הָלְכוּ[1] לֶאֱכוֹל אֲרוּחַת־עֶרֶב. פִּתְאוֹם קָם[19] הָאִישׁ וְכָעַס[1] עַל אִשְׁתּוֹ.
- מָה קָרָה? - שָׁאֲלָה[9] אוֹתוֹ הָאִישָׁה.
- מָה קָרָה? ! אֵין קוֹמָה שְׁלִישִׁית בְּבֵיתֵנוּ[20] !

[1] 17.1. [2] 18.5. [3] 18.3. [4] 18.1. [5] 17.3.2. [6] 12.8. [7] 2.17. [8] 17.13. [9] 18.4. [10] 12.9. [11] 8.3. [12] 17.14. [13] 7.1. [14] 1.8. [15] 15.3. [16] 12.9. [17] 11.4. [18] 17.10. [19] 17.7. [20] 4.1.

✍ *Թարգմանե՛ք երբայերեն.*

1. Երեկ ես նամակ գրեցի իմ ընկերներին, որոնք տեղափոխվել են ուրիշ քաղաք: 2. Ամեն առավոտ, աշխատանքից առաջ, Եփրեմը ռադիոյով նորություններ է լսում: 3. Դինան գնաց խանութ, որովհետև ուզում է կաթ գնել: 4. Ուսանողները սովորեցին նոր բառերը և գրեցին բոլոր վարժությունները: 5. Դու կարդացի՞ր այն թերթը, ես էլ եմ ուզում կարդալ այն: 6. Մեր համալսարանում դասավանդում են բազմաթիվ օտար լեզուներ: 7. Ի՞նչ եք կերել այս առավոտ: 8. Դավիթը ուզում էր նորոգել դուռը, բայց ժամանակ չգտավ: 9. Մենք մեկնեցինք Երուսաղեմ, որովհետև ուզում ենք տեսնել Դանիելի նոր բնակարանը: 10. Դու աշխատանք գտար, որովհետև օտար լեզուներ գիտես: 11. Այնտեղ մարդկանց բազմություն կար, դրա համար քեզ չգտա: 12. Հիմա կարելի է լավ գործ գտնել, որովհետև անցած ամավանից բոլոր գները իջել են:

מִלִּים חֲדָשׁוֹת

זָר ת *զառ* օտար, անծանոթ

כָּל־כָּךְ תה״פ *քօլ-քախ* այդքան, այդչափ

לָכֵן תה״פ *լախէն* դրա համար, ուստի

מִכְתָּב ז *միխտավ* նամակ

מָצָא פ (לִמְצוֹא, מוֹצֵא) *մացա (լիմցօ, մօցէ)* գտնել

נָסַע פ (לִנסוֹעַ, נוֹסֵעַ) *նասա (լինսօ՛ա, նօսէ՛ա)* մեկնել, ուղղվել

נָפַל פ (לִפּוֹל, נוֹפֵל) *նափալ (լիպօլ, նօփէլ)* ընկնել

פִּתְאוֹם תה״פ *պիտ՛օմ* հանկարծ

קוֹמָה נ *կօմա* հարկ

קָרָה פ (לִקרוֹת, קוֹרֶה) *կառա (լիկռօթ, կօռէ)* պատահել

שָׂכָר ז *հախէն* հարևան, դրացի

שְׁלִישִׁי ת *հլիշի* երրորդ

שְׁמוֹנֶה־עֶשְׂרֵה ש״מ נ *շմօնէ-էռէ* տասնութ

שָׁמַע פ (לִשְׁמוֹעַ, שׁוֹמֵעַ) *շամա (լիշմօ՛ա, շօմէ՛ա)* լսել, ունկնդրել

תִּיקֵן פ (לְתַקֵּן, מְתַקֵּן) *տիկէն (լէտակէն, մէտակէն)* նորոգել

בְּטוּיִים

מִזְמָן *միզման* վաղուց

19 תִּשְׁעָה־עָשָׂר

ԹԱՑԱԿԱՆ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

19.1. נָתַן *նատան* «տալ» բայն անցյալ ժամանակի I և II դեմքերում խոնարհվում է առանց երրորդ ն արմատականի (...תָּ(נ)תַּ, נָתַ(נ)תִּי և այլն).

אֲנִי	נָתַתִּי	*նատա՛տի*	אֲנַחְנוּ	נָתַנּוּ	*նատա՛նու*
אַתָּה	נָתַתָּ	*նատա՛տա*	אַתֶּם	נְתַתֶּם	*նէտատէմ*
אַתְּ	נָתַתְּ	*նատատ*	אַתֶּן	נְתַתֶּן	*նէտատէն*
הוּא	נָתַן	*նատան*	הֵם	נָתְנוּ	*նատնու*
הִיא	נָתְנָה	*նատնա*	הֵן	נָתְנוּ	*նատնու*

19.2. ՔԱՆԱԿԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՑԱՆԿ (11-19)

	հզակաև	*արական*	
11	אַחַת־עֶשְׂרֵה	אַחַד־עָשָׂר	*ախատ-ասատ*
12	שְׁתֵּים־עֶשְׂרֵה	שְׁנֵים־עָשָׂר	*շնէմ-ասատ*
13	שְׁלוֹשׁ־עֶשְׂרֵה	שְׁלוֹשָׁה־עָשָׂר	*շլօշա-ասատ*
14	אַרְבַּע־עֶשְׂרֵה	אַרְבָּעָה־עָשָׂר	*առբաա-ասատ*
15	חֲמֵשׁ־עֶשְׂרֵה	חֲמִשָּׁה־עָשָׂר	*խամիշա-ասատ*
16	שֵׁשׁ־עֶשְׂרֵה	שִׁשָּׁה־עָשָׂר	*շիշա-ասատ*
17	שְׁבַע־עֶשְׂרֵה	שִׁבְעָה־עָשָׂר	*շիվ 'ա ասատ*
18	שְׁמוֹנָה־עֶשְׂרֵה	שְׁמוֹנָה־עָשָׂר	*շմօնա-ասատ*
19	תִּשַׁע־עֶשְׂרֵה	תִּשְׁעָה־עָשָׂר	*տիշ'ա-ասատ*

✍ ***Թարգմանե՛ք երբայերեն.*** 11 զբոսաշրջիկ, 11 լեզու, 12 գույն, 12 աղջիկ, 13 նամակ, 13 տիկնիկ, 14 որդի, 14 դուստր, 15 հարց, 15 բժիշկ, 16 ձայն, 16 ուսուցչուհի, 17 խոհանոց, 17 կին, 18 դուռ, 18 սառնարան, 19 աստիճան, 19 ծառ, 12 մատուցող, 16 ռեստորան, 19 տնօրեն, 11 շաբաթ, 14 նարինջ, 18 ինժեներ, 13 բաժակ, 15 խանութ, 17 տոկոս, 12 ընկերուհի, 11 սենյակ, 17 ամիս, 17 տարի, 19 մատիտ, 12 մարդ, 16 հիվանդ, 15 հայ, 15 հրեուհի, 13 աթոռ, 18 գիրք, 19 տետր:

19.3. Եբրայերենում «գալիք, հաջորդ» բառն արտահայտվում է «գալ» բայի համապատասխան թվի և սեռի ենթակայական դերբայով՝ הַשָּׁנָה הַבָּאָה *հաշանա հաբաա* «գալիք տարին», הַחֳדָשִׁים הַבָּאִים *հախոդաշիմ հաբաիմ* «գալիք ամիսները», בַּשָּׁבוּעַ הַבָּא *բաշավու՛ա հաբա* «գալիք շաբաթ»:

✍ *Կարդացե՛ք, թարգմանե՛ք և արտագրե՛ք հետևյալ տեքստը.*

אַהֲרוֹן, פְּרוֹפֶסוֹר עֶרֶן וְהָאָחוֹת רָחֵל

אַהֲרוֹן הָלַךְ[1,2] כָּל הַבּוֹקֶר מֵחוֹלֶה לְחוֹלֶה וְשָׁאַל כָּל אֶחָד מָה שְׁלוֹמוֹ[3]. הַחוֹדֶשׁ יֵשׁ לוֹ הַרְבֵּה חוֹלִים, וְהוּא עוֹבֵד עַד מְאוּחָר בַּלַּיְלָה. אַחֲרֵי הַצָּהֳרַיִם הוּא נִכְנַס[4] לְמִשְׂרָדוֹ וְיָשַׁב[5] עַל־יַד הַשּׁוּלְחָן. הוּא חָשַׁב,[1,2] עַל לֵאָה וְתַיְלָדִים, עַל יוֹם־הַהוּלֶדֶת[6] שֶׁל יְהוּדָה וְעַל דּוֹדוֹ מָרְדְּכַי. פִּתְאֹם זֶה נִכְנַס[4] פְּרוֹפֶסוֹר אֲבִיגְדוֹר עֶרֶן. אַהֲרוֹן קָם[5] מִן הַכִּסֵּא.

- קָרָאתִי[1] אֶתְמוֹל מַאֲמָר מְעַנְיֵן מְאוֹד - אָמַר הַפְּרוֹפֶסוֹר - אֲבָל אֲנִי לֹא זוֹכֵר אֵיפֹה שַׂמְתִּי[6] אֶת כַּתַּב־הָעֵת[5].
- פְּרוֹפֶסוֹר, אַתָּה נָתַתָּ[7] אֶתְמוֹל אֶת כַּתַּב־הָעֵת לְרָחֵל וְהִיא שָׂמָה[8,6] אוֹתוֹ עַל שׁוּלְחָנִי. הִנֵּה הוּא.
- תּוֹדָה רַבָּה, אַהֲרוֹן - אָמַר[1] הַפְּרוֹפֶסוֹר, לָקַח[1] אֶת כַּתַּב־הָעֵת וְיָצָא[1] מִן הַחֶדֶר.

בְּרֶגַע זֶה נִכְנְסָה[9] הָאָחוֹת רָחֵל. הִיא אָחוֹת טוֹבָה, וְגַם אִשָּׁה צְעִירָה וְיָפָה. רָחֵל עוֹבֶדֶת בְּבֵית־הַחוֹלִים "צִיּוֹן", אֲבָל הִיא רוֹצָה לַעֲבוֹד שָׁנָה אוֹ שְׁנַתַּיִם[10] בְּקִיבּוּץ.

- כָּתַבְתָּ[1] לְדוֹדֵךְ, אַהֲרוֹן? - שְׁאָלָה[11] רָחֵל.
- כֵּן, בַּשָּׁבוּעַ שֶׁעָבַר[12] כָּתַבְתִּי[1] לוֹ שֶׁאַתְּ מְחַפֶּשֶׂת[13] עֲבוֹדָה בְּקִיבּוּץ. אוּלַי הֵם צְרִיכִים אָחוֹת בְּקִיבּוּצָם.
- תּוֹדָה, אַהֲרוֹן. מָתַי אַתָּה רוֹצֶה לִנְסוֹעַ לְדוֹדֵךְ?
- אֲנִי חוֹשֵׁב שֶׁבַּשָּׁנָה הַבָּאָה[14].
- אוּלַי אֲנוּ יְכוֹלִים[15] לִנְסוֹעַ יַחַד, מָה אַתָּה חוֹשֵׁב?
- אוּלַי, מִי יוֹדֵעַ... - אָמַר[1] לָהּ אַהֲרוֹן.

[1] 17.1. [2] 17.5. [3] 2.16. [4] 15.3. [5] 12.6. [6] 17.7. [7] 19.1. [8] 17.8. [9] 15.2. [10] 14.8. [11] 18.4. [12] 17.15. [13] 10.2. [14] 19.3. [15] 13.3.

✍ *Թարգմանե՛ք երբայերեն.*

1. Երբ պրոֆեսորը եկավ, Ահարոնը տվեց նրան ամսագիրը: 2. Դիճաև աշխատանքի եկավ ժամը տասին: 3. Ես չեմ հիշում այն ծեր մարդու անունը: 4. Ես բոլոր հետաքրքիր հոդվածները տվեցի քարտուղարուհուս: 5. Ռաքելը սուրճը դրեց Աբրահամի սեղանի վրա: 6. Բժիշկը մտավ հիվանդի սենյակը և հարցրեց՝ ինչպես է նա: 7. Ես մեկնեցի Թել-Ավիվ՝ տեսնելու իմ ծնողներին: 8. Հակոբն աշխատում է այն հիվանդանոցում արդեն վեց տարի: 9. Մենք ապրում էինք միասին մի սենյակում երկու տարի: 10. Այս նամակը եկել է երեկ, սակայն ես չիմացա՝ ով է գրել այն: 11. Ե՞րբ եք ուզում վերադառնալ Երուսաղեմ: 12. Ասում են, որ նոր ամսագիրը շատ հետաքրքիր է, սակայն ես չեմ կարող գտնել այն: 13. Եթե ուզում ես վերցնել այս գիրքը, պետք է ասես Ռաքելին: 14. Մենք վեր կացանք և միասին դուրս եկանք սենյակից: 15. Ինչո՞ւ եք ամբողջ կահույքը դրել այսքան փոքր սենյակի մեջ: 16. Ինձ այս խանութում ոչինչ հարկավոր չէ: 17. Դու պանիրն ինձ տվեցիր, և ես այն դրեցի սառնարանի մեջ: 18. Բոլոր պատերը սպիտակ են, միայն այս պատն է կանաչ: 19. Ռաքելը իր պատշգամբում գեղեցիկ ծաղիկներ է դրել: 20. Արդեն վաղուց մեր քաղաքի կենտրոնում բարձր ծառեր չկան:

מִלִּים חֲדָשׁוֹת

הוֹלֶדֶת נ *hoylédet* ծննուն
זָכַר פ (לִזכּוֹר, זוֹכֵר) *zakhar (lizkor, zokhér)* հիշել
יַחַד תה״פ *yakhad* միասին
כַּתַב־עֵת ז *ktav-ét* ամսագիր
לָקַח פ (לָקַחַת, לוֹקֵחַ) *lakakh (lakáxat, lokéakh)* վերցնել
מַאֲמָר ז *maamar* հոդված
מְעַנְיֵן ח (נ מְעַנְיֶנֶת) *meanyén (meanyénet)* հետաքրքիր
מָתַי ס״ש *matay* ե՞րբ
נָתַן פ (לָתֵת, נוֹתֵן) *natan (latét, notén)* տալ
רָחֵל נ *rakhél* Ռաքել
תַּשַׁע־עֶשְׂרֵה ש״מ נ *tsha-esré* տասնինը

בְּטוּיִים

יוֹם־הוֹלֶדֶת *yom-hoylédet* ծննդյան օր
כָּל אֶחָד *kol exad* ամեն մեկը

20 עֶשְׂרִים

לָעַב֫וֹד קַל֫וֹת֫וֹת בָּצֵר֫וֹן אֲנַצְנַל֫ ժամանակում

20.1. לָעַב֫וֹד կառույցի բայերն անցյալ ժամանակում ունեն խոնարհման հետևյալ պատկերը.

אֲנִי	נְ־ֵ־תִּי	אֲנַחְנוּ	נְ־ֵ־נוּ
אַתָּה	נְ־ֵ־תָּ	אַתֶּם	נְ־ֵ־תֶּם
אַת	נְ־ֵ־תְּ	אַתֶּן	נְ־ֵ־תֶּן
הוּא	נְ־ֵ־	הֵם	נְ־ְ־וּ
הִיא	נְ־ְ־ָה	הֵן	נְ־ְ־וּ

נָסַע *նիխնաս* «մտնել» բայի խոնարհումն անցյալ ժամանակում ունի հետևյալ պատկերը («ես մտա, մտնում էի, դու մտար, մտնում էիր...»).

אֲנִי	נָסַ֫עְתִּי *նիխնա՛տի*	אֲנַחְנוּ	נָסַ֫עְנוּ *նիխնա՛նու*
אַתָּה	נָסַ֫עְתָּ *նիխնա՛տա*	אַתֶּם	נְסַעְתֶּם *նիխնաստէմ*
אַת	נָסַ֫עַתְּ *նիխնաստ*	אַתֶּן	נְסַעְתֶּן *նիխնաստէն*
הוּא	נָסַע *նիխնաս*	הֵם	נָסְעוּ *նիխնէու*
הִיא	נָסְעָה *նիխնէա*	הֵן	נָסְעוּ *նիխնէու*

բայի օրինակով խոնարհե՛ք זָכַר *նիզկար «(վեր)հիշել» և* כָּתַב *նիխտավ «գրվել, գրանցվել» բայերը:*

ԱՅԼ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

20.2. יֵשׁ לִי - אֵין לִי կապակցությունների անցյալ ժամանակը կազմվում է יֵשׁ մակբայի הָיָה, իսկ אֵין մակաբայի՝ הָיָה לֹא բայերով փոխարինումով (խոսքն առայժմ գնում է եզակի արական գոյականների մասին).

יֵשׁ לִי	-	הָיָה לִי	יֵשׁ לָנוּ	-	הָיָה לָנוּ
יֵשׁ לְךָ/לָךְ	-	הָיָה לְךָ/לָךְ	יֵשׁ לָכֶם/לָכֶן	-	הָיָה לָכֶם/לָכֶן
יֵשׁ לוֹ/לָהּ	-	הָיָה לוֹ/לָהּ	יֵשׁ לָהֶם/לָהֶן	-	הָיָה לָהֶם/לָהֶן
אֵין לִי	-	לֹא הָיָה לִי	אֵין לָנוּ	-	לֹא הָיָה לָנוּ
אֵין לְךָ/לָךְ	-	לֹא הָיָה לְךָ/לָךְ	אֵין לָכֶם/לָכֶן	-	לֹא הָיָה לָכֶם/לָכֶן
אֵין לוֹ/לָהּ	-	לֹא הָיָה לוֹ/לָהּ	אֵין לָהֶם/לָהֶן	-	לֹא הָיָה לָהֶם/לָהֶן

לֹא הָיָה לוֹ זְמַן *hայա չի սէֆէտ մէանյէն* «ես ունեի հետաքրքիր գիրք», הָיָה לִי סֵפֶר מְעַנְיֵן *hայա չի սէֆէտ մէանյէն* «նա մտածելու ժամանակ չուներ», הָיָה לָהֶם בַּיִת בִּירוּשָׁלַיִם *hայա լահէմ բայթ բիռուշալա՛յիմ* «նրանք Երուսաղեմում տուն ունեին», לֹא הָיָה לָנוּ מָקוֹם *չո hայա լա՛նու մակօմ* «մենք նստելու տեղ չունեինք»:

20.2.1. Նույն սկզբունքով՝ לְדָוִד הָיָה חֶבֶר טוֹב *լէդավիդ hայա խավէր տօվ* «Դավիթն ուներ լավ ընկեր», לַאֲבִיגְדוֹר לֹא הָיָה כִּסַּה־עֵת *լաավիգդոր չո hայա քսակ-էտ* «Ավիգդորն ամսագիր չուներ»:

20.3. «(Ես) ինքս, (դու) ինքդ...» ձևերը կազմվում են עֶצֶם *է՛ցէմ* «էություն» բառին համապատասխան դերանվանական վերջածանցի կցումով.

(אֲנִי) עַצְמִי	*ացմի*	(אֲנַחְנוּ) עַצְמֵנוּ	*ացմէնու*
(אַתָּה) עַצְמְךָ	*ացմէխա*	(אַתֶּם) עַצְמְכֶם	*ացմէխէմ*
(אַת) עַצְמֵךְ	*ացմէխ*	(אַתֶּן) עַצְמְכֶן	*ացմէխէն*
(הוּא) עַצְמוֹ	*ացմօ*	(הֵם) עַצְמָם	*ացմամ*
(הִיא) עַצְמָהּ	*ացմահ*	(הֵן) עַצְמָן	*ացման*

20.4. Ձանազան իմաստային երանգավորումներ արտահայտելու համար, այս ձևերին սովորաբար կցվում են նախդիրներ՝ כָּתַבְתִּי אֶת הַמִּכְתָּב בְּעַצְמִי *կատա՛վտի էտ համիխտավ բէացմի* «նամակն ինքս գրեցի», לָקְחוּ אֶת כִּסַּה־הָעֵת לְעַצְמָם *լակխու էտ քտավ-հաէտ լէացմամ* «ամսագիրն իրենց վերցրեցին», և այլն:

ԱՅԼ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

20.5. Երբ כֹּל *քօլ* «ամեն, բոլոր» բառին չի հետևում գոյական և նրան կցվում է որոշիչ հոդ, ինչը տալիս է նրան հայրենի «ամենը, ամեն ինչը, բոլորը» բառերի կմաստը, ապա վավ տառը փոխարինվում է խոլամ ձայնանիշով՝ כֹּל:

✍ *Կարդացե՛ք, թարգմանե՛ք և արտագրե՛ք հետևյալ տեքստը.*

הָאֵם וְהַיְלָדִים

הַיְלָדִים אָכְלוּ אֲרוּחַת־בֹּקֶר, לָקְחוּ אֶת הַסְּפָרִים שֶׁלָּהֶם וְהָלְכוּ לְבֵית־הַסֵּפֶר. גַּם אַהֲרוֹן הָלַךְ לַעֲבוֹדָה. לְאָה

יָשְׁבָה[1] בַּמִּטְבָּח וְנִזְכְּרָה[2] בַּבַּיִת[3] הַיָּשָׁן שֶׁלָּהֶם עַל־יַד יְרוּשָׁלַיִם. הָיָה לָהֶם[4] שָׁם בַּיִת לָבָן עִם גַּג אָדוֹם. עַל־יַד הַבַּיִת הָיָה גַּן עִם עֵצִים גְּבוֹהִים וּפְרָחִים יָפִים. פֹּה אֵין לָהֶם בַּיִת, יֵשׁ לָהֶם דִּירָה גְּדוֹלָה עִם שְׁלוֹשָׁה חֲדָרִים. הֵם גָּרִים בִּבְנְיַן גָּדוֹל בָּקוֹמָה הָרְבִיעִית[5]. לְלֵאָה וְאַהֲרוֹן טוֹב פֹּה, אֲבָל הֵם רוֹצִים לַחֲזוֹר לִירוּשָׁלַיִם[6]. לֵאָה יוֹדַעַת שֶׁאַהֲרוֹן יָכוֹל לִלְמוֹד פֹּה הַרְבֵּה. לֵאָה חוֹשֶׁבֶת עַל יוֹם־הַהוּלֶדֶת[7] שֶׁל יְהוּדָה. הֵם רוֹצִים לְהַזְמִין הַרְבֵּה אֲנָשִׁים וְלֵאָה בְּעַצְמָהּ[8] צְרִיכָה לְהָכִין[9] אֶת הַכֹּל[10]. מָה זֶה? מְצַלְצְלִים[11,12] בַּדֶּלֶת! הַשָּׁעָה כְּבָר שָׁלוֹשׁ! הַיְלָדִים בָּאוּ[13] מִבֵּית הַסֵּפֶר וְנִכְנְסוּ[2] לַמִּטְבָּח. אֵיךְ עָבַר[1] הַזְּמַן?

- מָה לָמַדְתֶּם[14] הַיּוֹם בְּבֵית הַסֵּפֶר? - שָׁאֲלָה[15] לֵאָה אֶת הַיְלָדִים.
- לָמַדנוּ[1] שִׁיר חָדָשׁ בְּאַנגלִית.
- אַתֶּם צְרִיכִים לְהָכִין[9] אֶת הַשִּׁעוּרִים שֶׁלָּכֶם. מָתַי אַתֶּם רוֹצִים לִלְמוֹד?
- אַחֲרֵי הָאֲרוּחָה, אִמָּא - אוֹמֵר יְהוּדָה - עַכְשָׁיו אֲנִי רוֹצֶה לֶאֱכוֹל. אֲנִי רָעֵב מְאוֹד.

לֵאָה שָׂמָה[16] עַל הַשּׁוּלְחָן אַרְבַּע צַלָּחוֹת, אַרְבַּע כַּפּוֹת, אַרְבָּעָה סַכִּינִים וְאַרְבָּעָה מַזְלְגוֹת.

- לָמָּה אֲנִי צְרִיכָה כַּף? - שׁוֹאֶלֶת אֶסתֵר וְעוֹנָה בְּעַצְמָהּ[8] - לֶאֱכוֹל אֶת הַמָּרָק. נָכוֹן, אִמָּא?
- נָכוֹן - אוֹמֶרֶת לֵאָה - לַעֲזוֹר לָךְ?
- לֹא, אִמָּא, אֲנִי כְּבָר גְּדוֹלָה. אֲנִי יְכוֹלָה לֶאֱכוֹל בְּעַצְמִי[8].
- אַתֶּם יוֹדְעִים מָה קָרָה הַיּוֹם בְּבֵית הַסֵּפֶר? - שָׁאַל יְהוּדָה - אָמַרנוּ[1] לְיוֹסֵף לָבוֹא אַחֲרֵי הַצָּהֳרַיִם לְשַׂחֵק. הוּא אָמַר[1] שֶׁהוּא לֹא יָכוֹל לָבוֹא, כִּי הוּא צָרִיךְ לַעֲזוֹר לְאַבָּא שֶׁלּוֹ. "בְּמָה אַתָּה עוֹזֵר לְאַבָּא שֶׁלְּךָ?" שָׁאַלנוּ[1] אוֹתוֹ. "אֲנִי עוֹזֵר לוֹ לְהָכִין אֶת הַשִּׁעוּרִים שֶׁלִּי" אָמַר[1] יוֹסֵף.

[1] 17.1. [2] 20.1. [3] «վերհիշեց տունը» [4] 20.2. [5] 1.8. [6] 10.9. [7] 12.6. [8] 20.3.-4.
[9] 17.11. [10] 20.5. [11] 13.1. [12] 15.7. [13] 17.9. [14] 17.4. [15] 18.4. [16] 17.7.-8.

Թարգմանե՛ք երբայերեն.

1. Երեխաները շատ քաղցած վերադարձան դպրոցից: 2. Այս առավոտ հիշեցի, որ երկու տարի քեռուս չեմ հանդիպել: 3. Մեր հարևանը բարձրացավ տանիք, որովհետև ուզում է ինչ-որ բան նորոգել: 4. Նրանց բնակարանում կա երեք մեծ սենյակ և պատշգամբ: 5. Զբոսաշրջիկը խոսում է օտար լեզվով, և ես չեմ հասկանում նրան: 6. Ես չեմ սիրում նախաճաշել խոհանոցում: 7. Դինան գրեց իր բոլոր վարժությունները և գնաց իր ընկերուհու մոտ: 8. Դավիթը վեց տարեկան է, սակայն նա ինքն է գրել այս նամակը: 9. Ես եկել եմ օգնելու քեզ: 10. Երկու տարի առաջ ես Դեբորային տվել եմ մի շատ հետաքրքիր հոդված, և նա դեռ կարդում է այն: 11. Հայաստանում ես լավ ընկեր ունեի, մենք միասին սովորում էինք համալսարանում: 12. Ես հանկարծ հիշեցի, որ սեղանի վրա բաժակներ չեմ դրել: 13. Ես վաղուց եմ ճանաչում նրան, սակայն չեմ կարող ասել, որ նա իմ ընկերն է: 14. Դու հարցնում ես՝ ինչով կարող ես մեզ օգնել: 15. Այս աղմուկը գալիս է չորրորդ հարկից, որովհետև մեր հարևանն իր բնակարանում երաժշտություն է դասավանդում: 16. Ես մարդկանց ձայներ եմ լսում տանիքի վրա: 17. Յուրաքանչյուր ափսեի կողքին պետք է դնել դանակ, պատառաքաղ և գդալ: 18. Մենք ուզում ենք ամեն ինչ պատրաստել ինքներս: 19. Ես այս բանաստեղծությունը կարդում եմ երրորդ անգամ, սակայն չեմ կարողանում հասկանալ այն: 20. Բոլոր մայրերը գիշեր ու ցերեկ մտածում են իրենց երեխաների մասին:

מִלִּים חֲדָשׁוֹת

אֵם נ (ר׳ אִמָּהוֹת) *մայր էմ (իմաիօթ)*
אֲרוּחָה נ *առուխա* հացկերույթ, ուտելը
גַּג ז *գագ* տանիք, կտուր
כַּף נ (ר׳ כַּפּוֹת) *կաֆ (կապօթ)* գդալ
מַזְלֵג ז (ר׳ מַזְלְגוֹת) *մազլէգ (մազլէգօթ)* պատառաքաղ
נִזְכַּר בְּ־ פ (לְהִזָּכֵר, נִזְכָּר) *նիզկառ (լէհիզախէտ, նիզկառ)* (վեր)հիշել, մտաբերել

עָזַר פ (לַעֲזוֹר, עוֹזֵר) *azar (laazor, ozer)* օգնել
צַלַחַת נ (ר צְלָחוֹת) *tsalakhat (tsalakhot)* ափսե
רִבְיִי ת *revi'i* չորրորդ
שִׁיר ז *shir* երգ, բանաստեղծություն

בְּטוּיִים

מָה? *ma* ինչո՞վ
לְהָכִין אֶת הַכֹּל *lehakhin et hakol* պատրաստել ամեն ինչ

21 עֶשְׂרִים וְאַחַת

Սույն դասից ծայնավորման մեջ չեն նշվում י֗ կապակցության խիրիկ (י֗- ← י-) և ה֗ վերջավորության կամաց ծայնանիշը (ה֗- ← ה-):

ה״ל ՔԱՅԵՐՆ ԱՆՑՅԱԼ ԺԱՄԱՆԱԿՈՒՄ

21.1. ה״ל խմբի բայերն անցյալ ժամանակում խոնարհվում են հետևյալ կերպ (קָנָה «գնել»).

אֲנִי	קָנִיתִי	*կանի՛տի*	אֲנַחְנוּ	קָנִינוּ	*կանի՛նու*
אַתָּה	קָנִיתָ	*կանի՛տա*	אַתֶּם	קְנִיתֶם	*կնիտե՛մ*
אַת	קָנִית	*կանիտ*	אַתֶּן	קְנִיתֶן	*կնիտե՛ն*
הוּא	קָנָה	*կանա*	הֵם	קָנוּ	*կանու*
הִיא	קָנְתָה	*կանտա*	הֵן	קָנוּ	*կանու*

Այսինքն՝ ա) I և II դեմքերում ה արմատականը փոխարինվում է י տառով (קָנִיתִי), բ) III դեմքի հոգնակիում այն սղվում է (קָנוּ), գ) III դեմքի եզակի իգականը կազմվում է ת տառով, որը դրվում է II և III արմատականների միջև (הִיא קָנְתָה): 21.1.1. II կոկորդային արմատականը վերջին դեպքում ծայնավորվում է խատեֆ-պատախով՝

אֲנִי	רָאִיתִי	*ռաի՛տի*	אֲנַחְנוּ	רָאִינוּ	*ռաի՛նու*
אַתָּה	רָאִיתָ	*ռաի՛տա*	אַתֶּם	רְאִיתֶם	*ռէիտե՛մ*
אַת	רָאִית	*ռաիտ*	אַתֶּן	רְאִיתֶן	*ռէիտե՛ն*
הוּא	רָאָה	*ռաա*	הֵם	רָאוּ	*ռաու*
הִיא	רָאֲתָה	*ռաատա*	הֵן	רָאוּ	*ռաու*

21.2. הָיָה «լինել» բայն անցյալ ժամանակում ունի խոնարհման հետևյալ պատկերը.

אֲנִי	הָיִיתִי	*հայի՛տի*	אֲנַחְנוּ	הָיִינוּ	*հայի՛նու*
אַתָּה	הָיִיתָ	*հայի՛տա*	אַתֶּם	הֱיִיתֶם	*հէյիտե՛մ*
אַת	הָיִית	*հայիտ*	אַתֶּן	הֱיִיתֶן	*հէյիտե՛ն*
הוּא	הָיָה	*հայա*	הֵם	הָיוּ	*հայու*
הִיא	הָיְתָה	*հայտա*	הֵן	הָיוּ	*հայու*

✍ ***Անցյալ ժամանակում խոնարհե՛ք*** צָלָה, צָנָה, צָשָׂה, רָצָה ***բայերը: Ուշադրությու՛ն դարձրե՛ք ע տառի ծայնավորման առանձնահատկություններին (18.3):***

21.3. Գույն նշող ածականները հիմնականում կազմվում են (-ִי-ָ) לוֹעֲפ բանաձևով՝ רוֹחְש «սև», ֹדאָ «կարմիր», ֹחוּכָ «կապույտ», קוֹרָ «կանաչ», בוֹהָצ «դեղին», ֹכוּכָ «երկնագույն», רוֹרָ «վարդագույն»: 21.3.1. Իգական սեռում և հոգնակի թվում տեղի է ունենում ו ← ֹ հնչյունափոխություն՝ ֹאדוֹמה, כחוֹלה, ירוֹקים, צהוֹבוֹת, תכוֹלה, וְרוֹדים: Բացառություն է կազմում רוֹחְש ածականը, որը բոլոր ձևերում պահպանում է «o» հնչյունը՝ - רוֹחְש תוֹרוֹחְש - ים֫רוֹחְש - הרוֹחְש: לוֹעֲפ բանաձևից դուրս է մնում ָלָכָּס «սպիտակ» ածականը և գույն նշող ևս մի քանի ածականներ: 21.3.2. לוֹעֲפ խմբի մեջ մտնում են նաև գույն չնշող բազմաթիվ այլ ածականներ:

ԹՎԱԿԱՆՆԵՐ

21.4. 1-ից 9-ը քանակական թվականները տասնավորներ ու հարյուրավորներ նշող թվականներին միանում են ְ շաղկապի միջոցով, ընդ որում տասնավորներն ու հարյուրավորները նույնն են երկու սեռերի համար.

	իգական	*արական*
21	עֶשְׂרִים וְאַחַת	עֶשְׂרִים וְאֶחָד
22	עֶשְׂרִים וּשְׁתַּיִם	עֶשְׂרִים וּשְׁנַיִם
23	עֶשְׂרִים וְשָׁלוֹשׁ	עֶשְׂרִים וּשְׁלוֹשָׁה
24	עֶשְׂרִים וְאַרְבַּע	עֶשְׂרִים וְאַרְבָּעָה
25	עֶשְׂרִים וְחָמֵשׁ	עֶשְׂרִים וַחֲמִישָׁה
26	עֶשְׂרִים וְשֵׁשׁ	עֶשְׂרִים וְשִׁישָׁה
27	עֶשְׂרִים וְשֶׁבַע	עֶשְׂרִים וְשִׁבְעָה
28	עֶשְׂרִים וּשְׁמוֹנָה	עֶשְׂרִים וּשְׁמוֹנָה
29	עֶשְׂרִים וְתֵשַׁע	עֶשְׂרִים וְתִשְׁעָה

Ուշադրություն դարձրեք ְ շաղկապի հնչյունափոխությանը (ָ ← ְ):

21.5. Տասնյակների հետ תַּיִם֫/שְׁנַיִם թվականը պահպանում է իր ամբողջական ձևը՝ עֶשְׂרִים וּשְׁנַיִם תַּפּוּחִים «22 խնձոր», תוֹנְבָגְעַ עֶשְׂרִים וּשְׁתַּיִם «22 լոլիկ» (համեմատեք՝ ,תַּפּוּחִים שְׁנֵי תוֹנְבָגְעַ שְׁתֵּי):

ԱՅԼ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

21.6. רֶשֶׁא֫כַּ «երբ» հարաբերական շաղկապն ունի կրճատ ձև՝ ־שְׁכְּ *kəšˊ-* (արագ խոսքում՝ *kšˊ*), որը կցվում է հաջորդող բառին՝ כְּשֶׁחָזַרְתִּי הַבַּיְתָה = כְּאֲשֶׁר חָזַרְתִּי הַבַּיְתָה *kəšˊəχazarˊti habajˊta* «երբ տուն վերադարձա»:

21.7. בְּ կցական նախդիրի օգնությամբ որոշ ածականներից կազմվում է մակբայ՝ זוֹל «էժան» (ածական) - בְּזוֹל «էժան» (մակբայ)՝ קָנִיתִי אֶת הַפֵּרוֹת בְּזוֹל «մրգերը էժան գնեցի»:

גְּבֶרֶת עִם סָלִים

לָאה: אֵין לִי כּוֹחַ, אֲנִי כָּל־כָּךְ עֲיֵפָה!
יְהוּדָה: אֲנִי יָכוֹל לַעֲזוֹר לָךְ.
- יֵשׁ שָׁם סָלִים, עַל־יַד הַדֶּלֶת. צָרִיךְ לָשִׂים[1] אוֹתָם בַּמִּטְבָּח.
- אֵיפֹה הָיִית[2]?
- הָיִיתִי[2] בַּשּׁוּק.
- וּמָה קָנִית[3]?
- קָנִיתִי[3] הַרְבֵּה דְּבָרִים. רָאִיתִי[4] בַּשּׁוּק יְרָקוֹת[5,6] וְהַדָּרִים[7]: עֲגָבְנִיּוֹת אֲדוּמוֹת[8], מְלָפְפוֹנִים יְרוֹקִים[8] וּפִלְפֵּלִים[9] חֲדָשִׁים - לֹא יְרוֹקִים[8] וְלֹא אֲדוּמִים[8], אֶלָּא צְהוּבִים[8]. קָנִיתִי[3] דָּגִים טָרִיִּים וּבָשָׂר[9], וְקָנִיתִי[3] פֵּרוֹת[5], וַאֲפִילּוּ בְּגָדִים לָךְ וְלִדְבוֹרָה[10].
- אֲנִי חוֹשֵׁב שֶׁבַּשּׁוּק הָיוּ[2] הַרְבֵּה אֲנָשִׁים.
- כֵּן, הָיָה צָפוּף מְאוֹד, אֲבָל גַּם שָׂמֵחַ וּמְעַנְיֵן. הָאִישׁ שֶׁמּוֹכֵר עֲנָבִים[6] עָלָה[3] עַל כִּסֵּא וְשָׁר[11] לִי שִׁיר.
- הוּא שָׁר[11] לָךְ שִׁיר? מַה פִּתְאוֹם?
- אֲנִי לֹא יוֹדַעַת. זֶה הָיָה[2,12] שִׁיר מַצְחִיק מְאוֹד.
- וּמָה עָשִׂית[3]?
- צָחַקְתִּי[13]. אַחַר־כָּךְ קָנִיתִי[3] עֲנָבִים, תַּפּוּחִים, אֲפַרְסְקִים, מִשְׁמֶשִׁים וְשִׁשָּׁה סָלִים.
- רֶגַע אֶחָד! מַה פִּתְאוֹם קָנִית[3] סָלִים?
- נָסַעְתִּי[13] לַשּׁוּק יָשָׁר מִבֵּית־הַסֵּפֶר וְשָׁכַחְתִּי[13] לִקַּחַת אֶת הַסָּלִים, אֲבָל קָנִיתִי הַמּוֹן דְּבָרִים וּבְזוֹל[14]!

הָרָהִיטִים שֶׁל רִבְקָה

רִבְקָה לֹא אוֹהֶבֶת רָהִיטִים מוֹדֶרְנִיִּים. לְרִבְקָה יֵשׁ רָהִיטִים עַתִּיקִים: סַפָּה עַתִּיקָה, שׁוּלְחָן עַתִּיק, אֲרוֹנוֹת[5] עַתִּיקִים[7] וְהַרְבֵּה צִיּוּרִים מְעַנְיְנִים עַל הַקִּירוֹת[5]. כְּשֶׁהַמִּשְׁפָּחָה[15] שֶׁל רִבְקָה בָּאָה[16] מֵרוּסְיָה לְאֶרֶץ־יִשְׂרָאֵל, הִיא בָּאָה עִם כָּל הָרָהִיטִים שֶׁלָּהּ. הַהוֹרִים שֶׁל רִבְקָה גָּרִים בְּקִיבּוּץ, הֵם לֹא צְרִיכִים רָהִיטִים עַתִּיקִים. "בַּיִת זֶה לֹא מִתְאִיּוֹן" הֵם אוֹמְרִים, אֲבָל רִבְקָה מַרְגִּישָׁה[17] טוֹב עִם הָרָהִיטִים הָאֵלֶּה. "עַל־יַד הָרָהִיטִים הָעַתִּיקִים אֲנִי מַרְגִּישָׁה יוֹתֵר צְעִירָה" הִיא אוֹמֶרֶת.

[1] 14.13. [2] 21.2. [3] 21.1. [4] 21.1.1. [5] 2.9. [6] 13.5. [7] 2.11. [8] 21.3.1. [9] 2.16.բ.
[10] 6.23. [11] 17.7. [12] 17.13. [13] 17.1. [14] 21.7. [15] 21.6. [16] 17.9. [17] 14.2.

✍ *Թարգմանե՛ք երբայերեն.*

1. Դինամո շուկայում գնել է բանջարեղեն և մրգեր: 2. Երբ ուսուցիչը մտավ, բոլոր աշակերտները վեր կացան: 3. Խանութում ասաց, որ շատ հիվանդ է: 4. Որտե՞ղ էիր երեկ ամբողջ օրը: 5. Մենք բարձրացանք 3-րդ հարկ, սակայն այնտեղ Դավիթին չգտանք: 6. Ռեբեկան երգեց մեզ համար շատ գեղեցիկ երգեր: 7. Ուսանողները դուրս եկան համալսարանից և գնացին սրճարան: 8. Էսքերը շատ պղպեղ և լոլիկ է դրել ճաշի մեջ: 9. Բոլոր մեծ դեղձերն այս ծառի վրա են: 10. Ես աստիճաններով վերջին հարկ բարձրանալու ուժ չունեմ: 11. Հայաստանի շուկաներում կարելի է տեսնել տարբեր մրգեր և բանջարեղեն: 12. Ռեբեկան ուզում էր բոլոր մրգերը դնել իր զամբյուղի մեջ, սակայն այն չափազանց փոքր էր: 13. Ես չեմ կարող գնալ քան-

գարան, որովհետև դեռ չեմ արել բոլոր վարժությունները: 14. Ես չեմ կարծում, որ աշակերտներն արդեն պատասխանել են բոլոր հարցերին: 15. Որտեղի՞ց եք գնել այս մեծ և գեղեցիկ ծիրանները: 16. Ես միշտ մոռանում եմ քեզ հարցնել մեր հին ընկերների մասին: 17. Այս կարմիր խաղողից պատրաստում են (անում են) հոյակապ գինի: 18. Ոչ բոլոր երկրներում է հնարավոր գնել դեղին պղպեղներ: 19. Ես ուզում էի թարմ միս գնել, սակայն շուկայում միս չգտա: 20. Երուսաղեմում մենք գնեցինք երկու գեղեցիկ նկար:

מִלִּים חֲדָשׁוֹת

אַחַר־כָּךְ *ախար-կախ* այնուհետև, հետո
אֶלָּא תհ״պ *էլա* այլ, ոչ թե
אַפַּרְסָק ז *ափարսէկ* դեղձ
אֶרֶץ נ (ר אֲרָצוֹת) *էրեց (արացօթ)* երկիր
אֲגָד ז *ադէգ* հագուստ, շոր
טֶרֶם ת *տառմ* թարմ
יָשָׁר ת *յաշար* ուղիղ, անմիջապես
מִזְיָאוֹן ז *մզիաօն* քանգարան
מִלְפָּפוֹן ז *մլափափօն* վարունգ
מִשְׁמָשׁ ז *միշմէշ* ծիրան
נֶהְדָּר ת *նեհդար* հոյակապ, հիանալի
סָל ז *սալ* զամբյուղ
עַגְבָנִיָּה נ *ագվանիյա* լոլիկ
עֲנָבִים ז״ר *անավիմ* խաղող
פִּלְפֵּל ז *պիլպէլ* պղպեղ
פְּרִי ז (ר פֵּרוֹת) *պռի (պէրօթ)* միրգ
צִיּוּר ז *ցիուր* նկար
צְפוּף ת *ցափուֆ* մարդաշատ, խիտ
רוּסְיָה נ *ռուսյա* Ռուսաստան
שׁוּק ז (ר שְׁוָקִים) *շուկ (շվակիմ)* շուկա
שָׁכַח פ (לִשְׁכּוֹחַ, שׁוֹכֵחַ) *շախախ (լիշկօախ, շօխէախ)* մոռանալ
תַּפּוּחַ ז (ר תַּפּוּחִים) *տապուախ (տապուխիմ)* խնձոր

בְּטוּיִים

מַה פִּתְאוֹם ? *մա պիտ'օմ* ինչո՞ւ հանկարծ
אֶרֶץ־יִשְׂרָאֵל *էրեց-յիսրայէլ* Երկիր-Իսրայել (ավանդական՝ կրոնապետիկ անվանում)

22 עֶשְׂרִים־וּשְׁתַּיִם

ԼՅԻՔ ԿԱՌՈՒՑՑԻ ՔԱՅԵՐՆ ԱՆՑՅԱԼ ԺԱՄԱՆԱԿՈՒՄ

22.1. Անցյալ ժամանակում **לְיֹא** կառույցի բայերի II արմատականը ծայնավորվում է պատախով՝ **-דִיבֵּר ← דִיבַּר**։

אֲנִי	דִיבַּרְתִּי	*դիբա՛ռտի*	אֲנַחְנוּ	דִיבַּרְנוּ	*դիբա՛ռնու*
אַתָּה	דִיבַּרְתָּ	*դիբա՛ռտա*	אַתֶּם	דִיבַּרְתֶּם	*դիբառտէմ*
אַתְּ	דִיבַּרְתְּ	*դիբառտ*	אַתֶּן	דִיבַּרְתֶּן	*դիբառտէն*
הוּא	דִיבֵּר	*դիբէռ*	הֵם	דִיבְּרוּ	*դիբռու*
הִיא	דִיבְּרָה	*դիբռա*	הֵן	דִיבְּרוּ	*դիբռու*

✍ **דִיבֵּר** *բայի օրինակով խոնարհե՛ք հետևյալ բայերը.* חִיפֵּשׂ, מִיהֵר, לִימֵּד, נִיגַּן, סִיפֵּר, תִיקֵּן, שִׁילַם, כִּישֵּׁל, בִּיקֵּר։

22.2. **לְיֵט** *տիյէլ* «զբոսնել» բայի խոնարհումը.

אֲנִי	טִיַּלְתִּי	*տիյա՛լտի*	אֲנַחְנוּ	טִיַּלְנוּ	*տիյա՛լնու*
אַתָּה	טִיַּלְתָּ	*տիյա՛լտա*	אַתֶּם	טִיַּלְתֶּם	*տիյալտէմ*
אַתְּ	טִיַּלְתְּ	*տիյալտ*	אַתֶּן	טִיַּלְתֶּן	*տիյալտէն*
הוּא	טֵייֵל	*տիյէլ*	הֵם	טִיילוּ	*տիյռու*
הִיא	טִיילָה	*տիյռա*	הֵן	טִיילוּ	*տիյռու*

✍ **לְטַיֵּל** *բայի օրինակով խոնարհե՛ք* **לְצַיֵּר** *ցիյէռ «նկարել» բայը:*

ՍՄԽՈՒԹ

22.3. Արական սեռի հոգնակի թվի **-ִים** և երկակի թվի **-ַיִם** վերջածանցները նիսմախում ստանում են **-ֵי** *-էյ* (երբեմն հնչում է առանց «յ»-ի) ձևը՝ **תַלְמִידֵי בֵּית־הַסֵּפֶר** *տալմիդէյ բէյտ-հասէֆէռ* «դպրոցի աշակերտները», **סִיפּוּרֵי דָיָגִים** *սիպուռէյ դայագիմ* «ձկնորսների պատմություններ», **כָּל מִינֵי דְבָרִים** *քոլ մինէյ դվառիմ* «ամեն տեսակի բաներ», **עֵינֵי הָאִמָּנִים** *էյնէյ հաամմէնիմ* «հայերի աչքերը»:

22.4. Այսպիսով שְׁתֵּי/שְׁנֵי ձևերը שְׁתַּיִם/שְׁנַיִם թվականի նիսմախայինի ձևերն են, իսկ «երկու» թվականի և գոյականի կապակցությունը սմիխութ է:

22.5. בְּ կցական նախդիրը, ինչպես և לְ նախդիրը, կարող է ստանալ դերանվանական վերջածանցներ.

	եզակի թիվ		*հոգնակի թիվ*	
	իգական	*արական*	*իգական*	*արական*
I	בִּי *բի* «իմ մեջ, ինձնով»		בָּנוּ *բանու*	«մեր մեջ, մեզնով»
II	בָּךְ *բախ* «քո մեջ, քեզնով»	בָּךְ *բէխա* «քո մեջ, քեզնով»	בָּכֶן *բախէն* «ձեր մեջ, ձեզնով»	בָּכֶם *բախէմ* «ձեր մեջ, ձեզնով»
III	בָּהּ *բահ* «նրա մեջ, նրանում, նրանով»	בּוֹ *բո* «նրա մեջ, նրանում, նրանով»	בָּהֶן *բահէն* «նրանց մեջ, նրանցում, նրանցով»	בָּהֶם *բահէմ* «նրանց մեջ, նրանցում, նրանցով»

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՆՇՈՂ ԲԱՌԵՐԸ

22.6. Մասնագիտություն կամ զբաղմունք նշող բառերի մեծ մասը կազմվում է (-ָּן) לָּן բանաձևով՝ רַיָּץ *գայյան* «նկարիչ», דַּיָּג *դայյագ* «ձկնորս», פַּסָּל *պասսալ* «քանդակագործ», טַיָּר *տայյար* «զբոսաշրջիկ»: 22.6.1. Իգական սեռը կազմվում է (-ֶּת) תָּלָּן բանաձևով (հոգնակի թվում՝ -וֹת)՝ (פַּסָּלוֹת) פַּסָּלֶת, (צַיָּרוֹת) צַיֶּרֶת:

ԹՎԱԿԱՆՆԵՐ

22.7. Տասնավորներ նշող, «հարյուր» և «հազար» թվականները նույնն են երկու սեռերի համար.

20	עֶשְׂרִים	*էսրիմ*	70	שִׁבְעִים	*շիվ'իմ*
30	שְׁלוֹשִׁים	*շլոշիմ*	80	שְׁמוֹנִים	*շմօնիմ*
40	אַרְבָּעִים	*առբաիմ*	90	תִּשְׁעִים	*տիշ'իմ*
50	חֲמִשִּׁים	*խամիշիմ*	100	מֵאָה	*մէա*
60	שִׁשִּׁים	*շիշիմ*	1000	אֶלֶף	*էլէֆ*

ԱՅԼ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

22.8. בּוֹא «այցելել» բայը պահանջում է בְּ նախդիրով լրացում, եթե այն անձ չէ՝ בּוֹאֵנוּ בְּקִיקְעִילָּת *բիկա՛ռնու բէգալէ՛ոյօթ* «մենք այցելեցինք պատկերասրահները»:

Կարդացե՛ք, թարգմանե՛ք և արտագրե՛ք հետևյալ տեքստը.

טיולי[1] שבת

יָפוֹ היא הַחֵלֶק הָעַתִּיק שֶׁל תֵּל־אָבִיב. גָּרִים בָּהּ[2] יְהוּדִים וַעֲרָבִים[3], אָמָנִים וַאֲנָשִׁים[3] אֲחֵרִים. בְּיָפוֹ יֵשׁ גַּמָּל יָשָׁן. פַּעַם, הַגַּמָּל הַזֶּה הָיָה[4] גָּדוֹל וְחָשׁוּב, אֲבָל הַיּוֹם אֵין בּוֹ[2] מָקוֹם לְאוֹנִיוֹת גְּדוֹלוֹת. יֵשׁ בּוֹ רַק אוֹנִיוֹת דַּיָּגִים[5], יַכְטוֹת וְהַרְבֵּה מִסְעָדוֹת וַחֲנוּיוֹת[3] לְתַיָּרִים[6].

זֶה מָה שֶׁסִּיפְּרָה[7] שָׂרָה אַחֲרֵי שֶׁהִיא וְדָנִיאֵל טיילוּ[8] בְּיָפוֹ:
״אֶתְמוֹל טִיַּלְנוּ[8] בָּרֶגֶל בְּיָפוֹ. טִיַּלְנוּ עַל חוֹף הַיָּם וּבַגָּמָל[9], בִּיקַרְנוּ[8] בְּגָלֶרְיוֹת[10]. אֲנִי דִּיבַּרְתִּי[7] עִם שְׁנֵי[11] צַיָּרִים, דָּנִיאֵל דִּיבֵּר[7] עִם פָּסָל אֶחָד. הַצַּיָּרִים צִיְּרוּ[8] אֶת הַיָּם הַכָּחוֹל וְאֶת הָאוֹנִיוֹת בּוֹ[2], וְהַפָּסָל עָבַד[12] בַּסְטוּדְיוֹ שֶׁלּוֹ. אַחַר־כָּךְ הָלַכְנוּ[13] לְמִסְעָדָה בַּגָּמָל וְאָכַלְנוּ[13] דָּגִים. אִשְׁתּוֹ שֶׁל הַדַּיָּג בִּישְׁלָה[7] אוֹכֶל טָעִים מְאוֹד בַּמִּטְבָּח הַקָּטָן שֶׁל הַמִּסְעָדָה, וְהַדַּיָּג סִפֵּר[7] לָנוּ סִיפּוּרִים שׁוֹנִים עַל הַיָּם. סִיפּוּרֵי[14] דַּיָּגִים כָּל־כָּךְ מְצַנְיְנִים! אֲנִי מְאוֹד אוֹהֶבֶת[15] לִשְׁמוֹעַ אוֹתָם.

אַחַר כָּךְ הָלַכְנוּ[13] לְשׁוּק הַפִּשְׁפָּשִׁים. לַאֲנָשִׁים בְּשׁוּק יֵשׁ זְמַן, הֵם לֹא מְמַהֲרִים[16] לְשׁוּם מָקוֹם. גַּם אֲנַחְנוּ לֹא מִיהַרְנוּ[7] וְהֵם סִיפְּרוּ[7] לָנוּ סִיפּוּרִים שׁוֹנִים וּמְכְרוּ[13] לָנוּ כָּל מִינֵי[14] דְּבָרִים יְשָׁנִים. שִׁילַמְנוּ[7] בְּזוֹל[17] וְחָזַרְנוּ[13] הַבַּיְתָה עִם הַרְבֵּה דְּבָרִים יְשָׁנִים, אֲבָל יָפִים.״

וְזֶה מָה שֶׁסִּיפֵּר לָנוּ אַהֲרוֹן:
״בְּשַׁבָּת בַּבּוֹקֶר הָיִיתִי[18] הַרְבֵּה אֲנָשִׁים עַל חוֹף הַיָּם. כּוּלָּם בָּאוּ[19] לָנוּחַ, לָרוּץ, לְשַׂחֵק וְלִשְׂחוֹת. אֲנִי בָּאתִי[19] לַיָּם עִם כָּל הַמִּשְׁפָּחָה שֶׁלִּי. קַמְנוּ[20] מוּקְדָם בַּבּוֹקֶר, שָׂמְנוּ[20] אֶת כָּל הַדְּבָרִים בַּמְּכוֹנִית וְנָסַעְנוּ[13] אֶל הַיָּם.

הַיְלָדִים אָהֲבוּ[21,22] מְאוֹד אֶת חוֹף הַיָּם. הֵם רָצוּ[20,12] וְקָפְצוּ[13,12] עַל הַחוֹל. לְאֶסְתֵּר הָיָה[4,23] שָׁם תָּאבוֹן. בַּבַּיִת הִיא לֹא אָכְלָה[13] כְּלוּם, אֲבָל עַל חוֹף הַיָּם הִיא אָכְלָה[13,12] כָּל הַזְּמַן. יְהוּדָה רָץ[20,12] וְקָפַץ[13,12] שָׁם, דְּבוֹרָה קָרְאָה[24,12] סְפָרִים, וַאֲנִי[3] וְאִשְׁתִּי נָחְנוּ[20,12].״

[1] 22.3. [2] 22.5. [3] 2.17. [4] 21.2. [5] 12.4. [6] 13.7. [7] 22.1. [8] 22.2. [9] 2.16.p. [10] 22.8. [11] 11.2. [12] 17.5.
[13] 17.1. [14] 22.3. [15] 1.13.1. [16] 10.3. [17] 21.7. [18] 17.13.1. [19] 17.9. [20] 17.7. [21] 18.4. [22] «հավանեցին» [23] 20.2.1. [24] 18.5

Թարգմանե՛ք բերայներեն.

1. Անցյալ տարի Լոնդոնում ես խոսում էի միայն անգլերեն: 2. Երեկ ինձ պատմեցին մի շատ հետաքրքիր պատմություն: 3. Զբոսաշրջիկները սիրում են քաղաքի հին մասը, որովհետև նկարիչներն ու քանդակագործները այնտեղ աշխատում են փողոցում, և այնտեղ կա մեծ հնոսիաշուկա: 4. Երբ անցյալ տարի այցելեցինք Յաֆֆա, այնտեղ տեսանք տարբեր մարդկանց, զբոսաշրջիկների ամբողջ աշխարհից: 5. Ի՞նչ տեսար ծովափին, երբ զբոսնում էիր այնտեղ երեկ: 6. Ես նկարեցի նրան, սակայն նա չհավանեց իմ նկարը: 7. Ով շատ գիտի, կարծում է, թե ոչինչ չգիտի, ով ոչինչ չգիտի, կարծում է, թե գիտի ամեն ինչ: 8. Դանի կինը եփել է համեղ ծուկ բանջարեղենով: 9. Երեկ ամբողջ օրը մենք լողում էինք ծովում և խաղում էինք ավազի վրա: 10. Կան մարդիկ, որ սիրում են լողալ գիշերը կամ վաղ առավոտյան: 11. Ես ուզեցի վճարել, սակայն ինձ ասացին, որ ընկերներս արդեն վճարել են: 12. Ի՞նչ էիր փնտրում երեկ ամբողջ օրը մեր հարկում: 13. Նավահանգստում մենք տեսանք միայն մեկ նավ, սակայն դա շատ մեծ նավ էր: 14. Այս հոդվածում գրված է, որ անհրաժեշտ է բոլոր երկրներից արվեստագետներ հրավիրել: 15. Այն բանից հետո, ինչ ոտքով զբոսնեցինք Յաֆֆայում, վերադարձանք Երուսաղեմ: 16. Մենք ոչ մի տեղ չէինք շտապում,

որովհետև շատ ժամանակ ունեինք: 17. Ոտքերս ցավում են, որովհետև նույնիսկ մեկ վայրկյան չեմ նստել: 18. Անցած տարի ես արաբերեն էի դասավանդում համալսարանում:

מִלִּים חֲדָשׁוֹת

אוֹנְיָה נ *օնիա* նավ
אָמָן, אֻמָּן ז *օման* արվեստագետ
בִּיקֵר פ (לְבַקֵּר, מְבַקֵּר) *բիկեր (լևկակեր, մեվակեր)* այցելել
בִּישֵׁל פ (לְבַשֵּׁל, מְבַשֵּׁל) *բիշել (լևխաշել, մեվաշել)* եփել, ճաշ պատրաստել
גָּלְרְיָה נ *գալե՛ռյա* պատկերասրահ
דַּיָּג ז *դայյագ* ձկնորս
חוֹל ז *խոլ* ավազ
חֵלֶק ז *խե՛լեկ* մաս, բաժին
חָשׁוּב ת *խաշո՛ւվ* կարևոր
טִיּוּל ז *տիյո՛ւլ* զբոսանք
טִייֵל פ (לְטַיֵּל, מְטַיֵּל) *տիյել (լետայե՛լ, մետայե՛լ)* զբոսնել
יַכְטָה נ *յա՛խտա* յախտա
יָפוֹ נ *յա՛ֆո* Յաֆֆա (քաղաք, ներկայումս՝ Թել-Ավիվի կազմում)
כְּלוּם *քլում* ոչինչ (ժխտման դեպքում), ինչ-որ բան
מוּקְדָם ת *մուկդամ* վաղ, կանուխ
מִין ז *մին* տեսակ, ծև, սեռ
נַמָּל ז *նամմել* նավահանգիստ
סְטוּדְיוֹ ז *ստու՛դիո* արվեստանոց
עֲרָבִי, עַרְבִי ת״ז *առավի, առմի* արաբ, արաբական
פֶּסֶל ז *պասել* քանդակագործ
פִּשְׁפֵּשׁ ז *պիշպեշ* փայտոջիլ
צִייֵר פ (לְצַיֵּר, מְצַיֵּר) *ցիյեր (լեցայե՛ր, մեցայե՛ր)* նկարել
צַיָּר ז *ցայյար* նկարիչ
קָפַץ פ (לִקְפּוֹץ, קוֹפֵץ) *կափաց (լիկպո՛ց, կոֆե՛ց)* ցատկել, թռչկոտել
רֶגֶל נ (ר׳ רַגְלַיִם) *ռե՛գել (ռագլա՛յիմ)* ոտք
שָׁחָה פ (לִשְׂחוֹת, שׂוֹחָה) *սախա (լիսխոթ, սոխե՛)* լողալ
שִׁילֵם פ (לְשַׁלֵּם, מְשַׁלֵּם) *շիլեմ (լեշալե՛մ, մեշալե՛մ)* վճարել

בְּטוּיִים

אַחֲרֵי שֶׁ- *ախարե՛յ շե* այն բանից հետո, ինչ
בְּרֶגֶל *բռե՛գել* ոտքով
כָּל מִינֵי דְבָרִים *քոլ մինե՛յ դվառի՛մ* ամեն տեսակ բաներ
מָה שֶׁ- *մա շե* այն, ինչ
פַּעַם *պա՛ամ* մի ժամանակ, անցյալում
שׁוּם מָקוֹם *շում մակո՛մ* ոչ մի տեղ
שׁוּק הַפִּשְׁפְּשִׁים *շուկ հապիշպեշի՛մ* հնոտիաշուկա

23 עֶשְׂרִים־וְשָׁלוֹשׁ

✍ Կարդացե՛ք, թարգմանե՛ք և արտագրե՛ք հետևյալ տեքստը.

הַשְׁכֵּנִים הַחֲדָשִׁים שֶׁל מִשְׁפָּחַת[1] בֶּן־אֱלִיעֶזֶר

לאה: אַתָּה יוֹדֵעַ, יֵשׁ לָנוּ שְׁכֵנִים חֲדָשִׁים.
אַהֲרוֹן: בֶּאֱמֶת? מִי הֵם?
- עוֹלִים חֲדָשִׁים מֵרוּסִיָה. הֵם שָׂכְרוּ[2] דִּירָה מִבַּעַל הַבַּיִת בַּקּוֹמָה הַחֲמִישִׁית.
- מִשְׁפָּחָה גְּדוֹלָה?
- לֹא, זוּג נָשׂוּי וּבַת[3]. הַבַּעַל בֶּן 40[4] בְּעֶרֶךְ, הָאִשָּׁה קְצָת יוֹתֵר צְעִירָה וְהַבַּת, חַנָּה, בַּת 18[4]. הִיא הָיְתָה[5] סְטוּדֶנְטִית וְרוֹצָה גַּם כָּאן לִלְמוֹד בְּאוּנִיבֶרְסִיטָה.
- בְּאֵיזוֹ אוּנִיבֶרְסִיטָה הִיא רוֹצָה לִלְמוֹד?
- לֹא שָׁאַלְתִּי[2]. אוּלַי אוּנִיבֶרְסִיטַת תֵּל־אָבִיב[1] אוֹ הָאוּנִיבֶרְסִיטָה הָעִבְרִית בִּירוּשָׁלַיִם.
- אֲנִי חוֹשֵׁב שֶׁרָאִיתִי[6] אוֹתָהּ בַּחוּץ. בָּחוּרָה יָפָה מְאוֹד. הֵם מְדַבְּרִים עִבְרִית?
